
Բարի
100

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԱՐՉ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

Ց. ԳԵՂԱՐԴ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ

Ծ. ԱՒԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ

† Եդ. ՊՕՅԱՃԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

Կոդքի ցկար՝ ԳԱՌՆԻԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ
Ռ. ՋԱՐԻԱՐԵԱՆ
ԱՌՆԱԿ
Ց. Մ.
Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Վ. ԹԷՔԷԷԵԱՆ
Փ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Ս. ՎՐԱՑԵԱՆ
Պ. ՍԵՒԱԿ
Մ. ԹՈՒՄԱՃԵԱՆ
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ
Ա. ՍԱՀԱԿԵԱՆ
Բ. ԹԱՇԵԱՆ
Մ. ՎԱԼԻՏԷԵԱՆ
Ա. ԲԱԲԱՑԵԱՆ
Գ. ԻՓԷԿԵԱՆ
Ս. Գ.
Հ. ՍԱՀԵԱՆ
Գ. ԷՄԻՆ
Շ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Ե. ՋԱՐԵՆՑ
Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ
Ա. ԳՈՒՐԳԷՆԵԱՆ
Ց. ԳԵՂԱՐԴ
Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆ
Բ. ԵՂԻԱՑԵԱՆ
Ց. ՕՇԱԿԱՆ
Ն. ԱՂԲԱԼԵԱՆ
Վ. ԱՀԱՐՈՆԵԱՆ
Ռ. ԻՇԽԱՆԵԱՆ
Կ. ՍԱՍՈՒՆԻ
Ա. ՍԱՐՈՑԵԱՆ
Վ. ՏԷՐԵԱՆ
Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
Բ. ԿՈՒԱՆԵԱՆ
Ա. ԱՐԾՐՈՒՆԻ
Ա. Խ.
Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Ց. Ճ. ՍԻՐՈՒՆԻ
Ե. ՕՏԵԱՆ
Ա. ՏՕՆՈՑԵԱՆ
. . . . . .
ՎԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ
«ԲԱԳԻՆ»-Ի 1969
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

digitised by A.R.A.R.@

Բազմա

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Ը. ՏԱՐԻ, ԹԻՒ 11-12 ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿԱՏԵՄԲԵՐ 1969 ՊԻՒՍԻՆԻՊ

100-ԱՄԵԱԿՆԵՐՈՒ ՏԱՐԻ

Լրացող տարին մշակութային ցնծատօնների բացառիկ առիթներ ստեղծեց բովանդակ հայ ժողովուրդին համար, Արարատի ստորոտէն մինչեւ Սփիւռքի հեռաւոր անկիւնը, ամենուրեք ու անգամ մը եւս հաստատելով երգի ու գիրի հանդէպ մեր ժառանգական հակումը, սէրը, պաշտամունքը:

Նոյն տարուան մէջ թերեւս երբեք չէր պատահած, որ մեր ժողովուրդը այսքան թիւով մեծերու անունը թուէ, միաժամանակ պանծացնէ այսքան թիւով մեծերու յիշատակը ու անշահախնդիր գանձերու առջեւ այսքան լայն բանայ իր հոգիին դարպասները: Մեկնելով այս իրողութենէն, կարելի է դիւրութեամբ ըսել, որ 1869-ին ծնած վերոյիշեալ դէմքերը իրենց յայտնաբերած երգին, խօսքին, բանին ամբողջ պերճութեամբ վերստին յայտնուեցան այս տարի, վերածնան մէ՛ն մի հայու սրտին, մեծին ու փոքրին մէջ:

Մեծիմաստ էին այդ տօնակատարութիւնները եւ նոր խմորումներու համար մեծապէս յուսատու:

Իւրաքանչիւրէն լոյս մը բխեցաւ ու ճառագայթեց բազմութիւններուն վրայ: Ու բազմութեան համար երգի տօն եղաւ այս տարի, ժողովուրդի հոգիին գիւտը բնող բանաստեղծութեան տօն, առօրեայէն վեր նայելու մոգական առիթ, զուարթախոհութեամբ մաքրուելու սրբագին պահ:

Առանց անոնց իւրաքանչիւրին տարողութեան, արուեստին, ճառագայթումին ամբողջութիւնը բնդգրկած ըլլալու յաւակնութեան՝ «Բազմին» իր թիւերէն ներկու

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ՉՈՐՍ ՄԵԾԵՐԻ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ

ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹԻՒՆԸ

Հայ գրականութեան ու արուեստի մեծ ու մեծանուն չորս վաստակաւորների գործը վերստին ժողովրդականացնելու դեր ստանձնած այս յոբելեանական տարին իրական պատեհութիւն է հանդիսանում, որպէսզի առաւել ուշադիր հայեացքով նայենք նախորդող հարիւրամեակի ընթացքին եւ համոզուենք, որ, յիրաւի, հարիւր տարի առաջ, այսինքն՝ 1869 թուին, իսկապէս որ «Մայր Հայաստանի արգանդը եղաւ սրբօրէն բեղուն», – ինչպէս հաստատագրում է *«Մինչեւ զանգակատան»* ռահվիրայ եղիշեանը: Ոչ միայն նրա համար, որ այդ թուին «Մի մանուկ ծնուեց Լոռուայ Դսեղում», կամ՝ «Միեւնոյն թուին, Լոռուց շատ հեռու՝ Անատոլուի մթին խորքերում, մէկ ուրիշ մանուկ լոյս աշխարհ եկաւ», այլ որովհետեւ իմաստուն զուգադիպութեամբ համաստեղութիւն կազմելու չափ աւելի էր այդպիսի մանուկների թիւը: Եթէ առհասարակ հնարաւոր լինէր բոլոր յաջորդաբար ծնուողների մանրամասն ու սպառիչ մարդագուցակ կազմել, թերեւս ուրիշ տարեկից վաստակաւորներ էլ յայտնաբերուէին: Բայց այս տարի յիշատակուող մեծերն իսկ ինքնին բաւական են եւ ճշանակալից:

Այս տարուայ յոբելեանները նշանակալից են ոչ թէ նրա համար, որ միանգամից չորսի են հասնում: Այսպէս թէ այնպէս յոբելեաններ, այդ թուում եւ հարիւրամեակներ, շատ են նշւում, պարբերաբար ու յաջորդաբար, աւելի կամ պակաս ընդմիջումներով: Այս տարուայ յոբելեարները երբ էլ ծնուած լինէին եւ երբ էլ յիշատակման արժանանային, առանց այլեւայլութեան մեծերի ցանկում պիտի երեւային: Բայց այնպէս է պատահել, որ նրանք Հայոց Աշխարհի ընդերքից նոյն ժամանակ են ծնուել եւ նոյն օրերի կշռոյթով անել ու հետեւապէս այսօր մեր աչքերի առջեւ էլ խմբով են ներկայանում: Ուշագրաւն այն է, որ յոբելեանական համաստեղութեան պատկանող իւրաքանչիւր մեծ որոշակի ստեղծագործական գագաթ է հանդիսանում իր բնագաւառում: Կոմիտասը հայ երգի, Թումանի-

digitised by A.R.A.R.@

խանը հայ բանաստեղծութեան, Շանթը հայ թատերագրութեան եւ Օտեանը հայ երգիծաբանութեան անդաստանում, – եթէ մի պահ անտեսելու լինենք բոլոր հնարաւոր վերապահութիւններն ու բծախնդրութիւնները:

Սա նշանակում է, որ արդար պիտի լինէր յոբելեանական տարուայ շնորհները բաշխել բոլոր չորս յոբելեարների վրայ, առանց որեւէ խտրութեան: Բայց, ինչպէս յայտնի է, Հայաստանում, օրինակ, հասկանալի ու անհասկանալի նկատառումներով, ճեղքուեց համաստեղային ամբողջութիւնը եւ ուշադրութիւնը կենտրոնացուեց մէկ կողմի վրայ, իր բախտին թողնելով միւս կողմը: Թումանեանական յոբելեանը նշուեց անմոխրանքաց շքեղութեամբ, այն իմաստով, որ այս անգամ լայն արձագանգ գտաւ համախորհրդային կենտրոններում եւ մի շարք հանրապետութիւններում: Համազգային մակարդակի մինչայժմեան եւ ոչ մի յոբելեան այդքան հեռու չէր տարածել իր ձայնի ալիքները: Դրեթէ նոյն ծաւալով կազմակերպուեց եւ կոմիտասեան յոբելեանը: Օտեանի յոբելեանը, ինչպէս եւ լռելեայն սպասելի էր, տաղանդաւոր համեստ չափերով սահմանափակուեց: Բացառութիւն կազմեց Շանթը: Ճիշդ է, գրեթէ յոբելեանական նկատառումով վերջապէս լոյս տեսաւ նրա երկերի մի փոքրիկ ժողովածու, գրական մամուլում երեւացին ընդհանուր առմամբ բարեացակամ ոգով շարադրուած վերլուծական բնութագրումներ, բայց յոբելեան, որպէս այդպիսին, ինչպէս յայտնի է, տեղի չունեցաւ: Գանի որ միայն Շանթը բացառաբար հեռու պահուեց հայաստանեան յոբելեանական հանդիսութիւնների ծրագրից, նրանից էլ սկսենք անունների մեր այս թուարկումը:

Իւրաքանչիւր գրասէր հայ գիտի, թէ ով է Շանթը եւ ինչպիսի ճանապարհ է անցել, ու դժուար չէ կռահել, թէ ինչու մինչեւ հիմա ակնյայտ խոչընդոտների է հանդիպում նրա գրական վաստակի ժողովրդականացումը խորհրդային պայմաններում: Այստեղ այդ ուղղութեամբ տարածուելու հարկ չկայ: Բայց տեղին եմ համարում մէջբերել մի հատուկառաքար երկար վկայութիւն, որը առանց յաւելեալ մեկնաբանութեան ցոյց է տալիս, թէ ինչումն է բանը: Վկայութիւնը պատկանում է խորհրդահայ գրականագէտ Վազգէն Մնացականեանին: Հայաստանի Գրողների Միութեան 1966 թուի նոյեմբերեան համագումարում Մնացականեանը, ի շարս այլոց, նոյնպէս ելոյթ ունեցաւ եւ ըստ ամենայնի կարեւոր մտքեր յայտնեց: Այդ ելոյթը, ի հարկէ, ժամանակին պատշաճ չափով չարձանագրուեց խորհրդահայ ու հետեւապէս նաեւ սփիւռքահայ մամուլում, բայց յետոյ լիովին, պէտք է այդպէս ենթադրել, մտցուեց Մնացականեանի 1968 թուին լոյս տեսած *«Ժամանակի հետ»* վերնագրով գրքի մէջ: Հաւանաբար շատ քչերն են կարդացել այդ գիրքը: Ուստի հենց ճիշդ տեղն է մէջբերել Մնացականեանի ելոյթի՝ Լեւոն Շանթին վերաբերող մասը:

«Ընկեր Թոփչեանը, – ասում է նա, – հրապարակեց մի արդարացի որոշում Շանթի լաւագոյն երկերի հրատարակման մասին: Անցեալի ժառանգութեան մի էջ ու փրկուեց ոչ բանական մոռացումից: Ասում եմ ոչ բանական, որովհետեւ կային մարդիկ՝ շարքային կամ դիրք ունեցող, որոնք այն հարցին, թէ ինչու Շանթին չեն հրատարակում, կտրուկ մի չարութեամբ պատասխանում էին· հայ ժողովուրդը առանց Շանթի էլ կարող է ապրել: Ի հարկէ, կարող է, նրա *«Հին աստուածներ»*-ը հօ հացի գրքոյկ չէ: Սակայն այնպիսի մի բազմակիրք ժողովուրդ, ինչպիսին մենք ենք, չենք կարող մոռացութեան տալ «Հին աստուածներ»-ի Արեղայի վերջին խօսքերը· «Է, հերիք է, հեռու գացէք մեր անդունդներովը ու մութերովը,

digitised by A.R.A.R.@

հեռու ձեր անվերջ վախերովը: Վախ լոյսէն ու բերկրանքէն, վախ մութէն ու տանջանքէն, վախ աստուածներէն, վախ դժոխքէն: Հեռու, բաց նամբաս, հոն ոչ մութ կայ, ոչ անդունդ: Ծովն է միայն ու փոթորիկը իմ առջեւ»: Վախ լոյսերէն··· սպանիչ գնահատական է, – շարունակում է Մնացականեանը, – եթէ ուզում ենք յստակ պատկերացում կազմել այսօրուայ մեր հոգեւոր ու մտաւոր կեանքի վեհութեան մասին, վերյիշենք, թէ երէկ մեր ժողովրդի փառաւոր, նաեւ ողբերգական պատմութեան, ինչպիսի էջեր էին ակամապատուած նացիոնալիզմի, ազգային սնապարծութեան եւ էլի ուրիշ այլ «պայքարային» նիւթերով: Այդ ամէնի վնասազերծումը մեծ ջանքեր է խլել մեր կոմունիստական կուսակցութիւնից, ժողովրդից ու նրա տաղանդաւոր մտաւորականութիւնից: Արդի հայ գրականութեան, գրականագիտական մտքի առաջին նուաճումներից մէկն այն է, որ հնարաւորութիւն ստեղծուեց ժողովրդի անցեալը դնել ոգի մէջ ու զննել հաստատուն ազնուութեամբ, նաեւ այն, որ կարողացանք խելքի բերել պատմութեան լոյսից վախեցող որոշ մոլորեալների: Ասում եմ որոշ, որովհետեւ կան մարդիկ, որոնք դեռ շարունակում են մնալ իրենց հին կարծիքներին, կըծկըտելով ստորին չարութիւնից եւ փիլիսոփայական վերին դատարկութիւնից: Դրանցով զբաղուելն այլեւս նոյնիսկ անպատուաբեր է» (էջ՝ 81–82):

Այս երկար, բայց ուշագրաւ մէջբերումից մասամբ երեւում է, թէ ինչպիսի թեր ու դէմ տրամադրութիւններ կան խորհրդային Հայաստանում Շանթի նկատմամբ: Դա ցոյց է տալիս նաեւ, որ «արժէքների նուիրապետութիւն» եւ «արժէքների պայքար» արտայայտութիւնները էմահան ձեւակերպութիւններ չեն, այլ կենսական իրականութեան բարդութիւնն ու բաղկացուցիչ տարրերի փոխադարձ ներգործումները արտացոլող հաւաստի ընդհանրացումներ: Ցաւալի դէպքում մենք տեսնում ենք, որ Շանթի յոբելեանը Հայաստանում անտեսուելը զուտ պարագայական նկատառումների հետեւանք է, այլ ոչ թէ խորհրդահայ նոյնիսկ լայն հասարակայնութեան անգիտութեան կամ չկամութեան ապացոյց: Ցամենայնդէպս, այնտեղ եւս անպայման գոյութիւն ունի խելահաս մարդկանց մի պատկառելի բազմութիւն, որի համար Շանթը միշտ մնում է Շանթ, անկախ նրա յոբելեանը նշուելուց կամ շրջանցուելուց:

Ինչպէ՞ս պիտի ներկայանար Շանթը Հայաստանում, եթէ նրա երկերը լիովին տպելու եւ տարածելու հնարաւորութիւն լինէր: Շանթի տեղն ու դերը ինչպէ՞ս պիտի որոշուէր: Ըստ երեւոյթին նիշդ այնպէս, ինչպէս որ սովորական ազատ պայմաններում: Պիտի արտայայտուէին իրարից տարբեր զանազան կարծիքներ, բայց վերջ ի վերջոյ, ամենայն հաւանականութեամբ, համաձայնութիւն կը գոյանար, որ Շանթի ամենամեծ ու անփոխարինելի ներդրումը հայ գրականութեան մէջ նրա թատերական երկերն են: Շանթի ստեղծագործութեանը ծանօթ ամէն ոք գիտի, որ նա գրել է բանաստեղծութիւններ, արձակ երկեր, գիտա–մանկավարժական ու հրապարակախօսական ուսումնասիրութիւններ, բայց թատերագրութեան մէ՛ջ է որ հասել է իսկապէս անմրցելի բարձունքների, այդ ասպարէզում է, որ մինչեւ հիմա էլ հանդիսանում է որոշակի ստեղծագործական գագաթ, արդարացնելով մեծի իր համբաւը: Շանթի թատերագրութեան եզակի առանձնայատկութիւնն այն է, որ հայ կեանքում արդէն գոյութիւն ունեցած կենցաղային–հասարակական եւ հոգերանական թատերագրութեան կողքին նա ստեղծեց նաեւ անհամեմատ մեծ ընդգրկումների եւ բարձր ոլորտների ընդլայնած թատերական երկեր: Ոչ մի ժողովրդի թատերական արուեստ,

digitised by A.R.A.R.@

ի հարկէ, չի կարող սահմանափակուել, սնուել ու գոհանալ միայն այդ կարգի ինքնատիպ երկերով, բայց իր ամբողջութեամբ չի էլ կարող բազմակողմանի, բովանդակալից ու լիարժէք համարուել առանց այդպիսի՝ իմացական հրավառութիւններով ողողուած ու երկնամերձ ոլորտների առկայութեան: Ուրեմն, յոբելեանական համաստեղութեան չորս մեծերից մէկը՝ Շանթը, հայ թատերագրութեան մէջ է, որ առաւելապէս բարձրարակ ժառանգութիւն է թողել իր ժողովրդին:

Իր դժուարին ասպարէզում առաջնակարգ դէմք հանդիսացաւ եւ երուանդ Օտեանը: Ի հարկէ, հայ երգիծաբանութիւնն արդէն ունի Պարոնեանի նման մի վաւերական հսկայ, որի գրաւած առաջին տեղը հազիւ թէ ռեւէ մէկի կողմից վիճարկուելու լինի: Իսկ Օտեանը, բնականաբար, Պարոնեան չէ, նկատելիօրէն հեռու է նրա ոլիմպական գիտակէտից: Բայց եթէ որեւէ դժբախտ բերումով նակոր Պարոնեան առհասարակ չունենայինք, Օտեանը վստահօրէն պիտի համարուէր հայ մինչայժմեան երգիծաբանութեան տանուտէրը, քանի որ ամէնից շատ նրան կը պատշաճէր այդ պայմանական տիտղոսը: Հետեւապէս, եթէ յիշեալ նկատառումով մի պահ հաշուից դուրս հանենք Պարոնեանին, երուանդ Օտեանը մինչեւ հիմա էլ մնում է չգերազանցուած բեղուն հեղինակ հայ երգիծաբանութեան ասպարէզում: Օտեանը եւս, ինչպէս յայտնի է, այլազան բնոյթի գրական սեռեր է փորձել, բայց իր տաղանդը լաւագոյնս ու, ասենք նաեւ, լիովին դրսեւորել է յատկապէս քաղաքական ու կենցաղային երգիծաբանութեան մէջ: Այսպիսով տեսնում ենք, որ Օտեանի ծննդեան հարիւրամեակը նոյնպէս սովորական հարիւրամեակ չէ, այլ շեշտուած ու ընդգծուած մշակութային իրողութեան թուական:

Շանթի եւ Օտեանի գրական ժառանգութիւնը, բնականաբար եւ անտարակոյս, հայ գրական մշակոյթի զանձարանում առաջնակարգ տեղ է բռնում: Բայց անկարելի է աչքաթող անել այդ ժառանգութեան նաեւ առանձնայատկութիւնները: Շանթի ստեղծագործութիւնը, օրինակ, գերազանցապէս մտաւորական գրողի հեղինակային ինքնավար պատկերացումների մարմնաւորումն է եւ առաջին հերթին ուղղուած է նոյնպիսի մտաւոր պաշար եւ համապատասխան կենսափորձ ունեցող համեմատաբար սակաւաթիւ ընթերցասէր խաւերին, հիմնականում նրանց է մատչելի, այսինքն՝ ներգործութեան ըստ էութեան բաւական կարճ շառաւիղ ունի եւ որքան էլ ժամանակի ընթացքում այդ շառաւիղը երկարի՝ այնուամենայնիւ չի հասնելու ժողովրդական ամբողջութեան արտաքին շրջագծին, այլ անխուսափելիօրէն մնալու է միայն որոշակի փոքրամասնութեան սեփականութիւն: Նոյն ձեւով էլ Օտեանի գրականութիւնը անխզելիօրէն կապուած է յատկապէս որոշակի ժամանակաշրջանի եւ որոշակի միջավայրի հետ, մեծ մասամբ յարմարեցուած տեղական ու անցողիկ ճաշակի պահանջներին եւ միշտ ու բոլորի համար չէ, որ կարող է պահել իր անխաթար մատչելիութիւնը, սկզբնական թարմութիւնը, քանի որ մանաւանդ երգիծանքը լիովին ընկալելու եւ «վայելելու» համար սովորաբար պէտք է կռահել նաեւ հեղինակի անկարկածն ու նոյնիսկ չասածը, ինչ որ անհամեմատ դժուարացնում է ուրիշ ժամանակներում ապրող սովորական ընթերցողների հաղորդակցուելու գործը: Ուրեմն, Օտեանի երկերը փաստօրէն շատ աւելի մեծ արժէք ունեն պատմաբանների, գրականագէտների, ինչպէս եւ յատկապէս հմուտ ընթերցասէրների, քան բուն առումով ամենալայն հասարակութեան համար:

digitised by A.R.A.R.@

Այս ամէնը նկատի առնելուց յետոյ, միանգամայն հասկանալի է դառնում Յովհաննէս Թումանեանի եւ Կոմիտաս Վարդապետի վաստակը կողմ-կողմի դնելն ու միատեսակ համատարած վերաբերմունքի արժանացընելը: Քանզի բանաստեղծութեան ու երգի այդ խորհրդաւոր վարպետները միմեանց հարազատ համարուելու աւելի շատ պատճառներ եւ շփման աւելի շատ կէտեր ունեն, քան գրականութեան ու արուեստի այլ ճիւղերի բազմաթիւ այլ ներկայացուցիչներ: Դա այդպէս է ո՛չ միայն նրա համար, որ երգն ու բանաստեղծութիւնը առհասարակ իրենց էութեամբ անքաժան երկուորեակներ են եւ առաւել յաջողութեամբ են ներգործում մարդկային ամենատարբեր ու ամենալայն խաւերի զգացական ու հոգեւոր աշխարհի վրայ, այլեւ որովհետեւ երգի ու բանաստեղծութեան հենց կոմիտասեան ու թումանեանական ըմբռնումները փաստօրէն նոյնական են՝ քխելով գեղագիտական ու աշխարհահայեացքային նոյն ակունքներից: Նրանք երկուսն էլ յենւում են ժողովրդական ինքնուրոյն կեցութեան հաւատի տրուեալների վրայ եւ դաւանում յատկապէս տոհմիկ արժէքների անվերապահ ճանաչման ու հետագայ զարգացման անառարկելի սկզբունքը: Այդ ուղղութեամբ է որ Կոմիտասն ու Թումանեանը դրսեւորեցին իրենց հանճարն ու հռանդը եւ մագլցեցին յիրաւի բարձր ու անհաս կատարներ:

Բայց Թումանեանի եւ Կոմիտասի այդ բնատուր հոգեհարազատութիւնն ու նրանց ստեղծագործութեան կենսահաստատ եւ համապարփակ բնոյթը ընդգծելուց յետոյ, վերջին հաշուով կանգնում ենք այն պերճախօս իրողութեան առջեւ, որ Կոմիտասը իսկապէս ըստ ամենայնի եզակի երեւոյթ է հայ իրականութեան մէջ: Այս տարուայ յոբելեանական համատեղութեան չորս մեծերից բոլոր միւսներն անպայման եզակի չեն իրենց ասպարէզում, ամբողջութեամբ վերցրած: Շանթից բացի եղել են եւ ուրիշ բարձրարժէք թատերագիրներ, Օտեանից բացի էլ չեն մեծ ու փոքր աչքի ընկնող երգիծաբանները, Թումանեանից առաջ եւ յետոյ փայլել են նաեւ ուրիշ արձագանգիչք բանաստեղծներ, բայց Կոմիտասը պարզապէս մէկն է՝ առանց իր մակարդակին մօտեցող լծակից նախորդի եւ յաջորդի: Եւ առհասարակ, ո՞վ կարող է ասել, թէ իսկապէս ինչ է ներկայացնում իրենից Կոմիտասեան անբացատրելի հրաշքը: Կոմիտասը միաժամանակ երգիչ եւ երաժիշտ էր, երգահան ու բանաստեղծ, երաժշտական բանահաւաք եւ զարմանալի հմտութեամբ արժէքների հարազատը խորքից զտող, գիտնական ու կազմակերպիչ: Կոմիտասը հրբեք Կոմիտաս չէր լինի, եթէ դրանցից միայն մէկը կամ մի քանիսը լինէր, թէկուզ եւ ամենակատարեալ մակարդակով: Նա ի՛նքն էր հենց այդ բոլորի ընդգրկումով, ուստի եւ մտովին այնքան անընդգրկելի եւ անբնութագրելի:

Կոմիտասը, դասագրքային լեզուով ասած, առնուազն «երաժշտական գործիչ» էր եւ թւում է, թէ նրանով առաջին հերթին պիտի զբաղուէին եթէ ոչ բացառապէս, գէթ գերազանցապէս մասնագիտութեամբ երաժշտագէտները: Բայց, որքան էլ զարմանալի, իրականում հենց նրանք են ամէնից դանդաղաշարժները: Կոմիտասով ջերմօրէն հետաքրքրւում եւ իրեն իրաւունք է վերապահում նրա մասին հնացական դատողութիւններ անել գլխէ ամբողջ հայութիւնը իր հիմնական մշակութասէր խաւերով, առնուազն ընթացիկ կենցաղում ու բանաւոր: Այդ վիճակն աստիճանաբար ստեղծուել է ինքնաբերաբար, առանց մասնաւոր աշխատի ու ճիգի: Ի հարկէ, Կոմիտասեան ժառանգութիւնը մասնագիտօրէն ուսումնասիրելն ու նրա արժանիքները պատշաճօրէն բացայայտելը առաջին հերթին երաժշտական

digitised by A.R.A.R.@

մտաւորականութեան գործն է եւ, վաղ թէ ուշ, նա՛ պիտի ասի իր հզրափակիչ խօսքը: Բայց, անկախ դրանից, համազգային կոմիտասասիրութիւնն էլ իր հերթին երեւի ինչ որ բան է նշանակում ու բնականաբար չի կարող բոլորովին անտեսուել:

Կոմիտասն իր երաժշտական հանճարը ժառանգել էր իր արիւնակից նախնիներից, ինչ որ, ի հարկէ, ինքնին եւս հայկական հարստութիւն է: Նա, ի հարկէ, կարող էր զոհանալ, ասենք, յատկապէս հոգեւոր երաժշտութեան մէջ խորանալով կամ էլ երաժշտական այլ բնագաւառներում կատարելագործուել ու փայլել: Բայց արդեօք ժամանակի տիրող մթնոլորտն ու ձգտումնե՞րն էին, թէ Կոմիտասի ներքին մղումները, որ դրդեցին նրա ուղին՝ հետազօտել ժողովրդական հոգու գաղտնաբանները, գտնել ու գտել դարերի միջով իրեն հասած երաժշտական հանճանիւթը եւ ի տես ու ի լուր աշխարհի հաստատել, որ «հայը ունի ինքնուրոյն երաժշտութիւն»: Ամէնից ուշագրաւն այն է, որ Կոմիտասը, հակառակ բոլոր ընթացիկ ու ճոճիմ անխուսափելի խոչընդոտների, իր այդ ուղին ընտրեց ու յամառօրէն շարունակեց բոլորովին գիտակցաբար, նպատակասլաց քննացմով, իր առաքելութեան լրիւ գիտակցութեամբ: Եւ հենց դրա մէջ է կայանում նրա հաստատման մեծութիւնը, որ իր բնատուր հանճարը անմնացորդ տրամադրեց հարազատ ժողովրդին, առաւել ինքնավստահութիւն ներշնչեց նրան եւ զինեց իր ջանքերով յայտնաբերած հոգեւոր զէնքերով: Այդպիսով Կոմիտասը դուրս եկաւ «երաժշտական գործչի» շարքային ու համեստ դերից եւ իր արդար վաստակի շնորհիւ դարձաւ ազգային միասնութեան երկնակարկառ փարոսներից մէկը, իր լոյսը հայկական հողի միջնաբերդերից տարածելով մինչեւ ամէնից հեռաւոր հայապիւռ անկիւնները: Նա կարողացաւ այդպիսի փարոս հանդիսանալ պարզապէս այն պատճառով, որ գտաւ ու վերաբաշխեց հայկական վաւերական ու ինքնուրոյն, հարազատ, հիմնատարր ու մատչելի երգը, իսկ այդ երգը իրականում անհամեմատ աւելի շատ սրտեր մօտեցնելու եւ ջերմացնելու զօրութիւն ունի, քան որեւէ այլ հանդիսաւոր հրաւէր ու կոչ:

Ճոքելեանական համաստեղութեան չորս մեծերից իւրաքանչիւրն իր կենսիով ու վաստակով, անշուշտ, որոշակի տեղ է նուաճել հայ գրականութեան ու արուեստի մշտահերկ ու մշտաբեղուն անդաստանում: Նրանցից իւրաքանչիւրը ծնուել է իր ատոմի տակ ու մեծացել իր միջավայրում, անցել իր ուղին եւ կրել իր ճակատագիրը, բայց բոլորը միասին «Մայր Հայաստանի որբօրէն բեղուն արգանդի» ծնունդ էին եւ նրանց ստեղծագործական վաստակը լիովին պատկանում է առաջին հերթին հենց իրենց ժողովրդին, իսկ ապա նաեւ մարդկային հոգեւոր համերաշխութեանը հաւատացող բոլորին: Այսպիսով, չորս մեծերի յոբելեան՝ մէկ տարուայ մէջ: Չորս տարբեր կենսիք ու չորս ճանապարհ, որ այժմ անուններ դարձած հանդիպում են ու միանում մեր օրերի մարդկանց սրտերում, ուժ ու վրստահութիւն ներարկում: Կանցնին ժամանակ եւ այդ ուժն ու վստահութիւնը կը ներարկուեն նաեւ յաջորդ սերունդներին: Ա՛յս է արդէն ազգային հաւաքականութեան կենսաբար զօրութիւնը եւ հոգեւոր նուաճումների անհատոյց փոխանցման ճշմարիտ ճանապարհը: Մի ճշմարտութիւն, որ յոբելեանները պարզապէս նորից յիշեցնում են ու աւելի ամրապնդում մարդկանց՝ ստեղծելու կամքը:

Լ. Մ.

27/10/1969 թ.

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ – 1906

digitised by . A.R.A.R.@

ԿՌՈՒՆԿ

Կռունկ, ո՞ւստի կու գաս, ծառայ եմ ձայնիդ
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս.
Մի վագիր, երամիդ շուտով կը հասնիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Թողել եմ ու եկել մըլխերս ու այգիս,
Քանի որ ախ կ'անեմ, կու քաղուի հոգիս
Կռուն, պահ մի կեցիր, ձայնիկդ ի հոգիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Քիչ բան հարցանողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կու գայ քան գլրի տղապ,
Կռունկ, Պաղտատ իջնուս կամ թէ ի Հալապ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Սրտերնիս կամեցաւ եկամք, գնացինք,
Այս սուտ աստնուորիս բաներն իմացանք,
Աղուհացկեր մարդկանց կարօտ մնացինք,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Աշունն է մօտեցեր, գնալու ես թռտալիր,
Երամ ես ժողուեր հազարներ ու բիւր,
Ինձ պատասխան չտուիր, ելար, գնացիր,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

ԿՈՄԻՏԱՍ

Կոմիտասի երգերը... Ի՞նչ ոգեկոչութիւն բնանկարներու եւ ի՞նչ ծաւալուն հովանոցի երազանք, այդ խաղերուն, այդ ձայնորդումներուն, այդ չեչտերուն մէջէն։ Եւ մարդ անբացատրելի երանութեան մը զգացումին տակ կը հարցնէ ինքզինքի, թէ երա՞ւ հայ գեղջկական հոգին եղած է այսքան քնարական, այսքան հարուստ եւ այսքան զգայուն։ Ցաւօրինա՛կ հակադրութիւն։ Արուեստի այս ստեղծագործութիւնը չի դար մեզի հայ ժողովուրդի ազնուական կատարներէն, չի դար մոգի ու գիրքի սակեզօծ բարձունքներէն, այլ կու գայ վարէն, մոգին խոնարհապոյն ատորուէն, գիւղէն ու գիւղացիէն։ Արօրն ու ակօսն է, որ ստեղծեցին այդ մեղեդիները, հովն ու ասրն է, որ գալնակները են պանոնք։ ԹՈՒՐՔԷՆ ՉԱՐԴԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ԿՈՒՏԻՆԱ՝ ԾՆՆԴԱՎԱՅՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Կուտինան, ինչպէս յաճախ գործածուած է հայ ձեռագիրներու մէջ, կամ Փէօթահիա, ինչպէս Թուրքերը կը կոչեն զայն, կը գտնուի Կ. Պոլսէն դէպի հարաւային արեւելք, 393 հազարամէթր հեռուն։

Էսկիշէհիրի եւ Գոնիայի միջեւ Կուտինայի մօտէն կ'անցնի Կ. Պոլսէն դէպի Պաղտատ երկարող երկաթուղին, որուն Ալայունդ կայարանին կապուած է Կուտինան 10 հազարամէթրոց մասնագիծով մը։

Կուտինայի արեւմտեան կողմը, բլուրի մը վրայ կիսաքանդ կը կանգնի բերդ մը, զոր Կուտինացին «Պարիսպ» կը կոչէ եւ որ բիւզանդական կառուցուածք է։

Կուտինան կը բովանդակէր 6000 տուն, մօտ 30·000 բնակչութեամբ, որուն 3·500 հոգին հայ, 6 հազարը՝ յոյն եւ մնացեալը Թուրքեր էին։

Հայերն ու յոյները Թրքախօս էին։ Հայկական Թաղը կը գրաւէր քաղաքին ճիշդ կեդրոնը եւ իր մէկ կողմէն կը վերջանար դէպի լեռը, «Սահան Տուրմազ» մակդեալով։

Վաճառականութեան իշխանները, մանաւանդ արմատքի եւ կերպասեղէնի մէջ, հայերն էին։ Հայ բնակչութեան գրեթէ կէսը նուիրուած էր կօշկակարութեան, որուն արտադրոյթները կը սպառէին շրջականները։ Հայկական սեփականութիւն էին դարբինութիւնը, վառարանաշինութիւնն

digitised by A.R.A.R.@

ու եւրոպական դերձակութիւնը։ Միւս հայարուեստը յախճապակեգործութիւնն էր, զոր ամբողջ Մերձաւոր Արեւելքի մէջ կուտինահայը, մինակը՝ իր ափին մէջ բռնած էր դարերով։

Ինստ կարեւոր ժամանակագրութիւն մը, որ սկսած է Կ. Պոլսոյ Թուրքերու կողմէն գրաւուելէն 8 տարի առաջ, 1445-ին, կը յիշատակէ Մայր Տաճարին չինութիւնը, որ աւելի հաւանաբար ընդարձակում մըն էր։

Առաջնորդուելով այս եւ ուրիշ տուեալներէ, կը հաւատամ, թէ Կուտինայի հայ գաղութը իր արմատը նետած ըլլայ օսմանեան իշխանութենէն առաջ, թերեւս ԺԱ-ԺԲ. դարերուն։

Կը պատմուի, թէ առաջին գաղթողները Կէրմիաններուն օրով են եղած, իրենց քահանային՝ Տ. Ոսկիի հետ, 7 տնուոր, որոնք Կուտինա հասնելուն՝ սկսած են պարապիլ ոսկերչութեամբ, դերձակութեամբ եւ, ոմանց կարծիքով, երկրագործութեամբ։

Կը թուի, թէ Կուտինայի առաջին գաղթողներուն գտած ջերմ ընդունելութիւնը կը քաջալերէ ուրիշ հայեր ալ գալու եւ գաղութը ստուարացնելու այն աստիճան, որ ԺԵ. դարուն արդէն անհրաժեշտութիւն կը ծագի երեք եկեղեցիներ ունենալու։

ԺԷ. դարուն վերջաւորութեան Կուտինայի հայութիւնը կ'ունենայ մեծ եւ կարեւոր յաւելում մը Գողթան գաւառի Ճղնայ գաւառէն։ Այս հատուածը իր ծննդավայրէն բաժնուած է 300 ընտանիքով, բայց Կուտինա հասած է ասոնորդուած։

ԺԸ. դարէն ետք զանդուածային ներգաղթը կը դադրի։ Բոլոր տարրերը ժամանակի ընթացքին կը համադրուին ու կը միաձուլուին։

Մեծ պատերազմին Կուտինահայութիւնը զերծ մնաց ամբողջ Թրքահայութիւնը խանձող կրակէն։ Բայց վերջէն Կուտինահայն ալ դժբախտութիւնը ունեցաւ ըմպելու իր ազգակիցներուն վիճակուած դառնութեան բաժակէն։ 1922-ի ամառը, երբ Իզմիր արշաւող հելլէն բանակը Կուտինա մտնելէ եւ ատեն մը մնալէ ետք նահանջեց, Կուտինահայն ալ վերջնապէս լքելով անհատական թէ համայնական ամէն ինչը՝ խուճապահար փախաւ իր դարաւոր բոյնէն...

❧

Ինչպէս կ'ակնկալուի որ ամէն ազգ նպաստ բերած ըլլայ մարդկային քաղաքակրթութեան շէնքը կառուցանելու գործին, այնպէս ալ իւրաքանչիւր դաղութ պարտաւոր է իր տուրքը հատուցանելու իր ազգին կամ հայրենիքին։

Կուտինահայը իր հոգիի խորքին մէջ պահած է հայեցի դեղեցկութեան ու մշակոյթին սերմերը եւ ատեն-ատեն ազգին ընծայած եկեղեցական ու արուեստագիտական չջարիելի արդիւնքներ։

Կուտինայի հայութեան փառապսակը կը կազմէ, սակայն, այն շարանցի տղան, զոր Կուտինացին արհամարհած եւ մէկ կողմ նետած էր, ա՛ն, որուն կեանքը մանկութենէն մինչեւ յաւիտենութեան անցնիլը հոգեկան գալարում մը եղաւ, ա՛ն, որ մեր ազնման հայրենիքին ամեհի լեռներուն հողմերէն, հովիտներու վրայ արածող ուլերէն ու գառներէն, գաշտերը հերկող գոմշուկներէն, ձորերու մէջ գլգլացող առուներէն եւ իր ստրականին եռուէն հառաչող չինականէն հունչեր խլեց եւ աստուածային դաշնակութիւններ յօրինեց՝ հիացնելով ու փղձկեցնելով ամբիոն ու արուեստասէրը, հայն ու օտարը։ Հա՞րկ է որ անունը տամ, երբ զայն չգիտցող չկայ։ — Կոմիտաս Վարդապետը։

ԱՌՆԱԿ

digitised by A.R.A.R.@



ԿՈՄԻՏԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ՝
ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԿԱԶՄՈՒԱԾ

1896-ին, Թիֆլիսի յայտնի վաճառական եւ բարերար Ա. Մանթաշեանի հաշուով՝ Կոմիտաս Վարդապետ մեկնում է Գերմանիա՝ կատարելագործելու իր երաժշտական կրթութիւնը: Այդ ժամանակուան Բերլինի կոնսերուատորիայի տնօրէն երաժշտագէտ եւ աշխարհահռչակ ջութակահար Իոախիմի խորհրդով նա մտնում է Ռիխարդ Շմիթի մասնաւոր երաժշտանոցը: Միեւնոյն ժամանակ համալսարանի մէջ նա հետեւում է պատմա-փիլիսոփայութեան ճիւղին:

Երեք տարի սովորելով Ռիխարդ Շմիթի երաժշտանոցում, 1899-ին վերադառնում է Էջմիածին եւ Խրիմեանի առաջարկով ստանձնում ճեմարանի երաժշտութեան ուսուցչի պաշտօնը: Զինուած երաժշտական լայն պաշարով՝ Կոմիտաս Ճեմարանի մէջ անձնատուր է լինում գործունէութեան մի նոր ասպարէզի: Առաջին հերթին աշակերտներից կազմում է օրինակելի երգչախումբ եւ Ճեմարանի դպրոցական երաժշտական գործը դնում իր բարձրութեան վրայ:

1904-ին, Ճեմարանի աշակերտներից կազմուած երգչախումբով նա տալիս է իր առաջին համերգը, Թիֆլիսի մէջ:

Կոմիտաս Վարդապետի առաջին համերգը յուզում է հայ հասարակական միտքը: Համերգի շուրջը ստեղծուում են մտքերի թեր եւ դէմ կարծիքներ: Թէ՛ հայ եւ թէ՛ ռուս մամուլի մէջ լոյս են տեսնում մի շարք գնահատական եւ քննադատական յօդուածներ:

Ե. Մ.

digitised by A.R.A.R.@

ՏԱՂ ԱՌ ԿՈՄԻՏԱՍ

Ի՞նչ զեղումներ հեշտանոյշ կը պարուրեն զիս խանդով
Երբ յանձնուիմ երգերուդ բիւրեղահունչ ծփանքին.
Կարօտաբաղձ ի՞նչ սէրեր, ի՞նչ խաղցրութիւն սիրաթով,
Որ հոգւոյս դէմ, Կոմիտա՛ս, Մայիսի պէս կը ծաղկին:

Ի՞նչ քնարով գովերգեմ լոյսն հանճարիդ արեշող,
Որ նոր աւի՛շ պարգեւեց հայոց երգի կալերուն.
Տաղերը մեր գեղչկական, տաղերն անյայտ ու անշող,
Ճպռտիդ տակ մոգական դարձան համերգ զօրանջուն:

Ո՞վ չէ լսած «Անտունի»դ եւ չյուզուած արցունքով,
Եւ չյիշած սէրն իր հին «Սոնա հար»ին դիրերգով.
Ո՞վ չէ տարուած հմայքովն «Հորովել»ին թախծանոյշ
Եւ չշնչած հայրենի մեր հանդերուն բոյրն անոյշ:

Շարականնե՞րն հնաւանդ լուսաւորչի՛ հաւատքին,
Որոնց տուիր նո՛ր երանգ, արուեստի վեհ իմացում,
Այնման խորունկ որ միստիք պատարագի սուրբ պահուն՝
Կը վերանայ ամէն հայ խորհուրդն ի վեր երկնային:

Քեզմով հայ երգը անտէր գտաւ վսեմ իր ճամբան
Գեղահնչուն խազերով եւ ապրումով բեզմնաւոր.
Քեզմով ազգիրն հայ երգի գտաւ հունն իր վերջնական
Եւ դաշներգեց, Կոմիտա՛ս, նման ձայնիդ քաղցրօրօր:

Դուն, յաւերժի մեծ զաւակ ծաղկած ծոցէն հայ ցեղին,
Քնարածուն դուն ճարտար հայրենաւանդ մեր ոգւոյն,
Երգերուդ հետ սիրահոս պիտի անո՛ւնդ ցնծագին
Հնչէ՛ յաւէտ, Կոմիտա՛ս, դարերու դէմ յարատեւն...:

ՑԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Դուն ճրպռտ մ'արդէն՝ նուրբ, եփեճաշող,
Ձայներդ մէկ-մէկ, ձայներդ խումբ-խումբ
Շուրջդ՝ ջուրերու պէս բլխեցրնող –
Եւ յանկա՛րծ՝ անոնց առջեւ եղող թումբ...

Եւ ճրպռտ մ'ուրիշ՝ դուն ինքդ ճարէն,
Ճրպռ'տ հրաշագործ զօրութեան մը ձեռք,
Ծրռռզ աջ ու ձախ՝ անցնող հայ երկրէն,
Կեցող արտերու, գիւղերու եզերք

Եւ գտնո՞ղ, ո՛վ դուն, ի՞նչ քաղցր, ի՞նչ առատ,
Գետնին տակ պահուած, հոսուն, գլգլուն,
Հայրենի Երգին աւազա՞նն անհուն...

Շարժեցա՞ւ հողը· ժայթքեց հուր, երկաթ...
Ցամքեցա՞ն, փախա՞ն ակերն ընդերկրեայ
Եւ ճրպռտն ընդմիշտ ճաքա՞ծ է հիմա...:

ՎԱՀԱՆ ԹԷՐԹԷՆԱՆ

digitised by A.R.A.R.@

Գործ՝ ՓՈԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Սովորականէն փիլ մը վեր եւ անսովորէն չա՛տ վար մակարդակներու վրայ ապրող մարդեր կան, որոնք, բոլոր ժամանակներուն, քըշնամի եղած են հողին, լոյսին, արտակարգին։ Այդ դասուն պատկանող մարդոց հալածանքին ենթարկուած են մեր գրականութեան գրեթէ բոլոր մեծ դէմքերը, Խորենացիէն մինչեւ Նարեկացի, Սայաթ-Նովայէն մինչեւ Աբովեան, Օշական ու Վարուժան, Մեծարենց ու Զարենց։

Կոմիտաս Վարդապետ չէր կրնար բացառութիւն կազմել ու չկազմեց։

Ժամանակիցներու վկայութիւններէն ու մեկնիչներու խօսքերէն առնելով՝ կը կազմենք հետագայ քանի մը էջերը, ի պատիւ մեծ Վարդապետին հանդէպ յարգանքով վարուող վոլկոգիներուն...։

●

Կոմիտասը երջանիկ չեղաւ էջմիածնում։ Այդ կենսուրախ, զուարթ, կատակող ու խնդացող մարդը, տարիների ընթացքում հետզհետէ լրջացաւ ու ինքնամփոփուեց, եւ երբ ես Ճեմարանից հեռացայ 1906-ին, այլեւս բոլորովին տարբեր մարդ էր, բան իմ տեսած առաջին տարիների Կոմիտասը։ Վանքը, այդ մեծագոյն բանբասարանը եւ խարդաւանքների բոյնը, Կոմիտասին էլ ընկենց՝ յուսահատութեան մատնելու ատելիան։ Տատասկոտ ճամբայ անցաւ ու զարհուրելի վախճան ունեցաւ։

Ծանօթ է Թարգմանչաց տօնի առթիւ Ճեմարանի հանդիսում Հայրիկի ցոյց տուած վերաբերումը, որ անսահման վիշտ պատճառեց Կոմիտասին։

Մի ուրիշ անգամ, երբ Կոմիտասը իր երգչախումբով պատրաստւում էր մեկնելու Թիֆլիս համերգներ տալու, վերջին պահին, Հայրիկը արգելք դրեց, թէեւ առաջուց համաձայնութիւն էր տուել։ Պէտք էր տեսնել Կոմիտասի յուսահատութիւնը։ արցունք էր գալիս նրա աչքերից։ Թիֆլիսից հասած խնդրանքի վրայ, Հայրիկը, ի վերջոյ, վերացրեց արգելքը, բայց նրա այդ քայլը անջնջելի հետք թողեց Կոմիտասի սրտում։

Հայրիկի շրջապատը, առհասարակ, չէր համակրում Կոմիտասին, եւ վերջինս գիտէր այդ։ Լուսարարապետ Ղեւոնդ Եպիսկոպոսը, օրինակ, որ Կոմիտասից առաջ դպրապետ էր եղել, տանել չէր կարողանում Կոմիտասի ներկայութիւնը տաճարում, սրբապղծութիւն էր համարում քառաձայն երգեցողութիւնը եւ չէր քաշւում Կոմիտասի հասցէին անարգական խօսքեր ուղղելուց։ Կոմիտասն էլ փոխադարձում էր – *չալղըմբ*։

Մասնաւորապէս վերջին տարիները, Կոմիտասը իրեն օտար էր զգում էջմիածնի միաբանութեան մէջ։ Երեւութապէս գրեթէ բոլորի հետ էլ խօսում-խնդում էր, բայց իրեն հարազատ էր զգում միայն Ճեմարանի մթնոլորտում, աշակերտութեան շրջանում եւ իրեն մտերիմ

digitised by A.R.A.R.@

մի քանի վարդապետների հետ: Վանքում նրա դէմքը աւելի եւ աւելի մռայլ տեսք էր ընդունում:

Եւ յիրաւի, վանքը քանդ էր նրա համար: Նրա արուեստագէտի թեւերը նախրել են ուզում ազատ օդում, վանքի խեղդիչ մթնոլորտը կապանք էր դնում նրա թեւերի վրայ: Քանի զարգանում էր նրա միտքը, որքան հարստանում էր գիտական պաշարը, այնքան ուժեղանում էր նրա մէջ արտայայտուելու պահանջը: Եւ վանքը զլանում էր նրան այդ հնարաւորութիւնը տալ:

Շուտով, 1906-ին, Կոմիտասը ինքն էլ հեռացաւ արտասահման: Էջմիածնի մթնոլորտը այլեւս անտանելի էր դարձել նրա համար: Արտասահմանի կեանքը, անշուշտ, աւելի եւս զգալի դարձրեց վանական հեղձուցիչ օդի ծանրութիւնը: Եւ այդ պատճառով, Եւրոպայից վերադառնալուց յետոյ, նա այլեւս չկարողացաւ երկար դիմանալ վանքում: Մի պահ, Իզմիրլեանի կաթողիկոսացումը նրան որոշ յոյսեր ներշնչեցին, թէ պայմանները կարող են փոխուել Էջմիածնում, բայց շուտով համոզուեց, որ սխալուած է: Ազատ մթնոլորտի պահանջը այնքան զօրացաւ նրա մէջ, որ ի վերջոյ որոշեց ընդմիշտ հեռանալ Էջմիածնից: 1909 թ. Սեպտեմբեր 5-ին, նա հետեւեալ դիմումը ուղղեց Իզմիրլեան Կաթողիկոսին.

Քան տարի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան եմ, մտել եմ այս հաստատութեանը ծառայելու նպատակով: Քան տարուայ ընթացքում լրջապատն ինձ թոյլ չի տուել ա՛յն անելու, ինչ կարող էի, որովհետեւ տեսայ մթայն որոգայթ եւ ոչ արդարութիւն: Նեարդներս թուլացել են, այլեւս տոկալու ճար ու հնար չունեմ: Ընդունում եմ հանդիսա, չեմ գտնում. ծարաւի եմ ազնիւ ոչխատանքի, խանդավառուում եմ, փափաքում եմ հեռու մնալ, խցել ականջներս՝ չլսելու համար, գոցել աչքերս՝ չտեսնելու համար, կապել ոտքերս՝ չդադարելու համար, ասնձել զգացումներս՝ չվրդովելու համար, բայց, զի մարդ եմ, չեմ կարողանում: Ինձս մեռնում է, եռանդս պաղում է, կեանքս մաշւում է, եւ միայն վարանումն է բոլոր գնում իմ առջեւ եւ սրտիս խորքում:

Եթէ հանոյ է Վեհին ինձ չկորցնել, այլ եւ գտնել, արտասուելով աղերսում եմ արձակեցէք ինձ Ս. Էջմիածնի միաբանութեան ուխտից եւ նշանակեցէք Սեւանայ մենաստանի մենակեաց: Քան տարի կորցրի, զուցէ մնացած տարիներս չահեցնեմ եւ անզորրութեամբ գրի առնեմ ուսումնասիրութիւններս պատզենները, իբրեւ առաւել կարեւոր ծառայութիւն հայ տառագէտ ազգ եկեղեցւոյ եւ գիտութեան:

Վեհափառութեանդ ծառայ եւ որդի
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ
Միաբան Ս. Էջմիածնի

Ինչպէս եւ բնական էր սպասել, Իզմիրլեանը մերժեց Կոմիտասի խնդրանքը: Յաջորդ տարի, 1910-ի աշնան, Կոմիտասը թողեց Էջմիածինը իր ծննդավայրը այցելելու պատրուակով: Այնտեղից անցաւ Պոլիս, ուր ընկաւ իր փնտռած տարերքի մէջ: Իր «Գուսան» համբաւաւոր երգչախումբով գերեց պոլսահայութեան սրտերը: Հմտերգներ տուեց նաեւ Իզմիրում, Եգիպտոսում, նոյնպէս արտասովոր փայլով:

Կոմիտասը Պոլսում էլ ունեցաւ հակառակորդներ: Ի միջի այլոց, նրա համերգների դէմ եղաւ այն օրերի Պատրիարքական փոխանորդ տխրահռչակ Ղեւոնդ Եպս. Դուրեանը, բայց ժողովրդական խանդավառ ոգեւորութեան մէջ խեղդուեցին այդ թշնամականների ատելութիւնները. Կոմիտասը իր փառքի գագաթնակէտին էր:

Եթէ չեմ սխալւում, նա մի անգամ էլ վերադարձաւ Էջմիածին՝ չեմ իմանում ինչ ակնկալութիւններով, բայց այս անգամ էլ այնտեղ չգտաւ իր որոնածը: Եւ այնուհետեւ, թօթափելով իր ոտքերի փոշին, ընդմիշտ հեռացաւ Էջմիածնից:

Ե. ՎՐԱՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

●

1906-ին, Իզմիրլեան Կաթողիկոսի օրով, Էջմիածնի վարդապետերի մէջ սկսում է յետագէմ շարժում Կոմիտաս Վարդապետի դէմ։ Նրանց ենթարկւում է նաեւ Կաթողիկոսը։ Եւ ծայր է տալիս խլրդայի հալածանք Կոմիտասի դէմ։

Զգուելով Էջմիածնում իր դէմ նիւթուած գաւադրութիւններից, Կոմիտաս Վարդապետը սրտի խորունկ ցաւով հեռանում է Էջմիածնից եւ 1909-ին անցնում է Պոլիս։

Պոլսի հայութիւնը, նոր ազատուած Սուլթան Համիտի բէժիմից, մեծ խանդավառութեամբ ընդունում է Կոմիտաս Վարդապետին, որի համար Պոլսում բացւում է գործունէութեան մի նոր ասպարէզ։ Նրա համբաւը տարածւում է ամբողջ Թուրքիոյ մէջ։

Պոլսոյ մէջ Կոմիտաս Վարդապետը կազմակերպում է երգչախումբ եւ տալիս է մի շարք համերգներ, որոնք թողնում են անասելի խանդավառ տպաւորութիւն։

Այստեղ եւս գտնւում էին յետադէմ և հնամիտ կղերականներ եւ մի քանի վատահոգի տիրացու-երաժիշտներ, որոնք նախանձելով Կոմիտասի փառքին՝ Պատրիարքարանի միջոցով փորձ են անում արգիլելու Կոմիտաս Վարդապետի համերգի հոգեւոր բաժինը։ Զաւականալով Պատրիարքարանի պաշտօնական գրութեան արգելքով՝ նրանք զանազան մեքենայութիւններ են լարում, դիմում են կառավարութեան՝ խափանելու համար Կոմիտասի համերգը։

Համերգի խափանման փորձերը ընդվզում են առաջ բերում պոլսահայ հասարակութեան մէջ, եւ հայ մամուլը պախարակում է այդ տգեղ դէպքը եւ Պատրիարքարանի բռնած դիրքը։

Ց. ՄԵՀՐԱԳԵԱՆ

●

Երբ Օսմանեան Սահմանադրութիւնը երկրին դուռները բացաւ, Կոմիտաս Վարդապետ մէկն եղաւ նոցս մտնողներին ու առաջին քայլը նետեց իր ծննդավայրը՝ Կուտինա։

Օրեր վերջը լսեցի, թէ Ս. Թորոս եկեղեցիի ընդարձակ գաւիթին մէջ 100-ի մօտ երկսեռ պարմանիներ խմբած՝ կը մարդէ ի նպաստ նոյն եկեղեցիի մէկ պարագին։

Փիլ առենէն վարժութիւնը կատարեալ էր։ Ինքը կը հիանար իր հայրենակիցներուն վրայ։ Կուտինահայ ժողովը գեղաձայն է ու գեղասէր։

Գիշեր մը համերգը տեղի ունեցաւ մարգարան ծառայող նոյն չրջանակին մէջ։ Թովիչ, խելայեղ բան մըն էր ան ու անսովոր երեւոյթ մը գաւառի խաղաղ ու միօրինակ կեանքին մէջ։ Կարծէք հրեշտակներու մեղանուշ մեղեդիներ կը հոսէին աւիրին վրայ տարածուող աստղազարդ երկինքէն։ Ժողովուրդը չուզելով բաժնուեցաւ, երբ համերգը վերջացաւ։

Պատարագ մըն ալ մատոյց առաջնորդանիստ Ս. Աստուածածին մայր եկեղեցիին մէջ Վարի թաղին թաղական խորհուրդին խնդրանքով, հակառակ անոր որ չէր սիրեր պատարագիչ ըլլալ։ Տաճարը նեղ կուգար երկու թաղերէն խռնուած ժողովուրդին համար։ Իր օրհներգութիւններն ու Ս. Գրական ընթերցանութիւնը, թէեւ պարզ ու կարճ, բայց անուշ ոյրդումներ կը պարունակէին. անոնք ձերբազատուած էին մեւս հոգեւորականներուն զիկզակումներէն ու յարաձգումներէն։ Թարմութիւն մըն ալ ան էր մեղի համար։

Բայց Կոմիտաս Վարդապետ հալածուեցաւ իր համաքաղաքացիներէն ալ։ Այնտեղ ալ կային սէրտէրներ ու աղաներ ազգականական կապերով իրարու զօդուած, որոնք իրենց տգիտութիւնով ու պահպանողականութիւնով կը փայլէին, ինչպէս ամէն տեղ։ Խաւարը միշտ թշնամի է լոյսին։ Այնոնք չքաշուեցան էհօյէմ անունը փակցնել այս զգայուն էակին։

Ու ցաւը սրտին՝ մեկնեցաւ Զմիւռնիա եւ Եգիպտոս, ուր համերգներու շարք մը տալէ ետք՝ հաստատուեցաւ Կ. Պոլիս, Բանկալթիի դերեզմանատունին ճիշդ դէմը։

ԱՌՆԱԿ

digitised by A.R.A.R.@

ՂՈՂԱՆՋ ՄԻՋԱԿՈՒԹԵԱՆ

Կարկին քաճակով
Կաթչ ու կաճաճով
Արտակաթգի դէմ գլուխ էր տալիս
Նայն ինքը... Ներին Միջակութիւնը:
Միջակութի՛ւնը...

Ցուցուել էր ահա
Ու տագնապում էր Միջակութիւնը:

Արիւնապակաս-գլաված խեղճերին
Ցնցի լեռմ քուաց այլ տոհմութիւնը.
Որ անչտուում է դրսից վառվռուն
Ու ահագնանում ցրտից շուրջբոլոր:

Ու մարդիկ, որոնց հոգիներ էր լոկ ոսր,
Իսկ հոգին ինի էր ու կարկտանուած,
Կենարար հովին, զովարար քամուն
Դայլերին իրրեւ տենդ թշնամու:

Ո՛վ Միջակութիւն ամխոտ բնութիւն,
Դու՝ մտքի մթոյն թաւաքանութիւն
Ու հաճրանաշուի հրդուեալ ոռոխ,
Դու՝ ամենայր հրկեի լաքուրի սեղակ
Գնուոզ-վանճառուոզ մտաչելի լեղակ,
Բոլոր դարերի դու մեծ յաչոգակ:

Ո՛վ Միջակութիւն,
Ո՛վ հրաճելի ցմռեի խակութիւն,
Խեքութիւն հոգո՛ւ, մտքի մանկութի՛ւն,
Գոհ տիպարը քո ուր ծամածռուեց,
Ինչպէս բուր ցուեց կամ փաչտացեց,
Ու խեղճ գիտեն ահա Մեսրոպ Մաշտոցի
Բոլո՛ր տառերով ի սպաս դրուեց
Սուտ-ցիտուսների անկակ բերանին,
Ու օտար ոչխի լեզուն շիւղն անգամ
Վերածուեց հսկայ բարդու գերանի:
Է՛լ սրբազործուած օրենքի խախտում,
Է՛լ արատաւոր մտքեր ու երգեր,
Է՛լ ստուեր տեսնել լուսի դարխտում,
Կամ – մեզա՛յ Աստծոյ, դրա՛խտը հերքել, –
Հազա՛ր մի տեսակ մահացու մեղքեր,
Առաքաստուոր հերքադրքուրի՛ւն,
Ոչ ու ի՛ՀՇ, ցախտ՝ն, խեղճ ատելութի՛ւն
Կիսուեցին ամբիր, քարդուեցին գրով
Նայն սուտ-սրբերի ամսուրբ ձեռքերով:

Գ. ՍԵՒԱԿ

digitised by A.R.A.R.@

ԱՇՏՈՒՇԻ

Largo ad libitum

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.



Սիրտըս նըման է էն փլած տըներ
Կոտրեր գեբաններ, խախտեր է սրներ,
Բուն պիտի դընեն մէջ վայրի հաւքեր,
Ելթամ ֆիկ թալեմ էն եղման գետեր,
Ըլնիմ ֆրկներու ֆագերաց ընկեր։
Ա՜յ, տա լա՜ճ տընաւեր։

Սեւ ծով մ'ես տեսէ, սիպտակն էր բոլոր,
Ալին կը զարկէր, չէր խառնի յիրար,
Էն ո՞րն է տեսէ մէկ ծովն երկաւոր,
Անտունի սիրտն է պղտոր ու մռլոր,
Ա՞խ, իսկի մի'լնիմ սրտիկ սեւաւոր։
Ա՜յ, տա լա՜ճ տընաւեր։

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍԻ ՆԱՄԱԿԸ Ս. ՋԱՒԱՐԵԱՆԻ

1908· 5/Թ·Ս· Ի· Ն·

ՅԱՐԳԵԼԻ Գ· Ս· ՋԱՒԱՐԵԱՆ·

Ընտրութիւններով զբաղուած լինելով, Ձեր նամակին անմիջապէս պատասխանել չկարողացայ, Երեցէք։

Ձեր գրութիւնն իմ սրտիս խօսեցաւ· շատ ուրախացայ ժամանակ, երբ հանապարհների հաղորդակցութիւնը բացուեցաւ։ Անշուշտ պիտի դամ եւ մեր ժողովուրդի սիրտը բանամ իր զաղջացի եղբայրների առաջ, սպասում եմ յարմար առիթի եւ հանգամանքների։ Դժուար թէ Ինձնեան ոտներին կարողանամ, մի դասեր ունիմ ձեմարանում։

Ուրախութեամբ կ'ուղարկէի երգեր, բայց ոչ ոք կարող է նոյն ոգին, արտասանութիւնը եւ ժայռեկան հնչիւնը ստորագրել տեղումդ եւ փոխանակ չինելու դոյնը կը ջանդուի անպիտակի ձեռքով· ուստի ապրքան համբերելուց յետոյ մի քիչ էլ կարելի է սպասել կարծեմ։

Ձորին յարգանքներով

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

digitised by A.R.A.R.@

«ՍՈՆԱ ՅԱՐ»

Կոմիտաս Վարդապետի Գոլսոյ մէջ ունեցած հինգ տարիներու ամենաբեղմնաւոր գործունէութեան անդրադառնալը աւելի հանդարտ եւ առատ ժամանակի կարօտ ըլլալով, – ինչ որ ինծի կը պակսի այս օրերս, – պիտի բաւականանամ «Սոնա Յար»-ի պատմութիւնով։

Պատմութիւնը այսպէս կը սկսի։

Մօտ 60 տարի առաջ՝ 1910-ին ամրան կիրակի մը, Թերեւս Համբարձման կամ Վարդավառի կիրակիներէն մէկը, Ղալաթիոյ դպրաց դասու երգչախումբը մայեսթրօ իշխոր Մանասի ձայնագրած քառաձայն պատարագը սկսած էր երգել արդէն, երբ իր անդամներէն Կարապետ էֆէնտի Պորտիպանեանի առաջնորդութեամբ, վեղարաւոր հոգեւորական մը եկաւ ու դասին աջ կողմը կանգնեցաւ։ Պատարագի արարողութիւնը հասաւ այնտեղ, ուր պատարագիչին «Ի սուրբ, ի սուրբ պատուական մարմնոյ» աղօթքին վերջաւորութեան, խորանին վարագոյրը կը դոցուի։ Այդ պահուն էր, որ վեղարաւոր հոգեւորականը դասին մէջտեղը եկաւ ծնրադրեց խորանին առջեւ եւ երկու ձեռքերը կուրծքին մօտեցուցած՝ «Տէր ողորմեա, Տէր ողորմեա» պաղատեցաւ։ Եւ ի՜նչ պաղատանք ... դարերու խորքէն յառնող ինչպիսի՜ հառաչանք...

Իսկոյն, ամենաարագ կերպով յայտնի եղաւ, թէ հոգիները թունդ հանող, սիրտերը ճմլող ձայնին տէրը նոյն ինքն Կոմիտաս Վարդապետն է, որուն «Մարերի վրայ գնաց» եւ «Ձիգ տու, քաշի» երգերը այդ օրերուն կը սերտէինք Սկիւտարի երգչախմբի մէջ մեծ հիացումով։

Պատարագի արարողութիւնը հազիւ աւարտած, Կոմիտաս Վարդապետի չուրջը կը բոլորուին երգիչները անպարագրելի պաղատանքով եւ կ'առաջնորդեն զինքը դպրաց դասու փոքրիկ սենեակը։ Մթնոլորտը մագնիսացած է հիացական բացագանչութիւններով։ Մէկը կը գոչէ. «Հայր սուրբ, ձայնդ անսպառ», ուրիշ մէկը կը մրմնջէ. «Տէր ողորմեայիդ մատաղ, հայր սուրբ»։ Շատերը միաբերան կ'աղերսեն. «Ամեն, Վարդապետ, ի՞նչ կ'ըլլայ, մեզի այս երգերը սորվեցուր»։ Ո՞ր մէկը, ո՞ր մէկը. անվերջանալի ազաչանք ու պաղատանք...։

Կոմիտաս Վարդապետ հանդարտութեամբ կը պատասխանէր. «Ես եմ գնալու եմ Քէօթահիա, մի քիչ հանգստանալու. Մտածելու բան է, համբերէք...»։

... Եւ համբերեցինք։ Սպասեցինք եւ յուսացինք ... Շաբաթները շաբաթներուն յաջորդեցին, եւ ահա կիրակի օր մը, Օգոստոսի վերջը կամ Սեպտեմբերի սկիզբները, հաւանաբար, Կոմիտաս Վարդապետ Ղալաթիոյ եկեղեցին եկաւ դարձեալ։ Պատարագի արարողութենէն ետք անմիջապէս իր չուրջը հաւաքուեցանք, մեզի հաւաքող մեղուներու պէս։ Զեմ յիշեր այժմ, թէ ինչպէս կամ ինչպիսի սրտաբուխ խօսքերով կրկնեցինք մեր եռե-

digitised by A.R.A.R.@

ւեփող զգացումները։ Կոմիտաս Վարդապետ՝ երբեմն խոհուն, երբեմն ժպտուն, մտիկ կ'ընէր եւ երգչախումբ կազմելու զանազան դժուարութիւններու մասին կ'արտայայտուէր։ Ցարուցած իւրաքանչիւր կէտերուն դիւրաւ հարթելի ըլլալը կը բացատրէինք այնպիսի պատրաստակամութեամբ ու նուիրումով, որ վերջապէս Կոմիտաս Վարդապետի տարօրէն խոհուն աչքերը սկսան պճլտալ։ «Լա՛ւ, լա՛ւ, փորձենք» ըսելը բաւական էր, որ այդ փոքրիկ սենեակը ծափերու եւ խնդութեան կրկէսի մը վերածուէր։

Իր հսկողութեան տակ անմիջապէս շարագրուեցաւ յայտարարութիւն մը, թէ Կոմիտաս Վարդապետ համերգ մը տալու համար Պոլիս պիտի մը-նայ եւ մեծ երգչախումբ մը պիտի պատրաստէ։ Ցաջորդ առաւօտ թերթերու մէջ երեւցած այս փոքրիկ յայտարարութիւնը աւելի քան բաւական էր, որ Պոլիսը իլլտի։ Կեդրոնականի, Պէրպէրեանի, Խայեանի ուսուցիչներն ու ուսանողները, զանազան երաժշտական մթութիւններու անդամներ, համալսարանականներ, տարեցներ ու երիտասարդներ, ամբողջ շաբաթուայ ընթացքին, խումբ-խումբ կը լեցնէին Կեդրոնականի եւ Խայեանի սրահները՝ արձանագրութեան եւ ձայներու քննութեան համար։ Ի՞նչ օրեր... ի՞նչ օրեր...

Ահա այսպիսի բաբախուն խանդավառութեամբ սաղմնաւորուած, աւելի քան 300 հոգիէ կազմուած երգչախումբը, անհամբեր կը սպասէր յաջորդ Երկուշաբթիին, երբ պիտի սկսէինք խմբական առաջին մասնակի վարժութիւններուն, «փորձ»-երուն։

Վերջապէս եկաւ Երկուշաբթին։

Սաստիկ կը դժուարանամ բացատրել այն անբացատրելին, որ այս պահուս, 60 երկար տարիներու անջրպետի մը մէջէն, կ'ողողէ ու կը դալարէ իմ հոգիս։ Խոր յուզումով կ'ապրիմ, կը վերապրիմ այդ անբացատրելի պահը, այն վայրկեանը, այն երկվայրկեանը, երբ որ Կոմիտաս Վարդապետ Ղալաթիոյ հինաւուրց եկեղեցիին բակը կը մտնէր։ Կարծես թէ մեր երազներու թագաւորն էր, որ կու դար։ Բակէն մինչեւ Կեդրոնական վարժարանի սանդուխները, անկէ դէպի ամփիթատրոն բարձրանալու մեր թոհուբոհին մէջ մեզ այնպէս կը թուէր, թէ երկինք կը բարձրանայինք...

Վերջապէս, եթէ երկինք չբարձրացանք, հասանք ամփիթատրոնի մեծ սրահը, աղմուկով, հեւքով ու հրմշտուքով։ Կոմիտաս Վարդապետ հանեց իր արտաքին պարեգօտը, ծալեց ու դրաւ դրասեղանին վրայ։ Յետոյ հանեց իր դրպանէն ժամացոյցը, նմանապէս դրաւ սեղանին։ Յետոյ ձեռքին ցուցակին համաձայն, որ իւրաքանչիւր երգողի ձայնի եւ դոյնի դասաւորումը կը ներկայացնէր, սկսաւ թենորներէն մինչեւ պասերը շարքաւորել՝ կարգալով իւրաքանչիւրի անունը մէկիկ-մէկիկ, երբեմն-երբեմն կատակներ ու սրամտութիւններ ալ փախցնելով, օրինակ, ապիտակավարդն՝ Վարդան Ակիւլեան, ադամանդազարդն՝ Գուրգէն Էլմասեան, եւայլն։

Երգողները ամփիթատրոնի երկար եւ աստիճանական նստարաններուն վրայ տեղաւորուած էին արդէն։ Ամէն ոք աչք ու ականջ կտրած էր։ Երբ Կոմիտաս Վարդապետ ձեռքերը բարձրացուց, այլեւս ոչ մէկ ձայն ու շշուկ կար, լռութիւնը բացարձակ էր։ «Հիմա անցնինք գործի», — ըսաւ այնպիսի շեշտաւորումով ու հրկարացումով մը, որ կարծես թէ կը հեգէր՝ աւելի իմաստաւորելու համար, — գործերիս՛...

Եւ սկսանք գործի... Գործերնիս էր ձայն հանել սորվիլ։ Այսինքն՝ ինչպէս շունչ առնել, բերանը բանալ, ինչպէս փոփոխել մեր շրթունքնե-

digitised by A.R.A.R.@

բուն գիրքն ու բացուածքը հայերէն ձայնաւորները, – ա–էն մինչեւ օ, – ճիշդ հնչելու համար եւայլն։ Այս զանազան վարժութիւնները հաճոյքով եւ դիւրութեամբ կը կատարէինք՝ առանց անդրադառնալու, թէ ասոնք էին երգելու արուեստին հիմունքները։ Վարժութիւններէն ետք էր, որ սկսաւ բուն գործը, պամ–պամ–ներուն դրոհը։ Նախ սերտեցինք պամ–պամ–ները պայթեցնելու տարբեր ձեւերը։ Ապա սերտեցինք չորս ձայներու բաժնուած պամ–պամ–ներու չափն ու կշիռը առանձին–առանձին։ «Հիմա միացնեմ այս բոլորը, ուշադրութիւն, իմ ձեռքիս հետեւեցէք», – ըսաւ Կոմիտաս Վարդապետը։ Կոմիտաս Վարդապետի ձեռքի շարժումները որքան կը լայնային, մենք ալ մեր պամ–պամ–ներով օգը կը թնդացնէինք։ Պամ–պամ–ներու այս կատարեալ համաչափութիւնէն յափշտակուած էինք, երբ լսեցինք Կոմիտաս Վարդապետի հոգեպարար ձայնը, որ մեր պամ–պամ–ներուն կ'ընկերանար, երգելով. «Սոնա եար, Սոնա եար, Սոնա սիրուն, Սոնա եար»։ Հարկ կա՞յ ըսելու, թէ բոլորս մէկ, անզսպելի մղումով մը ոտքի ելած էինք եւ ծափերու հեղեղանման որոտումներով ամփիթատրոնի պատերը կը սարսեցնէինք։

Շաբաթուայ յաջորդ օրերը ուրիշ նոր երգեր ալ սերտեցինք անշուշտ, բայց շեմ յիշեր, թէ որ երգերն էին ասոնք։ Ամբողջ շաբաթը մեծ անձկութեամբ կը սպասէինք կիրակի օրուան ընդհանուր «փորձ»–ին, որ խայտան վարժարանի մէջ պիտի կատարուէր։ Որոշուած ժամէն շատ առաջ արդէն հասած էինք բոլորս ալ՝ աղաքներ, աղջիկներ, նոյնիսկ փոքրահասակ ձայնեղ մանչուկներ։

Կոմիտաս Վարդապետի սրահէն ներս մուտքը անշուշտ դարձեալ դիմաւորուեցաւ ծափերով ու մեծ ոգեւորութեամբ։ Աղջկանց եւ աղայոց խումբերը ըստ հասակի ու ձայնի կարգին դասաւորուելէ ետք, բարձրացաւ ցածլիկ պատուանդանին վրայ, այս անգամ պարեգօտով ու գլխով։ Առաջին երգը պիտի ըլլար դարձեալ «Սոնա եար»–ը։ Մեղմ կերպով կրկնեց իւրաքանչիւր խումբի ձայները, բարձրացուց ձեռքերը, որ կարծես պարեգօտին լայնեզր թեւերէն դուրս ցատկող թռչուններ ըլլային։ Եւ ահա բոլոր շրթունքները «Սոնա եար»–ի մերթ վառվռուն, մերթ օրօրուն ալիքներու փրփուրներովն ու բոյրովը կը քաղցրանային, եւ այս 300 շրթունքներէ դուրս թռչող ձայները կարծես թիթեռնիկ դարձած Կոմիտաս Վարդապետի թռվռուն մատներուն շուրջ պար կը դառնային։ Երբ երգը վերջացաւ, բոլորս մէկ, – 300 հոգինոց բանակ մը, – մեր ոտքերուն վրայ դամուած, պահէկ մը լուռ եւ ապշահար մնացինք։ Բայց վայրկեան մը սիայն։ Ապա դմայլքի եւ խնդութեան աղաղակներու հեղեղի մէջ կորսուած էինք եւ այնպէս կը զգայինք, թէ գարնան արեւին բացուող երիվարներու նման, հայ երգի գեղահրաշ դաշտին կանաչութեան կը վազենք։

Կոմիտաս Վարդապետի դէմքը անհունօրէն պայծառ էր, թէեւ զուսպ ու ինքնամփոփ։ Երբ փոթորիկը հանդարտեցաւ, իր յուզումը պարակել չանալով, կէս մը հեգնանքով ու ծիծաղով, իր այլեւս ծանօթ, փաղաքշական ու քնքուշ յանկերգը կրկնեց. «Վա՛յ, քիրթէնիքէլէնիր, վա՛յ», անմիջապէս աւելցնելով. «Շատ ապրիք, շատ՝տ ապրիք»։ Քիչ յետոյ տիրաբանը ականջին տանելով, յաջորդ երգի ձայները տուաւ եւ սկսանք սերտել այդ մէկը մէկէն դիւրթիչ երգերը։ Չեմ յիշեր այս պահուս, թէ ինչ երգեր էին յաջորդ երգերը, – բայց դիտեմ, թէ «Սոնա եար»–ով էր, որ առաջին անգամ գերեց մեզ եւ իր ոգեղէն անմահ լուսնով ողողեց մեր սրտերը մշանջենապէս։

digitised by A.R.A.R.@

«Սոնա եարս»-ի պատմութիւնը հոս չի վերջանար դեռ։

Շաբաթներ ետք Կոմիտաս Վարդապետի առաջին համերգը պիտի տրուէր Գոլսոյ, Փըթի-Շանի թատրոնին մէջ, ծովածաւալ բազմութեան մը ներկայութեան։ Հայ գեղջուկի բերանէն քաղուած եւ Կոմիտաս Վարդապետի հանճարի հուրով փայլատակող այս երգերը իրենց պամ-պամ-ներով, վայ լէ, լէ-ներով, լօ, լօ-ներով, պիտի փարատէին Գոլսոյ կամարին տակ թանձրացած տարակուսանքի եւ թերահաւատութեան սնամէջ մշուշը, կայծակնահար պիտի քանդուէին կոշկոռացած հնամենի պատնէշները։ Գոլիսը յարութիւն կ'առնէր։ Գոլիսը, – արեւմտահայութեան սիրտը, – զրաւուած էր։

Այս պամ-պամ-ները, – «Սոնա-եարս», «Անձրեւն եկաւ շաղալէն», «Իմ չինարի եարը», «Կուժն առայ», «Սիփանայ քաջերս», – շուտով պիտի արձագանգէին մինչեւ հեռաւոր դաշտերը, մինչեւ մեր աւանդական լեռներու փէշերուն տակ ծուարած հիւղակներն ու ամենախոր անկիւնները։ Եւ ամէն հայու հոգի պիտի բոցավառէր այնպիսի՛ հրեղէն շունչով մը, որ այլեւս չպիտի մարէր, նոյնիսկ հետագայ աքսորի ու ջարդի արհաւրալից օրերուն։

Կոմիտաս Վարդապետի 60 տարի առաջ կատարած հրաշագործութիւնը, որ «Սոնա եարս»-ով սկիզբ առաւ, շրջս տարի յետոյ, արհաւիրքը դեռ չհասած, դիւերուայ խաղաղութեան մէջ մոմի մը լոյսի տակ թել առ թել պիտի հիւսէր դարերու մէջէն եկող Պատարագի սրբատաշուած պատառը, հին դարերու խորհուրդը նոր դարերու խորհուրդին պիտի կապէր։

Կոմիտաս Վարդապետի հրաշածին շունչով օծանուած՝ «Սոնա եարս»-ի այս փոքրիկ պատմութիւնը, – որ հայ երգի լայնածաւալ դաշտին մէջ ծաղիկն է միայն, – այլեւս ոչ սկիզբ ունի եւ ոչ ալ վախճան։ Ահա այսօր՝ անցած հարիւր տարիներու հոգեպարար այս հեւքը, կաթի ու արիւնի փոխակերպուած, մեր կուրծքերուն տակ կը բաբախէ այնպիսի ուժգնութեամբ, որ այլեւս ոչ դուլ ունի, ոչ դադար եւ գալիք հարիւրաւոր տարիներու հոլովումի ընթացքին նոր ի նոր հասակ նետող մեր զաւակները երանի պիտի տան այն երանելի՛ օրուան, որ Կոմիտասը ծնաւ։

Ձայնդ անպա՛ռ, Վարդապետ...

ՄԻՀՐԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Կոմիտասի Պոլսոյ Երգչախումբը

ԿԱՆՉԷ՛ ԿՌՈՒՆԿ, ԿԱՆՉԷ՛

Ցանախ կը փորձուինք հարցնել.— Վարդապետը այս փառքին պիտի հասնէ՞ր եւ իր մշակած կամ յօրինած երգերը այսքան պիտի ծաւալէի՞ն, եթէ դուրս ելած չըլլար էջմիածնի վանքէն:

Մանաւանդ, եթէ Պոլիս հանդիպած չըլլար...

Իր արուեստագէտի բնազդը այլեւս չէր կրնար հանդուրժել վանական սահմանափակ մթնոլորտին:

Միւս կողմէ, իր շփումը՝ ժողովուրդին հետ, թեւ կու տար իր երեւակայութեան եւ աշխատանքին:

Նեղ էր հորիզոնը՝ վանքէն Եւրոպա, ուր անհշան համբաւներ միայն ունէինք այն ատեն:

Գարուն մը կը բացուէր, խանդավառութեան ազդիւրները կը հոսէին, փոխադարձաբար, երգ ծփուն եւ ծարաւի բազմութիւն մը կը խլրտէր իր շուրջը:

Փրկարար եղաւ այդ շրջանին հանդիպումը, Պոլսոյ մէջ:

Կոմիտաս իր դիմացը կը գտնէր ժողովուրդ մը, որ թմբուքեան դատապարտուած էր, արիւնազանգ բռնակալութեան մը թաթին տակ:

Այդ ժողովուրդը իրաւունք չունէր հրապարակաւ երգելու կամ լսելու ազգային, մինչեւ անգամ ժողովրդական եղանակներ:

«Շարքի»-ն կը տիրապետէր: Իրեն հայկական երգ՝ մարդիկ ստիպուած էին գոհանալ շարականներով, կամ դպրոցէն աւանդուած տժգոյն եղանակներով:

Ամէն ինչ այնպէս դասաւորուած էր, որ հարազատ ոգին ոչ թէ կը զարգանար, այլ կը խեղդուէր, այլուր փոխադրուելով:

digitised by A.R.A.R.@

Բառին բուն իմաստով յեղաշրջում տեղի ունեցաւ, երբ Վարդապետին կազմած խումբը առաջին երգահանդէսը կու տար Բերայի մէջ (1910)։

«*Էն ինչ չունչ էր...*», պիտի ըսէր Խ. Աբովեան։

Հայաստանի գարունը Պոլիս արշաւած էր իր բազմերանգ ծաղիկներով։ Ցնծութեան կանչերով։ Արօրներով ու օրօրներով։ Շողերով ու ցօղերով։ Սոնա «եարս»-ներով ու պարերով։ Այլեւ տմենաչան աշխատութեամբ։ Վարուցանով եւ հունձքով։ Մամիկներու օրհնութեամբ եւ մանուկներու կենսուրախ ճիչերով։

Սիրտերը զուարթացան։ Միտքերը թարմացան։ Աչքերը սկսան շողալ։

Ճշմարիտ առաքեալ, կոմիտաս նոր հորիզոն կը բանար, ոգի ներշնչելով ինքը ծուռ ժողովուրդի մը։ Զայն կ'առաջնորդէր դէպի գիտակցութիւն։ «Դէպի աղբիւրը լոյսին»։

Այնուհետեւ երգահանդէսները կրկնուեցան թագէ թագ։ Նոր երգերը շրջան կ'ընէին բերնէ բերան, հանդիսաւոր առիթներու մէջ, կամ տունէ տուն։

Վարդապետը տաղանդաւոր աշակերտներ ալ ունեցաւ։ Կազմուեցան այլազան երգչախումբեր։

Եւ երբ սեւ օրերը եկան եւ զանգուածային արտագաղթ մը տեղի ունեցաւ, պատրաստ հերթափոխներ ունէինք, որոնք արտասահման փոխադրեցին թանկագին ժառանգութիւնը։

Ամենք ալ իրենց կարգին տմենցան, զանձարանը նորոգելով, ճոխացընելով նոր ուժերու հետ։

Հայրենիքն ալ իր կարգին։

Եւ այսօր, կոմունկները կը կանչեն ամէն տեղ.

Ալիարհ է արեւակ, սիրուս կարօտ է...

Որքան երկար տեւեց այդ կարօտը, – ծարաւ ազատութեան, հայրենիքի եւ յարատեւ խաղաղութեան։

Այն ալ՝ անհար ժողովուրդի մը համար, որ ուրիշ բան չ'ուզեր, եթէ ոչ իր ազատ բոյնը՝ աշխարհի արեւուն տակ...

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

digitised by A.R.A.R.@



Կոմիտաս Աղեքսանդրիոյ մէջ

ԿՈՄԻՏԱՍԸ ՀՄԱՅԱԾ Է...

Կոմիտասը մեծութիւն էր նաեւ օտարներու համար։ Եւրոպայի արուեստագէտները անոր մէջ տեսան հայկական մշակոյթի ինքնատիպ խորութիւնը, զարմացան եւ սիրեցին։ Անոր մասին հիացմունքով խօսած են երաժշտական աշխարհի ամենայայտնի հեղինակութիւնները։ «Եթէ Կոմիտասը գրէր միայն «Անտունի»-ն, այդ ալ բաւական կ'ըլլար զինք մեծ արուեստագէտ համարելու», խոստովանած է Ֆրանսայի հռչակաւոր երգահան Գլոտ Տեպիւսի։

1899-ին, Միջազգային Երաժշտական Ընկերութեան պատուէրով, Կոմիտաս Գերլինի մէջ վերմաներէնով կը կարդայ բանախօսութիւն՝ «Հայոց եկեղեցական եւ աշխարհիկ երաժշտութիւնը» թեմայով եւ կ'երգէ պատարիկներ հոգեւոր եւ աշխարհիկ երգերէն։ Արուեստագէտները կը խնդրեն Կոմիտասէն կրկնել դասախօսութիւնը, իսկ Գերլինի օփերայի թենորը, հայ երգահանին կ'առաջարկէ երգել օփերայի մէջ։

«Երգիչի իմ կարողութիւնները մէկ նպատակի կը ծառայեն, մեծ ժողովուրդիս երգն ու երաժշտութիւնը ծանօթացնել երաժշտական աշխարհին եւ ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդը սկզբնական դարերէն, ունեցած է իր ինքնուրոյն երգն ու երաժշտութիւնը», ներողամտութեամբ մերժած է Կոմիտաս։

digitised by A.R.A.R.@

1914–ին, Փարիզի մէջ տեղի ունեցած Համաշխարհային Երաժշտական Ընկերութեան հերթական համագումարին մէջ, Կոմիտաս հանդէս կու գայ երեք բանախօսութեամբ։ Աշխարհահռչակ երաժշտագէտներու խնդրանքով, ան Փարիզի հայկական եկեղեցիին մէջ կու տայ անսովոր համերգ մը՝ Բաբայեան քոյրերու եւ Արմենակ Շահմուրատեանի մասնակցութեամբ։

Համերգին ներկայ գտնուող աւստրիացի մեծ երաժշտագէտ Ադլէր, մօտեցած է Կոմիտասին եւ ըսած. «Ձեմ դիտեր, եթէ Աստուած հայոց ձայնը չլսէ, հապա որո՞ւ ձայնը պիտի լսէ»։

Կոմիտաս տուաւ հայ ժողովրդական եւ հոգեւոր երգերու համերգ մը՝ հիացում պատճառելով ներկայ երաժշտական հեղինակութիւններուն...։ Անոր դասախօսութիւնները, համագումարի նիստերուն, ամենաթանկագինը եղան։

«Երբ Կոմիտաս նստաւ դաշնամուրի մօտ, մեղմօրէն երգելու համար հայկական երգ, ունկնդիրները քարացած էին, լուռ, եւ հոն տիրեց այն վեհապանծ հմայքը, այն գերագոյն պարզութիւնը, որ կը բխի հայկական երաժշտութենէն», – հիացած գրած է Սորպոնի համալսարանի փրոֆեսէօր Ֆրեսերիք Մաքլէր։ Իսկ գերմանացի հռչակաւոր երաժշտագէտ Ֆրանց Կարլ Էնտրէսի Կոմիտասը անուանած է «մեծահանճար Վարդապետ» եւ ըսած է. «Հայկական երաժշտութիւնը կը ներկայացնէ անհուն գեղեցկութիւն։ Այնտեղ կան իրական գանձեր Եւրոպայի համար անծանօթ»։

Կոմիտասի երգերու եւ պարեղանակներու մեղեդայնութիւնը, արեւելեան ճկունութիւնը եւ բազմաձայնութիւնը մեծ տպաւորութիւն թողած են Վիեննայի համալսարանի փրոֆեսէօր, երաժշտագէտ Վէլէշ Եկոնի վրայ, որ յատուկ ուսումնասիրութեան առարկայ դարձուցած էր հայ երաժշտի ստեղծագործութիւնը։ «Կը զարմանամ Կոմիտասի արտակարգ ընդունակութիւններուն վրայ։ Շատ լաւ իմանալով ժողովրդական երգը, ան այդ երգերը ներդաշնակած է հազուագիւտ ճաշակով եւ ճշդօրէն։ Այն բոլոր երգերը, որ ես անձամբ լսեր եմ Կոմիտասէն եւ կամ ուսումնասիրած, ամէնէն առաջ մէկ բան կ'ապացուցեն, որ Կոմիտասը եղակի դէմք է, իբրեւ ներդաշնակող, իբրեւ բազմաձայնորդ»։

Կոմիտասը շրջեցաւ քաղաքակիրթ Եւրոպա, տեսաւ ու զգաց անոր հմայքը, ոսկեայն, չմոռցաւ կապոյտ լեռներու եւ լիճերու առասպելական երկիրը. «Իտալիան լաւ գեղեցիկ է, բայց մեր դժբախտ հայրենիքը աւելի գեղեցիկ է»։ Ան կը պաշտէր Խորենացին, Նարեկացին։ Իսկ Ս. Աբովեանի «Վէրք Հայաստանի» երկը իր հետ տարած էր Գերմանիա եւ իբրեւ աղօթագիրք ամէն օր կը կարդար։

Ան մտադիր էր Պոլսոյ մէջ բանալ հայկական երաժշտանոց, ամբողջութեամբ լոյս ընծայել իր մշակած ու ստեղծած բոլոր եղանակները, գրել «Վարդան Մեծ», «Սասնայ Ծռեր», «Քաղաքավարութեան Վնասները», «Անոյշ» օփերաները։

Եւրոպացիները կը սիրէին երգչներով ապրող մեծ երգահանը, որովհետեւ ան ամէնէն առաջ հայ էր, ինքնատիպ ու խորունկ, ինչպէս մեր տաճարներու եւ երգերու հինաւուրց երկրի հազարամեայ անընդմեջելի ձայները։

Ա. ՍԱՀԱԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

1906 Դեկտեմբեր 1-ին, Փարիզի մէջ տուած կոմիտասի մեծ երգահանդէսին առիթով, յայտնի երաժշտագէտ Լուի Կալաւա ստորագրած է հետեւեալ յօդուածը, որ մեծ Վարդապետին տարածած երաժշտական աշխարհասփիւռ լայնին մէկ վկայութիւնը կը հանդիսանայ։

«Հոգ ոչ չափազանցութեան մեղադրանքը պիտի ընէ ինձի, եթէ ըսեմ, թէ այս նուագահանդէսը յայտնութիւն մը և վայելանք մը եղաւ։ Մենք ոչ մէկը կրնար մոքէն անցընել դիւցազկութիւններն այդ արուեստին, որ խկապէս ո՛չ եւրոպական է եւ ոչ արեւելեան, այլ ունի նկարագիր մը՝ աշխարհի մէջ մէկ հատիկ՝ չնորհալի քաղցրութեան, խորաթափանց յուզման եւ ազնիւ գորովի։ Եղանակները փափուկ եւ ասկայն որոշ թաւալումներով, ճկուն եւ կենդանի կշռոյթներ, երաժշտութիւն մը, որ ամբողջապէս սրտէ կը բխի եւ կը հոսի ինչպէս ջուր մը զով, թափանցիկ եւ պայծառ։ Արեւ կայ այդ երգերուն մէջ, բայց ոչ լափող արեւը Արարատոյ եւ Պարսկաստանի անապատներուն· լոյս մը ոսկեգոծ համակ երկնային, որուն ջերմութիւնը փայփայանք մըն է սարերու ապառաժութեամբ, անտառներու կանաչութեանը եւ կարկաչող առուակներու ցոլքերուն... Հայաստան ընտրբեալ աշխարհ մըն է արդարեւ, ուր բեղմնաւոր եւ բարեացակամ բնութիւնը իր բարիքները կը շռայլէ մարդուն...

«Մարդոց հոգին այդ բարեբաստիկ աշխարհին արժանի մնացած է, պահած է ինքն իր խորքը, իր բնիկ մաքրութիւնը, իրերու բարութեան վրայ իր վստահութիւնը եւ իր լոյսի եւ կեանքի սէրը։ Եւ պարզասիրութեան այդ անգին պանմը, զոր ո՛չ թուրքերը, ո՛չ քիւրտերը, ո՛չ ռուսները կրցած են ըմբռնել ու յափշտակել, մեզի փոխանցուած է անեղծ այդ գեղգիծ երգերուն մէջ, ծաղիկներ երփնավառ ու բուրումնաճոխ։ Սիրոյ երգեր են մելամաղձիկ ու հրայրքոտ, բայց գեղեցկութեան հանդէպ խանդաղատապին յուզման մասնայատուկ երանգով մը։ Աշխատանքի երգեր, երկայն կոչադաղակներ հարուստ ձայնաւորումներով, մէկ լեռնէն միւսը արձագանգելու ուհմանուած եւ աշխատանքի մղելու «ջան» եղը, եղբայրը, բարեկամը, գրեթէ սրտակիցը հայ երկրագործին։

Եկեղեցական երգերը նոյնպէս բոլորովին ժողովրդական, ոչինչ ունին այն քիչ մը վախկոտ յարդանքէն, որ մեր Գրիգորեան երգեցողութիւնը կապուած կը պահէ նոյնիսկ իր յոյսի եւ վստահութեան պահերուն մէջ։ Անոնք գեղումներն են հոգիի մը, որ ինքզինքը ամբողջովին կը բանայ իր Աստուծոյն եւ անոր կը յանձնէ, սիրոյ խոյանքի մը մէջ, իր բոլոր մտածումներն ու իր կեանքն ամբողջ։ Անոնց մէջ թրթռալը կը զգացուի հրավառ ու միատեղ հաւատքի մը, որ առանց ճիգի կը հասնի յափշտակութեան կատարներուն»։

ԼՈՒԻ ԼԱԼՈՒԱ

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

★

Մոսկուայի եւ Բերլինի թատրոններում երգահան եւ Թիֆլիսի երաժշտանոցին ուսուցչապետ Փրոֆ. Հարտման, 14 Յուլիս 1921-ին այցելած է «Ազատամարտ»-ի խմբագրատունը եւ հետեւեալը արտայայտած է Կոմիտասի մասին։

«Թիֆլիսի մէջ ծանօթացայ ո՛չ միայն հայ երգիչներու եւ երաժիշտներու, այլ նաեւ հայ ժողովրդական երաժշտութեան։ Նոյնպէս հիացումով ծանօթացայ կատարած գործին Կոմիտաս Վարդապետի, որ ո՛չ միայն հայ, այլեւ միջազգային երաժշտութեան մեծ վարպետներէն մէկն է։ Վարդապետը հայ երաժշտութեան հայրն է, հայոց Գրիգն։ Այս համոզումս պատճառ դարձաւ որ ուշադրութեամբ ուսումնասիրեմ անոր աշխատութիւնները... Նպատակս է հոս թէ Եւրոպա ճանչցնել երաժշտութեան մեծ վարպետը եւ հայ երաժշտութիւնը, որ կամուրջ մըն է Եւրոպականին եւ արեւելեանին միջեւ։ Առանձնապէս հայ եկեղեցական երաժշտութիւնը թանկագին գանձ և հում նիւթ է միջազգային երաժշտութեան համար։ Մեղեդիներ կան, որ Գինդարոսի երգերուն հետ կարելի է բաղդատել, իսկ ժողովրդական երգերուն մէջ հայերուն դարաւոր տանջանքն է, որ բիւրեղացած է։ Անոնք վսեմ տխրութիւն մը ունին առհասարակ։ Հովուական երգերը համաստուածեան արտայայտութիւն մը ունին։ Այնքան յափշտակութեան։

ՓՐՈՖ. ՀԱՐՏՄԱՆ

digitised by A.R.A.R.@

Բ. ԹԱՇԵԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ «ԼՈՒՍԵՎԱՐԴ»Ը

Այն երջանիկ օրերուն, երբ մեր պատանութիւնը քաղցր նուագի մը պէս կը թաւալէր փողոցէ փողոց, մեզի ըսին թէ՝ Վարդապետ մը եկեր է մեր քաղաքը, երգելու եւ պատարագելու համար:

Վարդապետ մը, եպիսկոպոս մը, մինչեւ իսկ Պատրիարք մը, մեզի համար այն հմայքը չունէին բնաւ, ինչ որ ունէր բանաստեղծ մը, գրագէտ մը, կրտկոտ վարժապետ մը կամ սրածայր մօրուքով գործիչ մը:

Ու սակայն, այս կէս-աշխարհական վարդապետը, իր սեւ պարեգօտով, սարկաւագի անշուք գդակով ու ցանցառ, աղեբեկ մօրուքով, բայց մանուանդ հին մագաղաթ մը յիշեցնող դէմքով, կը նմանէր Աւետարանի այն առաքեալներուն, որոնք սաղուկեցի դպիրէ մը աւելի կեանք ու ջերմութիւն կը դնէին իրենց խօսքին, ինչպէս հաւատքին մէջ, առանց դադրելու ձկնորս բլլալէ:

Տեղատ ուշապարանք մը կար այն օրը մեր քաղքին ու ամբողջ քաղաքին մէջ: Պառաւ մամիկները, նոր հարսերը, ծերերը, երիտասարդները, մինչեւ իսկ մեր փողոցի «աբաչ»ները արագ-արագ կը վազէին վեր՝ Ս. Հրեշտակապետ եկեղեցին, որ ամէնէն արդիականն էր մեր քաղաքի բոլոր միւս եկեղեցիներուն մէջ:

Ու անցնողը կը պոռար կեցողին.

– Հայտէ՛ ծօ, ի՞նչ կեցեր ես:

– Ո՞ւր:

– Ժամ: Վարդապետ մը եկեր է տէ «Լուսեվարդ» տ'ըսէ Էղեր:

Ժամ կ'երթանք Կիրակնամուտքի «Վոյս Զաւարթ»ը լսելու համար:

Շատ լսեր էինք այդ լուսալիր փառաբանմամբ յանուն Ցիսուսի Քրիստոսի: Մեր ժամուն լուսարարը, ամէն Կիրակնամուտքի, հեւալով ու տքալով կը լպտէր օրհնեալ ու խնկահոտ մեղեդին, վայրկեան մը առաջ դուրս գալու համար Աստուծոյ տաճարէն եւ երթալ ձեռք մը թուղթ խաղալու մօտակայ սրճարանի ծխաշունչ մթնոլորտին մէջ:

digitised by A.R.A.R.@

Դռան մէջ, ծերունի քահանան, իր սպիտակ մօրուքը շարժելով, պայմանագրական «Հայր Մեր»-ը կ'արտասանէ, բառերուն կէսը ծամելով իր կեղծ ատամնաշարին տակ:

Նկեղեցին բերնէ բերան լեցուած է: Ամէնքս հեւ ի հեւ կը սպասենք Վարդապետի «Լոյս Զուարթ»-ին: Նորութեան հմայքը, անունին համբաւը կախարդող զօրութեան մը պէս կ'անցնին մեր սրտերուն մէջէն:

Սպասումը երկար չի տեւեր:

Վարդապետը, առանց շուրջտառի, առանց իր կարգին պահանջած զարդ ու պերճանքին, պարզ վեղարով մը կը յառաջանայ դէպի «ատեան», ուր մենք, տիրացու եղած ատենիս *փոխ* կը կարդայինք, խնդրելով Աստուծմէ խոնարհեցնել իր «ունկ»ը եւ լսել մեր սրտարուխ, խունկի ոլորտներուն մէջէն բարձրացող աղաչանքը:

Նախ մեղմ, յետոյ ալիք-ալիք թաւալող ձայնը ոսկեղէն անձրեւի մը պէս, աստուածային օրհնութեան մը պէս կը տարածուի ու կը լայնանայ մեր հոգիներուն մէջ: Բոց մը կ'անցնի մեր երակներէն: Անանուն դող մը կը համակէ մեզ բոլորս: Մեր աչքերը կը մթնան, կը պղտորին, կը խոնարհին:

Ցնցում մը չէր ասիկա, փոթորիկ մըն էր:

Լոյսի ցոլք մը չէր ասիկա, փայլատակում մըն էր:

Ո՛չ, տկար բան մըն է հիացումը: Ինչ որ զգացինք մենք, հիացում չէր, այլ տենդ էր, անհնարին սարսուռ, տեսակ մը պակուցում կամ վերապաց յափշտակութիւն:

Նկեղեցիին կամարները չդիմացին, այլ լացին: Հեկեկացին ու լացին:

Պառաւ մամիկները ծունկի եկան ու յատակի քարերը համբուրեցին: Ծերունիները ձեռքերնին վեր բարձրացուցին պաղատանքի մը պէս: Նոր հարսերն ու երիտասարդները խաչակնքեցին ջերմեռանդ երկիւղածութեամբ: Երեխաները իրենց մայրերու փէշերուն կառչեցան լացակումած աչքերով:

Վարդապետը մարդ մը չէր այլեւս, հրեշտէն տեսիլք մըն էր, խորանէն մեզի ճայող Յիսուս Քրիստոս մըն էր կարծես:

Ան իր երգը կը դրոշմէր, ինչպէս ինքն իսկ կ'ըսէ տեղ մը, իր քնարութեան էատարով եւ անոր վրայ կը փչէր իր պարզ, քայց հզօր շունչը:

Ո՞վ կրնայ ըսել, որ այս *տեսիլքը*, այս *դրոշմը*, այս հզօր *շունչը* ստուեր մը միայն պիտի բլլար քանի մը տարի հոգ, յետոյ կենդանի մեռեալ մը ու վերջապէս մեռեալ մը:

Կոմիտասի «Լուսավարդ»-ը երկար ատեն տեսակ մը աւանդութիւն դարձաւ մեր քաղաքին մէջ:

– Լսեցի՞ր:

– Չլսեցի՞ր:

Ու չլսողները դժբախտ կը համարէին իրենք զիրենք:

Ես լսեցի, ու ատոր համար թերեւս աւելի դժբախտ եմ հիմա:

Երանի՛ անոնց, որ չլսեցին ու չտեսան:

Բ. Թ.

digitised by A.R.A.R.@

ՅՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍԷՆ

Աշնան արեւուտ յեսմիշօրէի մը, մեզի, Ամերիկեան Գոլէճի ուսանողութեան, տարօրինակ դանուցում մը ըրին.

«Հայ վարդապետ մը պիտի գայ, հայ տոհմիկ երգեր երգելու։

Մենք մինչեւ այդ օրը հայ վարդապետները ճանչցեր էինք իրը յուզարկաւորութիւններու, ամուսնութիւններու, կնունքներու իրենց լուրջ եւ երկարող դէմքերով օրհնէնքներ բաշխող անձեր։ Դժուար եղաւ երեւակայել Կոմիտասի տիպարը։ Գոլէճին վերջին տարին էր Սկիւտարի մէջ։ Աշուն էր։

Ժողովասրահին պատուհաններէն Սկիւտարի անուշ, մեղմագոհ աշնան իրիկունը կը յատակնար։ Սկիւտարի աշունը չատ տարբեր էր քաղաքի աշունէն եւ մանաւանդ սա օրերու անհամ-անհոտ աշունէն։

Շաբաթ կար օդին մէջ (ըստ Շահան Պէրպէրեանի) եւ տխուր տերեւաթափ մը Գոլէճի պարտէզին մէջ։

Երբ Տիկին Այվազեան (այն ատեն Օր. Էլիզ Գալուստեան) ներկայացուց մեզի Կոմիտաս Վարդապետը, մենք զմայլեցանք անոր պարզ տարազին, լայն գօտիին եւ աղուոր հասակին։

Ան սկսաւ «Բելէ, Բելէ, Բելիդ մեռնիմ»-ով։

Մենք ո՞վ սէր մը չունէր սրտին մէջ այն օրերուն, ոչիպար մը, որուն քայլուածքին մեռնիլ չուզէր։

Կոմիտաս Վարդապետ, իր երգերուն դաշնակով կ'ընկերանար այնքան ներդաշնակօրէն, այնքան քաղցրօրէն որ սրտին լո՛ւռ տառապալից երանութիւնով մը կրնար ժամերով ունկնդրել զինք, իսկ երբ ան սկսաւ իր «Կռուանկ»-ը, գլուխներ ինկան կուրծքերուն վրայ եւ աչքունքներ հոսեցան այտերէն վար։

Այդ օրէն հաք, մենք չատ լսեցինք «Կռուանկ»-ներ։ Մ'է մէկը այդ Կռուանկն էր, այդ աշնան, այդ Սկիւտարի անուշ աշնան, այդ Կոմիտասի Կռուանկը։

Երբեմն հաք չրկապատեցինք զինքը խանդաղատանքով, անհո՛ւն սիրով։ Ինքն ալ երջանիկ էր։

«Բերքինչէլէնե՛ր», կրկնեց նորէն։

Գոլլիկ, վախկոտ ժայռով մը, «Ինչո՞ւ ըսա։ Պատասխան չտուաւ, բայց նայեցաւ աչքերուս եւ «Կանաչ կաբմիր քերքինչէլէներ», ըսաւ։ Լացեր էի։

«Թիքիքեանիկ», «Քուչուն», «Վարդ», եւայլն, եւայլն տափակ բառեր չատ լաւ էինք այդ տարիներուն։ Ինչո՞ւ քերքինչէլէ։ Դեռ չեմ գիտեր ինչու։ Բայց գիտեմ, թէ մենք բոլորս, պիտի ուզէինք Մեծ Վարդապետին, «Կռուանկ»-ի հոյակապ երգերէն սեւ պատերուն վրայ սոզոսկիլ եւ կառչիլ իրեն, խաղրիկ մը առնել իրմէ եւ իր մուք աչխարհէն։

Մ. ՎԱԼԻՏԷԻԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1902 թուականներին էր, Թիֆլիս, երազուն ու չքնաղ գարնան մի օր, Տիրայր վարդապետը գալով մեզ մօտ յայտնում է, որ Կոմիտաս Վարդապետ նոր եկած է Էջմիածնից եւ կը փափաքի ծանօթացնել մեզ հետ։ Յայտնում է, թէ Վարդապետը ուրախութեամբ պիտի երդէ մեզ համար, միայն կը փափաքի, որ այդ լինէր մի մեծ սրահում, ոչ թէ մեծ հասարակութեան առջեւ, այլ մի քանի ընտրեալների համար։

Ամենամեծ յօժարութեամբ շտապում եմ թոյլտուութիւն առնելու Թիֆլիսի նոր կառուցուած չքեղ երաժշտանոցի վարչութիւնից եւ նոյն երեկոյին մի քանի բարեկամներից շրջապատուած՝ սրտատրոփ սպասում ենք։ Մառան մի ազօտ լոյս է վառում մի անկիւնում. համարեա՝ մթի մէջն ենք. եւ ահա լեմ է բարձրանում մի նիհար, սեւազգեստ երիտասարդ ու նստում դաշնամուրին առջեւ։ Որին տպաւորիչ լռութեանը մէջ առաջին անգամ լսում եմ նրա ձայնը, որ իր կրակոտ հոգուն երաժշտավառ ու կարծես արցունքներով շաղախուած լարերից գնում, գնում, բարձրանում է մինչեւ բարձրերը։ Արցունքներս անխնայ հոսում էին աչքերիցս, մինչեւ որ Տիրայր վարդապետը տեսնելով անասելի յուզմունքս, կանգնեցնում է ոգեւորուած երաժշտին— «Բաւական է, բաւական, Կոմիտա՛ս, ողջկան սպանեցիր»։

Այդ օրուանից հասկացայ, թէ հայ երաժշտութիւն էլ կայ աշխարհիս երեսին եւ այդ գաղափարը կապուեցաւ Կոմիտաս Վարդապետի անձի հետ։

❖

1905-ին Փարիզ, Նոյեմբեր ամսին էր, Կոմիտաս Վարդապետի հետ տենդավառ պատրաստւում էինք հայկական մեծ նուագահանդէսին։ Փրոկլամին մասին մտնելով, աշխատելով, վազվզելով, Կոմիտաս Վարդապետ մէկ սովորեցնում էր եղանակներ, մէկ հանդուցեալ աշակերտս՝ Մուղունեանին էր խրատում, յետոյ սովորեցնում Շահ-Մուրատեանին, մէկ խմբի եղանակներն էր դրում եւ Լամուրէօ-ի շատ անուանի խումբը փորձում եւ հեռները շարշարում հայերէն արտասանելու եւ զգացնելու համար, մէկ էլ քրոջս դաշնամուրին համար Մշոյ պարերն էր յարմարեցնում...

Վերջապէս հասաւ Դեկտեմբեր 1-ի իրիկունը. Սալ տէ զ'Ակրիմիլթիւր-ի մեծ սրահը ծայրէ ծայր լիքն էր. Վարդապետը միայն ջղերի ուժով ոտքի վրայ էր՝ այնքան յոգնած էր նախընթաց անկարելի աշխատութիւնից եւ փորձերից։ Նրա ձայնը այնպէս կտրուած էր, որ մօտիկ բարեկամներս ու ես դողում էինք, թէ ի՞նչպէս պիտի յաղթէ այդ սոսկալի ֆիզիքական յոգնութեանը։

Ահա հասնում է այդ րոպէն. Վարդապետը խիստ ու վսեմ հագուստով, ինչպէս մի զարմանալի տեսիլ հին քրիստոնէական դարերուն, որ արդէն գլխուն Ֆրանսացի դեղարուեստագէտների հոգին խառնել էր, մօտենում է փոքրիկ երգեհոնին եւ ինքը իրեն դաշնակցելով՝ սկսում ժեղմամեղմ (Փիանիսիմօ) «Տիրամայր» Խաչի երգը։ Ամբողջ հասարակութիւնը

digitised by A.R.A.R.@

կարծես պապանձուել էր, մարդիկ կարծես իրանց շունչը պահել էին, որ աւելի եւս կարողանան ըմբռնել այդ անասելի ցաւին ու մեր ազգին դարաւոր աղերսանքին վսեմ եղանակը։ Ու տպաւորութիւնը անպատմելի էր։

Շատ անուանի Փարիզի երաժիշտներ ու երգիչներ պատմում էին ինձ աւելի ուշ, իրենց տպաւորութիւնը, թէ երբեք իրանց կեանքին մէջ այդպիսի խոր երաժշտական յուզմունք չէին ստացել։

❧

1910 թիւն էր, Յուլիս ամսի մէջ, Փարիզում։ Սոսկալի տաք օրեր, երբ նոր պատրաստւում էի ամարանոց երթալ։ Անսպասելի կերպով դուռը բախում են։ Կոմիտասն է՝ նոր եկած ու չափազանց յոգնած՝ Տաճկահայաստանի ու Եգիպտոսի ճանապարհորդութիւնից։ Հազիւ բարեւած՝ վազում է գէպի դաշնամուրը եւ ոգեւորութեամբ սկսում է երգել, ցոյց տալ նոր երգերը, որ դեռ չեմ լսած, որոնց դեռ ծանօթ չեմ։

Նոյն ամառ հանգամանքները յաջողեցնում են ինձի երկու շաբաթ անցնել նրա հետ անգլիական «Սպիտակ» կոչուած կղզում, որտեղ առաւել եւս առիթ եմ ունենում հիանալու իր վրայ։

Այդ խորագէտ յոգնած երաժիշտը՝ հանգստանալու տեղ՝ մի տենդազեղ երաժշտական հրաբուխի գրութեան մէջ էր։ առաւօտից դէշերը դաշնամուրի առջեւ նստած՝ մէկ երգում, մէկ գրի էր առնում, մէկ նուագում էր երգերը, որոնք նրա յիշողութեան մէջը չէին ուզում առաւել եւս քնել։

Ամէն տուն գնալուս, մի նոր երգ էր ինձի երգում։ Որքան ապշում էի, որ դայ զբօսնելու, տեսնէ կղզու աջանչելի բնութիւնը. բոլոր խօսքերս զուր էին։ միայն իրիկունները յօժարում էր հետս գնալ ծովափ. այնտեղ երկար ունկնդրում էինք ալիքներին եւ նա բացատրում, պատմում Հայու մէկ վայրագ, մէկ քնքոյշ լեզուն։ Առաջին վրայ նստած՝ նոր ու նոր երգեր էր երգում, զարմացած անգլիական ոտա լուսնի առաջ, որ ապշած՝ չէր հասկանում, թէ այս տաք երգերը ո՛ր աշխարհից են գալիս. ու նրա միակ ունկնդիրը ես էի, եւ խոժոռ-խոժոռ ժայռերն ու մեղմիկ ալիքները։

Ուրիշ անգամներ նա ոգեւորուած պատմում էր ժողովրդական առածները, սովորութիւնները եւ մի ահագին աշխարհ բաց անում առջեւս եւ առաւել եւս հոգիս ուժեղացնում էր հայրենասիրական երաժշտութեան ձգտումներին մէջ։

Երբեք չպիտի մոռանամ նոյն կղզում պատահած մի սրտաշարժ դէպք։ Անգլիական կոկիկ, հիւրասէր, փոքրիկ պանդոկում, ուր ապրում էինք նրա հետ, ի մէջի այլոց, մի համակրելի անգլիական զոյգ էր բնակում՝ երկու սիրունիկ խարտեաշ որդիներով. հայրը մի պաղարիւն կատարեալ բրիտանացի էր, իսկ մայրը սեւաչեայ, ծիծաղկոտ իրլանդուհի։

Յայտնի է անգլիացիների յարգանքը դէպի հոգեւոր անձինք. նոքա բոլորը, թէեւ չափազանց հետաքրքրուած՝ երբեք չէին համարձակւում մինչեւ իսկ ընդհանուր դահլիճը մտնել, երբ Վարդապետը այնտեղ պարապում էր։

Հանում էր ընտանիքին արձակուրդի վերջին օրը եւ բոլորս պսպղուն թէյի սեղանին շուրջը նստած՝ մի ժամից պիտի բաժանուինք։

Տիկինը սիրտ առնելով՝ շտապում է ինձ հարցնել, թէ արդեօք շատ անհամեստութի՞ւն պիտի համարենք, եթէ իր փափաքը յայտնէ լսելու Վարդապետին, նրա ազգային երգերը երգելիս։

digitised by A.R.A.R.@

Գործ՝ ԱՇՈՏ ՏՕՆԻԿԵԱՆԻ

Վարդապետը յոժարութեամբ վիր է կենում, մօտենում զաշնամուրին եւ սկսում «Կռունկ»-ը։ Հազիւ աւարտած՝ նայում եմ տիկնոջը.— Ի՞նչ տեսնեմ, այդ գուարթ դէմքը ամբողջապէս գողում է, այլեւս յուզմունքը չի կարող պահել եւ աղի արտասուքով լալիս է...։

Ամուսինը մօտենում է ինձի։ «Այս ի՞նչ արիք կնոջս։ Տասը տարի է ամուսնացած եմք, բայց կնոջս այս վիճակին մէջ չեմ տեսել»։

Բայց հրաժեշտի ժամը վրայ է հասնում եւ տիկինը աչքերը սրբելով հրաժեշտ է առնում մեզանից եւ նորից հեկեկալով ասում. «Այս ի՞նչ երաժշտութիւն էր, որ ամբողջ էութիւնս տակնուվրայ արաւ. երբեք չպիտի մոռանամ նրան»։

ԱՐՇԱԼՈՅՍ ԲԱԲԱՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Գործ՝ ՓԱՆՈՍ ԹԷՐԼԷՄԷԶԵԱՆԻ

digitised by A.R.A.R.@

♣

1910-ի ամառն էր: Կ. Պոլսոյ Բանկալթիի իր բնակարանը գեղարուեստի տաճար մը դրած էին ինք ու նկարիչ Փանոս Թերլեմէզեանը: Ինչ հայեցի շունչ որ կը ծորէր Վարդապետին երաժշտութենէն, նոյն հայեցի երանգը կ'արտացոլար նկարիչին պատկերներէն, որոնք զարդարած էին վերնայարկի քանի մը խուցերը:

Վարդապետին կ'աշակերտէր ընտրեալ խումբ մը:

Մեծ երաժիշտին բարեկամութիւնը կը վայելէին բազմաթիւ ականաւոր հայեր եւ նոյնիսկ թուրքեր, ինչպէս, օրինակ, թուրք բանաստեղծ Մէհմէտ Էմինը, կայսերական իշխան Մէնիտ Էֆէնտին, եւայլն: Վարդապետը ամէնուն հանդէպ բարեհամբոյր էր, ուղղամիտ եւ անշահախնդիր:

Բայց մտաւոր չարաչար աշխատանքը, բազմամրոխ քաղաքին ճնշիչ կենցաղը եւ քաղաքակիրթ մարդոց մակերեսային վերաբերումները կը դառնացնէին ու կը ջղայնոտէին իր հոգին՝ ապաստան որոնել տալու ատենոն պարզ ու բնական անկիւններու մէջ: Ու աչքերը կրկին կը սեւեռէր իր ծննդավայրին:

Այդ գոյը 1913-ին էր, բայց ես չտեսայ զինքը, որովհետեւ Կ. Պոլիս կը գտնուէի: Իր այցը այն ատեն յատկացուցեր էր *Ընթացքին*, վիմափոր ջերմուկ մը, որ Կուտինայէն վեց ժամ հեռու է, դալարազգեստ լեռներէն անդին, որոնք թրթռալով ու ծաթրինով են բուրումնաւէտ:

Այս ջերմուկը ուշագրաւ է իր յորդառատ ջուրով, որ քովը ունի արուեստական ճագարակ մը եւ *Հաստատ* կոչուող հռամատ քառասնակ աւազան մը, կծկուած լեռներէն մէկուն ծորակին մէջ, ուրկէ վեր բլուրները իրենց մայրիներով կը ցցուին օդին մէջ: Հոն օդափոխ ժողովուրդը կը բնակի ջերմուկին առընթեր, վրաններու եւ հաստատուն խցիկներու մէջ: Բայց Կոմիտաս Վարդապետ իր վրանը նետեր էր վերը, բլրային մայրիներէն մէկուն շուքին: Այնտեղ ալ իր սիրական պարզունակ մարդերը շրջապատեր են զինք՝ մէկ երկու ձեւապաշտ ու պենտէր անձերու հետ: Այս վերջինները հանդէպ ալ իր վերաբերմունքը եղած էր սիրալիր, հակառակ անոնց ձեւերուն դէմ խորշանքին:

Կ'ենթադրեմ, թէ այդ եղաւ բնութեան ծոցին մէջ անցուցած իր վերջին կեանքը եւ այդ յիշատակելի պիտի մնայ իր անբաժան ընկեր վրանակից Թերլեմէզեանի գծած այն նկարովը, ուր համակրելի երաժիշտը կուտինական գորգի մը վրայ եւ մայրիին յենած՝ գիրք մը կը կարդայ խորամուխ: Այնտեղ սաղարթին մէջէն կ'երեւի բրգաձեւ սպիտակ վրանը, ուր շնչեց իր պաշտած ծննդավայրին անմահական օդը:

Վերջին այդ նկարը, 1925-ին, Հայ Կրթական Հիմնարկութեան նախաձեռնութեամբ 1000 տոլարի գնուելով խումբ մը ամերիկահայերու կողմէ՝ նուիրուեցաւ Հայաստանի Ազգային Թանգարանին:

Ա.

digitised by A.R.A.R.@

Ձախէն աջ՝ է. Ակնունի, Արշակ Չօպանեան, անծանօթ մը, Կոմիտաս Վարդապետ, Ռուբէն Սեւակ եւ Գասպար Իփէկեան։ Նկարուած Ժընեւի մէջ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ՝ ՀԱՅՐԸ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

Հայ երաժշտութեան «Մեսրոպ»ը անուանած էր իր մահուան առթիւ գրողներէն մէկը։ Ամէնէն յաջող բնորոշումն է, որ կարելի է տալ իրեն։ Իրմէ առաջ անշուշտ որ գոյութիւն ունէր ժողովրդական երգը, հայ եկեղեցական երաժշտութիւնը, որ մեծ մասամբ անեղծ պահուած էր հեռաւոր վանքերու եւ գիւղերու անկիւններու մէջ, մեր գիւղական քահանաներու եւ տիրացուներու միջոցով. ճիշդ այնպէս՝ ինչպէս գոյութիւն ունէր հայ լեզուն նախքան Մեսրոպի նշանագրերու գիւտը։

Այդ մշակութային ստեղծագործութիւնը, սակայն, կը մնար բախտին ձգուած, հետեւաբար դատապարտուած կորսուելու վտանգին։ Պէտք էր ապահովել անոր պահպանումը եւ յաջողութիւնը, ուսումնասիրելով անոր գոյութեան տարրերը, օրէնքները, ինքնուրոյնութեան առանձնայատկութիւնները. մաքրել, զտել խորթ եւ օտար տարրերէ, ստեղծել անոր բերականութիւնը, անոր օրէնքները։ Անոր ոգին պէտք էր դուրս բերել, պէտք էր ճշդել եւ բնորոշել անոր «Հայկականութեան» առանձնայատկութիւնները։

Այս աշխատանքով միայն հնարաւոր կը դառնար գիտականացնել հայ երաժշտութիւնը, եւ ուսանելի դարձնել։ Այդ տուեալներով միայն կը բացուէր դուռը հայ տազանդներու առջեւ, կառուցանելու համար հաստատուն հիմունքներու վրայ, հայ երաժշտութեան՝ գիտական, ազգային երաժշտութեան՝ հետագայ ստեղծագործութիւնները։

Ասոր մէջ կը կայանայ Կոմիտասի գործին մեծութիւնը եւ նշանակութիւնը հայ մշակոյթի մարզին մէջ։

Անհ ասոր համար ալ արժանի է դասուելու սուրբերու կարգին մէջ, Սահակի եւ Մեսրոպի կողքին։

ԳԱՍՊԱՐ ԻՓԷԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆԻ «ՅԱՅԳԱԼՈՅՍ»Ի ՄԱՍԻՆ

Մարդ գաւառը մեր աչքին առջեւ լծորդուած է խաւարի հետ։ Մենք մեծ մասամբ գաւառը կը ճանչնանք իր ապիտութիւնով եւ յետամնացութեամբ։ Բայց գաւառը իմ աչքիս առջեւ կը պատկերանայ իբրեւ արքայորդը հայ գեղարուեստի նշխարներու, հոն կը տեսնեմ հայ երգը՝ հայ գեղջուկին լեռներուն վրայ, հայ դուքանը, հայ գեղջուկը՝ իր արօրին ու մատկալին հետ, ու քաւէրն անգամ նուիրականութիւն մը կը յիշեցնեն։ Այդ քարի բեկորներն են մեր հայրենիքը, ազնիւ հանդիսականներ, հոն են շերտերը մեր գեղարուեստին եւ ոչ թէ մայրաքաղաքներուն մէջ, ուրկէ մենք գաւառը կը գիտենք իբրեւ խաւարի վայր։

Ռուբէն Զարդարեան, որուն կը նուիրէ Խայեան Սանուց Միութիւնը իր շորրորդ Գրական ասուլիսը, մէկն է հայ գրականութեան ակաւաթիւ դէմքերէն, որոնք ճանչցած են գաւառը իր բնական եւ հազեկան հարստութիւններով եւ իրենց գործը կերտած են այդ հարստութիւններուն վրայ, որոնք ժողովուրդին են. Զարդարեան... իր սիրտը կապած է ժողովուրդին մութին հետ։ Ժողովուրդին գաւակն է Զարդարեան։

Ե՞ւ իր Յայգալոյսը դեռ այս տարի կարդացի։ Երբ զայն կարդացի, Զարդարեան շպատկերացուցի բնաւ աչքերուս առջեւ, այլ ամբողջ ազգ մը, ամբողջ ժողովուրդ մը՝ իր գեղեցկութեամբն ու չքեղութեամբը։ Այդ մատեանը գրքի մը տպատրութիւնը չէր որ թողուց վրս, այլ կեանքի մը, իր բախումներուն ու իր գայթութեամբը։

Իր գործին մէջ եւ չտեսայ անականներ, այլ պատկերներ, զորս այնքան բանաստեղծներ կը փնտռէին ու չէին գտներ եւ զորս սակայն գտած է Զարդարեան, որովհետեւ զգացած է զանոնք իրենց բովանդակ գեղեցկութեան մէջ։

Ահա մարդ մը մեր առջեւ արժանի ամէն յարգանքի։ Մարդ մը, որ գաւառի լուռը տուաւ մեզի։ Շնչենք այդ լռութը, մասնաւոր դուռ, երիտասարդներ, ընկեցէք զոյն երիտասարդական լռութով մը, որովհետեւ ան գաւառէն կու գայ, մեր հայրենիք քնավայրէն, որուն արեւը քաղցր է, ջուրը անուշահամ, երկինքը վճիտ եւ օդը կենսատու ու պայծառ եւ որուն վրայ կը սաւառնի գեղեցկութիւնը։ Շնչեցէք այդ գեղեցկութիւնները։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Հայ դասական երաժշտութեան նոր դպրոցի հիմնադիր, ժողովրդական, ազգային-ստական երգարուեստի ականաւոր վարպետ Կոմիտասն իր բեղուն գործունէութեան բաղմաթիւ թելերով կապուած է եղել մեր մշակոյթի տարբեր բնագաւառների հետ եւ իր ստեղծագործական ողջ կարողութիւններն առանց մնացորդի ծառայեցրել հայ երաժշտութեան ու մշակոյթի պարզացման շնորհակալ գործին:

Անցեալի դժուարին ու ծանր պայմաններում բացի ստեղծագործական, տեսական, գիտահետազօտական, հրապարակախօսական փառահեղ գործունէութիւնից՝ Կոմիտասն ամենուրեք առաջ է տարել, ծաւալել ու զարգացրել իր խմբավարական, մանկավարժական և երգչային-արտիստիկ փայլուն գործունէութիւնը՝ այդ բնագաւառներում շունչնելով իր մրցակիցը:

Այս ամէնից բացի, Կոմիտասի բազմակողմանի ընդունակութիւնների ակնառու վկայութիւն է նաեւ նրա ջերմաշունչ քնարերգութիւնը, որ չատերի համար հաճելի յայտնութիւն է: Նրա բանաստեղծութիւնների ժողովածուն լոյս է տեսել 1939 թուականին «Մշակոյթ» հրատարակչութեան կողմից՝ Թորոս Ազատեանի խմբագրութեամբ:

Իր ժողովրդի ճակատագրով խորապէս մտահոգուած հանճարեղ Կոմիտասի որոնող եւ ստեղծագործ միտքը սաւառնում էր նաեւ պոէզիայի աշխարհում:

Վանականի անշուք խցում, իր խոհերի մենութեան մէջ Կոմիտասը ո՛չ միայն անմնացուր էր լինում ժողովրդական թովիչ երաժշտութեան հմայքին, այլեւ տարւում էր պոէզիայի, սրտայոյզ խօսքի երաժշտութեամբ:

Կոմիտասի կողմից փրկուած ինքնագիր տետրերի, թերթիկների ու տարբեր անձանց ալբոմներում գրուած բանաստեղծութիւնների հաւաքումն ու հրատարակումը շնորհակալ աշխատանք է, որ հնարաւորութիւն է տալիս բացայայտելու եւ արժէքաւորելու մեծ արուեստագէտի հայ ժողովրդին մատուցած նաեւ այդ ծառայութիւնը:

Ժողովածուն կազմող հանգուցեալ Թ. Ազատեանի վկայութեամբ՝ Կոմիտասբանաստեղծութիւնների սեւագիր օրինակները, որ ամփոփուած են առանձին տետրերի մէջ, գրուած են եղել մինչեւ 1914 թուականը: Հեղինակի ձեռքով տետրերի լուսանցքներում հայկական ձայնանիշերով արուած նշումները թոյլ են տալիս ենթադրելու, որ ըստ երեւոյթին Կոմիտասը յանկացել է նաեւ ձայնագրել, երաժշտականացնել իր այդ ինքնաստեղծ ստանաւորները, որոնք իրենց բնոյթով, բովանդակութեան բիւրեղեայ յստակութեամբ շատ մօտ են ժողովրդական երգարուեստի ոգուն:

Ընթերցողը կարող է նկատել, որ Կոմիտասը պոէզիայի բնագաւառում նոյնպէս ինքնատիպ է, հնարամիտ, ջերմաշունչ եւ նուրբաբար: Ինքնաքուն կերպով նա կերտում է համահնչուն քառեր ու բանաստեղծական պատկերներ, որոնք վկայում են նրա քաջատեղեակութիւնը պոէզիայի եւ տաղաչափական արուեստի: Նրա ստանաւորները օժտուած են

digitised by A.R.A.R.@

զարմանալի երաժշտականությամբ, քնարական ջերմ ինչով. դրանք բացայայտում են բանաստեղծի յուզումնալից ներաշխարհը, կեանքի երևույթների ու քնութեան իրապաշտական խոր զգացողութիւնը։

Քնարական հոգեպարար ինչով է համակուած Կոմիտասի «Քնարերգութիւններ» գիրքը՝ բաղկացած 68 էջից, որտեղ նրգւում են մայրական կաթոգին սէրը, հայրենի հրաշակերտ բնութիւնը, նրա դաշտերն ու լեռները, ամպն ու անձրևը, մարդկանց խոհերն ու ապրումները՝ իրենց բազմազեղուն ասուն-խօսուն ձևերով ու երանգներով։ Գրանցում աշխարհիկ ռոմանտիկայով, ստեղծագործական ներշնչանքի թրթիռներով համակուած Կոմիտասն է՝ իր ներքին անհուն հարստութեամբ։

Մի քանի տասնեակ քառեակներից բաղկացած «Մայրիկիս օրօր» պոէմանման ստեղծագործութեան մէջ՝ Կոմիտասն ամէնից արտառուչ եւ քնքուշ տողերը նուիրել է իր սիրեցեալ մօրը, որից շատ վաղաժամ զրկուեց նա։ Որպէս սրբազան ու նուիրական պատգամ այսպէս է խորհրդածում Կոմիտասն իր վաղամեռ մօր փոխարէն.

digitised by A.R.A.R.@

Քեզի տեսնիմ, իմ հատորիկ,
Կեանքիս ուղին, սիրազեղ,
Ցայտ ու անյայտ դու որոնէ·
Քեզի լինի իրազեկ,
Մի թափառէ կեանքի պարապ
Անապատում դու իզուր,
Քեզ պահապան ուրբ հաւատոյ,
Ցուսոյ, սիրոյ լոյս ու հաւր:
Օրիկ, օրին,
Իմ անուշին:

Սիրոյ մրմունջները որպէս զարնան բուրաւէտ ծաղիկներ հանգիստ չէին տալիս կեանքի կարօտը խորապէս զգացող կոմիտասին։ Նրանք որպէս ջերմաչունչ մեղեդի թափանցում են բանաստեղծ – երգչի հոգու խորքը եւ անհուն սէր արթընցնում դէպի կեանքի գեղեցկութիւնը։

Շնչէ, հովիկ,
Դու թոթովիկ՝
Կեանքի սէրը՝
Սրտի թերը՝
Պարուրելով՝
Ծարուրելով՝
Ծովի ալիքն,
Ամպի ծալքն,
Ալ ծաղկունաց
Հըրոյ հալքն,
Թող նա վառէ իմ ծոցիկին ոսկի լոյսը,
Հոգմահարէ դու բոցիկին, որ իմ հիւսը՝
Լանջիս վրայ
Ցաւէտ հոայ:

Մարդկային անկեղծ յոյզերով համակուած այդ բանաստեղծութիւններն ունեն զարմանալի երաժշտականութիւն, յանգերի եւ վանկերի հարստութիւն։ Դրանցում երեւան է գալիս կոմիտասի բանաստեղծական լեզուի ինքնատիպ արտայայտչականութիւնը։ Ահա «Ծով ու ծով սէր» բանաստեղծութեան մէկ քառեակը·

...Հոգիս եկաւ հովի պէս,
Սէրը սրտում ծովի պէս,
Ծոցին վարդեր՝ ասաց· տես,
Քեզ սիրելու եկայ ես:

Ռոմանտիկական շղարշով պարուրուած նուիրական սէրն է, որ արտայայտում է կոմիտասը դէպի հայրենի մարդը, հովիւը, աղջիկը՝ իր նուրբ թովչանքով, հայրենի չքնաղ բնութիւնը, որ այնքան պայծառ ու վսեմ գոյներով է պատկերուած «Սէր հովիկ», «Իմ երազը», «Ճերմակ հեր», «Գարուն սէր», «Գարուն», «Նոճիներն ու մայրիները», «Հունձ», «Գորով սէր», «Հով–սէր», «Անմար սէր» եւ այլ բանաստեղծութիւններում։

Կոմիտասը ստեղծել է իրեն յատուկ ասաղաչափութիւն, արտայայտչական ինքնատիպ ոճ եւ բանաստեղծական նոր բառեր ու արտայայտչական ձեւեր։

Ուրախութեան ու վշտի տագերով արբած, ժողովրդական երգի անուշ չաղերով զմայլուած, իր ողջ էութեամբ երգ դարձած, այդ ազնիւ արուեստագէտը մեզ ժառանգութիւն թողած իր գողտրիկ ստեղծագործութիւններով իր համեստ լուման է ներդրել նաեւ հայ բանաստեղծութեան մէջ։

Ս. Գ.

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍ

Քո երգերի մէջ գուբանի վար է,
Ծիրանի ծառ է ու խնկի ծառ,
Սիրուոր լոր է ու Սոնա նար է,
Թուխ այտի խալ է ու ծնկի ծալ:

Մօր լցուած աչքը որդու գարուն է,
Շէմքի քարին է գրկուած յարկի·
Ամպատ երկինք է, ձիւնոտ գարուն է,
Կուց-կուց արուն է արօր հուքի:

Կրակի բոցը դանդաղ մարում է,
Մեռնող սրտի պէս թոյլ բաբախում,
Ու կրակի մօտ տխուր մայում է
Մատաղի գառը վանքի բակում···

Ծանր նստել ու յօնքը կախել է
Տանտիրոջ տէրը – հոգսը խրթին:
Արեւի շողքը երգից կաթել է
Ու փշրուել է թոնրի շուրթին···

Ճաշթոզի պահ է, սուփռան փռած է,
Քրտնած գաւաթ է, համեմ ու հաց –
Դէզի շուաքում երեխի լաց է,
Դէզին թիկնած է հարսը շիկնած···:

Լուսնակ գիշեր է, կաւէ կտուր է,
Կաւէ սափոր է, կաւէ գաւաթ,
Լացող սրտի մէջ լաւի սարսուռ է,
Լաւի կաթօտ է, լաւի հաւատ:

Գաղթը մօտիկ է, բախտը հերոս է,
Ցոգնած ճամբայ է ու յոգնած ոտք:
Ցաւն՝ անտակ, յոյսը ցամաք առու է,
Խօսքերը լաց են, լացը՝ աղօթք:

Այսպէս է երգը··· Երգը հնչում է,
Ու ներշնչում են ցամաք ու ծով,
Մի բուռ երգի մէջ ապրում, շնչում է
Անդարձ աշխարհն իր անցուդարձով:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԹՈՒՐՔԻՆ ԽՕՍՔԸ

«Այս հայ հոգեւորականը տարիներու աքնաջան աշխատութեան եւ իր պրպտող մտքին շնորհիւ հայ երգին եւ հայ երաժշտութեան նոր թռիչք տուած է։ Անատոլուի զաւակ Կոմիտաս Վարդապետ, – հակառակ իր աստուածաբանական եւ համալսարանական կրթութեան, – արհամարհելով պերճանք, ճոխութիւն եւ պաշտօն նետուեցաւ դէպի հայ գիւղերը եւ հայ գեղջուկին հոգեկան ներշնչումներուն իրական արտայայտութիւնն եղող հայ երգը մէկիկ-մէկիկ դասաւորեց եւ անոնց այնպիսի՛ կենդանի շունչ եւ ներդաշնակութիւն տուաւ որ այսօր հայ երգը հայ մշակոյթի ներկայանալի գանձերէն մին կը հանդիսանայ։

«Հայրենակիցներ, մենք՝ Թուրքերս ալ ունինք բարձրաստիճան իւլեմաններ, որոնցմէ շատերը մեարէֆներու մեղկ եւ ծոյլ կեանքին վարժուած ըլլալով՝ չեն ուզեր իրենց սահմանափակ կեանքէն դուրս նետուիլ։ Այս Վարդապետին պէս անոնք ալ կրնան իրենց ազգին օգտակար ըլլալ։ պրպտող միտք մը եթէ Թուրք գիւղերը չբնաւայի, ո՛վ գիտէ ժողովրդական երգերու ինչպիսի թանկագին գանձերու պիտի հանդիպի, որոնք Թուրք ցեղին զգայուն հոգիին եւ խորհող մտքին արժէքը աւելի պիտի բարձրացնեն։

«Ճշմարտութիւն է եւ մենք պարտաւոր ենք խոստովանիլ որ հայ ազգը գաղթէ ի վեր մեր մշակութային կեանքին մէջ. իր յառաջապահի մասնաւոր տեղը ունեցած է։ Թուրքիոյ ո՛ր կողմն ալ երթաք, Անատոլուի ո՛ր անկիւնն ալ ըլլաք, հայ միտքը, հայ ստեղծագործ ձեռքը «հոս եմ» կ'ըսէ։ Օրինա՞ւ կ'ուզէք. Գալաթիոյ սուլթանական պարտէզները մէյ-մէկ գլուխ գործոցներ են, հայ ճարտարապետութեան գեղեցիկ նմոյշներ են։ Դէպի երկինք բարձրացող մինարէներ, ուր ամէն օր մուէզզինը Ալլահ էքպէր կը պոռայ, շատերը հայ ստեղծագործ ձեռքերու մէյ-մէկ կոթողներ են։

«Բժշկական համալսարանի հիմնադիրները եւ գիտական գիրքերու առաջին հեղինակները նորէ՛ն հայեր եղած են։ Թուրք թատրոնը իր գոյութիւնը հայերուն կը պարտի։ Ահա ասանկ ուշիմ եւ ընդունակ ազգի մը հետ միասին կ'ապրինք ու մինչեւ հիմա ալ ամէն ազգի մէջ տիրապետող է»։

ՀԱՄՏՈՒԼԼԱՀ ՍՈՒՊՀԻ ԳԼԽ

digitised by A.R.A.R.@

ԵՒ ԳՈՐԾԸ...

ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

1915, ԱՊՐԻԼ 24

Գործ՝
Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆԻ

digitised by A.R.A.R.@

Գործ՝ Գ. ԽԱՆԶԵԱՆԻ

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Ճամբան երկա՛ր էր խոհերից,
Եւ խոհերը՝ ճամբից երկա՛ր.
Թէ հանգի՛ստ կար ճամբաներից,
Զար խոհերից հանգիստ չկա՛ր:
Գնո՛ւմ էր խումբը հայերի,
Եւ խմբի մէջ մի վանական,
Աչքը յառած հեռուներին,
Երգում էր հի՛ն մի շարական...
Երգում էր նա ու մտածում.
«Այսքան աւե՛ր ու կոտորա՛ծ,
Այսքան եղեռն ու մահացում,
Հայոց հողում՝ մի բուռ դառած.
Թէ կա՛յ Աստուածը Միածին,
Ա՞մպ է իջել աչքի առաջ.
Ձի՞ն հասնում իր խուլ ականջին
Այսքան ոգի՛ր,
այսքան հառա՛չ...»
Երգում էր նա ու մտածում.
«Խղճի տեղ քա՛րը կը ճաքէր.
Եփրատն հղաւ պղտոր արցունք,
Վշտից Նեմբրոթը ներմակեց.
Մնաց մեռնող երկի՛ր մի հին,
Մի բուռ հայի ռուգ ու ոսկրս...
Ո՞վ է տեսել՝ աւազ անողին
Մեռելի հետ մէկտեղ թաղո՛ւն...»
Երգո՛ւմ էր...
Ցաւն այդ անհնար,
Վեղարը չէ՛ր, որ հագից հանէ՞ր. –
Ի՞նչ միտք դրան կը դիմանար,
Ի՞նչ սիրտ կարող էր այդ անել.
Շուրջն ամէն ինչ այնպէս խաւա՛ր
Եւ այնքան բի՛րտ էր, յիրաւի,
Որ թուաց, թէ աշխարհն արար...
Խելագարուե՛լ է երեւի...
. . . . . .
Գիշերն ապաւ օտմանական
Թալէաթ բէյին հանգիստ ասաց.
– Խումբն սպանուե՛ց. մի վանական
Խելագարուե՛ց՝ տեղ չհասած...

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

digitised by A.R.A.R.@

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՁԸ

... Այս ամէն գերազանցութիւններուն տակ հիմնական գաղտնիք մը կը պահուի սակայն· եթէ իր մէջ տեսարանը, յօրինողը, խմբավարը, երգիչը եղան այն ինչ որ եղան, պատճառն այն է, որ այդ բոլորը տարբեր ձեւերու տակ նոյն եւ մի իսկութեան մը արտայայտութիւններն էին: Տեսարանին թէ յօրինողին, խմբավարին թէ երգչին տակ միեւնոյն երաժշտական անձը, միեւնոյն յայտնատեսական լայսով լա՛ւսավառ մարդու էութիւնը կը ճառագայթէր: Կոմիտաս իր Անձը ամբողջ կը դնէր իր բոլոր ըրածներուն մէջ, իր խմբագրած յետին երգին եւ երգած յետին շեշտին մէջ· ու հանճարի լոյս մը կը կրէր ապահովաբար այդ Անձը իր մէջ: Ոչ անձնական հանճարի սակայն, եթէ կարելի է այսպէս ըսել, – ու հոս է էական յատկանիշը իր պարագային – այլ *ցեղային հանճարի* լոյս մը: Տեսակ մը անանձնական տեսողութիւն կ'առաջնորդէ գինքը իր գործին մէջ ու տեսակ մը անանձնական ոգեւորութիւն կը լեցնէ գինքը ու իր ամբողջ գործունէութիւնը: Այդ է գաղտնիքը այն տեսանողին ու Աստուծոյ նկարագրին, որուն գիծերով իր անձնաւորութեան պատկերը պիտի անցնի մեր պատմութեան: Ու ահա ինչու Արուեստագէտը եւ Հոգեւորականը ձուլուած եղան միշտ իր էութեանը մէջ, միակտուր ճառագայթ մը կազմելու համար: Հոգին կը կրէր իր մէջ ու իր մէջ Հոգին՝ Սո՛ւրբ կը զգար, ստկէ՝ իր հաւատքը: Իր անձնաւորութեան շինուածքին ու բնաւորութեան տեսակէտով իբրեւ Ս· Սահակներու եւ Ս· Մեսրոպներու գիծէն դէմք մը անցած եղաւ Հայ կեանքին մէջէն Հայ պատմութեան:

Իր էութեան Միութիւնը ... բայց ի՞նչ կամքով ու ճիգով բռնուած էր ան ու լարուած իր մարմինին մէջ: Մարմինը, նիւթը, որուն օրէնքը ուրիշ է, պիտի օգտուէր, աւա՜ղ, Մեծ Ազէտին իրեն տուած դժխեմ պատեհութենէն կարծես իր վրէժը առնելու՝ անկէ իրեն վրայ եղած բռնութենէն: Ինչպէս ըրած էր ուրիշ մեծերու: Ու ապրեցաւ շնորհալի ու տարաբախտ Վարդապետը ճակատագիրներուն էն եղերականը, մեր ու աշխարհի աչքին առջեւ կենդանի մնալով հանդերձ՝ զարնուելով ճիշդ իր ամէնէն թանկագին բանին մէջ՝ այդ Միութեանն իսկ մէջ: Ախտը կոտրեց փշուր-փշուր այդ Միութիւնը, իբր գերագոյն հեգնանք սակայն գինքը պահելով դեռ տարիներ մեր առջեւ, իբրեւ ինք իրեն անհնանչելի նիւթեղէն ստուերը:

Մահը կու գայ սրբել այսօր այդ ստուերը: Ու Ցաւիտենութիւնը իրեն կ'առնէ Կոմիտասը ու միաժամանակ մեզի կու տայ գայն իր բուն եղածին պէս: Իրեն կ'առնէ ու մեզի կու տայ իր Միութեանը մէջ վերահաստատած իսկական՝ Հոգի-Կոմիտասը: Գիտնանք մեզ համար կենդանի պահել զայն:

ՇԱՀԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ԿՈՄԻՏԱՍԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

«Հայրենք երգն ես դու մեր՝
Վերադարձած հայրենիք...»

●

Հայրենի երգն ես դու մեր՝
Վերադարձած հայրենիք: –
Դեմքիդ տանջանքն է դրել
Անազորույն մի կնիք: –
Եվ հանցարի հեռակայ
Հուրն է հանգչում ճակատիդ,
Ինչպես մարող ճառագայթ
Արարատի գագաթին: –

●

Հայրենի երգն ես դու մեր
Հալածական ինչպես ամպ,
Որ քամիներն են ցրել
Եվ տարիներն ապատամբ: –
Ժողովրդի հանճարեղ
Սրտով երկնած ձայն ու շունչ,
Որ բարբառել ես դարեր
Օտարության մշուշում: –

●

Առանձին ձայնն է ինչպես
Դառնում հնչիւն հայրենի –
Դաշնության մէջ լոկ հնչեզ
Հայրենական ձայների, –
Այդպես մեր հին դաշնության,
Ո՞վ մարգարէ տարագիր, –
Դու գտանում ես սեա
Ե՛ւ ժողովուրդ, ե՛ւ երկիր: –

●

Հայրենի երգ մեր վսեմ,
Հազարամեայ մեր հանճար, –
Լոկ ժողովուրդն է հիւսել
Քո դաշնությունը պայծառ: –
Քեզ ժողովուրդն է խոնարհ
Տառապանքով իր ծնել,
Իր աւիւնով պահել վառ,
Իր ոգու մէջ ընդունել...

digitised by A.R.A.R.@

●

Քեզ ժողովուրդն է չարքաշ
Իր բոբ շինով տուել շունչ, –
Ոչ մի իշխան կամ արքայ
Քեզ չի պահել իր ճաշում: –
Թէ հայրենի, թէ օտար
Տիրողների համար միշտ
Եղել ես – ձայն ոչոտան,
Եւ յար օտար, եւ ուրիշ: –

●

Դու աշխատանքն ես երգել,
Եւ բրտինքը մանկալի –
Անջուր հանդեր ու հերկեր,
Սիրոյ երգեր անձկալի...
Դու պանդուխտի տարագիր
Սիրտն ես երգել կարօտով՝
Իբրեւ հեռու արագիլ
Կապուած սիրոյ նարօտով:

●

Դու երգել ես միայն ճորտ
Ժողովրդի համար մեր
Երգե՛ր կեանքի նման խոր
Եւ զրկանքի նման վեհ: –
Եւ երգերում քո անհուն –
Ժողովրդի սրբազան
Սէ՛րն է միայն վեհանում
Եւ աշխատանքը դաժան: –

●

Հնչիւններ ես հաւաքել
Հէնքի համար քո երգի –
Դու հանդերից մահաբեր
Հայրենական եղերքի. –
Եւ հայրենի հանդերի
Մրմունջներից չմարող –
Հիւսել ես երգ անթերի
Սերունդների համար նոր: –

●

Դու երգել ես միայն ճորտ
Ժողովրդի սրտում մեր
Վառուող ցնորքն անյոդդոդդ՝
Իր գալիքի մասին վէս: –
Հայրենիքի մասին նոր,
Կեանքի, որ հաշտ ու ազատ –
Ծնուելու է արիւնով
Եւ զոհերով սրբազան...

●

Քո ժողովուրդն է խոնարհ
Քո երգերում անրջել՝
Իր կեանքի տենչն անհնար
Եւ սիրոյ շունչը հնչեզ: –
Խաղաղութիւնն հաշտ ու սուրբ՝
Տանիքների վրայ մեր, –
Եւ սիրոյ խօսք ու շշուկ,
Հասկերի երգ ու համերգ...

●

Մեղմ՝ կարկաչում էր քո ջերմ
Երգը՝ երկրում մեր անշող. –
Տանիքների վրայ մեր
Եւ սրտերի զօղանջող:
Կարկաչում էր նա յուշիկ,
Մինչեւ խորշակն այն դաժան
Ցուշ դարձրեց ու փոշի
Երկիր ու երգ սրբազան...

●

Զար ուրազան մի շաչող,
Դաժան մրրիկ մի ահեղ,
Քշեց շիւղի նման չոր՝
Հողմի նման խելայեղ, –
Եւ տերեւներ ինչպէս հին՝
Ծառից ընկած ու անկեանք –
Քշեց երախը մահի
Թէ՛ մայրերին, թէ՛ մանկանց...

●

Զարհուրելի հուանդով,
Ինչպէս քաղցած մի գազան –
Սրբեց կոմքով մի քանդող
Երկիր ու տուն սրբազան...
Կոտրեց եղերքը քո հին՝
Ե՛ւ ժողովուրդ, Ե՛ւ վաստակ –
Ե՛ւ անապատ ամայի
Դարձաւ երկիրն Հայաստան...

digitised by A.R.A.R.@

●

Հալածական որպէս քո
Ոգջ ժողովուրդն այն պահին –
Խելակորոյս քո ոգով
Զտրուեցի՞ր դու մահի,
Ո՛չ, – չմեռար, այնժամ դու,
Այլ սարսափից խելագար՝
Երագեցիր դառնալ տուն,
Որ աշխարհում էլ չկար…

●

Եւ՝ սարսափից խելագար
Ե՛ւ զզգուած, և՛ քոկոտն,
Մահուան սէմ դու հագար
Եւ սնուեցիր քո ոգով: –
Բայց քո ոգին չքամեց
Եւ չէր կարող քամել ժանտ
Այն գոհերի մեծամեծ
Արիւնը սուրբ ու անչափ…

●

Անհանգրուան, ինչպէս նոր,
Հալածական Արքան – Լիր՝
Սրտում քո՝ սո՛ւրբ մի ցնորք՝
Անէացած մի երկիր, –
Զգեցած մահ ու սարսափ,
Տեսած և՛ ահ, և՛ դժոխք, –
Ինչպէ՞ս կարող էր անսալ
Ոգին քո կեանք ու ցնորք…

●

Արքան էլ պիրկ նա լինէր՝
Ստեղծագործ քո ոգին –
Ո՞ր դաշտերում նա եինէր
Երգն իր անմահ մարմոքի…
Ա՛խ, ծաղկի սերմն՝ հայրենի
Հող չի՛ յանախ նանաչում, –
Բայց սերմն հոգու – միայն իր
Հայրենիքում է աճում…

●

Ամայացաւ քո ոգին,
Ինչպէս անջուր հանդի հող,
Եւ մոգերին քո չոքեց
Զմեռ ու ձիւն անողոք: –
Եւ գետնահար, որպէս ծառ՝
Պակուած հողմով կատաղի –
Բեկուեց ոգին քո պայծառ՝
Առանց բոյրի ու շաղի: –

●

Քո հեռաւոր երկրի ջեռ
Աբստոների նման այն,
Որ դարձրրեց սեւ մի ձեռք
Հերկ՝ խորշակեալ եւ ունայն, –
Խորշակեալ դաշտ դարձաւ չոր
Այդպէս ոգին քո հնչեղ,
Որ ոչ արեւ կենսաշող,
Ոչ յոյսի շող չշընչեց: –

●

Հո՞ղ ցանեցիր ու մախիր
Քո մոգերին գառամեալ, –
Եւ՝ հալածուած ոտոխից՝
Երագեցիր միայն մահ…
Զառանցանքի մէջ զարհուր
Երազուեցին քեզ հեռուից –
Հրդեհ ու ջարդ ընդհանուր
Եւ գլխատում արեւի…

●

Ապա խաւար իջաւ խոր,
Եւ հանճարեղ քո ոգում
Փռուեց գիշեր ու ժլոր,
Եւ մտքի մուժ բոբքոքուն· –
Եւ տարինե՞ր անցան սին,
Եւ քո ոգին խելագար,
Կիզուեց հուրով այն զգիր,
Մինչեւ գիշեր վերջին գար: –

●

Ո՞վ հայրենի մեր երգի
Հրէ հանճար տառապած,
Դու չտեսա՞ր քո երկրի
Արշալոյսը փառապանծ…
Իբրեւ անիւն դու եկար,
Իբրեւ մեռա՞ծ տարագիր, –
Հին դաշնութեան դու վկայ
Եւ առաջին քարակիր…

digitised by A.R.A.R.@

●

Եւ եգերքում մեր նորոգ,
Հայրենիքում ահա մեր –
Արդ ոդջունում ենք սիրով,
Քո վերադարձը, Վարպետ: –
Իր տարագիր հանճարի
Վերադարձն է տօնում արդ
Ժողովուրդը քո արի
Հայրենիքով իր անպարտ: –

●

Հալածական երգ մեր հին,
Հանճարեղ ձայն դու մեր որք, –
Դէմքիդ կնիքը մահի,
Բայց միշտ անմահ ու միշտ բորբ· –
Զորս ծայրերում աշխարհի
Ինչքան եղար դու խաչուած
Մինչ հայրենիք դառնայ իր՝
Նոր պայքարում նուաճուած...

●

Եւ չտեսար, ո՛վ երգիչ,
Այս հայրենիքը նորոգ,
Որն իբրեւ մայր ամոքիչ
Արեւային իր ոիրով
Բուժէր քո սիրտը խոցուած
Սու տէգերով անցեալի,
Դափնեպսակ դնէր պարզ
Քո ճակատին պանծալի:

●

Իբրեւ անիւն դու դարձար
Քո հայրենիքը, որ քեզ
Ցուշ էր թուում սրբացած,
Մեռած զրոյց, որ որպէս
Արդէն անդարձ կորած հէր
Ննջած մի այր՝ դրած հող, –
Չի բարձրանայ էլ երբեք,
Որ արեւի ըմպէ շող...

●

Արքեօք կարո՞ղ էր քո սուրբ,
Բեկուած հոգին երազել,
Որ դառնալու ես մի օր
Քո հայրենիքը վսեմ,
Որ պիտի շուրջդ բուրի
Սէրն ու գգուանքը մեր այս
Եւ Զարեհցը համբուրի
Քո շրթունքները մեռած...

●

Բայց հայրենի երկրում քո,
Մայր–քաղաքում նրա հին,
Պատուանդանի վրայ նոր
Եւ սրտերի վրայ հիր՝
Ահա մարմինը քո սուրբ,
Իբրեւ մասունք զմռսած՝
Բարձրացել է վեհաշուք
Եւ բարձրարերձ՝ իբրեւ սար...

●

Սէր է բերել եւ գորով
Քո ժողովուրդն ահա քեզ –
Քո հնօրեայ երգերով
Օրօրելով սիրտդ կէզ· –
Սիրտդ տանջանք տեսած լոկ
Եւ չարչարանք կրած հեզ· –
Ահա քեզ փառք երգելով՝
Այնքան եպարտ ենք արդ, տե՛ս...

●

Կարօտով խոր իբրեւ վերք
Եւ երկիւղով սրբացած –
Խոնարհուել իմ ահա եւ
Աչիւնիդ դէմ երգածայն, –
Սիրոն ու ոգին իմ ահա
Նոյն ափսոսանքն են յորդում,
Օ՜, իմ անդարձ ննջած հայր,
Որ չտեսար քո որդուն...

●

Եւ յիրաւի· – դու անմահ
Հայրն ես երգի մեր հանայն,
Որ տարագիր գտած մահ՝
Տուն ես դարձել արդ միայն: –
Դու թաղուելու ես եկել
Երկրում քո նոր, որ արդէն
Դարձել է հաշտ ու հզօր –
Եւ քեզ բերում է վարդեր...

digitised by A.R.A.R.@

●

Կարդում եմ ես քո յոգնած
Մագաղաթեայ կոպերին,
Եւ ճակատի վրայ, բարձր –
Մտերմութիւն մի վերին: –
Նոյն մառրումն ու անհուն
Նայիրեան խոհն հարազատ, –
Նոյն երազանքն անանուն՝
Հազարամեայ երազած: –

●

Ճգնաւորի դէմքով ծեր՝
Մարտիրոսի դէմքով սուրբ, –
Օ՜, ուրուական դու վսեմ,
Թափառական մեր Ցիսուս, –
Ճգնաւորի ճակատով
Եւ մորմոքով վկայի՝
Նո՜ր ես յառնում ահա դու
Իրրեւ վկայ ներկայի···

●

Օ՜, վարդապետ անվեղար,
Որ վայրերում վրդովիչ
Ձայնի հովիւ լոկ եղար
Ձեռքիդ սրինգ մի թովիչ,
Դու աղօթքի փոխարէն
Ձայն խնկեցիր միայն վեհ,
Դէպի երկինք, որ բիւրեղ
Ժողովրդիդ սիրտն էր մեծ···

●

Ո՜վ նայիրեան հանճարի
Հազարամեայ դու տեսիլ, –
Որքան զրկանք ու չարիք
Դու աշխարհում կրեցիր· –
Մարտիրոսեալ յաւիտեան,
Որպէս անհոգ մարգարէ,
Դու հանգրուան չգտար
Կեանքում – դարե՜ր ու դարե՜ր: –

●

Եւ միայն ա՛յդ, Նահապե՛տ,
Գիսախուլ, կարացած,
Հազարամեայ յոգնաբեկ
Թափառումից քո դարձած՝
Պիտի յառնի շողշողուն
Հանճարիդ հուրն այգաբեր, –
Եւ խոր հանգչեն մեր հոգում
Քո ոսկրաթեր յոգնաբեկ···

●

Իրրեւ անիւն դու դարձար,
Քո հայրենիքը ազատ, –
Իրրեւ մասունք մի պայծառ.
Իրրեւ նշխար հարազատ, –
Եւ հայրենի քո հոգում,
Հին հանճարի իրրեւ տերմ՝
Կը բարձրանայ նա բեզուն
Երկրիդ ցողով ցողուած ջերմ: –

●

Իրրեւ անիւն դու դարձար, –
Բայց հայրենի երկրում քո
Հանճարիդ հունտն հրացայտ
Կը բարձրանայ նոր բերքո՛վ: –
Բեղմնաւորուած սրբազան
Քո անիւնով եւ անեզր
Արեգակով մեր կիզած՝
Հողն հազար ծիլ կը տայ մեզ:

●

Մեծ ցնծութիւն է հիմա
Մեր սրտերում, ո՞վ երգի՛չ: –
Ցօնն է երգի իր անմահ
Ցօնում յառնած մի երկիր: –
Դարձի համար քո այս վեհ,
Վերադարձի քո անմտահ –
Կեանք ենք կերտել արդէն մենք
Եւ արեւուտ, եւ անմար: –

●

Վերադառնան պիտի դեռ,
Հազար սրտեր տարագիր,
Զարհուրելի հեռուներ
Տարուած հողմով յարաբիրտ: –
Իրրեւ սրտեր կենդանի,
Իրրեւ անիւն կամ մասունք –
Սրտեր քանի՜, դեռ քանի՜ –
Հողն են իրենց երազում···

digitised by A.R.A.R.@

●

Վերադառնան պիտի դեռ՝
Հայրենի հողը բուրեան՝
Իրրեւ նորոգ երկրի տէր՝
Ե՛ւ Թումանեան, ե՛ւ Տէրեան: –
Շերիմներից իրենց ոգի
Իրենց դարձին են ցայում
Ու Դուրեանի սիրտը բոբր,
Ե՛ւ Մեծարենցն հմայուն: –

●

... Միջագետքից – Օրենբուրգ,
Հելեսպոնտից մինչեւ Վան, –
Ո՞ր աշխարհում արդեօք սուրբ
Զկայ մասունք ցայիրեան...
Ո՞ր ափերով աշխարհի
Քո մերկ ոտքերը չանցան, –
Օ՛, ցայիրեան հանճարի
Հազարամեայ Սերմնացան...

●

Պիտի դառնան դեռ հերթով
Տարագիրներն այդ անթիւ, –
Որ աչիւնով կամ սրտով
Դառնան աղբիւր հոսանքի: –
Կենդանի սիրտ, թէ աչիւն –
Իրրեւ հունտեր հանճարեղ –
Բեղմնաւորեն պիտի սուրբ
Հայրենի հողն արդ իրենց:

●

Իսկ դո՛ւ, ոգի՛, երգի մեր,
Վերադարձած արդէն տուն, –
Օ՛, սրբազա՜ն բերքի պէս
Ընդունեց սիրտը խնդուն. –
Ցնծութիւնից խելագար
Ժողովրդի սիրտը քեզ, –
Իրրեւ աչիւն դու եկար,
Բայց իրրեւ կեանք ընդունեց: –

●

Ինչպէս երգերը քո ջերմ
Ժողովրդի սիրտը մեծ
Իրրեւ բարիք, իրրեւ սերմ
Մի ոգեղէն ընդունեց, –
Քեզ կ'ընդունէ այդպէս յար
Հայրենի հողն արդարեւ –
Ե՛ւ քո աչիւնը արդար,
Եւ քո ոգին հանճարեղ: –

●

Թող ամոքուի վերջապէս
Հազար սրով զարկած խոր –
Սիրտդ հոգում մեր երկէզ,
Որպէս գրկում սիրած մօր:
Որպէս վսեմ ողջակէզ՝
Ցոգնած աչիւնը քո թող
Գտնի հանգիստ վերջապէս –
Եւ հայրենի դառնայ հող...

●

Եւ հայրենի այդ հողից,
Զանցած զարուն մի քանի –
Կ'ելնեն շքեղ եւ ուղիղ
Երգի շիւղեր կենդանի:
Եւ շշունչում երգեցիկ,
Հնչեղ երգում նրանց խոր –
Կ'ապրի հանճարը քո ջինջ՝
Անմահ երգի եւ ոգի նոր...

●

Կը խաղաղուի՞ վերջապէս
Խոնջած աչիւնը քո յար –
Դարձած մոխիր կենսաբեր,
Դարձած աչիւն, դարձած քար: –
Անէացած, սրբացած
Կ'ապրի ոգիդ հմայուն՝
Դարձած ելնող երգի ձայն –
Եւ հայրենի դարձած հող...

1936

Ե. ՉԱՐԵՆՑ

digitised by A.R.A.R.@

Ես նստած եմ նրա գերեզմանի մօտ: Ծաղիկ չեմ բերել: Ուզում եմ պատմել նրան այս օրերի իմ զգացածը, բայց վախենում եմ, որ նա նորից խելագարուի, նորից: Արձանները չեն խելագարւում: Չեն ծերանում, նաեւ չեն զգում ոչ ատելութիւն, ոչ սէր: Եւ, այնուամենայնիւ, մարդիկ են երջանիկ եւ ոչ արձանները: Եւ մարդիկ են դժբախտ: Օգնիր ինձ, Կոմիտաս, հասկանալու ոչ թէ աշխարհը, այլ ինքս ինձ, իմ ժողովրդին:

ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@



Մտայզացում Ա. ԿՈՒՐԵՂԵԱՆԻ

digitised by A.R.A.R.@

Դո՛ւ – Վարդապե՞տ։
Դու Ամենայն Հայոց երգի վեհափառն ես,
Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,
Գիրն ու տառն ես Հայոց երգի։

Դու մեր հաստատ Մասիս սարը՝
Վստահելի թիկունքն ես մեր,
Մեր երգերի Մովսարը
Ու թիւրակեան ակունքն ես մեր,
Մեր արնստած հաւքի լեզուն,
Մեր կարօտած փիդան հարը,
Մեր լեփ–լեցուն հոգիների ձայնատարը,
Մեր երգերի խա՛զը–նոտա՛ն–ձայնատա՛ռը,
Ձայնասրվի՛տը կենդանի
Ու ձայների թռնգարա՛նը, –
Մեր հայկական երգարա՞նը...

Արտը մեզնից՝ դու ես մաճկալ,
Ցարդը մեզնից՝ ցորենը դու,
Հարթը մեզնից՝ կատար դու սեգ·
Լուրթը մեզնից՝ երկինքը դու,
Շուրթը մեզնից՝ դու համբոյրը,
Ցուրտը մեզնից՝ իսկ դու՝ կրակ,
Իսկ դու՝ օճախ,
Իսկ դու՝ թոնի՛ր...

Ու մեզանից արդ ընդունիր
Երախտիքի այս խաչքո՛ւռը,
Այս խաչքուռը՝ քո իսկ հերկի։

Ընդունիր դո՛ւ, դո՛ւ՝ մեր երգի
Մշտահնչիւն նուագարան·
Ընդունիր դո՛ւ՝ մեր ցաքուցիր
Մասունքների հաւաքարա՛ր·
Դու՝ խազերի մեր քերական,
Դու՝ հոգեւոր մեր շարական·
Դու՝ սրբազան մի աւազան,
Որ մեր հոգին աշխահանեց·
Դու՝ բիբլիական մի գաւազան,
Որ ուր դիպաւ՝ ազբիւր հանեց·
Դու մեր կարօտ ու մեր մորմոք,
Մեր տաղի քուրմ
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտարքուն,
Անլռելի զանգակատո՛ւն...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

(*Հատուած*)

digitised by A.R.A.R.@

Հազար ուրֆ՝ հարիւր վարսանիանն թուին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տուին,
Հայոց արտերում ի՞նչ բերք է հասել, —
Դժուար է ասել։

Սակայն այդ թուին Մայր Հայաստանի
Արգանդը եղաւ սրբօրէն բեղուն։
Մի մանուկ ծնուեց Լոռուայ Դսեղում...
Նա յետոյ պիտի դառնայ պատանի,
Եւ երիտասարդ, Եւ այր իմաստուն,
Անբախտ Մարոյին՝ յացով՝ սպանի,
Մեր Հառաչանքը հասցընի Աստուն։
Մրմուռից դպրուած նրա բերանով
Մարոյի նանը պիտի ողբ ասի,
Մարայ զօրքի հետ Դաւիթը խօսի,
Գիքորը կանչի. «Էստի՞ համեցէք...»։
Նա պիտի երգի՝ ինչ է կամեցել
Իր մոխրակալած — հրակէզ հոգին,
Եւ՝ որքան տրտում, նոյնքան կենսագին՝
Տարիներ յետոյ նա պիտի դառնայ
Մի ժողովրդի ազնիւ կենսագիր...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

digitised by A.R.A.R.@

ՑՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Յ. ԳԵՂԱՐԴ

«ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ» ԸԼԼԱԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

Ոչ մէկ հայ բանաստեղծի հարիւրամեակը դիմաւորուած է պետական ու ժողովրդական այսքան լայն չափանիշերով, այսքան բազմամարդ հանդիսութիւններով, Հայրենիքէն ներս թէ Արտերկրի տարածքին: Փաստ է սակայն, որ Հայ Գրականութիւնը կը հաշուէ առնուազն «հանճարեղ Լոռեցի»-ին չափ բանիմաստ տասնեակ մը այլ բանաստեղծներ (*):

Յ. Թումանեանէ առաջ, մեր ժողովուրդը, իր մեծագոյն ճնարակիրներու գլխուն անցուցած է «Սուրբ»-ի լուսապսակը (Նարեկացի, Շնորհալի), հանդերձաւորած անոնց մարմարակերտ ու շքեղ իրանները «Եղեռնախուքեան քուրմեր»-ու արփեշող ծիրանիով (Դ. Վարուժան, Սիամանթօ), խեղճագարուած ամբոխներով խիզախօրէն քալած դէպի ապագայ՝ իր հրեղէն դրօշակակիր հոտէն (Ս. Զարեանց), երիտասարդութեան հեղեղով ուռամբարձ տարած Սկիւտարի Սոխակը՝ դէպի իր յաւիտենական հանգստարանը (Պ. Դուրեան): Բայց միայն Յ. Թումանեան համարձակած է ինքզինք կոչել «Ամենայն Հայոց Բանաստեղծ», եւ հայ ժողովուրդը, իր մտաւորականով թէ աշխատաւորով, արեւելեան թէ արեւմտեան հատուածներով, առաջին օրէն իսկ վաւերացուցած է այդ տիտղոսը, լուսապայծառ անոր դէմքին արժանի համարելով այդ փառքը:

Ո՞ւր փնտռել «Ամենայն Հայոց» դառնալու գաղտնիքը, ուրեմն: Ո՞րն է այդ գերագոյն պատուին առաջնորդող լուսեղէն կածանը:

Մանկութեան՝ Լոռիի սեպ ժայռերու մէկէն միւսը եղնիկի պէս թռչող Թումանեանը կարծես սրբած է նեղ արահետներէն անմատչելի բարձունքներ նուաճելու գաղտնիքը: Եւ առաջին երիտասարդութեան իսկ, իր առաջին ստեղծագործութիւններով՝ բռնած է Հայ Գրականութեան ընդհանուր հորիզոնին իշխող գագաթը առաջնորդող շաւիղը:

Հայկ Նահապետէն սկսեալ՝ Հայը քալած է Պատմութեան ուղիղ ճանապարհներէն, մախազին մէջ՝ խազազութեան ձթենիի ճիւղը, մարդասիրութեան նշխարն ու նկանակը, մէջքին՝ արդարութեան ադամանդաշող սուրը, թուր կեծակին: Սիրտը՝ բարի ու առատ՝ Շիրակ, Ջեռքերը շնորհաբաշխ՝ Արամ ու Սեւան, Միտքը լոյսի խորան՝ Սանահին, Հաղբատ:

20-րդ դարու սեմին, նախ Լոռիի աստուածամերձ լեռներու լանջին, ապա Հայաստանի բովանդակ տարածքին՝ Յ. Թումանեան այսպէ՛ս է ճանչցած Հայը, խանգավառուած մարդկային այս տիպարով, անոր միս ու արիւն տուած դիւթական աշխարհ՝ Հայաստան երկիր դրախտավայրով: Եւ այս երկու գեղեցկութիւնները, Հայը եւ հայրենի բնութիւնը դարձուցած՝ իր գոյութեան ոգեւորութիւնը, իր կեանքը՝ զանոնք իրենց ժամանակին

(*) Այս շարքին մէջ չի մտներ Սայաթ-Նովան, որ կը վայելէր համակովկասեան յարգանք ու հիացում:

digitised by A.R.A.R.@

հետ ապրեցնելու եւ այդ ժամանակէն անդին՝ յաւերժութեան անպարագիծ սահմաններուն հասցնելու սաւառնաթռիչ մը:

Սրբութիւն Սրբոցը իր հայրենի հո՛ղն է ու անոր ազատագրումը, ապրելու գերագոյն իմաստը՝ հայ ժողովուրդի ազատ լինելութիւնը: Հայուն ցաւը ի՛ր ցաւն է, հայուն ուրախութիւնը՝ ի՛ր ուրախութիւնը:

Լենկթիմուրը կը հարցնէ Հայր Օհանին («Ադաւնու Վանքը»).

– Ինչ ես ուզում դու, սուրբ ալեւոր,
Գո՞նձ, իշխանութի՞ւն, թէ կեանք փառաւոր...
– Ոչ փառքն ու գանձը հարկաւոր չեն ինձ,
Իմ ժողովուրդն եմ ուզում ես բեզնից, – կ'ըլլայ Հայր Օհանին պատասխանը բռնակալին:

Կանգնած Գուգարաց լեռներու բարձունքին՝ Ց. Թումանեան անխնայ ու անանձնական ոգիով կը դիտէ հայ կեանքը, Արաքսէն Արեւելք թէ Արեւմուտք, կը խորաչափէ հայոց պատմութեան հորիզոնը եւ հայ ժողովուրդի աւանդութիւններուն, առասպելներուն դիւցազնակերտ ու կախարդական աշխարհը:

Կայ այսօրուան (19-րդ դարու վերջի եւ 20-րդ դարու սկիզբի) հալածանքէ, շահատուրքէ եւ նիւթական թշուառութենէ տանջուող Հայը, ան՝ անոր անապահով կեանքը իր երդիկին տակ, արիւնոտ ջարդը հայրենի հողերու տարածքին: Եւ հայու այս տառապանքէն կը ծնին Ցաւի իր ստեղծագործութիւնները («Երկրում», «Ադաւնու Վանքը», «Գիքորը», «Հոգեհանգիստ», եւայլն): Ու չի բաւեր արտաքին հալածանքը՝ Ց. Թումանեան, անհուն վշտով, այլ զաւեշտախառն շեշտով կ'ափսոսայ թէ՝ ի՛նչ չենչին պատճառներով Հայը երբեմն կը հարուածէ Հայուն, կ'ելլէ գիւղը գիւղի դէմ («Մի կաթիլ մեղրը» – Հո՛ս պէտք է փնտռել սքանչելի այս պոեմին ազգային դիմագիծը, ապա միայն ներքոգել անոր խորքին ու արուեստին համաշխարհային արժէքը»):

Բայց՝ ընկերումի պահեր քիչ անգամ կ'ունենայ Ց. Թումանեան: Մասնակի տեղատուութիւններէ եւոյ կը դառնայ ամբողջական մակընթացութիւն, որովհետեւ Հայը միայն ցաւի բեռան տակ ընկճուած, անոգնայար ստրուկը չէ: Հայկ Նահապետէն մինչեւ Մեծն Տիգրան ու Վարդան Մամիկոնեան, եւ Դաւիթ Բեկէն մինչեւ Սերոբ Ադրիւ ու Անդրանիկ՝ ամենամեծ ազգերուն պատիւ բերող հերոսներ ծնած ա՛զգ է Հայոց ազգը, բռնութեան դէմ պայքարող, Ազատութեան համար Մաեր անհրկիւղ դիմակայող եւ անկախութիւնը պաշտպանելու հայրենասիրական գաղարներուն մէջ այլ ժողովուրդներու, նոյնիսկ թշնամիի՛ն եղբայրասիրաբար ձեռք երկարող վեհապանծ դիւցազուններու Հայրենիքն է Հայաստանը: Այս ճշմարտութենէն ալ կը ծնին Ց. Թումանեանի ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ եւ ՑԱՂԹԱՆԱԿԻ ստեղծագործութիւնները («Թմբկայ բերդի առումը», «Հսկան», «Սասունցի Դաւիթ» զուսխ-գործոց դիւցազներգութիւնը, եւայլն):

Առասպելական ու միաժամանակ իրական՝ այս դիւցազուններու հերոսական արարքներուն հրաշագործ բալասանը կը կապէ Ց. Թումանեան Հայու մխացող վէրքերուն, կ'ուզէ ջրդեղել անոր գայտուելու կամքը, յոյս ու կարով ներշնչել անոր դէպի յաղթական ապագան, նոր ու հզօր հայրենիքի մը տիրանալու հեռանկարով: Ասկէ ալ կը ծնին Ց. Թումանեանի ՀԱՒԱՏՔԻ ստեղծագործութիւնները («Լուսաւորչի կանթեղը», «Հայրենիքիս հետ», եւայլն):

digitised by A.R.A.R.@

Այսօրուան մանուկները պիտի ըլլան վաղուան այդ նոր ու հզօր հայրենիքին քաղաքացիները, հա՛յ բնակիչները: Եւ Ց. Թումանեան իր պապերուն կտակը կը դաւանի նշանաբաններէն մէկը իր կեանքին. «Ապրէք երեխէք, բայց մեզ պէս չապրէք»: Անհրաժե՛շտ է հայ մանուկին *հայերէն* կարդալ տալ, հայ ստեղծագործութեան հուրը վառել անոր մատղաշ սրտին մէջ: Եւ ահա ծնունդ կ'առնէ Ց. Թումանեանի ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ («Քաջն Նազար», «Շունն ու կատուն» եւ տակաւին շարքը այն վեհտ բերքուածներուն, որոնք զարդերը կը հանդիսանան Լ. Շանթի եւ Ս. Լիսիցեանի հետ խմբագրած Ց. Թումանեանի «Լուսաբեր» դասագրքերուն):

Բայց մանուկը, ինչպէս եւ բոլոր ժողովուրդները ու մանաւանդ հայ ժողովուրդը՝ չեն հանդուրժեր բառերու աւելորդ բեռը ստեղծագործութեան մէջ, դարձդարձիկ ուղիները արուեստի, խաւարն ու խուրը ոճի: Հոն ուր արուեստը կը դիմէ լաբախաղացութեան ու սեթեւեռնիի՝ կը դառնայ արուեստական, սա՛ւտ, եւ հետեւաբար անիրապոյր: Մեծին ու փոքրին

digitised by A.R.A.R.@

հաւատարապէս մատչելի ստեղծագործութիւնը պիտի բլլայ հարազատ մարդկային հոգիին, լեզուով մաքուր ու վճիտ, արուեստով պայծառ ու դիւթական: Եւ Ց. Թումանեանի բոլոր երկերը ուռնցած են արուեստի հիմնական այս գրաւականներով:

Լեզուն, հա՛յ լեզուն է հայ գրականութեան հիմքը եւ հայ ժողովուրդի էութեան խարիսխը: Տեւաբար հարստացող եւ հայ ժողովուրդը հարընտացնող գանձ մըն է հայերէնը Ց. Թումանեանի համար: Ժողովուրդին ստեղծագործած ու գործածած լեզուն ստկայն, զոր գրագէտն ու բանաստեղծը արուեստագէտի հպումներով յղկելու իրաւունքն ունին միայն, ինչպէս բակերիչը կը յղկէ ադամանդը՝ աւելի լոյս ու կեանք տալու համար անոր:

Այս ըմբռնումով հայ լեզուի պահպանումն ու ծաղկումը սրբազան կիրքն է հանճարեղ Լոռեցիին, հայերէն *մէկ* լեզուի կիրարկումը համայն հայութեան կողմէ եւ գրական մէկ լեզուի մշակումը հայ գրականութեան համար՝ անոր ամենաբանկագին երազը: Դէմ է բոլոր անոնց, որոնք իրենց քմահաճոյքին կ'ենթարկեն Ս. Մեսրոպի ուսանդը: Դէմ է Մ. Արեղեանին, որ յանձնական տեսակէտէ մղուած՝ արեւելահայ նոր ուղղագրութիւն մը կը պարտադրէ, բան մը, որ այլ անպատեհութիւններու կարգին՝ կը բաժնէ Հայրենիքը Սփիւռքէն...

Հայ լեզուի, հայ գիրի ու գրքի, հայ մշակոյթի մեծ ու պզտիկ բոլոր սպասարկուներու պաշտպանութեան, ծաղկումին ու բարօրութեան ի խնդիր՝ զօրաշարժի ենթարկեց իր ուժերը յանախ: Երկիւղածութեամբ ոտք դրաւ հայ դպրոցի սեմին, պայքարեցաւ հայ ուսուցիչի ճիւթական վիճակի բարելաւման համար, աշխատեցաւ հիմնել Հայկական Ակադեմիա, խանդավառուեցաւ հայ մեծ դէմքերով եւ նախագահեց մշակութային տօներու, յոբելենական հանդիսութիւններու, գրական ընկերակցութիւններու:

Փաստօրէն *քաղաքացի* Թումանեանը շուրջ պէս հետեւեցաւ միշտ՝ *բանաստեղծ* Թումանեանին: Աւելի՛ն. լուսաւորեց ու վեհացուց անոր մարդու եւ գրագէտի դէմքը:

Եւ ոչ միայն մշակոյթի անդաստանի երկայնքին՝ այլ նաեւ քաղաքական կեանքի ճակատներուն վրայ: Զիւր քմակէն վար չիջաւ հայ-թաթարական ընդհարումներու ընթացքին եւ շնորհիւ իր հեղինակութեան՝ յաջողեցաւ կատարել հաշտարարի դերը: Փետրուարեան ապստամբութեան օրերուն մտգոգ եղաւ կարմիր ու դեղին ճակատներուն միջեւ՝ վերահիւսելու տենդով հայ կեանքի ճեղքուածքները:

Խաղաղ օրերուն ալ՝ դարձեալ անանձնական կեանք մը ապրեցաւ ընկերասէր ու ընկերական այս ազնուականը: Սրտին պէս՝ դուռն ու սեղանը միշտ բաց, ճիւթականի մասին երբեք չմտածող այս մեծահարուստին խընճոյքի սեղանէն լիացան եւ տահմիկ իր երդիկէն ուրախութիւն եւ իմացական աշխատանքի գրգիռ տարին արուեստագէտ ու գրագէտ իր ընկերները:

Օրուան մշակոյթի առաջեալներէն ո՞վ չէր հանդիպեր Ց. Թումանեանի «Վերնատուն»ը. Ազայեա՞նը, Կոմիտա՞սը, Դեմիրճեա՞նը, Շա՞նթը...

Փոքրկոյակ աշտարակ մը չեղաւ սակայն այդ «Վերնատուն»ը: Գրչեղբայրներու հետ մտերիմ ու հոգեշահ գրոյցի հաւաքավայր մը բլլալէ աւելի՝ հայ մշակոյթի ազազայ հորիզոններուն վրայ խուզարկու լուսարձակ մը պտտցնող փարոս մը հանդիսացաւ թարգմադիր այդ ժողովարարը:

Շեյխսպիր, Կէօթէ, Պայրըն, Պուշկին եւ համաշխարհայէն այլ մե-

digitised by A.R.A.R.@

ծեր հմայեցին իր սիրուն ու միտքը, դարձան այլապէս մտերիմները իր կեանքին, եւ ի զուր չէ որ ինքնանմանէ արժէքաւոր էջեր ներմուծեց հայ գրականութեան: Բայց առաւել եւս խնկարկեց ազգային դէմքերու. Կոմիտասի երգին մէջ ըմբշխնեց աստուածային համերգը, Ադամեանի Համլէթով ուռնացուց իր հպարտութիւնը:

Եթէ աչքը չբեռնեց օտարէն գալիք փառքին ու գանձին: Լենկթիմուրէն իր ժողովուրդը միայն ուզող Հայր Օհանին պէս՝ ճուն թէ արքուն՝ Ց. Թումանեան քանի եւ գործով իր ազգի ամբողջականութեան, բարօրութեան եւ զարգացման մասին մտածեց, պայքարեցաւ ու յաղթանակեց: Հայ ժողովուրդին ծառայելը դարձուցաւ իր գերագոյն փառքը, հայ մշակոյթի գանձերուն համար վաստակիլը՝ իր հարստութիւնը:

Եւ պատմութեան ընթացքին իր արդարամտութեան եւ վաւերական արժէքներու հանդէպ ուղիղ կեցուածքի փաստը տուած հայ ժողովուրդը՝ անգամ մը եւս տուաւ իր գնահատանքի չափանիշը՝ «Ամենայն Հայոց Բանաստեղծ»ի մշտադալար դափնեպսակը եւ հեզահամբոյր այս դիւցազունի ճակտին:

Ոչ միայն գնահատանքի, այլեւ բանաստեղծի եւ բանաստեղծութեան *հայկական չափանիշ* դարձաւ Ց. Թումանեանը իր կեանքով ու երկերով: Հայութեամբ ապրիլ, հայութեան եւ Հայաստանի համար շնչել իբրեւ *գրող* ու *քաղաքացի*, եւ ազգայինը հասցնել համամարդկային արուեստի՝ ձեւի պարզութեամբ, խորքի լայնեզրութեամբ, լեզուի վնիտութեամբ ու ոճի պայծառութեամբ:

Կանգնիլ ազգային գետնի վրայ, խորասուզել արմատները հայրենի հողին, հայ ժողովուրդի սրտին ընդերքը, եւ ապա բարձրանա՛լ, ծառանա՛լ, ճիւղատարած կաղնիի պէս կոթողուիլ համամարդկային արուեստի ոլորտին մէջ, – ա՛յս եղաւ Ց. Թումանեանի գրական հաւատամքը:

Եւ չսխալեցաւ: Շնորհիւ անբեկանելի այլ բիւրեղ իր արուեստին, մարդասիրական շունչին եւ երկերէն բխող յաւիտենական ճշմարտութեանց՝ օտար ազգեր ալ խոնարհեցան իր վաստակին առջեւ, եւ իր գլուխ-գործոցները, մանաւանդ Անոյշն ու *Սասունցի Դաւիթը* դարձան զարդերը միջազգային գրադարաններուն:

Եւ ի զուր չէ որ այսօր, ո՛չ միայն մայր Հայրենիքի, այլեւ սովետական մէկէ աւելի ֆադամներու մէջ կը բարձրանան հանճարեղ Լոռեցիին յուշարձանները, կը բացուին լայն պողոտաներ Ց. Թումանեանի անունով, լեզուէ լեզուի կը թարգմանուին իր գործերը, հերոսները վար չեն իջներ թեմերէն եւ կը ցալարձակուին պատկերասրահներու պաստառներուն վրայ, իր դէմքը կրող դրոշմաթուղթեր կը դրուին շրջագայութեան եւ *Խնեաքո*-ն այս տարուայ հարիւրամեակի տօնակատարութեանց յայտագրին վրայ կ'արձանագրէ անունը:

Կեանքի եւ գրականութեան մէջ, բանաստեղծ ծնիլը ընդհանրապէս եղած է հոմանիշ դժբախտութեան:

Բացառիկ բախտաւորներէն է *լոյս տալով սպառած* «Ամենայն Հայոց Բանաստեղծ»ը:

Արժանի ու արդար բախտաւորութիւն մը:

Ց. ԳԵՂԱՐԴ

digitised by A.R.A.R.@

ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Մեծոյ Թումանեանին գրաչնչել է նրա գրական գործունէութեան սակաւին ամենավաղ ժամանակաշրջանից։ Դեռ 12 տարեկան եղած մի պատանի էր նա, երբ գրեց իր առաջին բանաստեղծութիւնը՝ «Հազուս հատոր» վերնագրով։ Ոտանաւորի գրութեան շարժառիթն է եղել բանաստեղծի սիրած դասընկերը աղջկայ ըդդունչացուցիչ նամակը՝ սիրով լցուած եւ դասերը չմոռանալու մասին.

Հ. Ղ.

Հազուս հատոր,
Սքանչա կտո՛ր,
Դոսխ հատար·
Դու մի՛ հազար,
Թէ կամ դասեր,
Կայ մեր օրը,
Եւ ի՞նչ զարմանք,
Իմ ազատնակ,
Որ կենդանի
Մի պատանի
Սէրը սրտում
Դաս է տերտում։

Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՊԱՏՐԱՆՔ

Վէր է կացել էն ստրում
Մեր Զալակը իր թեւից·
Գրնում է մութ անտառում,
Դար ախպէրքը հոտից։

Զրրնգում են Գրանք խոր
Էն անտառում կուսական.
Ես կանչում եմ ձորից ձոր,
Ինձ թւում է թէ՝ կը գան...

Զո՞ւր... վազո՞ւց են, ա՛խ,
Գրրանք
Մեր սարերից գընացել·
Էն գիլ ձէնքրն են մենակ...
Իմ ականջում մընացել։

ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

⁂

Եղիշէ Չարենցը յանախ անգէր էր արտասանում այս բանաստեղծութիւնը, հիացած նրա յուզական խորքով։

ՍՏ. ՋՕՐԵԱՆ

⁂

Այս բանաստեղծութիւնը արտասանելը մի երեւոյթ է մեր պոեզիայի պատմութեան մէջ. բայց ինչպէս տեսնում ենք, ոչ մի արտասանելը աղաւաղութիւն չկայ նրա մէջ։ Արտաքուստ պարզ, սովորական, մարդկային՝ աւելին՝ զեղչկական մի գրոյց է սա։ Մանկան պարզ ու փոքրիկ գրոյցի մէջ կայ մարդկային բարդ ճակատագրի մի մեծ պատմութիւն, մի ամբողջ աշխարհի կորուստ, կարուսի անհուն մի ցաւ, տխրութիւն եւ կսկիծ... վիպական մի ամբողջ պատում կայ այս փոքրիկ գրոյցի ներքուստում։

ՀԱՄՕ ՄԱՀԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԲԻՒԶԱՆԴ ԵՂԻԱՅԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԼՈՌԵՅԻ

Թումանեան Լոռեցիի մասին խօսիլը՝ հեքիաթ ըսելու պէս հաճելի պիտի դայ. որովհետեւ անոր կեանքը պարզօրէն եւ իր ամբողջ բովանդակութիւնովը պայծառ լոյսի դրուած գունագեղ պատկեր է։ Մանաւանդ, երբ այդ կեանքը դիտենք իբրեւ մարդ ու նկարագիր, ժողովուրդի մէջ ապրած ու գործած տիպար, շատ ընտանի կը նկրկայանայ ան. որովհետեւ Թումանեան իր հայրենի հողին ու ժողովուրդին մօտիկ ապրած քանաստեղծ է, կեանքի հանապազօրեայ հոսանքին մէջ՝ բայց հոսանքներէն քարձրացած գլուխ։

Թումանեանի անձը չունի գաղանի ծալքեր, հոգիի ծածուկ կամ ժլատ մթերանոցներ, կամ միտքի մութ քարայրներ։ Բաց գիրք մըն է իր սիրտը, հայրենի աշխարհի ծաղկուն գայտերուն նման, ժպտուն՝ բարեբար Արագածի արեւոտ կատարին ու զմրուխտ լանջերուն նման. առանց խորհրդաւոր բարդութեանց, որոնց մէջ կ'ուզեն պահուըտիլ երբեմն դրագէտի չինծու տիպարներ։

digitised by A.R.A.R.@

Իր ամբողջ կեանքը իր գրականութեան մէջ արձանացած է, մանուկ հոգիներուն իսկ մատչելի ծաղկած ածուի մը, ամբողջութեամբ եւ անկեղծութեամբ աբուած իր իսկ հոգիէն բացուած էջերով, ինչպէս ինք պիտի ըսէր ծիծաղով.

«Կեանքս արի հրապարակ,
ոտքի կոխան ամէնքին».

Բայց այդ «ամէնքը» անկեղծօրէն սիրեցին զայն, իրենց «ոտքին կոխած» այդ ածուն անմահ ծաղիկ քաղելով:

Հայաստանի եւ Սփիւռքի ամբողջ Հայութեան միացեալ քուէները իր վրան կեդրոնացուցած ազգասէր եւ լուսահրցուած բանաստեղծ է Թումանեան: Չկայ թերեւս հայ լեզուի ուսանող կամ հայ գիրի ծառայ մը, որ կարդացած կամ լսած չըլլայ Թումանեանի «Քաջ Նազարը», կամ «Անոյշ» օպերան, կամ «Լուսաւորչի Կանչեղը» զմայլելի քերթուածը, կամ «Սասունցի Դաւիթ» գլուցազնավէպը եւ տասնեակներով այլ բանաստեղծութիւններ: Բազմաթիւ են ժողովրդային երգի վերածուած իր բանաստեղծութիւնները: Հայ գրականութեան Արեւելեան ճակատի առաջնորդող դէմքերէն է ան, եւ անշուշտ իր ժամանակի եւ սերունդի առաջաւորագոյնը, Հայաստանի մէջ փառքի բարձրացած անուն:

Հայաստանի կառավարութիւնը, 1939-ին, Թումանեանի ծննդեան 70-ամեակին առիթով, անոր ծննդավայր եղող Դսեղ գիւղը «Թումանեան» անուանեց եւ տունը վերածեց թանգարանի, ուր այցի գացին երկրին նախագահը եւ հայ գիրի ու մշակոյթի երկրպագուները: Իսկ Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի մաս կազմող՝ Մ. Աբեղեանի անուան կանչնած Գրականութեան Ինստիտուտի կից՝ Երեւանի Գրական Թանգարանը հաւաքուեցան Թումանեանի ձեռագիրները: Թանգարանի վարիչը կ'ակնարկէ «Մուզրագոյն բանաստեղծի» թղթած «Մեծահարուստ արխիւներուն»:

Սրտայոյզ ու պարզ ժողովրդականութիւնով՝ սակայն՝ վսեմական գեղեցկութիւն եւ լուրջ ազնուականութիւն ցոլացնող դէմք է Թումանեան, լեռներու մէջ ամառնային պայծառ գիշերներու պէս խոր ու փառաւոր, ու ձորերէն հոսող գետերու պէս հնչեղ ու յաւերժաձայն:

Կարեւորութեամբ պէտք է նշուի, թէ Թումանեան եղաւ մեր ԺԹ. դարու գրականութիւնը Ի. դարուն կապող հզօր դէմքերէն մէկը, մանաւանդ՝ իր ժամանակներուն՝ Արեւելահայ նորածաղիկ բանաստեղծութեան ժողովրդային-տոհմային ուղղութիւն եւ հայրենական ներշնչում ու բնածնունդ գեղեցկութիւն տուող վարպետը: Իր կեանքը եւ գործը սերտորէն կապուած են 1890-ով սկսող եւ 1920-ով վերջացող տագնապալից շրջանի գրական եւ ազգային կեանքին հետ: Փոթորիկներու ու փլուզումներու եւ միաժամանակ մեծ ստեղծագործութեանց շրջան էր այդ թէ՛ Արեւելեան թէ՛ Արեւմտեան Հայաշխարհքին մէջ: Թումանեանը ճանչնալ՝ ճանչնալ է Հայութեան այդ դառն ու երկնող շրջանի մշակութային կեանքը, ու մասամբ նաեւ՝ ազգային կեանքը:

Թումանեան, թերեւս հետեւելով Սմբատ Շահազիզի եւ Ղազարոս Աղայեանի, ու ժամանակցելով Իսահակեանի, թերեւս նաեւ Շիրվանզադէի հետ – բայց աւելի շատ՝ ինքն իր բնական տաղանդին հակումովը – հայ գրականութեան տուաւ ժողովրդային մոթիվներու, հին ու միշտ կենդանի դիւցազներգական փոլքլորային նիւթերու վերականգնումի ուղղութիւնը: Պէտք է մենք առանձին շեշտենք այն մեծ դերը, զոր Թումանեան կատարեց այդ առասպելէն, ըլլալով մէկը անոնցմէ, որոնք դուրս գալով դասականութեան ճնշող մթնոլորտէն եւ ստաբ քաղքենիութեամբ սնած արուեստի թանձրամտութենէն՝ հայ բանաստեղծութիւնը փրկեցին մթածալ բարդութիւններէ եւ քերթին ժողովուրդի պայծառ կեանքին մօտ, տոհմիկ ու հարուստ մշտաթարմ աղբիւրներուն:

Այնքան հարազատ ու ջինջ եղած է Թումանեանի դրոշմը իր սերունդին վրայ, որ անոր ազդեցութիւնը կը շարունակէ ներկայ ժամանակներու մէջ եւս:

digitised by A.R.A.R.@

Յ. Թումանեան 1892-ին, Թիֆլիս

Իր պարզ ու հնչեղ քնարին լարերը դեռ կը թրթռան հոգիներու մէջ մեր ալ ժամանակներու աւագ ու կրտսեր արուեստագէտներուն, տարածելով հայրենասիրական ջերմ ու կենսատու շունչ մը, որ սիրոյէ սիրտ կը փոխանցուի եւ կը ստեղծէ միութիւնը Հայութեան՝ Հայրենիքէն մինչեւ Սփիւռք։

Թումանեան հասկցաւ ու հաւատաց թէ արուեստի ստեղծագործ հանճարը իր հոմ առաղձը եւ հանքը պէտք է փնտռէ ու գտնէ հայրենի բիւրեղ լիլատակներու մէջ, հայրենի բնութեան մէջ ու ժողովրդային կեանքին մէջ։ Ան իր սիրտը բացաւ հայրենիքին հին-հին գանձերուն, իր հոգին դաշնաւորեց ժողովուրդի կենդանի զգացումներուն, եւ մտածումներուն, եւ իմաստութիւններուն։ Իր քնարը լարեց այս բնածին ձայներու հնչիւնին, ու երգեց անոնց սէրն ու վիշտը, անոնց խոնարհ ու ռամիկ արմատներէն ընձիւղած անթառամ պեղեցկութիւնները, լոյսի բարձրացուց անկորնչելի արժէքները Հայ լեռնականի հոգիին, եւ իր ալ արեւավառ հոգիէն ճառագայթներ խառնելով՝ սփռեց զանոնք հայ աշխարհներու տարածութեան։

Ինչ որ ըրաւ Խրիմեան Հայրիկ իբրեւ հոգեւորական՝ իր ժողովուրդին հաբաստ հոգեկան տենչերը պատկերելով, կամ՝ Ահարոնեան, անոր ցաւերն ու վրէժը պոռթկալով. կամ ինչ որ ըրաւ Թումանեան՝ իր ժողովուրդի տոհմիկ հարատարապտութիւնը վերականգնելով. ինչ որ ըրաւ Կոմիտաս իբրեւ դաշնաւորիչ՝ իր ժողովուրդին բնիկ, ինքնաբուխ երաժշտութիւնը ոճաւորելով. եւ ինչ որ ըրաւ Գարեգին Կաթողիկոս՝ հայ արձանագրութեանց ու ձեռագրաց մէջէն ինքնատիպ հայ մանրաբուեստը լոյսի բերելով. համեմատաբար նոյնը ըրաւ Թումանեան՝ պեղելով հայ հեքիաթներու, հայ դիւցազնավէպերու անապատ ու չատ խոր հանքերը և անոնցմէ լոյսին բերելով անմահ արժէքներ։

Այդ է Թումանեանի բարձր դիրքը և մեծ դերը մեր գրականութեան պատմութեան մէջ։ Եւ իր այդ արժանիքով է որ ան ընդունուած է հայ գրականութեան, եւ անչուշտ հայ պատմութեան ալ, գանձարան-տաճարէն ներս՝ իբրեւ մէկը Հայ ժողովուրդի ամէնէն վաւերական ու հարազատ արժէքներէն, որ կը մնայ ներշնչարան եւ ուղեցոյց գալիք բազմաթիւ սերունդներուն։

Արուեստի տեսաբէտէն՝ Արեւելահայ գրականութիւնը ունեցաւ ուրիշ բարձրութիւններ. Տէրեան, Յովհաննիսեան, Իսահակեան. ասոնք ալ մեծ եղան. բայց տարբեր մեծութիւն է Թումանեան, իր ուղղութեան մէջ անդերազանցելի, ժողովուրդի հոգին թարգմանողի մեծութիւն։

Այսպիսի պարզ, բայց իր ամբողջութեան մէջ իմաստով լեցուն կեանքի մը առիւեւ ենք ահա։

Թումանեան անձնաւորուած գրականութիւնն է Հայութեան։ Հայուն անցեալը եւ ներկան իր անձ-տիպարին մէջ արձանացուցած մարդ։ Վալէրի Բրիւսով, որ Թումանեանը լաւագոյն հասկցող ու թարգմանող օտարներէն մին եղած է, դայն կը դնահատէ ճիշդ այդ ժողովրդային առաքինութեանց ներկայացուցչի հանգամանքով։

digitised by A.R.A.R.@

«Թումանեանի բանաստեղծութիւնը կարդալով, մենք ամբողջական գաղափար կը ստանանք իր ժողովուրդի կեանքի եւ եռգիի մասին» (1)։

Բացատրութիւնը սա է թերեւս, որ Թումանեանի բնատուր տաղանդը զարգացաւ բնականոն ճանապարհով, մշակուեցաւ ժողովրդական ստեղծագործութեանց շրջեղ միջավայրի մը մէջ, գործեց հարուստ ու պարզ, բայց դարերու իմաստութիւնը մարմնացնող նիւթերու վրայ ու զանոնք տուաւ բնութեան դունագեղ ոճով։

Այդտեղ է գաղտնիքը իր մեծութեան։ Ան իր կեանքը տուաւ բանաստեղծութեան։

Մենք եւս կրնանք լաւագոյնս հասկընալ Թումանեանի պարզ ու բնական կեանքը՝ իրեն մօտենալով նոյնպէս պարզ ու բնական ճամբաներով. ջանալով ճանչնալ զինք իր բնագաւառին մէջ տեսնել այնտեղ հում հանքերը, որոնք յետոյ պիտի դառնային իր ստեղծագործութեան նիւթերը, փնտռել գրուագները արտակարգ իր անձին ու նկարագրին, վերջապէս՝ դիտել զինք իր ընտանեկան ու ժողովրդական միջավայրին մէջ։

Թումանեանի մասին հրատարակուած ուսումնասիրութիւններ. բայց բոլոր այդ ծանր նիւթերու մէջէն մեր ջանքը պիտի ըլլայ ազատել զինք վերլուծումներու քանդրութենէն, այլ լոյսի բարձրացնել իր գրաւիչ անձին կարգ մը գիծերը, ո՛չ իբրեւ կենսագրական չոր թուումներ, այլ իբրեւ հոսուն ու կենդանի ընթացք գետերու, նման իր գրականութեան, որ եղաւ լի լոյսով, խինդով, վիշտո՛վ ալ, բայց մնաց միշտ հմայիչ ու ներշնչող։

ԼՈՌԻՆ՝ ՀԱՅՐԵՆԻՔ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒ

Թումանեանի կեանքը եւ գործը շաղախուած են հայրենի լեռնագաւառի վայրի ու բարի բնութեան հետ։ Ան ուղղակի ծնունդն է իր բնաշխարհին, եւ ուստի չի կրնար լման հասկցուիլ, եթէ նախ չճանչցուի իր կեանքի հիմնական այս շաղախը։

Յ. Թումանեան (1893)

Թումանեան կը նմանի պտղառատ ծառին, որ իր արմատները երկարած է բարերար հողին։ Ան չի նմանիր բանաստեղծներու՝ որոնք անկախ են հողէն ու երեւելի բնութենէն, ինչպէս՝ օրինակ՝ Չէրեան կամ Թէքէեան, որոնք արմատացած են մարդկային ներքին բնութեան մէջ, անկախ աշխարհագրական սահմաններէ։ Թումանեան սակայն անկախ չէ աշխարհագրութենէն. իր ողջ էութիւնը արմատացած է հայրենի բնութեան մէջ։

Հայրենի այդ անուցիչ միջավայրը ուրկէ ծլաւ ծաղկեցաւ Թումանեան, եւ ուրկէ պիտի քաղէր իր երգերն ու լեգենտներն ու պոեմաները, Հայոց Նշանաւոր ԼՈՌԻՆ է. հին մեր պատմութեան «Գուգարաց» աշխարհը, որ օրրանն էր քաջերու. հեքիաթային բնավայր առասպելատիպ հսկաներու, ուր մեր Քաջ Մուշեղ Մամիկոնեան՝ ըստ Փաւստոսի՝

1) Հ. Ե. Մ. 1943, թ. 3-4, էջ՝ 61։

digitised by A.R.A.R.@

պատժեց վրաց անկարգ բդեշխը։ Լոռին՝ «նշանաւոր իր բնական տեսարաններով, բարձր ու խորաձոր լեռներով, մացառախիտ անտառներով, ու բազմաթիւ լիճերով ու գետերով» (2)։

Բնութիւնը կենդանի վիշապ էր այնտեղ, նստած իր վայրի ու վսեմ հրապոյրներով, ու հեքիաթ կը պատմէր հինին զարերէն։ Ամէն ականատես Լոռին կը նկարագրէ զմայլանքով.

«Իրենց կատարներով ամպերը խառնող լեռներ՝ ծածկուած ապարաթախիտ մթին անտառներով, գահավէժ անդնդախոր ձորեր, որոնց յատակին փրփրում են սրընթաց գետեր ու շառաչիւն ջրվէժներ» (3)։

Այնտեղ՝ ուր այսօր Հայրենիք այցելողներ կ'ըսեն, թէ այժմ Զորագետի ելեկտրակայանը կը մզլատայ եւ Դեւ-Բեղ արագահոս գետի երկայնքին չոգեկառքը կը մրցի, եւ օձապտոյտ ճամբաներով արդի օթեւներ կը մագլցին, Թումանեանի մանկութեան ատեն՝ այնտեղ «մութ էր ու խաւար», վայրի եւ ամայի.

«Լոռու ձորերը ծածկուած էին խիտ անանցանելի անտառներով, որտեղ փարթամօրէն աճում էին հաստաբուն ընկուզենիները, կաղնին ու հացենին, հաճարենին ու լոռենին ու վայրի տանձենին։ Բարձրաբերձ լեռները հարուստ էին վայրի կենդանիներով ու թռչուններով, ժայռերի գլխին թռչկտում էին այծեամներն ու երէները» (4)։

Թումանեանի գրականութեան գրեթէ բոլոր կտորներուն մէջ կը հանդիպինք Լոռիի այս ահաւոր ու աքանչելի բնութեան։ Մէն խորքը կը կազմէ իր գեղեցիկ մէկ նկարին։ Օրինակ, «Քաջերի կեանքից» պատմուածքին մէջ կը նկարագրէ.

«Դսեղի հանդի սահմանները հարաւից սկսում են զովատուն բարձր լեռներով, հիւսիսում վերջանում անդնդախոր ձորերով։ Այս երկու սահմանների մէջ կան թանձրախիտ կուսական անտառներ, որ կացինի ձայն չեն լսած· ուր ծառերի փչակներում բուն է դնում մեղուն, թալանելում ապահով վխտում են երէները, մառուտներում ինքնիշխան թագաւորում է արջը, եւ շամբուտներում հանգիստ ապրում վարազը։ Բարձր ժայռեր՝ ուր բուն են դնում արծիւները եւ թռչկտում այծեամները»։

Ահաւոր ձոր մը կը բաժնէ երկու լեռնալանջերը, որոնց վրայ՝ դէմ առ դէմ՝ նստած են երկու գիւղեր – Դսեղ ու Զորագետ – ու լուռ կը դիտեն զիրար անդունդի վերեւէն, ինչպէս կ'երգէ Թումանեան «Լոռեցի Սագօ»-ին մէջ.

«Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
ժայռերը՝ խորունկ ունքերը կիտած՝
Դէմ առ դէմ կանգնած,
յամառ եւ անթարթ
Հայեացքով իրար նայում են հանդարտ»։

Իսկ վարը, խոր ձորի մէջէն փրփրացող գետին ձայնը կը կարկաչէ Թումանեանի ականջերէն դարձեալ.

«Գալարում է գիժ Դեւ-Բեղը մոլի,
խելագար թռչում քարերի գլխով·
Փրփուր է ժայթքում անզուսպ երախով։
Փնտռում է ծաղկած ափերը հին հին·
Փրփուր է ժայթքում ու գոռում գիժ գիժ
– Վուշ-վուշ ու վուշ-վուշ···»։

Ուրիշ առիթով՝ Թումանեան կ'ըսէ ինքնակենսագրութեան մէջ.

«Իմ մեծ ուսուցիչն է եղած Դեւ-Բեղը, նրա վշշոցը։ Գիշերները՝ լուսնեան մէջ միշտ ականջ էի դնում Դեւ-Բեղի ձայնին, երբեմն խաղ ու խոր երբեմն պարզ ու անաւոր, եւ կարծես խօսում էր հոգուս հետ»։

---

2) Հ. Մկ. Վ. Պատ. «Հայ Հանրագ.», 1938։

3) Վ. Անաբանեան, «Ցովհ. Թումանեան», 1938։

4) Նուարդ Թումանեան, «Մանկ.», 8-9։

digitised by A.R.A.R.@

Գիշերուան լռութեան խորքէն բարձրացող այդ ձայնը, խառնուելով մերթ վայրի գազաններու ոռնոցին, ժայռերէն արձագանգելով կը ծաւալէր, եւ անոնց ահաւորութիւնը կը բազմապատկուէր, հսկայ լեռներուն կուտար խորհրդաւոր կենդանութիւն մը։ Բնութիւնը ոգի կ'առնէր եւ ահաւոր կերպարանքներ կուտար ժայռերուն.

«Գիշերը լուսնի երկչոտ շողերն
Հենց որ մտնում են էն խաւար ձորը,
Ալիքների հետ խաղում դաշտերին,
Ինչպես ու մռայլ մի կեանքի շողով՝
Ոնգի է առնում ամէն բան էնտեղ,
Նընչում եւ ապրում են մութն ու տեղ»։

Ինքհուրդներու այդ անդունդէն է, որ բանաստեղծի թարմ երեւակայութեան մէջ ալ ոգի պիտի առնէին ցնորին անցեալ հսկաները, շրջէին ազատ ու մռայլ եւ պատմէին իրենց ահեղ կռիւներէն։ Դիրքով անառիկ ու կղզիացած լեռնադաստան «բնակերտ ամրոց» Լոռի աշխարհը հիներէն ի վեր ապաստան եղած է ազատութեան հերոսներուն։ Ցիշատակներով հարուստ գաւառ, իր գմբէթաղարդ տաճարներով, իր կիսակործան պալատներով, կամարակապ քարդերով, եւ սուրբերու պէս աղօթքի մէջ արձանացած խաչքարերով։ Այնտեղ են Սանահին եւ Հաղբատ հին լուսաւոր վանքերը։ Այնտեղ է գերեզմանը բազմապաղթ Սմբատ Բագրատունիի։ Այնտեղ է Օձնեցին, որ կարծես դեռ ոտքի կանգնած՝ իր խաչովը եւ աւետարանովը կ'օրհնէ Հայոց բանակը։ Տարբ դար առաջ այնտեղ է հիմնուած Կուրիկեան թագաւորութիւնը։ Ցիշատակներ՝ ու յուշարձաններ, որոնց մասին Թումանեան ինք կ'ըսէ «Լոռեցի Սայաթ» վիպերգին մէջ.

«Էս թախտի վրայ ազօթում է մի վանք,
Էն ժայռի գլխին հանում է մի թեռդ,
Մուր-աշտարակից՝ ինչպէս զարհուրանք՝
Ռուի կոինչն է տարածում մերթ-մերթ։
Իսկ քարի գլխից՝ լուռ սուրբի նման՝
Նայում է ձորին մի հին խաչարձան»։

Ու հին քաջերու ոգիներով բնակուած այդ սրբավայրերը չունէ կ'առնեն, ու կը պատմեն դարերու պայքարներէն ու սէրերէն։ Աւերակները կենդանի են ու կը խօսին։ Գիւղը կենդանի է. ալիքաբեր նահապետ մը, որ դիշերները կը նստի, եւ իր շիպուքը վառած, թռուները շուրջ հաւաքած, անոնց կը պատմէ հեքիաթները անցած բայց անմահ սերունդներու։

Դեռ 18 տարեկանին գրած «Մարս» անուն աքանչելի պոեմային սկիզբը՝ Թումանեան կուտայ իր գիւղի խորհրդաւոր նահապետականութիւնը.

«Մեր գիւղն էն է՝ որ հպարտ,
Լեռների մէջ միգապատ,
Խոր ձորերի քարափին,
Ձեռքը տուած ճակատին,
Միտք է անում տխրադէմ.
Ի՞նչ է ուզում... չգիտեմ...»։

Այդ «ինչն» է ահա, որ Թումանեան ինքն ալ կը փնտռէ իր կեանքի երկայնքին։ Հայրենի գիւղէն հեռու ապրած իր տարիներուն, չարունակ իր միտքը կը դառնայ դէպի բնագեղ Լոռին, ու հառաչանքով կ'ոգեկոչէ զայն։ Կրնանք ըսել, թէ չկայ իր ձեռքէն եղած գրական կտոր, որուն մէջ չպատկերանայ իր մանկութեան աշխարհը։ Իր գրականութիւնը մէկ հսկայ պոեման է Լոռի գիւղիկ աշխարհին։ Կը հասկնանք հիմա, թէ ինչ կարօտ կայ այն տողերուն մէջ, երբ կը սկսի իր «Անոյշ» երկարաշունչ պոեման.

«Կանչում է կրկին, կանչում անդադար,
Էն չքնաղ երկրի կարօտը անմար
. . . . . .
Լեռներ, ներշնչուած դարձեալ ձեզանով,
Թնդում է հոգիս աշխուժով լցուած,
Ու ծեր իրիցներս՝ թախտից հալածուած՝
Ձեզ մօտ են թռչում
յախուռն երամով...»։

Ահա բնութեան «կենդանի» կոչուած ազդեցութիւնը բանաստեղծի մը վրայ։ Թումանեան բնութիւնը դուրէն դիտող ու նկարող մը չէ, այլ բնութեան հետ ապրող ոգի։ Թումանեանի ամբողջ գրականութիւնը Լոռիի վիպերգութիւն է, հսկայ մէկ լոռեկրութիւն — բաց էինք արդէն։

Թումանեան չէր ըլլար ան, որ եղաւ՝ եթէ ծնած ու մեծցած չըլլար Լոռիի մէջ.

digitised by A.R.A.R.@



Ց. Թումանեանի հայրը

չէր ըլլար ան, որ սիրեց հայ գիւղացիներկութիւնը, սիրեց ժողովուրդին ֆոլքլորը ու վերականգնեց զանոնք բնութեան զմայլելի խորքով։

Լոռիի մէջ է, որ հայ պատմութեան հրաշալիքները կը միանային բնութեան հրաշալիքներուն հետ՝ կազմելու համար այն նեղշանակութիւնը, որ եղաւ Թումանեանի բանաստեղծութիւնը։ Ինքն ալ կ՚ընդունի.

«Իմ մանկութիւնը անց եմ կացրել աստուածային շռայլութեան մէջ։ Լռռու գեղեցիկ բնութիւնը, անմահական օդը, շռընգան աղբիւրների ջուրերը, լեռնական գիւղական կեանքի ազատութիւնը – ես մի էս տեսակ աշխարհ եմ կորցրել...»։

Եւ իր այդ «կորսնցուցածին» փընտրտուքն է, որ իր երեւակայութիւնը կը յուզէ, զգացումները կ՚արթնցնէ եւ անոնցմով մեզի կու տայ սքանչելի գրականութիւնը, որ է Թումանեանի լոռեկրութիւնը։

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԶԱՒԱԿ

Հպարտութիւնով մըն է, որ Թումանեան կը յիշէ ընտանեկան հին աւանդութիւն մը, թէ իր նախահայրերը Ժ. Դարուն Տարօնի Գաւառէն բարձրանալով եկած հաստատուած ըլլան Լոռի, եւ թէ շատ հաւանաբար Մամիկոնեան ընտանիքէ ըլլան անոնք։

Այս աւանդութիւնը, թերեւս, կը ծնէր սա իրողութենէն, թէ հօրը կողմէն՝ իր նախահայրերը զինուորականներ եղած էին, եւ մինչեւ իր հօրը ժամանակները՝ ազնուականներու յատուկ զէնք կրելու և ձի նստելու առանձնաշնորհը պահած։

Մեծ-մեծ հօրը մասին՝ արդէն կը պատմէ Ծաշատաւր Աբովեան.

«Թումանենց Օվակիմ Նիւզբաշին է ան. որուն անունը քարերը սասանեցնում էր... Հինգ մարդ նրա մէկ ձեռքը չէին կարող բարձել... Ութ ախպար ունէր՝ մէկը միւսէն ածդահտ... Ինքն է գիւղի մէջ առաջին բարեկարգութիւն բերողը – ձէթի տեղ՝ մոմ վառել։ Իսկ անոր հայրը, Ծերունի Մեքաբ, վիթխարի հասակով մարդ, իսկի չէր էլ մտածում, թէ հարիւր տարին անց է կացրել, կ՚ելէր ջահիլների հետ՝ պեխերը կ՚ոլորէր, պարի կը խառնուէր...»։

Ասիկա Աբովեանի վկայութիւնն է՝ Օվհ. Թումանեանի ծնունդէն դեռ քառորդ դար առաջ։

Թումանեանի մեծ հայրը, որուն անունը ինք առած էր, Օհանէս Աղա, քաջ զինուորական ազնուական մարդ եղած է, փառքի ու քէյֆի տէր իշխան. դատ վարող, գիւղաւան կտրող մարդ, պաշտպան գիւղացիներու, որոնք մինչ մէջքին՝ իշխանական պետը իր բազմանդամ ընտանիքին։

Գիւղացիները ընդհանրապէս արդէն կ՚ապրէին նահապետական ընտանիքով, 30-40 հոգինոց ընտանիքներ շատ կային։ Բայց Թումանեան ազգային ընտանիքը մե-

digitised by A.R.A.R.@

ծագումն էր։ Երբ Յովհ. Թումանեանի մայրը այդ ընտանիքը հարս գացեր է, 60 հոգի կայ եղեր, մէջերնին՝ ութ հոգի սպիտակ մօրուքով, ու նորահարսը չէ գիտցած ո՛ր մէկին է տան մեծաւորը...

Իսկ Թումանեանին հայրը եղած է զարմանալի բնաւորութեան տէր մարդ։ Սանահին Վանքը ուսած եւ քահանայ ձեռնադրուած՝ երբ Յովհ. Թումանեան տղան 3–4 տարեկան էր։ «Հայրս իմ նախնիքներուս վերջին ինկած բեկորն էր», կ'ըսէ Թումանեան. սիրուած ու յարգուած մարդ, դէմքով հմայիչ, բարձրահասակ, մազերը կանուխ հերմկած, գիւղի իրական տէրտէրը։

«Ամենալաւ եւ ամենամեծ բանը, որ ես ունեցել եմ իմ կեանքում, – կ'ըսէ Թումանեան, – այդ եղել է իմ հայրը։ Նա ազնիւ մարդ էր, եւ ազնուական բառի բովանդակ միտքով, չափազանց մարդասէր եւ առատաձեռն, առատախօս ու զուարճաբան։ Սակայն միշտ ունէր մի խոր լրջութիւն։ Թէեւ քահանայ՝ բայց նշանաւոր հրացանաձիգ էր ու ձի նստող։ Այդ ժառանգական էր մեր ցեղի մէջ։

«Մեծ մարդու մասին գաղափար եմ կազմել իմ հօրով։ Մեծ մարդ էր, զարմանալի խորը մարդ։ Անդունդ խորութիւն ունէր. լայն հոգի, մեծ սիրտ, մեղմ բնաւորութիւն, ժպիտը միշտ դէմքին»։

Տէր հայրն էր, որ գիւղի ամբողջ ընկերային կեանքը կը վարէր. ընտանեկան վէ՞ճ կայ, ամոքելիք ցա՞ւ կայ, տալու խորհո՞ւրդ կայ. Տէր Թադէոսն էր կարգադրողը։ Շէն ու մարդամօտ երէց, ճամբայ գացած առենն իսկ մարդ որ տեսնէր՝ կանգ կ'առնէր ու երկար զրոյց կ'ըսէր։

Օր մը, իր Իսկուհի աղջիկը՝ հեռու այլեւ մը կողով բերելու համար՝ ակր հօրը ձին կը քաշէ կ'երթայ. ճամբան, ձին է՝ որ մարդ տեսաւ՝ կանգ կ'առնէ,

Յ. Թումանեանի մայրը

անշարժ կը սպասէ՝ մինչեւ անցնի հեռանայ մարդը։ Աղջիկը կը քշէ, բայց ձին չ'երթար. ամէն անգամ որ մարդ կու գայ դիմացէն՝ անպայման կանգ կ'առնէ... Աղջիկը շատ կ'ամչնայ հօրը ձիուն այս անհաճ վարմունքէն. ու տուն գալուն՝ կը գանգատի տէր հօր...

– Աղջիկս, – կը ծիծաղի Տէր Թադէոս, – այդ ձին ի՛մ ձիս է. վարժուած է իմ սովորութեանս. ճամբայ գացած առենս, ես որ մարդ տեսնեմ՝ սանձը կը քաշեմ, մարդու հետ կը խօսիմ...

Իսկ երիկունները, Տէր Թադէոս կը սիրէր սաղը պատէն վար առնել, նստիլ երգել աշուղական խոր ձայնով։ Այդ ժամերուն է, որ որդին՝ Յովհաննէս Թումանեան՝ քովը կու գար, ծունկին կը թաթնած՝ մտիկ կ'ընէր հօրը հառաչող երգերուն, կը դիտէր անոր բոցեղ աչքերը, որոնք հեռուն, շատ հեռուն կը նայէին, և ինքն ալ կը բոցավառուէր իր սիրտին մէջ, կը համակուէր հօրը վիշտով ու երգով։

Ընտանեկան պարտականութեանց մէջ, սակայն, անհոգ եւ անհաշիւ էր տէր

digitised by A.R.A.R.@

հայրը։ Երբեմն՝ բարիք գործելու միամիտութեամբ՝ կը խոնարհէր ալ, իր քսակը կը պարպէր հանդիպողին, կու տար ուղղին։ Անգամ մը, տապրակ մը ցորեն տարեր է ջաղացք... Ցունը կը սպասեն որ տէր հայրը ալիւրը բերէ, որ հաց թխեն... Վերջապէս կը բերէ, բայց ի՞նչ է բերածը... Ալիւրի տոպրակը պարպու�է... Այս ի՞նչ ես բրեր, տէր պապ.

– Ձամբան, հանդիպողը ալիւր ուզեր է, տէր հայրն ալ՝ ուզողին տուեր, տոպրակը պարպեր, բերեր է տուն...

Յովհաննէսի մայրը, սակայն, գրեթէ հակապատկերն է Տէր Հօր։ Տան ամէն հոգը իր վրան առած, հսկող, աշխատասէր կին է Նանին։ Կու գայ լեռնարնակ հովիւ ընտանիքէ մը։ Հայրը հովիւներու նահապետ, կեանքը սարերը անցուցած, բնութեան վայրի ուժերուն հետ մարզանք ըրած մարդ է, 108 տարի ապրած, բայց աշխարհը սիրած եւ անկէ չհլսուցած. մահուան անկողնի մէջ հառաչած.

– Հէյ փուճ աշխարհ. կ'արժէ՞ր էս երկու օրուան համար ծնուելը...

Հարիւր-եւ-ութ տարի ապրած է, երկու սովորական մարդու կեանք մաշեցուցած, ու դեռ զայն կը կոչէ «երկու օր»։

Իր աղջիկն ալ, Յովհաննէսի մայրը, նոյնպէս ժայռի նման տոկուն մարմին ունի, չարքաշ, ամէն աշխատանքի հասնող կին։ Ութ մանուկներ ունի, բոլորին ալ հոգը իր վրան. ցերեկը անոնց հաց կը պատրաստէ, գիշերները կը նստի կը մանէ, կը հիւսէ, երգեր խառնելով։ Այդ երգերէն մէկն է «Մանիր մանիր իմ ճախարակ», զոր Թումանեան յետոյ գրի պիտի առնէր։

Իր կեանքը տարերը անցուցած, իր վաւակներուն ալ տարերը սիրցուցած կին է Յովհաննէսի մայրը։ Ամէն ամառ բեռները կը կապէ եւ մանուկները տար կը տանի, ազատ կեանքին։ Անոնց կը տարէնեցնէ տարի սովորութիւնները, կը պատմէ տարերու հեքիաթները։ Թումանեան կ'ըսէ իր մօրը մասին.

«Ինչ որ տարի բան կայ իմ մէջ՝ դա իմ մօրից է՝ Նանից։ Թռչող կին էր իմ մայրը. արծուի թռիչք ունէր։ Ամենաբարձր տարերում, ծաղկոտ դաշտերում է պահել ինձ։ Շատ բան է տուել ինձ մայրս – շա՜տ»։

Սարը Թումանեանի մօր «դպրոցն» էր եղած։ Անգամ մը թոռները կը հարցնեն.

– Նանի, դու ուսումնարան գնացի՞լ ես...

– Բա, բալիկ, ի՞նչպէս թէ չեմ գնացել... տասներկու ուսումնարան եմ աւարտել...

– Ո՞ր տասներկու ուսումնարան, Նանի՛...

Ու Նանին կը սկսի համրել իր «աւարտած» ուսումնարանները – Ծաղկոտ Ուրթ, Քոչոքար, Մթին Ձոր, Կալեբի Սար, ա՛յս տար, ա՛յն տար... բոլորն ալ լեռնագագաթներու անուններ...

Բնութիւնն էր կեանքի դպրոցը մօրը համար, եւ բնութիւնը պիտի ըլլար դրական դպրոցը իր որդւոյն։

90 տարեկանին մեռած է Թումանեանի մայրը, իր որդւոյն մահէն 13 տարի ետքը, իսկ Քահանայ ամուսնոյն մահէն 38 տարի ետքը։

Ժայռի կտոր մը, հին կաղնիի կոնդ մը։

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ՝ ԵՐԱԶՆԵՐՈՒ ՄԷՋ

Յովհաննէս Թումանեան առաջին զաւակն է Տէր Թադէոսի. բոլորէն սիրուած, գիրկէ գիրկ մեծցած, բայց ութ տարեկանին՝ իր հօրը կովերը արածելու պաշտօնին կոչուած։

Իշխաններու վերջին չառաւիղը, սակայն, կը զգայ, թէ ինք նախնիներուն չէ ծնած։ Կը պատահի յաճախ, որ հօթը կով տանի արածելու, եւ հինգով վերադառնայ։ Սարը որ երթ, կենդանիները արձակած, ինք մէկ ծառի չուքին քունի կամ երազներուն մէջ թաղուած է։ Այս տեսակէտէն՝ Յովհաննէս աւելի լաւ հովիւ

digitised by A.R.A.R.@

չէ, քան Սասունցի Դաւիթը. շարունակ ուրիշներ լեռ-ձոր պիտի վազեն, իր կորսընցուցած անասունները հաւաքեն բերեն: Ինքը՝ կռնակի վրայ պատկած՝ պիտի սիրէ երկինքը դիտել, այնտեղ ճամբայ կտրող ամպերու կարաւանը հաշուել, որպէսզի յետոյ այդ բոլորը յիշելով գրէր.

«Ամպերը դանդաղ ուղտերի նման՝
Նոր են ջուր խմած ձորից,
քարձրանում...»:

Յովհաննէս աւելի շատ կը սիրէ ընկերներով շրջիլ սար ու ձոր, երբեմն գիշերներն ալ լուսնի տակ, լեռները կ'անցընէ: Շատ ու շատ կը սիրէ հեքիաթ մտիկ ընել: Ու շատ ու շատ կան պատմողներ, համառը՝ ծառի մը շուքին, ձմեռը՝ օճախին շուրջը: «Հին օրհնութիւն» կտորին մէջ կ'ըսէ.

«Կանաչ վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով՝ ծալապատ՝
Միասին բազմած, մի շրջան կազմած...
Մեր հսկայ պապերն ու մեր հայրերը...»:

Սքանչելի հեքիաթ պատմող են՝ Ղօնաց պապը եւ Խայէն: Առանցմէ լսածներէն են որ յետոյ գրի պիտի առնէր «Շուքն ու Կատուն», իր առաջին գրուածքը, «Արծիւն ու կաղնին», եւ «Անբախտ վանուականը», եւ ուրիշներ:

Բնութիւնն ու կենդանական աշխարհը խորապէս տպաւորած են Յովհաննէսի մտքին մաքաղաթը, ուրկէ՝ յետոյ՝ պիտի արտացոլային. բայց նոյնքան եւ աւելի զայն տպաւորած է ժողովուրդի կեանքը: Ան օրէ օր, ու տօնէ տօն, մանակից է գիւղական կեանքին ու բարքերուն: Հարսանիք, տօն, ուխտագնացութիւն՝ խրախճանքի ու խաղի ու երգի առիթներ են, որոնք շարքով իրենց հեքիաթները կը գրեն պատանեկան սիրտի ծալքերուն մէջ: Ան կը սիրէ Վարդավառը, Համբարձման Տօնը, Ծաղկաքաղը, հարս եւ աղջիկ «Փիճակ» հանելը ու «Ջան գիւլում» երգելը: Ծաղկի ու երգի օրեր են անոնք: Թերեւս շատ հին, Արայեան գարնանային վերակենդանացման պաշտամունքի մնացորդներ: Այս տեսարաններէն են, որ յետոյ Թումանեանի պոեմաներուն մէջ պիտի երգուին «Անոյշ»-ի երգերը:

Կայ սակայն գիւղական կեանքի տխուր կողմն ալ, որ նոյնքան զօրաւոր կ'ազդէն մանուկի մտքին: Լեռներու փարթամ շքեղանքին հակապատկեր՝ գիւղացիին ներքին կեանքը մութ է ու վշտալից: Բնութեան զուարթ ձայներուն խառնուած՝ ան կը լսէ խոր ու տխուր հառաչանքը իր ժողովուրդին. ծանր թշուառութիւնը՝ ի խնդիր օրուայ հացին, չարքաշ եւ ապարդիւն աշխատանքը մարդուն:

Իր «Գուլբանի երգը» կ'ըսէ, թէ ամէն կողմ թախիծ ու տառապանք կը տեսնեմ: Խոր հառաչանք է՝ 80-ամեայ ծերունի Սիմէոնի դանգատը անօթութենէ, որ կը վկայէ ժողովուրդի անձուկ տնտեսութեան.

«Էս խոր ձորերում,
Էս է՝ չորս քսան տարիս լրացաւ,
Ոչ մի խնդութիւն տեսայ իմ օրում,
Ոչ էլ մի անգամ աչքս լիացաւ...

«Ցկլոր ու սուած՝ էապէս տարին բուն,
Փարին հետ կռիւ ենք տալի.
Էսքան տանջուելով քրտինք ենք ածում,
Էլ էն սեւերան, էլ էն սուածն ենք...»:

Կայ մանաւանդ տխրութիւնը ընկերային քանդիչ բարքերու. ագիտութիւն, խաւար նախապաշարում, մանուկներու չահագործում, թարմ ու նորափթիթ հոգիներու ճմլում: Իր 18 տարեկանին գրած «Մարօն» պոեմային հերոսուհին մէկն է ճմլուած այդ մանուկներէն...

Փոքրիկ աղջիկ մըն է Մարօն, զոր՝ ինքը տարեկանին՝ դեռ իր կոկոն վիճակին մէջ՝ ծնողքը կը փրցնեն ու հարս կուտան «ժաղգահ» չօպան կարոյին...

«Ես իմ մէրը կը սիրեմ,
Ես չօպան կարօն չեմ ուզում...»:

Մանկական անմեղութեան դէմ դաւաճանելու ամբողջ ողբերգութիւնը կայ այդ տողերուն մէջ: Ու փոքրիկ աղջիկը՝ չդիմանալով այդ անքնական կեան-

digitised by A.R.A.R.@

ջին՝ փախուստ կու տայ եւ մօրը տունը կ'ապաստանի. բայց բիրտ ու սովորական հայրը զայն դուրս կը վանէ։ Խելակորոյս՝ Մարօն չգիտնալով ուրիշ ինչ ընել՝ կ'երթայ ինքզինք գահավէժէն կը նետէ։

Ուրիշ մէկ տխուր բարքի օրինակ է իր «Նեսօն», խաղընկերը։ Ուշիմ, հանճար տղայ, բայց աղքատ. հայրը ստիպուած զայն դպրոցէն կը հանէ, գործի կը յղէ, ուր, սակայն, թարմ ջիղերը չդիմանալով՝ կը մաշին, կը փճանան։ Թումանեան իր հին դպրոցակիցը իր անձին հետ բաղդատելով՝ կ'եզրակացնէ. «Նա էլ եթէ ուսում առնէր, կրթուէր, ապահով լինէր՝ լաւ մարդ կը լինէր. գուցէ ինձնից էլ շատ աւելի լաւը»։

Աւելի ընդվզեցուցիչ է «Գիքոր» ընկերոջ պատմութիւնը։ Հայրը տղան մեծ քաղաք կը ղրկէ, որ արհեստ սորվի, դրամ շահի։ Բայց անխիղճ վարպետը տղան հինգ տարի ձրի ու չարաչար կ'աշխատցնէ, կը շահագործէ... եւ մինչդեռ խեղճ հայրը գիւղին մէջ կը սպասէր որ Գիքորը «դրամ ղրկէ» իրենց ծանր ընտանեկան բեռը թեթեւցնէ, ահա տղան կուգայ հիւանդացած ու հիւծած, մեռնելու համար իր մօրը գիրկին մէջ...

Այսպէս ցաւատանջ է Թումանեանի գիւղացին։ Իր ժողովուրդի միտքը իր հայրենի երկրին բնական գեղեցկութիւններն ալ տխուր կը դարձնեն.

«Իմ հայրենիքը տխուր է տխուր...
Ուր այլ եմ դարձնում՝
տխուր աւերակ...
Ամէն տեղ միայն, միայն ցաւալուր...
Հեծութեան ձայներ,
երկչոտ ողողակ...»։

Այդ է Թումանեանի «կեանքի դպրոցը»։ Բայց կեանքի մէջ կայ նաեւ դրել – կարդալու դպրոցը։ Թումանեան հայ գիրը առաջին անգամ կը ճանչնայ իր հօրմէն՝ Տէր Թադէոսէն։ Կը սորվի այնքան արագ, որ յաջչակութեամբ կը կարդայ իր հօրը փոքրիկ գրադարանէն Սարգիս Եպիսկ. Հասան – Ջալալեանի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» դիրքը, որ առաջին անգամ կ'արթնցնէ դէպի Հայոց մեծ անցեալը։

Այդ օրերուն, պատահմամբ, իրենց գիւղէն կ'անցնի հեռաւոր ազգական տխրացու մը, զոր տէր հայրը կը կեցնէ, որ մանուկներու դպրոց բանայ։ Կոչտ տխրացուի ձեռքին տակ՝ գիւղին մանուկները տարի մը՝ աւելի շատ ծեծ կ'ուտեն, քան գրել–կարդալ կը սորվին։

Հայրը այս անգամ Յովհաննէսը կը տանի Էջմիածին. բայց մանուկը չի յարմարիր ասոր բարձր ուսման դասարաններուն։ Կ'առնէ կը տանի Ջալալ–Օղլու – Ներկայիս՝ Սանգեզուրեան – ուր նոր դպրոց բացած է Տիգրան Տէր Դաւիթեան, ուսեալ մարդ։ Թումանեանի տեսած առաջին կանոնաւոր ուսումնարանն է այս։ Տարիներէ ետքը, իր «Տէր եւ ծառայ» գրուածքին մէջ պիտի պատմէ, թէ ինչքան զինք զարմացուց այս նոր դպրոցը, որ ո՛չ թէ մէկ վարժապետ, այլ բազմաթիւ ուներ, ու մէջերնին՝ օրիորդներ ալ. ուր բոլոր սաներ համազգեստ ունէին, մանչ եւ աղջիկ միասին կը կարդային. այս ի՛նչ նորութիւններ... Տնօրէնը կը դասաւանդէ պատմութիւն, որ աշխարհը կը բանայ իր աչքին։ Այնտեղ իրեն դասընկեր է Սպենդիար Սպենդիարեան։ Անուշաւան Արովեան սապէս կը նկարագրէ Թումանեան դպրոցականը.

«Նա իր տարիքից անհամեմատ
բարձր ու վայելուչ հասակ ունէր. մշտաժպիտ ճշգեղ աչեր,
արծուաքիթ. եւ ազնուութեան
արտայայտիչ սպիտակ ճակատին
վրայ՝ թուխ գանգուռ խոպոպիկներ. մի արտակարգ եռայիչ
գեղեցկութիւն»։

Այնտեղ է, որ Թումանեան կը սկսի ուսանուլ գրել։ Տասներկու տարեկանին՝ սէրը արդէն ո՛չ միայն արթնցած է իր մէջ, այլ եւ կ'ուրախ ու կը զարմացնէ զինք նոյնիսկ՝ թէ ի՛նչպէս ինք կրնայ սէրը թողուլ ու դաս սերտել։ «Հոգուս Հատոր» իր քանասեղծութեան մէջ կ'ըսէ.

digitised by A.R.A.R.@

«Եւ ի՞նչ զարմանք, իմ աղուներակ,
Որ կենդանի մի պատանի՝
Սէրը սրտում՝ դա՞ս է սերտում...»:

Այս գիւղին մէջ Յովհաննէս օթեւանած է իր հօրաքրոջ մօտ, Թալալ Նանէին, որ սքանչելի հեքիաթասաց ալ է: Նոյնպէս, դպրոցի փոքրիկ գրադարանէն կը կարդայ մանկական միջազգային գրականութեան ընտիր գործեր. «Ագրար Թովմասի տնակը», «Թզուկները», «Քրիստոփոր Գոլոմպոսի նամբորդութիւնը», «Լօպէնսօն Գրուզօ», «Օրլէնի կոյսը», եւ Շիլլէրի գործերը: Զմայլանքով կը կարդայ Սայաթ Նովայի տաղերը: Այնտեղ է մանաւանդ որ մտիկ կ'ընէ դպրոցի նորոգիչ վարպետ ուստա Սիմոնի պատմածներէն՝ նշանաւոր Քաջ Նազարը:

Դժբախտաբար, 1883-ին կը փակուի այդ մեղուափեթակ դպրոցը, եւ տակաւին 14-15 տարեկանին՝ Յովհաննէս կը տարուի Թիֆլիսի «Ներսիսեան վարժարան», դարձեալ Տէր Թադէոսի ջանքով:

Մեր ազգը այս Տէրտէրին շատ բան կը պարտի. եթէ ան իր կեանքին մէջ ուրիշ ոչինչ բրած ըլլար՝ իր որդին այսպէս դպրոցէ-դպրոց ուման առաջնորդելը պիտի բաւէր որ մենք ազգովին երախտապարտ մնայինք իրեն յաւիտեան: Կը Թուի, ի վերջոյ, ինքն ալ զգացած է իր այս ըրածին պատմական կարեւորութիւնը, եւ երբ իրեն բերած են իր որդւոյն առաջին գիրքը՝ ուրախութեամբ ըսած է.

– Էլ ինձ համար մահ չկայ...

Յովհաննէս սակայն Ներսիսեանի մէջ ալ հազիւ երկու տարի կը դիմանայ գաղաւորեալ ուսման: Դպրոցը կը ձգէ 17 տարեկանին, եւ այնուհետեւ ոչ մէկ դպրոց պիտի տեսնէ: Իր խառնուածքը դպրոցական կաղապարի չի յարմարիր. ինք աղաղ ուսում սիրող է: Իր «Պոէտն ու մուսան» գործին մէջ, Ներսիսեան վարժարանը կը կոչէ «հաշուապահի ուսումնարան». այնտեղ ամէն ինչ չափուած ձեւուած է, որուն ինք չի յարմարիր:

Դպրոցէ ելլելուն, տարի մը միայն գրագրութեան պաշտօն կը վարէ, Թիֆլիսի Առաջնորդարանին կից Կոնսիստորիան: Այնտեղ ալ չի կրնար «յարմարիլ» միջավայրին. գրած մէկ երգիծանքի հետեւանքով՝ հակակրանք կը ստեղծէ ու կը ստիպուի գործը լքել: Ճիշդ Յակոբ Սչեկանի նման, որ գիւղի իր առաջին ուսուցչական պաշտօնը կը կորսնցնէ՝ թաղականութեան մէջ անդամը պատմելուածքի նիւթ ըրած ըլլալուն պատճառով:

Ս'ուսան մտած է Թումանեանի սրբատը եւ գինք հանդիստ չի Թողուր, մինչեւ որ ամբողջութեամբ չհրաժարի կեանքի ու մարդոց «հաշիւներէն» եւ նուիրուի միայն մուսային ծառայելու. ու տեսլական պատանին կ'անսայ իր կոչումին.

«Քնարն առայ, պռետ դառայ,
Երգով պարով հանդէս մտայ...»:

Իր ամբողջ կեանքին մէջ միայն մէկ տարի վճարովի պաշտօնեայ եղած է Թումանեան. այնուհետեւ՝ աւետարանի ըսածին պէս՝ երկնից թռչուններու եւ դաշտի շուշաններու նման, Աստուծոյ ձեռքին պիտի ստանայ իր հանապազօրեայ հացը:

ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՅՐԸ

Աչխարհի «հանդէսը» մտնելէն յետոյ, Թումանեանը կը տեսնէ հաստատուած Թիֆլիս բազմահայ քաղաքը: Երբեմն պիտի երթայ այցելել իր Լոռին. բայց պիտի չուզէ երբեք Թիֆլիսէն ուրիշ տեղ հաստատուիլ:

Կ'ամուսնանայ 18 տարեկանին. այդ կ'ըլլայ իր կեանքի առաջին յաջող գործը: Եւ այնուհետեւ իր ընտանիքը կ'ըլլայ իր դպրոցը: Վկայութիւնները կ'ըսեն, թէ բարեսիրտ հայր էր, թէեւ անհոգ եւ անհաշիւ՝ ճիշդ իր հօրը նկարագրով, գիւղական նահապետական կեանքը Թիֆլիս քաղաք փոխադրած: Իր սեղանը միշտ բաց էր. չարունակ հիւր կը բերէր, երբեմն անակնկալի ու շուարումի մատնելով տանտիրուհին:

Տասը զաւակ ունէր Յովհ. Թումանեան, եւ բոլորին ալ հոգը կը տանէր ու-

digitised by A.R.A.R.@



Յովհաննէս Թումանեանի ընտանիքը, 1915, Թիֆլիս

բախութեամբ: Ձեռքը անցած դրամը չարունակ չուկայ կը տանէր, ապրանք կը կրէր տուն: Շուկայէն անցնելու ատեն, աչքին լաւ բան մը որ զարնէր՝ կը դնէր տուն կը բերէր.

– Հալպաթ գործի մը կը ծառայէ, – կ'ըսէր, կու տար:

Տան մէջ բոլորին դուրդուրացող հայր էր: Բոլորը իր շուրջ կը հաւաքէր եւ ամէն մէկուն փոքր նուէր մը ու բարի խօսք մը կը բաշխէր, ուրախ, ջերմ շունչով: Իւրաքանչիւրի անուան քերթուածներ ալ գրած է. օրինակ.

Անոյշին.

«Կանցնին օրեր, Անոյշ ջան,
Կանցնի եռ հէրն, Անոյշ ջան,
Ու կը տանի իրեն հետ՝
Իր ցաւն ու սէրն, Անոյշ ջան»:

Արփիկին.

«Ախ Արփիկ ջան՝ որ արփի ես
Բացում հոգուս երկնքում,
Գիտե՞ս քանի արփի բացուեց
Քեզնից առաջ էս կեանքում»:

Ճանաչ դաւակները կը հաւաքէ Լոռի կը տանի, իր մանկութեան օրօրոցին մէջ օրօրելու անոնց ալ մանուկ հոգին:

– Անգամ մը, – կը պատմէ իր համլիկ երկրորդ որդին, – հայրս զմեզ որսի տարաւ: Դեռ մենք հազիւ 10–12 տարեկան էինք: Թարմ եւ անուշ առաւօտներէն մէկն էր Լոռիի: Մենք աշխարհքի տէր դարձած՝ հպարտ ու հրացանները մեր ուսին՝ քալեցինք մտանք ծմակ: Ինչանք դէպի ձորը, հազար ձայնով ու երգով լեցուն ձորը: Հայրիկը պատմում էր իր մանկութիւնից, բացատրում թռչունների, ծառերի անունները, մատով ցոյց տալիս էն սարը, ուր առաջին անգամ եղջերու էր տեսել, էն ձորը, ուր առաջին անգամ մինակը իջել ու վախցել, էն գետը, ուր լողացել, էն դաշտը... Մէկ էլ՝ թփի տակից ահա ծուծուց մը լսուեց...

– Մի՛տը, ծի՛տը... կա՛ց, – ըսաւ

digitised by A.R.A.R.@

եղբայրս, ե՛ս պիտի սպաննեմ... — եւ ուղղեց իր հրացանը.

Թաշնիկի ձագը դեռ հազիւ կարող էր ցատկռտել... Հայրս որ մեզ տեսաւ՝ եղբօրս վրան վազեց.

— Էդ ի՞նչ էք անում... բա՛, չէ՞ք տեսնում, որ խեղճը չի էլ կարողանում թռչել...

Եւ արդիւնքեց մեզ՝ կրակել։

— Բա՛, էլ ինչի՞ ենք մենք որսի եկել, — գանգատուեց եղբայրս.

— Հօ, միշտ սպաննելու համար չեն գնում որսի, — պատասխանեց հայրս... դէ գնանք, մտնենք ձորը, մոռ ուտելու...

Ու գացինք, — կ'ըսէ, մանուկի միտքով գարմացած, — թէ մեր հայրը ինչո՞ւ թոյլ չտուաւ որ մենք սպաննենք թռչնիկը...

Անմեղ ձագուկներու հանդէպ իր սէրը՝ իր ընտանիքի զաւակներէն յորդած — տարածուած էր ընդհանուր մանկութեան։ Ո՛ւր հիւր երթար՝ հետը անպայման խաղալիք կամ շաքար, փոքր մէկ նուէր կը տանէր։

Նոյնքան չէն էր ընկերութեան մէջ։ Հարուն-էլ-Ռէշիտէն ուանդուած մէկ առակ պատմելով՝ միշտ կ'ըսէր «Ջէյթի ընողին քէյֆ չի պակսիր»։ Ու կը փիլիսոփայէր Օմար Խայեամին հետ— «Միշտ աշխատէ ուրախ ապրիլ, եւ ուրիշներուն էլ օգտակեցուր ուրախ ապրիլ այս աշխարհում»։

Այս կեանքի մէջ մարդու չահն է՝ վայելել «չէն ու լի աշխարհը»։ Այս փիլիսոփայութեան վրայ հիմնած է իր այն բանաստեղծութիւնը, որ երգի վերածեց Գ. Ալէմշահ, ու մեր քեմիրէն յաճախ կ'երգուի ոգեւորութեամբ.

«Գանձեր ունիմ անտակ, անծէր,
Ես հարուստ եմ, ցաւ, ես հարուստ.
Ծով թարութիւն, շնորհի ու սէր
Ձոխ պարգեւ եմ առել վերուստ»։

Զուներ գրամ ու եկամուտ։ Հազիւ օրէ օր կ'ապրէր։ Ցաճախ դիւղէն իր եղբայրները կ'օգնէին իրեն։ Կ'օգնէր մանուանդ իր անէրը, որ կալուածատէր մարդ էր։ Եւ միայն 1910-էն սկսած էր, որ գրասէր իշխան մը, Մէյլիք Հայկազեան, իրեն տարեկան 500 ռուբլի կենսաթոշակ կը յատկացնէր։ Իր գիրքերու հրատարակութեան ծախսերն ալ յաճախ ուրիշներէ կը ստանար։

Բայց հարուստ էր հոգիով։ Ստանց հիւրի սեղան չէր նստեր։ Սքանչելի թամադա, կերթ ու զուարթ, համով խօսքի վարպետ էր. քիչ կ'ուտէր, քիչ ալ կը խմէր։ Իր կերուխումը հոգեկան էր առուելապէս։

Եւ իր այդ բարի շնորհքովն ալ բարեկամ էր ամէնուն. գրագէտին, վաճառականին, ազգային գործիչին ու Կաթողիկոսին։ Շատ կը սիրէր զինք Խրիմեան Հայրիկ, եւ երբեմն քովը կը կանչէր՝ իր գրածները անոր կարդալու, կամ անոր գրածները մաքի ընելու։

ԳՐՈՂԸ ԵՒ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՎԵՐՆԱՏՈՒՆԸ

Թումանեանի կողմէ պաշտօնագէս հրատարակութեան համար ներկայացուած առաջին գործն է «Շունն ու կատուն», որ սակայն կը մերժուի «Մուրճ» գրական հանդէսի խմբագրին կողմէ, որուն դայն ներկայացնել հաճարձակած էր։ Արախանեան լուրջ, Եւրոպա կրթուցած, եւ իմաստասիրական խրթին բաներ գիտցող խմբագիր է. եւ կուսայ Թումանեանի ձեռագիրը ու կ'ըսէ.

— Տղա, ասելի լուրջ բաներ գրէ...

Մինչդեռ պարոն լուրջ-խմբագրին շհասնած սա նոյն կտորն է, որ մէկ քանի տարի ետքը՝ Թումանեանի առաջին հատորին մէջ լոյս տեսնելով, 1892-ին, ամէն բեմի պիտի արտասանուէր։

1903-ին, Թիֆլիսի մէջ լոյս կը տեսնէ իր գործերուն առաջին հատորեակը, որուն մէջ է գլուխ-գործոց «Անոյշ»-ը, որուն արժէքը շուտով պիտի գնահատուէր եւ երաժիշտ Տիգրանեան զայն օփերայի պիտի վերածէր։

Հետզհետէ կ[illegible]ոնդագի գրելու թա-

digitised by A.R.A.R.

փը, մանաւանդ 45 տարեկանէն հոգը, Մեծ Պատերազմի չրջանէն սկսած, կը քիչնայ արտադրութեան քանակը, թէեւ կուտայ բարձր յուզումներով գործեր, որոնք կը հակին դէպի խոկում եւ կեանքի իմաստի սրոնում։ Մահէն մէկ տարի առաջ, 1922-ին, վերստին լոյս կուտայ հատորի մը։ Բայց իր գործերուն մեծագոյն հաւաքածոն պիտի որուէր արդի Հայաստանի Պետհրատի կողմէ, զոյգ հատորներով։

Իրբեւ աշխատող՝ Թումանեան դանդաղ եղած է ընդհանրապէս։ Քաղաքի հեւհեւ վազքը չէր յարմարեր իր բնութեան։ Չէ ուզած երբեք ժամացոյց ալ գործածել։ Ապրեր է առանց ժամանակի գիտակցութեան, ու գրեր՝ երբոր տրամադրութիւնը արթնաբ, ընդհանրապէս գիշերները, երբ ամէն ոք քնացած է։

Կը սիրէր իր գրադարանը ճոխացնել։ Զեռքը անցած դիրքը տուն կը բերէր, երբեմն իր չհասկցած բաներն ալ։ Օր մը տուն կուգայ փայլուն կազմով դիրքով մը.

– Տղէք, – կ'ըսէ, – մէկ մը նայեցէք՝ ի՞նչ դիրք է սա։

Տղաքը կը նային ու կը ծիծաղին.

– Հէրիկ, սա գերմաներէն այլաբերագրութեան դիրք է. ի՞նչ ես ուզեր...

– Ինչ գիտենամ. տեսայ՝ լաւ դիրք է, ասի, թէ մէկդ չկարդայ՝ միւսը կը կարդայ...

Անգամ մը իրեն այցելութեան կու գայ Թիֆլիս նոր ժամանած Պաբսիկ Հիւպատոսը։ «Թումանեան» անունը լսելուն՝ կարծեր է որ ազգական պիտի լինի Թեհրանի մէջ արքունիքին շատ ծանօթ Թումանեան բնտանիքին. բայց Յովհաննէս Թումանեան Լոռեցիին տան տանդուրը տաք կոխելուն՝ արդէն կը հասկնայ, թէ սխալ տեղ եկած է... բայց յայտնի չ'ըներ, կը մտնէ աշխատանոցը... Ու զրուցած ատեն կը հասկնայ, թէ ինք կը գրաբարի բանաստեղծ մարդու մը ներկայութեան, ու հաճելի ըլլալու համար կ'ըսէ.

– Քեզի Ֆիրտուսիի մէկ օրինակը բերել տամ, թէեւ հազուագիւտ է։

Այդ ըսելուն՝ Թումանեան ձեռքը գրադարանը կ'երկարէ, դուրս կը քաշէ Ֆիրտուսիի գիրքը— Հրամմեցէ՛ք...

Հիւպատոսը կը զարմանայ— Այդ դուք ուրկէ՞ գտած էք. շատ հազուագիւտ է սա, ե՛ս իսկ չունիմ...

– Աչիկա ես Զեզի նուէր կու տամ, – կ'ըսէ Թումանեան, – ես երկրորդ մէկ օրինակ եւս ունիմ...

Գրադարանը լեցուն էր աշխարհահռչակ հեղինակներու գործերով.

«Բազմած են շուքդըս նրանք ամէն օր՝
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհի.
Երգում են, պատմում
Ներդաշնակ ու խոր՝
Միտքն ու զգայնիքը մահի ու կեանքի»։

Իր սուր յիշողութիւնը լեցուած է իր ընթերցումներէն քաղած ծանօթութիւններով. եւ ուստի ամէն նիւթի չուրջ կարծիք ունի, ու զիւրաւ կը մասնակցի խօսակցութեանց։

Իր գոհար գործերուն եւ ադամանդանմէն համբաւը շուտով կը տարածուի եւ չուրջը կը հաւաքէ ժամանակի մտաւորականութիւնը։

Թումանեանի տունը ժամադրավայր կը դառնայ Թիֆլիսի մտաւորականներու, ինչպէս եւ այցելուներու։ Այնտեղ կը հաւաքուին յաճախ՝ Ադայեան, Շերվանզադէ, Իսահակեան, Դեմիրճեան, Լէօ, Տէրեան, Ստ. Զօրեան, Աւ. Ահարոնեան, Ն. Այրարեան, Շանթ, ու կը վիճին, կը վերլուծեն գրական խնդիրներ։

Այդ չրջանը Արեւելահայ գրականութեան կազմաւորման չրջանն է. կան այլազան ուղղութիւններ, բայց դեռ կը պակսի տիրական ուղղութիւնը։ Կայ Պատկանեանի առաջնորդութիւնը՝ նախորդ սերունդէն. բայց ան առաւելապէս զգայնապաշտ է։ Կայ Նալբանդեան. բայց ան ազգային հառաչ մըն է։ Կայ Ս. Շահազիզի բացած ուղին. բայց որովհետեւ իր մանկութեան՝ օտար ուսումով սնած է, թէեւ իր պոեմաները ժողովրդային ճաշակ կու տան, ինչպէս «Լեռնի վիշտը». բայց չի կրեր տոհմիկ հայ բանաստեղծութեան նկարագիր։ Ժամանակա-

digitised by A.R.A.R.@

կիցներու մէջ կայ հակում մը, որ կը ձգտի «արիստոկրատ ու գեղաբուստաստէր» գրողներու սերունդ մը յառաջ բերել, ձգտում՝ որ կը քաջալերուի նաեւ արեւմտահայ գրողներու մէջ։

Այս ձգտումներու միջեւ՝ Թումանեանն է, որ առաջնորդող դերը կը գրաւէ՝ դէպի ժողովրդային ոգեմիկ բանաստեղծութիւն, բնագաւառի կեանքը կեդրոն, ու հայրենի աւանդութիւնները հանք ընդունելով։ Ժամանակակից խնդիրներու ծանօթ գրաղատի մը բառերով.

«Ցովհ. Թումանեանի միջոցով մեր բանաստեղծութիւնը իր գաղութային վիճակից վերադարձաւ այնտեղ, որտեղ ապրում էր ժողովուրդի մեծամասնութիւնը։

Ժողովրդական լայն զանգուածները ապրում էին ու ստեղծագործում մեր երկրի դաշտերի վրայ։ Այդտեղ գոյութիւն ունէր կենդանի քաղաքակրթութիւն։ Ուժեղ ու առնական լեզու էր հնչում այդտեղ հայ ժողովուրդի բերանում։ Այդտեղ էր գտնուում իրօք բանաստեղծութեան աղբիւրը։

Նրանք, որոնք երգում են Հայ լեզուով եւ կամենում են արտայայտել հայ ժողովուրդի զգացումները՝ պէտք է անշուշտ նրա աշխատաւոր, ստեղծագործող մեծամասնութեան միջավայրում սնուեն եւ այդ հաւաքականութեան հետ կապուած լինեն։

Ցովհ. Թումանեանի պատմական դերը այնտեղ է, որ նա զգաց ու գիտակցեց այն ժամանակուայ իրական պահանջը եւ իր բանաստեղծական փայլուն տաղանդով արտայայտութիւն տուեց այդ տիրական պահանջին» (5)։

Եւ ժողովրդային բանաստեղծութեան այդ «Դպրոցը» ահա կը հիմնուի Թումանեանի տան մէջ «Վերնատուն» կոչումով։ Աւետարանի աշակերտներուն «Վերնատուն»-ի խմբատը ստացող այդ հաւաքավայրին մէջ է, որ կը հիմնուի «Հայ Գրողներու Կովկասեան Ընկերութիւնը», որուն նախագահն է Թումանեան։

Այդ Վերնատունին մէջ է, որ գրագէտներ կը կազմեն տեսակ մը անպաշտօն գրական ակադեմիա ու կը յանձնարարեն լեզուական բարեփոխութիւններ։ Այնտեղ է, որ Աղայեան կը պաշտպանէ հայ լեզուի սրբագրութեան իր կարգ մը տեսութիւնները. օրինակ, «նայուածք» բառին մէջ՝ «ուշ»-ի տեղ միայն «ւ» գործածել. «նայւածք»։ Այնտեղ է, որ սովորութիւն կը դառնայ «այս» եւ «այն» ցուցական ածականներուն տեղ գործածել «էս» եւ «էն» ձեւերը։

Վերնատան շրջանակին մէջ է, որ Լիսիցեան, Շանթ եւ Թումանեան կը սկսին հրատարակել «Լուսաբեր» մայրենի լեզուի դասագիրքերու շարքը։ Նոյնպէս՝ կը վերականգնեն փառքը Սայաթ Նովայի, ու կը տօնեն Թիֆլիսի անզուգական աշուղին 200-ամեակը։ Այնտեղ կը վերականգնեն նաեւ հին աշուղներու «հրապարակային մրցումի» սովորութիւնը։

Վերջապէս՝ այս Վերնատունի անդամներն են, որ կը կազմակերպեն ժողովրդային լսարաններ, ուր Թիֆլիսի հայ երիտասարդութիւնը կը խմուի ներմեռանդութեամբ, մինչեւ 1908՝ փակումը Վերնատունին։

Ամէնէն շատ, սակայն, Թումանեանի Վերնատան շարժումին լայն դիծը կը հոսի ժողովրդային գրականութեան ուղղութեամբ։

Թումանեան ո՛չ միայն իր նիւթը կը ստանայ հարազատ ժողովրդային աղբիւրէ, այլեւ զայն կուտայ առանց արուեստականացումի։ Չի նմանիր Շիրվանզադէի, որ աւելի կը սիրէ հաւաքել ընկերային բարքերը, զանոնք գտել, ուսումնասիրել, ճաւուրել եւ տիպարներու վե-

5) Սիմ. Ցակոբեան, «Արեւելահայ բանաստեղծներ – Ցովհ. Թումանեան», «Անիգ.» 1923, Ապրիլ, էջ՝ 218-219։

digitised by A.R.A.R.@



«Վերնատուն», գրական խմբակի անդամները. (ձախէն աջ)
Ա. Խաչակեան, Լ. Շանթ, Ղ. Աղայեան, Դ. Դեմիրճեան, Ց. Թումանեան (1903)

բածել: Թումանեան ժողովրդային տիպարները կու տայ ուղղակի իրենց իսկական դիմագծով: Ոչ ալ կը նմանի Բաֆֆիին, որ ժողովրդական մոթիֆները գրականացնելով հանդերձ, զանոնք կը վերլուծէ ու կը տարածէ, կ'իդեալանացնէ: Թումանեան չի սիրեր շատ զարդարանք ու երկարաշունչ խորացում: Կարճ մէկ տողով կուտայ իր ամբողջ միտքը, առանց ածականներու, լոկ բայերով, ինչ որ ոճն է հարազատ ժողովուրդի խօսքին:

Թումանեանի գրականութեան ո՛չ միայն թեման, այլեւ ամբողջ բեմը ժողովրդային է, խորքով ու մշակումի միջավայրով: Իր բոլոր գրածները կու գան ժողովուրդէն եւ կ'ուղղուին ժողովուրդին, որուն հանդէպ հարազատ սէր ունի: Զինք կը խանդավառէն ժողովուրդի աշխատասիրութիւնը, խաղաղասիրութիւնը, զուարթ, կենսուրախ նկարագիրը:

Այսօր, իրմէ սաքան տարիներ առաջ, մեզի համար դիւրին է տեսնել այս իրողութիւնները: Սակայն, իր ժամանակին, ոմանց համար դժուար է եղած հասկնալ Թումանեանի գրական ուղղութեան հարազատութիւնը, եւ նոյնիսկ եղած են

digitised by A.R.A.R.@

վինք ծաղրողներ։ Աղջիկը՝ Նուարդ Թումանեան՝ կ'ակնարկէ.

«Ցովի. Թումանեանի գրական աշխարհի վրայ երեւումը դժգոհութեամբ եւ ինքնին ծաղրանքով դիմաւորուեցաւ քննադատներու կողմէ»։

Մարդիկ սովոր էին «ժողովրդային բանաստեղծութիւնը» ըմբռնել բառին անփայլ նշանակութեամբ միայն. իբրեւ թէ ժողովրդական բանաստեղծ ըլլալը՝ կը նշանակէր դիւրին ու հասարակ գրող ըլլալ, մինչդեռ կեղծ խորհրդապաշտութեան ու արուեստակեալ դասականութեան հետեւիլը՝ բարձր բանաստեղծ ըլլալ կրնար ենթադրել... Հեռուհեռ, սակայն, Թումանեանի գործերը օգտան ուշադրութեան կեդրոն դառնալ ու փայլիլ հարազատ լոյսով։

Աւելի հեռուն դիտելով, մենք Թումանեանի ժողովրդային գրականութեան մէջ պէտք է տեսնենք անոր համամարդկային արժէքը։ Մարդկութեան սէրը կարելի է տարածել միայն տարածելով իր սեփական ժողովուրդի սէրը, Զենք կրնար հասնիլ մարդկութեան, եթէ չսկըսինք մեր ժողովուրդէն։ Թումանեանի գրականութիւնը վկայութիւն մըն է, թէ գրագէտ արուեստագէտը ո՛րքան մօտ տալրի իր ժողովուրդին՝ այնքան կը մօտենայ ընդհանուր մարդկութեան։

Թումանեանի գրականութեամբ լեցուն ելաւ հայ ժողովուրդը։ Այդ ժողովուրդը ունէր գաղտնիներ, ունէր տենչեր. բայց չէր գիտեր խօսիլ։ Ու Թումանեան եղաւ ժողովուրդը խօսեցնող բերանը։ Թումանեանով հայութիւնը ինքզինք կ'արտայայտէ. իր ուրախութիւնը, իր տխրութիւնը, իր հաւատքը, դարերով տառապած, բայց իր սիրտին խորը պահած մաքուր առաքինութիւնները. ահա թէ ինչու այնքան հարազատ պատգամաբերն է ան աշխարհի առջեւ։ Եւ ժողովրդային այդ նկարագրով է, որ Հայ գրականութիւնը իր արժանաւոր դիրքը պիտի գրաւէ աշխարհքին մէջ։

Վալէրի Բրիւսով, 1916-ին, երբ կովկաս կուգայ, իրեն ի պատիւ Հայոց կողմէ տրուած հանդէսին, ակնարկելով Թումանեանի մշակած ժողովրդային բանաստեղծութեան, կը յայտարարէ.

«Հայ ժողովուրդի բանաստեղծութիւնը՝ Հայ ազգի ազգուականութեան վկայական է։ Հայ ժողովուրդը ամբողջ մարդկութեան մէջ իրեն յատուկ պատուոյ տեղը կը ստանայ իր ստեղծագործած դարաւոր հոգեւոր մշակոյթով, գրականութեամբ եւ արուեստով»։

Այսպիսի վկայութեան՝ Թումանեան անմիջապէս կը պատասխանէ, իբրեւ Նախագահ Հայ Գրողներու Ընկերութեան, թէ իրեն համար ո՛չ միայն մխիթարանք է, այլեւ մեծ հաւատք, որ իր ժողովուրդը տառապանքի մէջ իսկ չէ դադրած ազնիւ, ստեղծագործ աշխատանքէ, ինչ որ Հայու բարձրագոյն վկայականն է ազգերու շարքին մէջ։

Թումանեանով, ուրեմն, մեր գրականութեան մէջ կատարուած է դարձակէտ մը՝ դէպի հայ ժողովուրդ, եւ ժողովուրդի միջոցով՝ դէպի մարդկութիւն։ Իր մեծութիւնը այստեղ է, որ ան կրցաւ սուղուիլ՝ դարերու ալեկոծումներու մէջէն՝ դէպի հայ հոգւոյն խորը, եւ այնտեղէն դուրս բերել ազամանդեայ գեղեցկութիւններ բարոյականութեան եւ իմաստութեան, եւ իր արուեստի ոգանչելի հպումովը զանոնք արձանացնել իբրեւ լուսեղ կոթող՝ սերունդներով վկայելու համար ո՛չ միայն իր ժողովուրդին, այլեւ մարդկութեան։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Թումանեան, սակայն, արուեստի հեռաւոր ոլորտներուն մէջ թռած կորսըլուած հոգի չէ։ Իր ժողովուրդին հոգիին սրքան մօտ, նոյնքան եւ մօտ է անոր մարմնական գոյութեան ու ցաւերուն, եւ ինքն է առաջիններէն՝ այդ ցաւերուն դարման բերելու։

digitised by A.R.A.R.@

Ցաճախ գինք կը տեսնենք Թիֆլիսի ազգային-վարչական գործերու մէջ, իբրեւ ժողովական ու վարիչ։

Հոգելոյս Գարեգին Ա. Կաթողիկոս, որ Թիֆլիսի Հայոց առաջնորդ եղած է դարուս սկիզբը, մեզի անձամբ պատմած է գեղեցիկ դրուագներ Թումանեանէ, որ յաճախ այցի կուգար իրեն։ Օրինակ, Թումանեան Գարեգին Կաթողիկոսէն լսած է «Լուսաւորչի կանթեղի» աւանդութեան մասին, որուն գմայլած՝ անմիջապէս նստած, նոյն գիշերուան մէջ գրի առած է այդ թանկագին քերթուածը։

Վեհափառը կը պատմէր նաեւ՝ թէ ինչպէս, օր մը, Թումանեան եւ Շերվանզադէ պատգամաւոր եկան իրեն մօտ՝ կարգադրելու համար Ալիշանի մահուան առիթով առաջարկուած հոգեհանգիստի մը խնդիրը։ Եւ, կ'ըսէ, մեզմէ բացատրութիւններ առանալէն ետք, Թումանեան տեղւոյն վրայ թուղթ ու մատիտ ճարեց, նստաւ անմիջապէս գրեց 14 տուն զուարթ ոճով տաղաւոր մը... (6)

Թումանեանի հայրենասիրական ծառայութիւններէն մէկն է՝ 1906-7 չրջանին՝ Հայ-Թաթարական ընդհարումները խաղաղեցնելը։ Ցարական գործիչներ յաջողեր էին գրգռել Թաթարները հայերու դէմ, ու փոխադարձաբար, ինչպէս Համիտեանք նոյնը ըրեր էին հայերու եւ քիւրտերու միջեւ։ Երկու խաղաղասէր ժողովուրդներ սկսեր էին դիրար ջարդել զուր տեղ։ Թումանեան կը լծուի երկու ժողովուրդներու միջեւ խաղաղասիրական առաքելութեան։ Կը չրջի Բաքու, Քազախ, կ'ելլէ մինչեւ գիւղեր։ Կը պատմեն, թէ Թումանեան հետը կը կրէր երկու դոյն դրօշակ, սպիտակ եւ կարմիր՝ զատ զատ։ Երբ հաւաքուէին Թաթարները, նախ կը հանէր իր սպիտակ դրօշակը ու կ'ըսէր.

– Եղբայրներ, գարտաշներ. մենք էլ ռանչպար ժողովուրդ ենք, դուք էլ ռանչպար ժողովուրդ։ Վար ու ցանքի, կալ ու կուտի հոգն ունենք մե՛նք էլ, դուք էլ։ Հապա ի՞նչ ունենք կիսելու։ Հանգիստ նստենք, դուք ձեր քանին, մենք մեր քանին։ Էնպէս չէ՞, գարտաշներ...

Ապա սպիտակ դրօշը կը ծալէր, խուրջին մէջ կը դնէր, ու անկէ դուրս կը հանէր՝ այս անգամ՝ կարմիրը, թէ.

– Իսկ եթէ չուզէք խաղաղութիւն... արեան պարտքը՝ ձեր գիտին։

Կատարեալ Սասունցի Դաւիթեան քաղաքականութիւն մը՝ Մարայ Մելիքի յարձակումներուն դէմ. խաղաղութի՛ւն՝ բոլորին եւ ամէն բանէ առաջ, բայց պատերազմ ուզողին՝ պատերա՛զմ... Ու տարօրինակը, Թումանեանի սպիտակ-կարմիր դրօշակներու քաղաքականութիւնը իր արդիւնքը կու տայ... Ամէն տեղ, թաթարները խանդավառութեամբ կ'ընդունին «Վանայ Քէշիշի որդին», կը դադրեցնեն անմեղ արիւնահեղութիւնները։

Յաջորդ տարին, սակայն, կ'ամբաստանուի ձարական կառավարութեան կողմէ իբրեւ «խռովարար» ու կը ձերբակալուի ուրիշներու հետ։ Բարեբախտաբար, հետը պահած ունէր Թիֆլիսի նահանգապետին թուղթը, որով եւ անպարտ կ'արձակուի։

Թումանեան համոզուած խաղաղասէր է։ Մեծ Պատերազմը պայթելուն՝ կը հրատարակէ գրութիւն մը, ընդլայնելով Վարդան Այգեկցիի մէկ առակը – «Վարդիկ մը Մեղր»... Խանութպան մը մեղր կշռելու ատեն՝ կաթիլ մը գետին կը ձգէ. վրան կը հասնի պիծակ մը, ասոր եռուէն՝ կատուն, ապա կը յարձակի շունը. կռուի կը հասնին ասոնց տէրերը, եռուէն՝ ասոնց պաշտպանները... եւ հսկայ կռուի դաշտ կը դառնայ ամբողջ գիւղը՝ կաթիլ մը մեղրի պատճառով... Մարդ արարածը, – կ'ըսէ Թումանեան, – անկատար է, եւ ուստի իր գործը կը հիմնէ բռնութեան վրայ։

Պատերազմի գաղթականները տեղաւորելու գործին մէջ եւս՝ առաջին գիծի վրայ է Թումանեան։ Կ'երթայ մինչեւ

(6) Ցիշեալ ոտանաւորը սնստիպ պահած էր Վեհափառը, եւ գայն հրատարակեց «Հասկ»-ի 1945 Նոյեմբեր-Դեկտեմբեր թիւին մէջ։

digitised by A.R.A.R.@

էջմիածին ու կը ասիպէ որ ամէն դուռ բացուի Թրքահայաստանէն փախչող ժողովուրդին առջեւ։ Գուրգուրանքով կը խնամէ մանաւանդ բազմաթիւ դաղթականն մասնաւորականներ։ Ու եւ կը վազէ կովկասեան ճակատ, խրախուսելու համար հայ զինուորները, թէ ահա մօտ է, չուտով հիւսիսէն կը հասնի օգնող ձեռքը.

«Գալիս են, գալիս- հեռու հիւսիսում
Փոշի բարձրացաւ. զարկեցէք տպերք,
Ստանցներից մեզ օգնութիւն գալիս»։

Թումանեանի հայրենասիրութեան գերագոյն աստիճան է՝ իր որդին կամաւոր զրկելը Վանի ազատագրումի պայքարներուն, ուր եւ դժբախտաբար ան կը նահատակուի։

Այնուհետեւ, կը սկսի մոայլել Թումանեանի կենսուրախ դէմքը։ Հետզհետէ կը դառնայ խորասուզուող, եւ երբեմն՝ անհաղորդ։ Հայ ժողովուրդի տառապանքէն՝ վիշտի ծով մը դարձած է աշխարհ, ուր իր հոգին կը փնտռէ նաւահանգիստ.

«Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խաւար մի ծով ահագին.
Էն սեւ ծովում տառապելով՝
Լող է տալիս իմ հոգին»։

Հանդարտած ու գոհ չէ հոգին նոյնիսկ Հայաստանի Առաջին Հանրապետութեան հուշկումէն ետքը. Թիֆլիս կը փակուի կը նստի. չ'ուզեր իսկ հայաստան երթալ։ Հայրենիք կ'երթայ խորհրդայնացումէն ետք միայն։

Թումանեան կը հաւատայ, թէ մեռելներու աճիւններու մէջէն վերստին պիտի ծաղկի Հայու մեծ հոգին։ Իր հայրենասիրական մեծագոյն օրհներգներէն մէկուն մէջ կը դրէ.

«Ու պիտի գայ հանուր կեանքի
արշալոյսը վառ հազած,
Հազար հազար լուսապայծառ
հոգիներով ճառագած...
Ու պռետներ որ չեն պղծել իրենց
շրթներն անէծքով՝
Պիտի գովեն քո նոր կեանքը
նոր երգերով, նոր խօսքով.
Իմ նոր հայրենիք
Հրգոր հայրենիք»։

Թումանեան հպարտ է իր հայրենիքով, անոր լոյսով, յոյսով ու գեղեցկութեամբ։ Հպարտ է իր ժողովուրդով, անոր կորովով եւ ազնուական հոգիի հարստութիւնով։ Եւ անխախտ հաւատք ունի, թէ իր հայրենիքին ու ժողովուրդին հոգիկան այդ մեծութիւնը աշխարհին առջեւ անգամ մը եւս պիտի փայլի մեծ փառքով։ Ան կը հաւատայ իր ժողովուրդին կենսունակ ու փառայազդ վերելքին։

«Ես լիքն եմ էդ մեծ կենսունակութեամբ անսասան հաւատքով։ Կենսունակութիւն, որ ասում եմ, ասում եմ խօսքի բարձրը եւ ազնիւ իմաստով։ Ու ոչ մի բռնակալ, եւ ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նուաճել եւ ընկճել հայկական ցեղի էդ հզօր յատկութիւնը»։

Իր վերածնած հայրենիքին վրայ այդ անխախտ հաւատքով, Թումանեան իր տկար ուժերը կը հաւաքէ եւ վերջին հայրենասիրական ծառայութիւն մը եւս կ'ընէ։ Կու գայ Պոլիս 1921-ին, հզօր տպիչ կամուրջը նետելու համար Հայրենիքի եւ Սփիւռքի հայութեան միջեւ, ազգային գործակցութիւն ու մշակոյթի կապ հաստատելու առաքելութեամբ։

Տոքթ. Յակոբ Թոփճեան, որ այդ չրջանին ազգային դերք ունէր Պոլսոյ մէջ, մեզի անձամբ պատմած է, թէ Թումանեան խանդավառ ու մեծ ընդունելութիւն գտաւ պոլսահայութեան մէջ։ Զաւէն Պատրիարք զայն ընդունեց իբրեւ ներկայացուցիչ Հայաստանի Օգնութեան Կոմիտէին։ Թումանեանն էր յարմարագոյն անձը հայրենիքի եւ արտասահմանի միջեւ հաղորդակցութիւն հաստատելու, որովհետեւ արտասահմանի մէջ ալ արդէն ծանօթ էր իր անունը, եւ սիրուած բոլորին անխտիր։

Ազգային մեծ յոյսերու օրեր են առանք։ Պոլիսը գրաւման տակ է յաղթական պետութեանց, եւ Հայութիւնը՝ պահ մը ամոքած իր տառապանքները՝ աշխարհին կը ժպտի ուրախ։ Թէեւ կը զգու-

digitised by A.R.A.R.@

չանան աղմկալից ցոյցերէ, բայց Պոլսոյ ամբողջ Հայութիւնը, Պատրիարքարան, մասնաւորականութիւն ու ժողովուրդ, հայրենիքի պատգամաւորը կ'ընդունին անկեղծ սիրով։ Թուրքերուն Ցոբելեանը կը տօնեն, առանձին թատերդութիւններ կը բեմադրեն, ու զայն կը պատուեն մասնաւոր լաժով, որ Նուարդ աղջիկն ալ հեռը բերած է։

Թուրքերուն, թէեւ առողջութեամբ տկար է, բայց ուրախ է, ու կը մասնակցի բոլոր ազնիւ արտայայտութիւններուն։ Կը խօսի, մտիկ կ'ընէ, բոլորին կը ծանօթացնէ նոր Հայաստանը, ու փոխարարաբար ինք կը ծանօթանայ Սփիւռքի Հայութեան։

Ու կը վերադառնայ հայրենիք, գոհ, ու նիւթապէս ալ յաջողած իր առաքելութեան մէջ։

ՓԱՌՔԷՆ ՎԱՅՐԷՋՔ ՅԻ ՎԱԽՃԱՆ

Պոլիսէն Հայրենիք վերադարձէն ետքը շատ արագ է Թուրքեանի վայրէջքը։

Իր փառքի գագաթնակէտին հասած էր արդէն յիսնամեակի յոբելեանով, 20 Փետր. 1919-ին։ Շաբաթներ տեւեր էին հանդիսութիւնները Թիֆլիսի մէջ։ Բեմերէն, թերթերէն, ամէն տեղ Թուրքեան անունը փառաւորուած էր՝ Հայաստան, Վրաստան, արտասահման։ Իսկ ինք այդ բոլորը ընդունած էր երբեւ ապացոյց իր ժողովուրդի մեծութեան, ազնուականութեան ու յաղթանակին, որ հակառակ դաղթական, ջլատուած, բաղկատուած սիրտին՝ իր հարազատ զաւակը կ'աղջունէր ծաղիկներով ու երգով.

> «Էս բոլոր զգացմունքները ես բացատրում եմ ո՛չ թէ իմ գրական գործերի արժէքով, այլ մեր ազգային ոգու անպարտելի հզօրութեամբ, որ միշտ մնում է կենդանի եւ թեւատարած՝ մեծութեան ու գեղեցկութեան տենչերով, որ միշտ պիտի յառնէ օձախնձորի մոխիրներից՝ նոր կեանքով եւ աւելի տագանդաւոր բանաստեղծների զուարթ երգերով»։

Իր վերելքի բարձրակէտը, սակայն, միտնպատակն էր իր վայրէջքին։ Տառապանք, գաւակի կորուստ ու տարիներու անձկութիւն՝ իր զգայուն սիրտը հիւծած են արդէն։ Պոլիսէն վերադարձին՝ հիւանդ է գրեթէ, թէեւ տակաւին ոչ ոք գիտէ, թէ ի՛նչ ախտ բոյն է դրած մէջը ու դինք կը հիւծէ գաղտնի։

Աչքին մէջ ծագած է իր ժողովուրդին նոր լոյսը, բայց իր միտքը շարունակ կը նայի մահուան։ 1920-էն ասդին՝ իր ձեռքէն ելած գրեթէ ամէն գրուածք տխուր կը հնչէ այլեւս, անդունդներու մէջ թափառող եւ այս աշխարհէն կտրուած հոգիի մը ձայն։ Օրինակ, «Հայրենիքիս հետ» իր այդ զմայլելի քերթուածը կը սկսի սապէս.

«Վաղուց թէեւ իմ հայեացքը
անյայտին է ու հեռուում,
Եւ իմ սիրտը իմ մտքի հետ
անհուններն է թափառում...»

Կամ կը կարդանք իր «Վայրէջք» քերթուածին մէջ, թէ ինչպէս կը հաշուէ իր կեանքի ճամբան, որ քառասուն տարի դիրք ծառայած է, եւ հիմա՝ վերջացած ամէն աշխարհային հաշիւներէ եւ սուելի իմաստուն զարձած՝ իր բեռներէն թեթեւցած՝ կ'երթայ այն լեռան ետին, ուրկէ օր մը բարձրացած էր – նման արեւին...

Շատ յատկանշական են իր վերջին տարուան գրածները։ Ցաւը տարածուեր է իր մարմնոյն։ Նենգաւոր քաղցկեղը բոյն է դրած ստորին ալիքներու հանդոյցին, ու կը փաթաթուի իր ջիղերուն։ Իր ցաւերը կը մեղմացնեն միայն թուրքեցուցիչի յաճախակի հերարկումները։ Ու բանաստեղծը մերթ, դեղով հանգարտութիւն գտած պահերուն, ձեռք կ'առնէ դողդոջացող գրիչը, ու կուտայ կարճ, շատ կարճ քերթուածներ, քառեակներ միայն, ուր, սակայն, խտացած են ամբողջ ողբերգութիւնը մարդու կեանքին։

Հայաստանի «Նորք» գրական առաջին հաւաքածոյին մէջ, 1922-ի թիւը, Թումանեան ունի չորք մը այնպէս կարճ քերթուածներ, ուր կ'երգէ մարդկային կեանքի ողբերգական կարճատեւութիւնը

digitised by A.R.A.R.@

եւ աշխարհի անցաւորութիւնը՝ սիեղեւ-բական կեանքի համեմատութեամբ։ Օրի-նակ, «Սիրիուսի հրաժեշտ»-ին մէջ, բա-նաստեղծը կը խօսի երկնային համաստե-ղային մեծ ուժերու հետ, որոնց յաւիտե-նական ընթացքին առջեւ՝ մարդկային կեանքը վաղանցիկ պահ է, թէեւ անսահ-ման թախիծով լի։

Իր այդ բանաստեղծութեանց մէջ՝ Թումանեան հետզհետէ կը վերանայ, կը կարուի կեանքէն եւ աշխարհքէն, կը դի-մէ դէպի անհունութիւնը։ Ասիկա երբեք արուեստակեալ զգացումը չէ ռոմանթիք ոգիով լեցուն երիտասարդ բանաստեղծի մը, այլ հոգեբանական արտայայտու-թիւնը՝ շատ զառնութիւն տեսած իմաս-տունի մը։ Եւ այդ յուզականութեամբ ալ անոնք խորապէս կ'ազդեն ընթերցողին.

Այնքան շատ են ցաւերս, աւերս՝
իմ սրտում,
Այնքան տրտում՝ կորած լաւերս
իմ սրտում...
Չեմ էլ յիշում՝ շաբ ու խաւաբ
էս ժամին՝
Ե՞րբ են քայլել ուրախ օրերս
իմ սրտում...

Կամ՝ չարաթ մը տարբերութեամբ՝ սա մէկը.

Տիեզերքում ատաւածային
մի ճամբարդ է իմ հոգին,
Երկրից անցուր, երկրի փառքին
անհաղորդ է իմ հոգին.
Էլ հեռացել ու վերացել մինչեւ
աստղերն հեռաւոր՝
Վար մնացած մարդու համար
արդէն խորթ է իմ հոգին։

Տիրեանական այս զգացումներէն ա-հա քառեակ մը եւս.

Անցայ՝ քարը սրտիս վրայ՝ ջրի պէս.
Մենակ տատասկ ու փուշ դառայ՝
ջրի պէս.
Իմ աշխարհում՝ հանգիստ չառայ՝
ջրի պէս.
Ու գնացի յետ չդառայ, ջրի պէս։

Այլեւս սենչ չունի դէպի կեանք. հաշտուած է մահուան հետ. չունի պայ-քար, տրտունջք, անէծք։ Սակայն իր ցաւերը կը ծրարէ, կ'երթայ Մոսկուա, այնտեղ վիրաբուժական գործողութեան մը խոստումի յոյսով, անկէ ալ՝ Գերլին՝ մէջտ իր քաղցկեղին դարման փնտռելու։ Ու մահուան շուքին տակ՝ իր մտածումը ինքը չէ, իրենիններն են.

– Մեռնելէ չեմ վախնար, այլ թէ ի-րենիներդը լաց կը լինեն...

Զուարթութեամբ կը տանի վիրաբու-ժական գործողութիւնն ալ։ Երդիծա-քար՝ կը գրէ «Վարք Սրբոյն Յովհաննու Լոռեցւոյ» քառեակը, ուր բժիշկները կ'անմնաւորէ իրրեւ շարչարող դեւեր.

«Բժիշկ Պօղոս ու Պետրոս՝
Զարչարէին գերանելին Յովհաննէս.
Իսկ երանելին աղօթէր առ Աստուած
եւ ասէր.
– Տէր թող զմեզս նոցա,
Զի ոչ գիտեն զի՛նչ գործեն»։

Բժիշկները իրենք ալ չեն գիտեր ինչ կ'ընեն։ Կեանքը ունի իր օրէնքները, եւ այդ օրէնքները պիտի տիրեն ամէնուն։

Ուժեղից էլ ուժեղը կայ,
Բայց ամէնից ուժեղն է՝ Մահն։

Եւ «ամէնից ուժեղը» կու գայ կը հասնի 1923 Մարտ 23-ին, բայց կը կա-րողանայ հազիւ միայն անոր մարմինը տանիլ իր աշխարհը... հոգին կը թողու մեզի...

Մնունդը պատահած էր 1869 Փետր. 2-ին։

Բայց ծնունդն ալ, մահն ալ դիպ-ւածներ են միայն, որոնք կը վերաբերին միայն մարմինին. ստեղծագործ հոգին է յաւերժականը։ Ան՝ որ իր մարմնաւոր կեանքի կարճ ընթացքին՝ անմահ գործեր կրցած է կերտել, ա՛ն է որ պիտի ապրի կեանքի ու մահուան սահմաններէն ալ անդին...

Մահը մերն է, մեզմ մահինը.
Մարդու գործն է միայն անմահ...

Մահը շատ ու շատ անգամներ պար-տուած է՝ հոգաչէն մեր այս աշխարհին վրայ հոգիով գործող մարդոց կողմէ...

Եւ 8. Թումանեան Լոռեցին մէկն է անոնցմէ, որոնք յաղթեցին մահուան։

Անթիլիաս Բ. Ե.

digitised by A.R.A.R.@

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

•

Կէս գիշերին կանթեղը վառ
Կախ է ընկած երկնքից,
Լուսաւորչի կանթեղն անմար
Հայոց մթնած երկնքից:

Կախ է ընկած առանց պարան
Արազածի կատարին,
Ու սեղանից հսկայական
Լոյս է տալիս աշխարհին:

Լոյս է տալիս երկա՛ր դարեր
Ու վառւում են միշտ անշէջ
Սուրբի մաքուր արցունքները
Իւղի տեղակ նրա մէջ:

Ոչ մարդկային օձեռ կը հառնի
Էն ահաւոր բարձունքին,
Եւ ոչ քամի կը հանգցնի,
Վիշապ-քամին ահագին:

Երբ պատում է մութ խաւարը
Զնաշխարհիկ մեր երկրին,
Երբ տիրում է ահն ու վախը
Թոյլ, կասկածոտ սրտերին:

Ով անմեղ է լիքը սիրով
Ու հաւատով անոտաան,
Ով նայում է վառ յոյսերով
Դէպի Հայոց ապագան, —

Նա կը տեսնի էն մշտավառ
Ջահը կախուած երկնքից,
Ասես՝ Աստծոյ աչքը պայծառ
Հսկում է ցած երկնքից:

ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հոգելոյս Գարեգին Ա. Կաթողիկոս, որ Թիֆլիսի Հայոց առաջնորդ եղած է դարուս ընկիզբը, մեզի անձամբ պատմած է գեղեցիկ դրուագները Թումանեանէ, որ յաճախ այցի կու գար իրեն։ Օրինակ, Թումանեան Գարեգին Կաթողիկոսէն լսած է վերանորոգի կանթեղին առանդուքեան մասին, որուն գմայլած՝ անմիջապէս նստած, նոյն գիշերուան մէջ գրի առած է այդ թանկագին գեղեցիկը։

Բ. Ծ.

digitised by A.R.A.R.@

Ց. ՕՇԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

Յովհաննէս Թումանեան յայտաբերուած օգտապաշտներուն յաջորդ սերունդէն է եւ անոր ամէնէն կարկառուն դէմքը:

Անկնճիռ ու համակրելի դիմագծութիւն, պարզ ու դիւրահաղորդ, որ գրեթէ առաջին անգամ ազատ արուեստի մը ըմբռնումին է եղած ու անոր հպատակած, անշուշտ վաթանքով:

Իրմով կը սկսի անձնական, կամ գիրքերու որակումով՝ քննադատական բանաստեղծութիւնը Արեւելահայոց մէջ:

Դարձեալ իր շունչին տակ կը կազմուի մեզի համար նոր, բայց հարազատ սեռ մը, որ հակառակ իր անկատարութեան պիտի բաւէր իր մաքուր փառքին համար: Անիկա գրեթէ ստեղծած է դիւցազնավէպը:

Ու անփոխարինելի բան, ան ստեղծած է նորէն մանուկներու գրականութիւնը, այսինքն՝ ամէնէն դժուարամատչելի բարձունքը նախնական գրականութեան մը մէջ:

Ու քնարերգակ, ու դիւցազներգակ ու դասական այս քերթողին հետ արդար կարենալ ըլլալու համար, հարկ է անջատել մասերը եւ իւրաքանչիւրին մատենալ մտանուոր որամադրութեամբ:

*

Երեք-չորս քերթուած կարաւանէն, իրենց բարացուցակ արժէքովը չնորհ կրնան գտնել խուզարկու ընթերցողին աչքին: Ասոնցմէ է օրինակի համար Գուրբանի երգը, ուր քանի մը նիւղ տողեր, ժողովուրդէն վերցուած, զարմանալի հաւատարմութեամբ կը բաւեն խտացնելու ընկերաբանական դրուագեան մը չեման: Ու այս տեսակէտով ընդարձակ նշանակութիւն ունի այդ քերթուածը: Հոն, ամփոփ դիծերով կը պատմուի ապրելու ամբողջ եղանակ մը, կառուցուած մատնաւոր գոյներու եւ անջատ դրուագներու հիւսքին վրայ:

Նոյնպէս, իր ներկայացուցած չրջանին համար արժէք կը հագնի ուրիշ քերթուած մը, Հին Օրհնութիւն, ուր բանաստեղծը սովորական խօսքերու ընթաց-

digitised by A.R.A.R.@

քին թուղթին կը յանձնէ քանի մը յատկանշական բառեր ու անհունապէս հայ ու հիշդ տարազ մը օրհնութեան։ Խորունկ է տրպաւորութիւնը, որ կ'անջատուի քերթուածէն ու զարմանալի հակադրութեամբ մը ընկուզենիով հովանաւոր այդ ուրախութիւնը գեղացիներուն՝ մէկէն կը վերածուի անսահման թախիծի։ Ու տողէ տող, տունէ տուն, նախնական ու ընտանի պատկերներուն վրայ սուղի մը դրօշին պէս ժապաւինուած կը քալէ մեծ, խոր, անմխիթար տրտմութիւնը բոլոր մեր ցեղին։ Ու այդ խրատը, զոր, ո՞վ գիտէ, քանի դարեր լսեցին մեր ընկուզենիները, ահաւոր հարազատութեամբ մը կը կտակուի սերունդէ սերունդ.

«Ապրէ՛ք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք...»։

Ունի՞նք ուրիշ բան մը ըսելու անոնց, որ մենէ ետքը պիտի գան։

Փնտռտուքը պիտի կրնար մեզի ցոյց տալ տակաւին քանի մը քերթուած քառեակներ, որոնք հակառակ իրենց ձեւին անփութութեանը, եթէ ոչ ինքնատիպ, զոնէ ամբողջովին հայեցի յուզումներ պիտի բանային մենէ ներս։

*

Իր գործին որոշ մէկ քանակովը Յովհաննէս Թումանեան կը գրէ չրջանին ճիշդ թէջտեղը։ Այսպէս է, որ գրի կ'առնուի, հին հերոսներուն փոխարէն, ժամանակակից լեռներու մարդ մը, Լոռեցի Սաքօն, որ պատրուակ մըն է անոր համար, պարզելու ընթերցողի աչքերուն՝ ծալքերը ամէնէն նկաբչագեղ տեսարաններուն, որոնք դժբախտ ճակատագրով մը կը ժժգունին, քանի որ վրձինը, աղքատ ու վախկոտ, չի կրնար տիրել լեռներուն ու հոգեբանական խուզարկութիւնը դեռ սահմանափակ՝ կը խուսափի խորունկ ու ստուերամած կընճիռներէն։

Դարձեալ, յիշելու համար տանելիները միայն, Պոետն ու մուսան ճաշակն է արուեստի մը, որ դարաւոր ու փառքով աւանդութիւններ ունի իր ետին։ Բրատական, կրօնական, երգիծական ու չեմ գիտեր ինչական տարբերով բանաստեղծութիւն մը արեւելքի պալատներուն ու ամբոխներուն մէջ դեռ կը պահէ յարգանքի իր պատուանդանը։ Եթէ գերագոյն նրբութիւնները ու ամենախոր զգայնութիւնը մեծերուն միայն նուիրուեցան, բոլոր ուրիշները,այսինքն անոնք որոնց ջիղերը թրթռալու ընդունակ էին արուեստին համար, ունեցան այն շնորհէն, որ իմաստն ու բառերը պիտի գործածէ բազմութիւններու օգտին համար։ Բայց դժբախտութիւնը հոն է, որ իմաստութեան այդ ցուցադրումը այլեւս հասարակ է դարձած ու Թումանեան զուրկ է անհերքաժեշտ ուժէն անոնց ձեւը թարմացնելու, քանի որ խորքի նորութիւնը պահանջ մըն է անիրաւ մեզի պէս ժողովուրդի մը մտաւորական ընտրանքին համար։ Ու առանց նեղուելու, եռանդուն զեղումով մը – որ ամէն ինչ է բանաստեղծութենէ դուրս – Թումանեան պիտի չարունակէ մտածել ու փիլիսոփայել ու աւելցնել սովորական քերթուածներու երանելի չտեմարանը։ Այս իմաստութենէն մինչեւ քառեակներու սեղմ բայց դարձեալ հասարակ չարքը՝ նայուածքն ու միտքը նոյնը կը մնան։

digitised by A.R.A.R.@

Տաղաչափուած մտածումներուն տարակուսիլը եւ տաղաչափուած պատմութիւններուն սովորականութիւնը արգիլք չէն, որ արուեստագէտը երբեմն իր-նայ ճիշդ ճամբուն վրայ։ (Վասընգի մտածումը ներքին տառամ մըն է ու մտաւոր գործողութիւն մը համակրելի՝ ամէն առեն։ Վասնզի պատմութիւնը դարձեալ տառամ մըն է, եթէ բնանին տեղ դէմքը, ձեռքերը, նայուածքը, ամբողջ մարմինը տեսարան կու գան զրոյցը ապրեցնելու համար)։ Առոր համար է, որ Թումանեանի պէս բանաստեղծ մը պիտի կրնայ Սասունցի Դաւիթը, հակառակ իր բոլոր ծանրութեանը, քալեցընել թուղթին վրայէն։ Առոր համար է, որ անիկա աղջկան պարզ պատմութեան մը մէջ պիտի կրնայ խտացնել նախնական բայց գօրաւոր գործողութեան մը մղումը, որ թուղթերէն կ'աւելնայ ու կը համակէ մեզ։

Եթէ Լոռեցի Սաֆօն վրձինի հում փորձ մըն է միայն ու Պանսն ու մուսան սովորական սաթիր մը, Անուշը ողբերգութեան շատ մօտիկէն անցնող ու դէպի թատրոն տանող ճիշդին անգիտակից արտայայտութիւնն է ապահովաբար։

⁂

Հեքիաթները միայն ընթացիկ հոյութիւններ ու կեանքի սովորական ցոլքեր չէ որ կը խըտացնեն։ Անոնք, երբ ընդարձակ չունչով կու գան, կը պատմեն մանաւանդ խմացական առաքինութիւններէն, կ'առաւելագոյացնեն անոր երեւակայութիւնը ու հոգիի միւս, այս անգամ բարձր կարողութիւնը։ Թումանեան այս տեսակէտով ալ արժանի է համակրանքի։

Եթէ Թմբկաբերդի առումը ակարացած է աշուղական բարոյախօսութեամբ ու Ախթամարը ուժգոյն՝ ստեղծումով ու խորքով, մեր գրականութեան համար գոհար մըն է Փարվանան, ուր զրոյցը կը քալէ դասական թեթեւութեամբ եւ անձերը կը պարուրուին անդրաշխարհիկ մշուշով։ Գործողութեան եւ Երազին մէջտեղ, այդ մարդերը, իշխան թէ աղջիկ, կը ծփան քաղցր զաւակի մը վրայ, որ իրական է՝ անոնց ոտքին տեղ տալու համար եւ որ մէկէն կը փաթթուի խորհուրդին թեւովը, երթալու համար մեր երերուն աշխարհէն։

Ու այս ծփուն էակները, դիւրաբե՛կ առուուան շաղերուն պէս, զմայլելի՝ իրենց իրականութեանը խորէն, զմայլելի դարձեալ, երբ թեւ կը բանան դէպի հոթը լեռները կրակ գողնալու համար, կը հպատակին գեղջուկ այս արուեստագէտին, վասնզի հոգիներուն տիրապետութիւնը ուժէն աւելի ենթակայ է քաղցրութեան։

Ու անոնք, մեր երազին հարսները, մեր հեքիաթներուն աննման աղջիկները ու աղաքը, ու անոնք, մեր երազին կանթեղները, որոնք վանպարանց կախ կու գան մեր լեռներուն կատարէն ու տակաւին անոնք, որոնց բիւրեղացումը չէ շնորհուած, կը մնան Թումանեանի բանաստեղծութեան ամէնէն փափուկ ու ամէնէն ազնուական ծաղիկները։

⁂

Դիւրին պիտի ըլլար տակաւին զրաղիլ ուրիշ երեսներով, հայրենասէր բանաստեղծով, քա-

digitised by A.R.A.R.@

նի որ մեր օրերուն ամէն մարդ քիչ մը տառապած է անպատճառ, փիլիսոփայ բանաստեղծով, քանի որ քառեակներու ու բարոյախօսութեան կեդրոնը արեւելքն էր մինչեւ երէկ։

Իմ մասիս, ազգայնական լաբը դժնդակ երգ մըն է առհասարակ մեր քերթողութեան համար ու բախտաւոր՝ չատ քիչերու։ Թումանեան բացառութիւն՝ չի կազմեր այն չատերէն, որոնք մեր տառապանքը տեսան թուղթերուն օգնութեամբը եւ բառեր գրեցին։ Աղէտը իր ընդարձակութեամբը պիտի խուսափէր առանց սեւեռումէն։ Աղքատ իր եբեւակայութիւնը անկարող եղաւ մաքով տեսնելու նոր օրերու մեր տարտարոսը։ Աղէտին ճառագայթումէն հեռու մնացող իր զգայնութիւնը անկարող պիտի ըլլար դարձեալ ճիշդ, ապրուած տարուրը կամ յուզումը վերարտադրելու թուղթին վրայ։

Դարձեալ մտածողական բանաստեղծութեան իր փորձերը դժնդակ միջակութեամբը կը բանաձեւեն մեր հաւաքական իմաստութիւնը, այսինքն նախնական, մանաւանդ հեռեւանքը, որ արեւելքի ժողովուրդներուն հասարակաց է եղած։ Գաղափարի ու առաւելապէս գործողութեան բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանեան պիտի չկրնար իր ուղեղէն հանել եթէ ոչ ինքնատիպ, գոնէ տանելի իմաստութեան մը տարրերը։ «Դիպի Անհուն»ը կատաւն է, որ ճարուած էր այդ երազին համար ու հիւսքին՝ տարօրինակ ցանցառութեամբը մէջտեղ ձգեց անոր սաւառնումը։ Քերթուածը կը կարդացուի զգացական խորքին համար, մահուան հեռաւոր մեղեդին արտածորող երաժշտութեանը համար։ Ասոնցմէ դուրս, կը ծանրանայ, անտանելի կը դառնայ, երբ ամէնուս ծանօթ յաւիտենական ճշմարտութիւններու հետ կը խաղայ։

Նոյն վերապահումը քառեակներուն համար ալ։ Երազի, ներքին ապրումի արեւելեան միստիսիզմի ու ինքնատոյզ մտածումի ընդունակ միտքն էր, որ բախտը պիտի ունենար հանդիպելու անտիպ իմաստութեան գոհարներուն։ Յովհաննէս Թումանեանի ամբողջ կարողութիւնը չարժումի իր դիւրութեան մէջն է, սակայն։ Այսինքն՝ անիկա մաքդերէն կը տեսնէ անոնց ձեւերուն վագքը միայն։ Անիկա մարդերուն կը հետեւի չատ հեռուէն եւ ինչ որ կ'ամբարէ անոնցմէ իբր տպաւորութիւն, չարժումի այդ թրթռումն է միայն։ Բայց մտածումը ձեւին շեղումն է դուրսին համար ու անոր բռնկումը՝ ներսին համար։ Ան՝ որ երկու մարդերուն ալ կը հասնի, անիկա է մտածող բանաստեղծը։ Մեր օրերուն Նիցչէն մէկ օրինակն է սառը։

⁂

Բոլոր այս վերապահումները պատճառ չեն, որ Յովհաննէս Թումանեան դադրի ժամանակակից գրականութեան ամէնէն հարազատ բանաստեղծը ըլլալէ։

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@

«ՓԱՐՎԱՆԱ»
Նկար՝ Ե. ԿՈՋՈԵԱՆԻ

«Մեր գրականության համար գնահատ մրցն է ՓԱՐՎԱՆԱՆ»
Ե. Օ.

ՓԱՐՎԱՆԱ

1.

Բարձրագահ Արուլն ու Մթին սարեր
Մէջէ մէջէի տուած կանգնել վեհասքառ,
Իրենց ուսերին, Զավախքից էլ վեր՝
Բռնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Ասում են՝ Էնտեղ արծուի նման,
Սիծգուն, կապուտակ երկնքի ծոցում,
Նստում էր էն սէգ սարերի արքան
Իրեն Փարվանա ներմակ ամրոցում:

Փարվանա արքան մի աղջիկ ունէր.
Ու ոչ մի որսկան դեռ իրեն օրում
Էնման կնոջցիկ եղնիկ չէր տեսել՝
Իր որսն անելիս Մթին սարերում:

Աշխոյժ մանկութեամբ զարդարում էր նա
Ծերութեան օրերն ու սարերն իր հօր,
Ու ապրում էր ծեր արքան Փարվանա
Իրեն էն քնքոյշ ծաղկով բախտաւոր:

Մեծ բախտը սակայն առջեւն էր դեռ.
Եկաւ էն օրն էլ հասաւ երջանիկ,
Ու գրկեց արքան ուրախ դեսպանները
Ամէն մի ամրոց, ամէն արքունիք:

— Ո՞ւրտեղ է, ասաւ, էն քաջը, թէ կայ,
Իմ չնաշխարհիկ գստերն արժանի,
Թո՛ղ առնի իր ձին, իր զէնքն ու զրահ,
Գա՛յ, ցոյց տայ իրեն,
իր բախտը տանի...

2.

Հագած, կապած զէնք ու զրահ,
Ձիանք հեծած ամենի,
Ահա եկել հաւաքուել են
Կարիները Կովկասի.
Ծեր Փարվանա թագաւորի
Ապարանքի յանդիման

digitised by A.R.A.R.@

Կազմ ու պատրաստ սպասում են
Մոտիկ ժամին մրցութեան:
Սպասում է ոգջ աշխարհը՝
Եկած, կիտուած փարվանա,
Թէ ո՞ր կտրիճն արդեօք պիտի
Էն սիրունին տիրանայ:

Հնչեց փողը: Ահա փունջ-փունջ
Դրանիկներ, նաժիշտներ,
Ահա աղջիկն իր նազելի
Ու թագաւորն ալեհեր:
Հայրը ինչպէս մռայլ մի ամպ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փարուած՝
Դուրս են գալի միասին.
Հառաչում է ոգջ աշխարհը.
Կտրիճները բարացած,
Դրազների մէջ են ընկնում՝
Էս աշխարհից վերացած:

– Նայիր, դստրի՛կ, իշխանազուն
Էս բաջերին լայնալանջ,
Այժմ պիտի հանդէս դուրս գան,
Պայքար մտնեն ֆո առաջ.
Մէկը իրեն ուժը ցոյց տայ,
Միւսը՝ շնորհքն իր բազկի,
Ո՛րը՝ ճարպիկ ձիարշաւը,
Ո՛րն էլ թափը իր վագրի:
Իսկ երբ կռիւն առնի դաղար,
Ցայտնի լինին բաջն ու վատ,
Ու երբ անցնեն մեր առջեւից
Կտրիճները պայազատ,
Ընտրի՛ր, զարկի՛ր ձեռքիդ խնձորն
Անյաղթներից անյաղթին,
Որ ոգջ աշխարհ մայիլ մնայ
Անզուգական ֆո թախտին:

Ասաւ արքան, ձեռքը ձգեց,
Նշան տուեց պայքարին,
Այն ինչ՝ աղջիկն առաջ եկաւ՝
Կարմիր խնձորն իր ձեռին:
– Գուցէ, հայրի՛կ, տկար լաւին,
Ցաղթի մի վէս տմարդի.
Բայց չի կարող լինել երբեք
Նա սիրելին իմ սրտի...
– Է՛յ, Փարվանա չքնաղ փերի՛,
Ի՞նչ է հաւան ֆո սրտին, –
Խոնարհում են կտրիճները,
Խընդրում կրկին ու կրկին:
– Գա՞նձ ես ուզում, ոսկի՞, արծա՞թ,
Անգին քարեր ու գոհա՞ր,
Ա՞ստղ ես ուզում, մեռնք երկնքից
Վեր կը բերեմք քեզ համար:
– Ինչի՞ս են պէտք ոսկին, արծաթ
Եւ կամ աստղը երկնքի,
Ոչ էլ գոհար եմ պահանջում
Սէր-ընկերից իմ կեանքի:
Ես նրանից հո՛ւր եմ ուզում,
Անշէջ հուրը սրբազան,
Ով կը բերի անշէջ հուրը,
Նա՛ է ընտրած իմ փեսան...

Ասաւ աղջիկն. իրար անցան
Կտրիճները բաջարի,
Ձիանք հեծած թռան հապճեպ
Դէպի չորս կողմն աշխարհի:
Թռա՞ն, շուտով գտնեն, բերեն
Անշէջ հուրը աղջկան.
Բայց... տարիք են գալի՞ս, գնո՞ւմ,
Նրանք չկան ու չկան...

3.

– Հայրի՛կ, ինչո՞ւ ետ չդարձան
Էն բաջերը սիրատենչ.
Մի՞թէ, հայրի՛կ, ինձ մոռացան,
Էլ չեն բերիլ հուրն անշէջ:

– Ո՛չ, իմ դստրիկ, կը գան անշուշտ
Ու կը բերեն էս տարի.
Կռիւներով արիւնռուշտ
Լիքն է ճամբէն բաջերի:

Ո՛վ իմանայ, պէտք է անցնեն
Մութ աշխարհից, սեւ ջրից.
Ո՛վ իմանայ, պէտք է փախցնեն
Եօթգլխանի դեւերից:

Անց է կենում դարձեալ տարին.
Նայում է կոյսն ամէն օր.
– Ո՞ւր է, հայրի՛կ, ե՞րբ կը գայ նա՝
Սարից թռած ձիաւոր:

digitised by A.R.A.R.@

Միշտ երազում ես տեսնում եմ
Էն հերոսին սպասող,
Հուր կարոտով թռած իմ դէմ,
Լուսանում է··· ու չկայ:

– Կը գայ, դստրի՛կ իմ թանկագին,
Հեշտ չի բերում հուրն անշէջ.
Շատ, շա՛տ անգամ բերող հոգին
Ինքն է այրում նրա մէջ···

Անց է կեցում դարձեալ տարին
Նայում է կոյսն ամէն օր.
Ոչ մի սրտից, ոչ մի ճամբում
Չի երեւում ձիաւոր:

– Հայրի՛կ, հայրի՛կ, մի՞թէ չկայ
Էս աշխարհում անշէջ հուր.
Թառամում է սիրտս ահա,
Պաղ է էս կեանքն ու տխուր···

Էլ չի խօսում. մոայլ, տրտում,
Լուռ է արքան ալեւոր,
Սեւ-սեւ ցաւերն իրեն տրտում՝
Միտք է անում գլխիկոր:

4.

Էսպէս անցան շատ տարիներ.
Ցխուր ապշիկն արքայի
Նայե՛ց, նայե՛ց սարերն ի վեր,
Ճամբաներին ամայի,

Ցոյսը հատաւ··· ու լաց եղաւ.
Էնքա՞ն արաւ լաց ու կոծ,
Որ լին կորեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց.
Ծածկե՛ց, կորա՞ն, ինքն էլ հետը···
Այժմ էնտեղ տրտմաշուք
Խոր Փարվանա լիճն է ծփում
Ցստա՞կ, ինչպէս արտասուք:
Ու էն վեհտ ջրերի տակ
Ցոյց են տալիս մինչ էսօր
Նէր արքայի ճերմակ ամրոցն
Ու շէնքերը փառաւոր:

♣

Ասում են՝ էն թիթեռները,
Որ գիշերուայ խաւարում,
Որտեղ ճրագ, որտեղ կրակ,
Որտեղ լոյս է հենց վառում,
Հաւաքւում են, շուրջը պատում,
Մէջն են ընկնում խելագար,
Ասում են, թէ՝ էն Փարվանա
Զահիլներն են դիրավոր:
Շտապելուց թեւ են առել,
Դարձել թիթեւ թիթեռներ,
Ու տակաւին հուր տեսնելիս
Մէջն են ընկնում անհամբեր.
Զանգ է անում ամէն մինը,
Շուտով տանի, տիրանայ···
Ու այրւում են, այրւո՞ւմ անվերջ
Կտրիճները Փարվանա:

ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ՔԱՋ ՆԱԶԱՐ»Ը

Յովհ. Թումանեանի այս գրքոյկը նոյնքան շնորհալի եւ հրահանգիչ գործ է, որքան այն բոլոր մանկական գրուածքները, որ դուրս են եկել նրա գրչի տակից: Հրատարակութիւնն եւս կատարուած է սովորական, խնամքով եւ զարդարուած 6 գունաւոր պատկերներով, որ նկարել է Ռուստէր, միակ շնորհալի նկարիչը, որ օտարազգի լինելով՝ կարողանում է գոյնի ու գծի շնորհիւ յաջողապէս արտայայտել Կովկասի գրողների յղացումները:

Հեղինակն այս գրուածքի մէջ եւս օգտագործում է մեր ժողովրդական անգիր բանահիւսութեան անհատնում շտեմարանը, իր ընտրած նիւթը մշակելով հայ ժողովուրդի ոգով ու ոճով:

«Քաջ Նազար»-ի նիւթը իր էութեամբ միջազգային է, բայց նա տուացել է իր յատուկ երանգը, մշակութիւնն ու մեկնութիւնը մեր ժողովուրդի բերանում եւ Յովհաննէս Թումանեանի գրչի տակ:

Այս նիւթի եւրոպական տարբերակն է *«Անվախ դերձակը»*, որ տարիներ առաջ հրատարակուած է հայերէն, նոյնպէս գունաւոր պատկերներով եւ թարգմանուած է հռչակաւոր Գրիմ եղբայրների մշակած օրինակից: Նոյն հեքիաթի տարբերակները կան նաեւ վրացերէն, թուրքերէն եւ ֆրդերէն:

«Քաջ Նազար»-ի նիւթը խորապէս հոգեբանական է եւ իմաստասիրական. նա ցուցադրում է մի ամբողջ աշխարհահայեացք՝ յանդուգն ու տխուր: Մի Սէրվանդէս նրանից կարող էր կերտել մի նոր Դոն-Քիշոտ: Յովհաննէս Թումանեանի ձգտումները այդքան խիզախ չեն. նրա նպատակը պարզ է. նա աշխատում է այդ նիւթը տալ իր ազ-

digitised by A.R.A.R.@

գայիսն կերպարանքի մէջ, նոյնիսկ խոշոր ու հիմնական գծերով, ինչպէս մշակելով ստեղծել է հայ ժողովուրդը:

Ժողովուրդներն ընդունել եւ մինչեւ այսօր էլ ընդունում են հսկաների գոյութիւնը եւ Ցովհ. Թումանեանը այս հեքիաթը տալով ժողովուրդի յոգնումի համեմատ, ոչ միայն հաւատարիմ է մնացել մեր ժողովուրդի իմաստութեան, այլ յազուրդ է տուել իր իսկ բնոյթի պահանջներին, որովհետեւ նա ինքը ընդունում է բարոյական ու մտաւոր հսկաների գոյութիւնը աշխարհում:

Ցովհ. Թումանեանը գնում է մի ճամբով, ուր վաստակել, եւ մանաւանդ թէ՝ վաստակելու է անանց փառք մեր գրականութեան մէջ: Այդ ճանապարհն է. տագնապել մեր ժողովուրդի զգացումով ու մտածումով, ըմբռնել նրա հանճարը եւ գուշակել նրա իտէալը գեղեցիկ աշխարհում, եւ իր անհատական մտքերն ու զգացումները տալով նրա ստեղծած յաւերժապէս գեղեցիկ, հզօր ու հոյակապ կառուցումների մէջ:

Սրանով բարձրանում է ինքը եւ բարձրացնում է ժողովուրդին, որովհետեւ արուեստի ամէն մի գործ մեծութեամբ ու վերապրումով է մեծանում:

Ուզողդ եմ համարում խօսել Ցովհ. Թումանեանի լեզուի մասին, թէկուզ եւ ունենայի ինչ-ինչ մանր դիտողութիւններ: Նա ինքը հայ լեզուի ստեղծողներից մէկն է. նա բանաստեղծ է, «ոտից մինչեւ գլուխ»՝ ինչպէս *Լիրը*՝ թագաւոր, այսինքն՝ նա ստեղծում է մեր ազգային *բանը*, որ խօսք եւ իմաստ է նշանակում միանգամայն: Իսկ ուր խօսում է բանաստեղծը՝ բերականը լռում է:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

1912

digitised by A.R.A.R.@

Վ. ԱՇԱՐՈՆԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՄԱՐԴԸ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Կենսագիրներն ասում են, որ Յովհաննէս Թումանեանը շատ կանուխ է սկսել բանաստեղծութիւններ գրել, գրեթէ 10–11 տարեկան։

Իր գրուածքները հրատարակելու առաջին փորձերը, սակայն, արել է 80-ական թուականների վերջը եւ 90-ականների սկիզբը։

Առաջին անգամ իր «Շունն ու կատուն» հրատարակելու համար Յովհաննէս Թումանեանը դիմել է այն ժամանակուան մեր ամենալաւ գրական ամսագրին՝ «Մուրճ»ի խմբագիր Ա. Արասխանեանին։

Ա. Արասխանեանը, եւրոպական կրթութիւն ստացած, վերին աստիճանի քաղաքավարի եւ մի քիչ էլ չափից աւելի բարեմիտ, բայց գրական ճաշակից զուրկ մարդ էր։ Հակառակ իր բարեկրթութեան, Արասխանեանը յուզուել, վրդովուել է որ վարդից եւ սոխակից դուրս ուրիշ բաներ էլ, եւ այն էլ շուն ու կատուի նման բաներ կարող են բանաստեղծութեան նիւթ դառնալ։

– Տարօրինակ բան. ի՞նչպէս կարելի է շան ու կատուի մասին բանաստեղծութիւն գրել։ Փորձեցէք մի քիչ աւելի յարմար նիւթեր ընտրել, պարոն, – ասել է «Մուրճ»ի վրդովուած խմբագիրը, Թումանեանին վերադարձնելով «Շունն ու կատուն»-ի ձեռագիրը։

Տաս տարի յետոյ, 1900-ական թուականների սկիզբը, ընդհանրապէս Կովկասում եւ մասնաւորապէս Թիֆլիսում չկար դպրոցական տարիքի մի հայ մանուկ, որ կամ կարդացած չլինէր, կամ անգիր չարտասանէր Յովհ. Թումանեանի «Շունն ու կատուն»։

Ինչպէս իրեն, Թումանեանի տունը գիշեր ու ցերեկ բաց էր ամէնքի առջեւ, այդպէս էլ ամէն դուռ բաց էր սիրուած բանաստեղծի առջեւ։

Այն բազմաթիւ տներում, ուր պատուով եւ ուրախութեամբ ընդունուած էր Թումանեանը, երեխաները, անշուշտ, գիտէին «Շունն ու կատուն»։ Տանտէրերը սովորաբար չսազում էին բանաստեղծին ներկայացնել իրենց զաւակները եւ բացատրել թէ՝ «Գիտէ՞ք, սա այն հօրեղբայրն է, որ գրել է «Շունն ու կատուն»։

– Մի բան գրեցինք, կրակն

digitised by A.R.A.R.@

ընկանք, տխպէր, – ծիծաղելով դանգատու

իր տանը թէ դուրսը՝ սեղանապետը, կամ, ուրիշ խօսքով թամադան միշտ Յովհ. Թումանեանն էր։ Դա անգիր եւ անխախտ օրէնքն էր բոլոր այն հաւաքոյթների, ուր ներկայ էր Թումանեանը։

Անմրցելի թամադա էր Յովհ. Թումանեանը։

Իր ժամանակակիցներից եւ ոչ մէկը կարող էր այնքան կիրթ զուարթութիւն, այնքան համով խօսք, այնքան սուր կատակներ, ֆրանսացիների ասածին պէս էպիգրամ մտցնել այդ խնճոյքների մէջ, որքան Թումանեանը։

Քիչ ուտող եւ, մանաւանդ, քիչ խմող էր Յովհ. Թումանեանը։ Անթիւ անգամներ դիտաւորեալ սեղան է նստել Յովհ. Թումանեանը, բայց ոչ ոք չի տեսել նրան՝ չասենք թէ արբեցած, այլ նոյնիսկ, ինչպէս ասում են, գըլուխը տաքացած։

Գինու բաժակը նրա համար ներշնչումի աղբիւր էր, հոգեկան արթնցումի մի անօթ։ Մինչ նրա սեղանակիցները պարպում էին պինիով լեցուն իրենց բաժակները, Յովհ. Թումանեանի բաժակը յորդում էր ուրախութեամբ, սուր խօսքով, կատակով եւ անուշ զրոյցով։

Իր սեղանակիցները մեծ մասամբ կիրթ մտաւորականներ եւ արուեստի տաղանդաւոր ներկայացուցիչներ էին եւ այդ պատճառով Յովհ. Թումանեանի վարած խնճոյքները դառնում էին մէկ-մէկ զրական-գեղարուեստական հաւաքոյթներ։ Ու բոլորի վրայ տիրապետողը դարձեալ ինքն էր՝ Յովհ. Թումանեանը իր հիւթեղ լեզուով, որից երբեմն անուշ, երբեմն սուր կատակներ էին թափւում։

❧

Յովհ. Թումանեանը թամադա էր ոչ միայն աշխարհականների ճաշկերոյթներին, այլեւ հոգեւորականների կոչունքներին։

1913-ին, Գէորգ Ե. Կաթողիկոսի ընտրութեան առթիւ էջմիածին հաւաքուած պատգամաւորների մեծ մասը, մանաւանդ արտասահմանեան թեմերից եկածները, կաթողիկոսական ընտրութիւնից յետոյ Թիֆլիս եկան։ Թիֆլիսում նրանց ճաշկերոյթով հիւրասիրեցին։

Ճաշկերոյթի հրաւիրուածները, իհարկէ, Յովհ. Թումանեանին ընտրեցին թամադա։

Յովհ. Թումանեանը, նախքան գործի անցնելը, ոտքի ելաւ եւ հանդիսաւոր կերպով յայտարարեց.

— Էս մարդիկը մի քանի օր առաջ էջմիածնի մէջ ընտրել են Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Հիմա էդ միւնոյն մարդիկ եկել են էստեղ եւ ինձ ընտրել են իրենց սեղանի թամադա։ Ուրեմն սրանից յետոյ ես էլ պարզ թամադա չեմ, այլ թամադա ամենայն հայոց։

Յովհաննէս Թումանեանը, ըստ երեւոյթին, գոհ էր իր գիւտից. նա սիրել էլ ինքն իրեն տըւած «Ամենայն հայոց» տիտղոսը։

Մի ուրիշ անգամ էլ Յովհաննէս Թումանեանը դարձեալ տեղ «Ամենայն հայոց» տիտղոսը, բայց չատ աւելի լուրջ եւ լուսիչ պայմաններում։

●

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

1915-ի Յուլիսին Գովկասեան ռուս բանակի որքան ցանկարծակի, նոյնքան անարդարա-

digitised by A.R.A.R.@

նալի նահանջը Մուշից, Վասպուրականից եւ Ալաշկերտից դէպի Կովկասի սահմանները՝ եղաւ պատճառ, որ Թուրքահայաստանի. այդ գրաւուած շրջանների 150 հազար հայութիւնը տեղահան լինի եւ Կովկաս ապաստանի։

Թուրական նահանջը այնքան անակնկալ եւ արագ կատարուեց, որ Վասպուրականի յանկարծակիի եկած հայութիւնը ամէն ինչ թողեց եւ նահանջող բանակի ետեւից իր չունչը առաւ Արարատեան դաշտում։

Կովկասում էլ ոչ ոք չէր սպասում Ֆիդայիի դժբախտութեան, եւ ոչ մէկ պատրաստութիւն տեսնուած էր պատսպարելու եւ կերակրելու բազմահազար գաղթականութիւնը։

Մարդկային հսկայ հեղեղը եկաւ եւ փռուեց Արարատեան դաշտում ամբոխ կիզիչ արեւի տակ։

Բնաւէր ժողովրդի մեծագոյն մասը դնաց տեղաւորուեց Էջմիածնի եւ Վաղարշապատի մէջ եւ շուրջը։ Ամէն մէկ ծառի կամ թուփի տուեր դարձել էր տուն գաղթական ընտանիքների համար։

Եւ դեռ տանտէր հազարներ մնում էին Արարատեան դաշտի խանձող արեւի տակ, ուղղակի չոր գետնին։

Զարհուրելի, աննկարագրելի պատկեր էր ներկայացնում Էջմիածինը այդ օրերում։

Քաղցն ու համաճարակը անընդհատ կոտորում էին գաղթականութիւնը։ Առաւօտից երեկոյ մեռելատար սայլերը դիակ է որ ժողովում էին պետնին փռուած բազմութեան մէջից։

Հազնեպով կազմուած ինամատար մարմինները, տարաշխարհական խումբերը, ղժիշկները, հիւանդապահները վուիթային օգնութեան։ Ով կարող էր որեւէ բանով օգտակար լինել, չտապեց Էջմիածին։

Էջմիածնի հանդէսների մէջ առաջիններից մէկը եղաւ Եղիսանէս Թումանեանը։

Մահը խորութիւն չէր դնում ոչ խնամքի կարօտ գաղթականութեան, ոչ էլ գաղթականութիւնը խնամողների մէջեւ։ Եւ սակայն, ոչ ոքի մտքով չանցաւ որ Յովհ. Թումանեանը կարող էր զոհ դնալ համաճարակին, թէ նրա կարուստը ծանր, անդարմանելի հարուած կը լինէր հայ մողովուրդին եւ հայ գրականութեան, եւ թէ վերջապէս, Յովհ. Թումանեանի կատարած գործը կարող է կատարել ուրիշ հիւանդապահ եւ թերեւս աւելի լաւ կերպով, շնորհիւ մասնագիտական պատրաստութեան։

Այնքան բնական էր, որ այդ օրերուն ամէն մարդ օգնութիւն հացնի տառապող գաղթականութեանը, փոյթ չէ թէ ով է այդ մարդը։

Եւ չաքաթներ, ամիսներ չարունակ, գիշեր եւ ցերեկ Յովհ. Թումանեանը աշխատեց գաղթականութեան մէջ։

Առաւօտը, արեւը հազիւ ծագած՝ Յովհ. Թումանեանը ոտքի վրայ էր արդէն եւ ամբողջ օրը, առանց դադարի, առանց հանգըստի տառապող բազմութեան հետ էր, բազմութեան մէջ։ Առաւօտից մինչեւ ուշ երեկոյ նիհար, բարձրահասակ եւ ժամանակից առաջ ալեւորած գլխով Յովհ. Թումանեանը գաղթականների մէկ խմբից միւսին, մէկ ընտանիքից միւսին էր անցնում, այստեղ մի մեռնող հրեխայի վրայ էր կռանում, այնտեղ տիֆով բռնուած մի երիտասարդի խնամում, երրորդ տեղը հոգեբը, հիւանդապահները վուիթային օգնութեան։ Ով կարող էր որեւէ բանով օգտակար լինել, չտապեց Էջմիածին։

Էջմիածնի հանդէսների մէկ առաջիններից մէկը եղաւ Եղիսանէս Թումանեանը։

Մահը խորութիւն չէր դնում ոչ խնամքի կարօտ գաղթականութեան, ոչ էլ գաղթականութիւնը խնամողների մէջեւ։ Եւ սակայն, ոչ ոքի մտքով չանցաւ որ Յովհ. Թումանեանը կարող էր զոհ դնալ համաճարակին, թէ նրա կորուստը ծանր, անդարմանելի հարուած կը լինէր հայ մողովուրդին եւ հայ գրականութեան, եւ թէ վերջապէս, Յովհ. Թումանեանի կատարած գործը կարող է կատարել ուրիշ հիւանդապահ եւ թերեւս աւելի լաւ կերպով, շնորհիւ մասնագիտական պատրաստութեան։

Այնքան բնական էր, որ այդ օրերուն ամէն մարդ օգնութիւն հացնի տառապող գաղթականութեանը, փոյթ չէ թէ ով է այդ մարդը։

Եւ չաքաթներ, ամիսներ չարունակ, գիշեր եւ ցերեկ Յովհ. Թումանեանը աշխատեց գաղթականութեան մէջ։

Առաւօտը, արեւը հազիւ ծագած՝ Յովհ. Թումանեանը ոտքի վրայ էր արդէն եւ ամբողջ օրը, առանց դադարի, առանց հանգըստի տառապող բազմութեան հետ էր, բազմութեան մէջ։ Առաւօտից մինչեւ ուշ երեկոյ նիհար, բարձրահասակ եւ ժամանակից առաջ ալեւորած գլխով Յովհ. Թումանեանը գաղթականների մէկ խմբից միւսին, մէկ ընտանիքից միւսին էր անցնում, այստեղ մի մեռնող հրեխայի վրայ էր կռանում, այնտեղ տիֆով բռնուած մի երիտասարդի խնամում, երրորդ տեղը հոգեբ-

digitised by A.R.A.R.@

վարքի մէջ դալարուող մի ծերունու կողքին կանգնում։

Յովհ. Թումանեանի անբաժան ընկերն էր այդ օրերուն մեր բանաստեղծի զուակներից մէկը, իր հօր պէս նիհարակազմ եւ փիրուն մարմնով Ներսէսը, որ ոչ միայն զաղթականութիւնն էր խնամում, այլ եւ հոգ տանում իր հօր թանկագին կեանքի մասին։

Յովհ. Թումանեանը մնաց Էջմիածնում, մինչեւ որ առաւական բանակը վերադարձաւ Վասպուրականը եւ զաղթականութեան մէկ մասը վերադարձաւ հայրենիք, իսկ միւս մասը լաւ վատ տեղաւորուեց եւ պատրաստուեց Էջմիածնում, Երեւանում եւ Արարատեան դաշտի գիւղերում։

Արարատեան դաշտում ամառը անձրեւը հազուագիւտ է։

Այդ տարին, զաղթականութեան չոր բախտից, Յոգոտոսի մի տաք օրից յետոյ, երեկոյեան դէմ երկինքը մէկէն ծածկուեց մռայլ ամպերով։ Ամէն վայրկեան կարելի էր սպասել յորդառատ անձրեւի։

Յովհ. Թումանեանը օրուան տաժանելի աշխատանքից նոր էր ազատուել եւ պատրաստւում էր վանքի բակում իրեն յատկացուած սենեակը քաշուել, երբ նկատեց մռայլ երկինքը։ Իսկոյն իր մօտ կանչեց իրեն հետ աշխատող երիտասարդներից մէկին եւ պատուիրեց.

– Վազիր Վեհարան, եւ ասա կաթողիկոսին, որ ես խնդրում եմ անմիջապէս բանալ տալ բոլոր եկեղեցիների, վանքերի եւ ապաստանների դռները եւ զաղթականութիւնը այս դէպքեր պատրաստարել անձրեւից։

Երիտասարդը չտապեց կատարելու Յովհ. Թումանեանի կարգադրութիւնը։

Ինքը՝ Թումանեանը այլեւս սենեակ չմտաւ, այլ մնաց վանքի բակում, սպասելով կաթողիկոսի պատասխանին եւ անդադար դէպի վեր, դէպի մռայլուող երկինքը նայելով։

Կաթողիկոսի մօտ դնացած երիտասարդը վերադարձաւ եւ յայտնեց, որ կաթողիկոսը հրահանգեր է բաց անել Գայանէի, Ծողակաթի եւ Հոռիսիմէի վանքերը, բայց Վեհարանի նոր շէնքին պատուիրել է ձեռք չտալ եւ փակ պահել։

Այդ տարին գրեթէ աւուրուած էր կառուցումը նոր Վեհարանի ընդարձակ շէնքին, որ սակայն դեռ եւս բնակելի վիճակի մէջ չէր դրուած։ Կաթողիկոսը՝ Գէորգ Ե. շարունակում էր բնակուել հին Վեհարանում։

– Ի՞նչ, – ցասումից դողացող ձայնով բացագանչեց Յովհ. Թումանեանը. անմիջապէս վերադարձիր Վեհարան եւ ասա Ամենայն Հայոց կաթողիկոսին, որ Ամենայն Հայոց Բանաստեղծը պահանջում է բաց անել նաեւ նոր Վեհարանի դռները եւ պատրաստարել զաղթականութիւնը։

Երբէ՛ք, ոչ դրանից առաջ, ոչ դրանից յետոյ Յովհ. Թումանեանին այդպէս զայրացած չէի տեսել։

Մի քանի բոպէ յետոյ լուր եկաւ որ նոր Վեհարանի շէնքը եւս տրամադրուած է զաղթականութեանը։

Անձրեւն արդէն սկսել էր կաթկթել։

ՎԱՐԴԳԷՍ ԱՇԱՐՈՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Նա մեծ էր հոգո՛վ, արիւնո՛վ: – Արմատնե՛ր ունէր նա հողում:
Իր երգերը – գեղջուկ նայիրցու ֆրտիմֆո՛վ էր նա ոգեղում:
Հանճարեղ երգերում նրա – իր երկրի արե՛ւն էր շողում: –
Նա մեծ էր հոգո՛վ, արիւնո՛վ: – Արմատնե՛ր ունէր նա հողում:

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

digitised by A.R.A.R.@

ՌԱՖԱՅԷԼ ԻՇԽԱՆԵԱՆ

ԹՈՒՄԱՆԵԱՆԸ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

Լեզուն հաղորդակցման միջոց է։ Թումանեանը լաւ գիտէր այս ճշմարտութիւնը, բայց նա գիտէր նաեւ, որ դա այն նուազագոյնն է, որը կարելի է ասել մարդկային լեզուի մասին։ Հայ գրողներից, թերեւս, ոչ մէկին այնքան չեն յուզել լեզուական ամենատարբեր հարցեր եւ ոչ մէկին այնքան մտորելու առիթ չեն տուել գրանք, որքան Թումանեանին։ Դրա վկաներն են բանաստեղծի բազմաթիւ գրաւոր ու բանաւոր ելոյթները, նուիրուած լեզուի հարցերին։ Մեծ բանաստեղծի ու խորաթափանց փիլիսոփայի զգացողութեամբ եւ տրամաբանութեամբ Թումանեանը լեզուի տարբեր նշանակութիւնները ըմբռնում էր, կարելի է ասել, ամբողջ ծաւալով։

Մանաւորապէս, մի ժողովրդի իւրայատուկը, ազգայինը որոնելիս՝ բանաստեղծը միշտ կանգ էր առնում մայրենի լեզուի գերի վրայ։ Յայտնի է լեզուի մասին Թումանեանի ասած խօսքը հայ գրողների երեկոյթին (1916 թ.)։ Կրկնենք այդ իմաստուն սոյթը, մանաւանդ, որ հայերս, ուր էլ լինենք, իրաւունք չունենք այն ոչ մի պահ մոռանալու. «Լեզուն է ամէն մի ժողովրդի ազգային գոյութեան ու էութեան ամենախոշոր փաստը, ինքնուրոյնութեան ու հեռաւոր անցեալի խոշոր դրոշմը, պատմութեան ու հեռաւոր անցեալի կախարդական բանալին, հոգեկան կարողութիւնների ամենաճոխ զանձարանը, հոգին ու հոգեբանութիւնը»։

Թումանեանի ըմբռնումներում նոյնանում են ազգային լեզու եւ մայրենի լեզու հասկացութիւնները, եւ նա հաստատում է հների միտքը, որոնք, իր խօսքով ասած, «լեզու ասելով ազգ էին հասկանում»։ Բանաստեղծը տուել է նաեւ մայրենի լեզուի մի հրաշալի բնորոշում. «Մօրքի բերականական ձեւը մտքի մէջ գալիս է անգիտակցօրէն, ինքնաբերաբար։ Բայց էդ էն լեզուն է, որին մանկուց ենք ընտելացած, որով հեշտ ու անաչխատ ենք մտածում. առանց աշխատելու գտնել էս կամ էն խօսքը, էս կամ էն ձեւը։ Դա

digitised by A.R.A.R.@

մայրենի լեզուն է, ազգային ժողովրդականութեան, լուռ մտածմունքի եւ երազի լեզուն»։ Ըստ Թումանեանի այսպիսին պէտք է լինի ամէն մի անհատի համար իր ժողովրդի լեզուն։ Այլ վիճակ նրան խիստ հակաբնական էր թւում։

Բանաստեղծի պատկերմամբ մայրենի լեզուով խօսելը, գրելը եւ մտածելն արդէն իւրաքանչիւր անհատի մէջ պահպանում ու ամրապնդում է իր ժողովրդի հոգեբանութիւնը, եւ հակառակը, անհատը, որքան քիչ է գործածում մայրենի լեզուն, այնքան օտարանում է այդ հոգեբանութեանը։ Թումանեանի մի շարք առոյգների մէջ գտնում ենք այն ճշմարտութեան խոր գիտակցութիւնը, որ մարդ միայն մէկ առաջին ու հարազատ լեզու կարող է ունենալ, ու դա պէտք է լինի իր ժողովրդի լեզուն, եւ որ այդ լեզուի հիման վրայ միայն կարելի է սովորել այլ լեզուներ։

Թումանեանը իր մեծ նախորդների՝ Աբովեանի, Նալբանդեանի, Նալբանդեանի նման հայ մանուկների կրթութիւնը պատկերացնում էր միայն մայրենի լեզուով։ «Դպրոցն ու գրականութիւնը ուրիշ բան չեն, եթէ ոչ ամէնից առաջ լեզու»։

Թումանեանը մայրենի լեզուի հետ էր կապում նաեւ մի ժողովրդի գիտական կեանքի զարգացումը։ Բանաստեղծը առաջիններից էր, որ հարց բարձրացրեց հայալեզու ակադեմիա եւ համալսարան ունենալու մասին։ Այս դէպքում էլ պահպանելով իրականի զգացողութիւնը՝ նա գիտակցում էր, որ 20-րդ դարում մի ժողովուրդ չի կարող խիստ զարգացում եւ առաջընթաց ապրել, եթէ իր մայրենի լեզուով չստեղծի ու չզարգացնի բնական ու կիրառական գիտութիւնների նորագոյն ճիւղերը։ «Հայկազեան ընկերութիւն» յօդուածի մէջ Թումանեանը մտահոգւում է այն բանով, որ հայ գիտնականները «օտար լեզուով են զբաղւում գիտութեամբ»։ «Պէտք է համախմբել հայ գիտնականներին, – եզրակացնում է նա,– ստեղծել գիտութիւն հայերէն լեզուով եւ հայ գիտնականների կաճառ, գիտութեան օճախ, հայկական ակադեմիա։ Եւ պէտք է ստեղծել հայոց համալսարանը, ուր կարելի լինի բարձրագոյն գիտութիւններ աւանդել ու սովորել հայերէն լեզուով»։

Այսպէս, մեր մեծ բանաստեղծը, որ իր ամբողջ կեանքում ժողովուրդների եղբայրութեան ու մարդասիրութեան մեծ քարոզիչ էր, եղել է նաեւ իր փոքր ժողովրդի կեանքում մայրենի լեզուի նշանակութեան ամենախոշոր ըմբռնողներից մէկը։

Ռ. Ի.

digitised by A.R.A.R.@

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ, ՀԵՏ

Վաղուց թէեւ իմ հայեացքը Անյայտին է ու հեռում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհունները է քափառում,
Բայց կարօտով ամէն անգամ երբ դառնում եմ դէպի քեզ՝
Մղկտում է սիրտս անվերջ քո քառանչից աղեկէզ,
Ու զաղթական զուակներիդ լուռ շարքերից աւժասպառ,
Ե՛ւ գիւղերից, ե՛ւ շէներից՝ տխո՛ւր, դատարկ ու խաւար,
Զարկուա՛ծ հայրենիք,
Զրկուա՛ծ հայրենիք:

Խանում են մտքիս հանդէպ բանակները անհամար,
Տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար վոհմակները աղաղակով վայրենի,
Աւարներով, աւերներով, խնոյքներով արիւնի,
Որ դարձրին քեզ մշտական սեւ ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայեացքներով անժպիտ,
Ողբի՛ հայրենիք,
Որբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր վէրքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհրդաւոր նամքին նորի ու հնի.
Հառաչանքով սրտի խորքից խօսք ես խօսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաչէտ,
Խորհում ես դու էն մեծ խօսքը, որ 'տի ասես աշխարհին
Ու պիտ' դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին,
Ցայսի՛ հայրենիք,
Լոյսի՛ հայրենիք:

Ու պիտի գայ հանուր կեանքի արշալոյսը վառ հագած,
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով նառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի աւրբ լանջին,
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,
Ու պռետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անէծքով,
Պիտի գովեն քո նոր կեանքը նոր երգերով, նոր խօսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հզո՛ր հայրենիք...

ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՀԵՏ

Բանաստեղծ Յովհաննէս Թումանեանին եւ հանդիպեցայ 1914-ի Նոյեմբերին։

Թիֆլիս խանգավառ կեդրոն մը դարձած էր։ Հայ կամաւորական շարժումը իրեն դրաւած էր գրագէտները, մտաւորականները, ուսանողները եւ ժողովրդական այն զանգուածները, որոնք մարտական ոգի մը կը ներկայացնէին։

Յովհ. Թումանեանը խանդավառուած էր ռուսական բանակներու արշաւանքով եւ կը յուսար, որ Թուրքիան պիտի ջախջախուի։

Էս արկածալից համբորդութեամբ մը կ'ինքնայի Օտեսա, փոխանակ Տրապիզոն։ Կոպէն եւ Պրեսլաւու գերմանական մարտանաւերը Սեւ Մովու մէջ ռուսական նաւահանգիստները կը ռմբակոծէին եւ նաւերը կը խորտակէին։ Պատերազմը սկսած էր Նոյեմբեր 12-ին։ Մեր նաւը, որ զիս Տրապիզոն պիտի հանէր, ուղղութիւնը փոխեց եւ հասաւ Օտեսա, վտանգաւոր հարուածներու ենթարկուելով։

Կ'երթայի Տարօն-Սասուն իրրեւ գործիչ, ինկայ Թիֆլիս՝ իրրեւ կամաւոր։

Առաջին օրէն զգայ իմ չրջապատը եւ զեկոյց տուի այն կացութեան մասին, որ կ'սպրէր Պոլիսը այդ օրերուն։

Յաջորդ օրը ինծի ներկայացան Մոսկուայէն ժամանած ուսանողներ, որոնք եկած էին իրենց ուժերը տրամադրելու Ազգային Բիւրոյին։

Խումբը ուշագրաւ ուսանողներէ կը բաղկանար, — Կորիւն Վազաբեան, Տիգրան Աւետիսեան, Մուշեղ Թումանեան (Թիֆլիսէն), Աշոտ Խաչատրեան (Լոռիէն), Մինաս Մակարեան (Աքուլիսցի)։ Անոնցմէ անբաժան էր Նուարդ Թումանեան իր քանի մը ընկերուհիներով։

Նուարդի եւ Մուշեղի առաջարկով՝ մենք խմբովին այցելութեան գացինք Յովհ. Թումանեանին։ Այդ երեկոյ, եկող-գացողներ եղան, բայց Թումանեանը խանդավառուած էր մեզմով։ Լսած էր որ մենք պիտի մեկնինք դէպի Բաքէն, ուր կը գործէին Դ. խումբը՝ Գեւորի ղեկավարութեամբ, եւ Գ. խումբը՝ Համազասպի ղեկավարութեամբ։

Ներքէս Աշտարակեցիի ապրումներն ունէր Թումանեան.

— Էս անգամ կը լինի... Թուրք կ'ապառապրի մեր երկիրը։

digitised by A.R.A.R.@

Հիւրասիրութիւնը անպակաս էր այդ տան մէջ։ Մենք չըվարատուած էինք Թումանեանի աղջիկներով եւ պատանի տղաներով։

Թումանեանի ուշադրութիւնը կեդրոնացած էր իմ վրայ։ Գալսէն կու գայի։ Գրագէտներէն կը հարցնէր, մասնաւոր հետաքրքրութիւն մը ցոյց կու տար դէպի Սիամանթօն, որուն անմնալէս ծանօթացած էր 1913-ին, Ս. Զաւարեանի ամիսները Թիֆլիս փոխադրուելու առթիւ։

Մանր վոանգի մը ուրուականը, այդ օրերուն, մարդոց մէջքը չէր գրաղեցներ։ Ազատագրական շարժումի ոգեւորութենէն գինովցած էին բոլորն ալ։

Այդ երեկոյեան մեր զրոյցը շատ յաճախ քաղաքականէն շեղեցաւ դէպի գրական հարցերը։ Գիտէին որ Գալոյ Դաշնակցական Ուսանողական Միութեան օրգան «Նրկունք»-ի խմբագիրներէն էի։ Նոր սերունդի ձգտումները շատ կը հետաքրքրէին Թ. Թումանեանը։ Գրական ի՞նչ նոր սերունդ ստեղծուած էր, բանաստեղծական արտայայտութիւն ունի՞ն, թէ արձակ կը մշակեն։

Երբ յայտնեցի, թէ ուսանողներն առաւելաբար ընկերային եւ քաղաքական նիւթերով ոգեւորուած են, հիասթափեցաւ.

– Ձասես որ մեր հիւանդութենից են բռնուել։

Թումանեանի այդ սխուր բացագանչութիւնը գիս ստիպեց քիչ մը աւելի ճիշդ պատկերացումը տալ միջավայրին։ Ըսի թէ նորեր կան, ինչպէս Ահարոնը, Գեղամ Բարսեղեանը, Սիրունին, Արսէն Երկաթ եւ շարք մը պատանողներ, որ արձակով եւ բանաստեղծութեամբ իրենց առաջին քայլերը կ'առնեն «Նրկունք»-ի էջերուն մէջ։ Ու աւելցուցի, թէ Սիամանթօն եւ Դ. Վարուժան երբեմն հանոյքով կը բաղմին երիտասարդական այդ բնմին վրայ։

– Գոհունակ ժպիտը դէմքին անպակաս եղաւ այդ դիշեր։

– Այդպէս ասա՛, է՛յ, զարմաղալը իր ճամբով, գրականութիւնը՝ իր։

Ես նշմարեցի որ հարցումները միշտ ինծի կ'ուղղուէին, ինծի խօսել կու տային։ Թումանեանէն բացի, երիտասարդներն ու երիտասարդուհիները նոր հարցում մը կը ճարէին գրական կալուածէն։

Անդրադարձում մը ունեցայ եւ պահ մը լռեցի։

Աղջիկներէն մէկը.

– Ինչի՞ լռեցիր, ուզում ենք որ խօսես...

– Դուք ինչո՞ւ չէք խօսիր եւ միայն գիս լսել կ'ուզէք։

– Արեւմտահայերէնը էնքա՛ն լաւն է, երաժշտական, որ մենք սիրով ու հաճոյքով ենք լսում ձեզ։

– Բայց կայ ուրիշ իրողութիւն մը, կ'ուզէի որ դուք բոլորդ գիտնաք, թէ մենք ալ արեւելահայերէնի սիրահար ենք եւ ամբողջովին երաժշտական կը դտնենք։ Մեր ուսանողական միութեան հանդիպումներուն մեր արտասանողները Պարոն Թումանեանի եւ Ահարոնեանի բանաստեղծութիւնները կ'արտասանեն, մեծ ոգեւորութիւն ստեղծելով։

Թումանեան աչքուժ ժպիտով իմ կողմը հակեցաւ.

– Ի՞նչ ես ասում, էդպէս բան էլ կա՞յ։

– Աւելի՛, քան կ'երեւակայէք, յարգելի բանաստեղծ։

Գրական մթնոլորտի մասին Թումանեանի հետաքրքրութիւնը տեսնելով, ըսի.

digitised by A.R.A.R.@

– Գարոն Թումանեան, դուք Գոլոյ մէջ արդէն մեծ ոգեւորութիւն ստեղծած էք, մասնաւորաբար երկսեռ երիտասարդութեան մէջ։

– Իսկ ի՞նչպէս, – հարցական նայեցաւ ինծի։

– Ձեր «Անոյշ»-ը ներկայացուցին ամերիկեան գոլէճի աղջիկները եւ մեծ խանդավառութիւն ստեղծեցին ունկնդիր հասարակութեան մէջ։

– Ահա նորութիւնը, էն էլ աղջիկների նախաձեռնութեամբ։

– Աղջիկներու սրտին մէջ միշտ «Անոյշ»-ի մը ողբերգութիւնը կայ,– ըսի, – անոնք Սարօ մը պտան դեր կատարող, սակայն, Մօսիի դերը իրենց ընկերուհիներէն մէկը ստանձնեց։

– Էդ էլ նորութիւն է, Մօսիի նկարագիրը ունեցող մի օրիո՛րդ...

Քիչ մը լռելէ ետք աւելցուց.

– Էդ օրիորդը մի տիկին կը դառնայ, կեանքը կը վայելի, Անոյշ-ի համբով չի գնայ։

Տարիներ ետք այդ օրիորդը տիկին Լոլա Սասունի եղաւ։

Զրոյցը շարունակուեցաւ, բայց ես այլեւս լռեցի։ Բնաւ յաւակնութիւն չունէի երաժշտութիւն ծախելու...

⁂

Խանդավառ երեկոյ մը անցուցինք, ու յաջորդ օրը համբայ ելանք դէպի Բասէն, ազատուած մօտ երեսուն հազար ժողովուրդը կառավարելու։ Վարչական եւ մարտական պարտականութիւններ ստանձնած էինք։

Վարչական այդ մարմնի անդամ էին, բացի ինձմէ, Կորիւն Ղազարեան, Տիգրան Աւետիսեան, Մինաս Մակարեան, Վահան Խատէտեան (Լուրիէն)։

Հազիւ մէկուկէս ամիս այդ շրջանին մէջ գործեցինք։ Դեկտեմբերի վերջերուն տեղի ունեցաւ Էնվեր փաշայի յարձակողականը Կարսի եւ Արտահանի ուղղութեամբ։ Մենք ժողովուրդը փոխադրեցինք դէպի Արարատեան դաշտը, Կաղզուանի վրայով։ Թուրքերը պարտուեցան։ Ու մենք երկու-երեք ամիսներու պէտք ունեցանք տեղահան եղած ժողովուրդի մէկ մասը իր բնաշխարհը վերադարձնելու։

⁂

1915-ի առաջին օրերուն Թիֆլիս էինք։ Մեր մարմինը ամբողջ կազմով ներկայացաւ Ազգային Բիւրոյին։ Գրաւոր զեկուցում տուի այդ նիստին։ Երեկոյեան հրաւիրուած էինք ճաշի Ց. Թումանեանի տունը։ Ինձի կ'ընկերանային Կորիւն Ղազարեան եւ Մինաս Մակարեան։ Թումանեան մանրամասն զեկուցում ստացաւ մեզմէ։ Հոգիով ամբողջովին մեր ժողովուրդին հետն էր եւ կ'ապրէր անոր տառապանքը։

Ճաշի ընթացքին բազմապիսի արտայայտութիւններ ունեցաւ։ Մեզ ուրախացուց սրամտութիւններով, որոնք խորունկ իմաստ ունէին։ Հպարտ էր նորահաս երիտասարդներով, որոնք, այսպէս, Մասկուայէն, Բէթերբուրկէն, Գոլսէն կը հասնէին պատերազմի ճակատ, հայ ժողովուրդի ազատագրական պայքարին նուիրուելու։

digitised by A.R.A.R.@

– Շատերն էն կարծիքին էին, թէ Մոսկուայում եւ Բեթերսպուրգում ստում ռեռգները հայ ժողովուրդին մոռացել են եւ իրենց ժամանակը ռուս օրիորդների հետ կ'անցկացնեն. էս օր մենք տեսնում ենք, որ նրանք ամէն ինչ մոռացած՝ եկել են հայ ժողովուրդի կենաց ու մահու կռուին մասնակցելու: Դա լաւ է, դա վերածնունդ է:

Ց. Թումանեան իր խորհրդածութիւններն ու կենացները շարունակեց այդ հաշկերոյթին, ուր իր բոլոր դատակները համախմբուած էին: Ու մենք մեզ մեր տան մէջ կը զգայինք: Այնքա՜ն ջերմ ու մտերմական էր մթնոլորտը:

Նոյն տարին տեղի ունեցաւ Վալէրի Բրիւսովի ընդունելութիւնը Թիֆլիսի գրագէտներուն եւ մասնաւորապէս կողմէ: Հայ բանաստեղծներու աշխատու գործերը ռուսերէնի վերածած էր մեծ հատորի մը մէջ: Գրագէտներու մթնոլորտը ճաշկերոյթով մը կը պատուէր ռուս մեծ գրագէտը: Թումանեանի հրաւէրով՝ մեր խմբակն ալ մասնակցեցաւ այդ յարգանքին: Թումանեանը սեղանապետն էր եւ ընդունելութեան ամբողջ տեւողութեան ոգեւորեց հարիւրէ աւելի հիւրերը, խմաստաւորեց այդ հանդիպումը գրական վեհութեամբ, ռուս եւ հայ եղբայրութեան եւ գործակցութեան մտածումներով խանդավառեց բոլորը:

❧

1915–ին տեղի ունեցաւ Վանի նահանջը, ամէնէն ազէտալին մեր ժողովրդական նահանջներուն: Մեր խումբէն չորս գործիչներ՝ Մ. Մաքսեան, Ց. Ալեքսեան եւ Աշոտ Իսրայէլեան ու ես անցած էինք Վան, ու անկէ Արճէշի վրայով եկած էինք Մանազկերտի եւ Գուլանուխի ազատամարտի բազմութիւններուն օգնելու: Նաեւ ծրագիր ունէինք այդ շրջաններէն իմնել Տարօն: Նահանջը ամէն ինչ կէս ձգեց: Ու մենք այդ շրջաններու ժողովուրդն ու որբերը համբայ հանեցինք դէպի Ալաշկերտ եւ Արարատեան դաշտը: Շարժեցինք տուեց նահանջի համբան:

Երբ մենք այցելեցինք էջմիածին համախմբուած բազմութիւններուն եւ որբերուն, հոն տեսանք Ցոլհ. Թումանեանը, որուն կ'ընկերանար իր դուստրը՝ Նուարդ:

Թումանեան անընդհատ շարժման մէջ էր, հիւանդներուն այցելութիւն, որբերուն հանդիպում, երբ կը հաշէին, ժողովուրդին մէջ, որ տեղէ տեղ կը շարժէր գլուխը դնելու կայան մը դանելու:

Թումանեան Նուարդի անբաժան ընկերակցութեամբ ամէն տեղ էր: Հեւ է հեւ, յուզուած, մինչ պատրաստակամ բարիք մը գործելու:

Կարճ եղաւ մեր զրոյցը.

– Տեսար թ՚նչ օրի ընկանք... միայն մեր ժողովուրդը ընդունակ է եւ դիմանում է էապէս ապէտների:

Ու արագօրէն կ'անցնէր մէկ խումբէն դէպի միւսը: Երեսուն հազար ժողովուրդ լեցուած էին էջմիածնի բակերն ու պարտէզները:

Այդ օրերուն լսեցի որ Թումանեան վէճ ունեցած է կաթողիկոսին հետ: Կաթողիկոսը կը պնդէ, որ այդ բազմութիւնները փոխադրուին գիւղերը: Իսկ Թումանեան դէմ կ'արտայայտուի:

digitised by A.R.A.R.@



Թումանեան ու իր դուստրը Նուարդ՝ Էջմիածնի որբերուն հետ (1915)

կաթողիկոսը, թէ՝

– Իմ կարգադրութիւնը պէտք է չուտափոյթ գործադրել, ես եմ ա-ժենայն հայոց կաթողիկոսը։

Թումանեան անմիջապէս կը պատասխանէ.

– Ես էլ ամենայն հայոց բանաստեղծն եմ։ Կարիքը ամէնօրեայ է, ամէն ժամու օգնութեան պէտք է հասնել էս թագմութեանց։

Ու կը շարունակէ իր աշխատանքը։

Թումանեան բանաստեղծը անկախ մտածող եւ բարի մարդ էր, աբ-ժանապատուութեամբ լեցուն անհատականութիւն մը։ Միշտ լաւատես։ Ամէնքը կը յարգէր իրենց ատիճանով, բայց երբեք չէր մոռնար, թէ բա-նաստեղծի արժանապատուութիւնը ամէն բանէ վեր էր իր մօտ։

1915–1917 թուականներուն, երբ Խնուսէն, Մուշէն կամ Բասէնէն կը վերադառնայի Թիֆլիս, միշտ կը հիւրասիրուէի Թումանեանի տունը։

Մուշեղ Թումանեան 1915-ին քանի մը ամիս Բասէն եղաւ եւ դոր-ծակցեցաւ մեզի։ Այս պարագան աւելի ջերմութեամբ կը կապէր Թումա-նեանի ամբողջ ընտանիքը մեր խմբակին։

Իմ վրաս կը նայէր իբրեւ հեռու լեռներէն Թիֆլիս ինկած զաբիպ մարդու։ Լոռեցիի հոգիով գուրգուրանք ունէր ինծի հանդէպ, հայրական մտերմութեամբ շատ յաճախ կ'ըսէր.

– Կարօ ջան, հոգ մի անի, նորից կը բարձրանաս Ծովասար...

Եւ իրօք, 1917-ի գարնան մենք հասած էինք Ծովասար, Շատախ, Դերսիմ եւ Տրապիզոն։ Հայոց հոբիզոնը կը պայծառանար։ Խաչեալ հայ ժողովուրդը յարութիւն առած էր, հայրենիք կերտելու վճռականութեամբ։

digitised by A.R.A.R.@

1917-ի վերջերուն, ամուր ճակատները քայքայուեցան։ Բոլշեւիզմը կը պատդամէր. խաղաղութիւն՝ առանց պայմանի եւ զինուորները՝ դէպի տուն։

Մենք կը մտնէինք պատմական փոթորկալի նոր շրջան մը։ Հայը կը մնար միակը, իր սակաւ ուժերով պաշտպանելու Վանը, Մուշը, Խնուսը, Երզրումը, Երզնկան եւ Տրապիզոնը...

Այդ օրերուն եւ անկէ ետք մինչեւ 1920-ի վերջաւորութեան, ես ապիթ չունեցայ Թումանեանին հանդիպելու.

Եւ ահա 1921-ի փետրուարեան փոթորկալի ժամուն, երբ մենք հիւսիսէն խուժող բռնակալութեան դէմ կը կռուէինք, Թումանեան յայտնուեցաւ առաջաւոր ճակատին վրայ, ձիւներուն մէջ խրած սահնակի մը մէջ։ Սուխոյ ֆանտան էինք։ Կէս գիշերին ներկայացաւ ենթասպայ մը իր թիկնապահով եւ նամակ մը յանձնեց ինծի։ Ճերմակ դրօշակով Թումանեանը մինակը մնացած էր ձիւներուն մէջ եւ ձայն տուած մեր առաջաւոր պահակներուն։ Իբրեւ բանակցող կ'ուզէր ներկայանալ մեր կառավարութեան։

Անմիջապէս կարգադրեցի որ՝ քաղաքավարութեամբ Թումանեանը փոխադրեն մօտս։ Ճակատին հսկող զինուորները Թումանեանի աչքերը թաշկինակ մը կը կապէն եւ կրակի դիծը կ'անցընեն, միշտ այն մտահոգութեամբ, թէ թշնամին կրնայ ծանօթանալ մեր ճակատին բռնած դիրքերուն։ Զինուորները այսպէս կը գործադրեն իրենց տրուած պատուէրը քաղաքավարութեամբ։

Ձերմօրէն ընդունեցի Թումանեանը։ Համբուրուեցանք եւ թէյի նըստեցանք։ Այդ ցուրտին թէյն էր մեծագոյն նուէրը։

– Կարօ ջա՛ն, երբ լսեցի, թէ դու ես ճակատի պատասխանատուն, էլ չվախեցայ, երբ աչքերս կապեցին...

Բարի ժպիտը ծաւալած էր դէմքին։

Ցաղորդ առաւօտեան, երբ զինք ճամբու պիտի դնէի դէպի Երեւան, իրեն ցոյց տուի նոր հասնող վաշտերը, որոնք նոր կը հասնէին ճակատ։ Գիւղացի աշխատաւորներ էին իրենց պաշարի տոպրակով եւ զէնքով։ Այդ օր մօտ 2000 օժանդակ ուժեր կը հասնէին մեր դիրքերը։

Դարձաւ ինծի.

– Կարօ ջա՛ն, էս խոմ ամբողջ ժողովուրդն է, որ ոտքի ելած է։

Մենք բաժնուեցանք սրտակից բարեկամներու պէս, խաղաղութեան մաղթանքներով։

Ամէն ետք, ես այլեւս Թումանեանը չտեսայ, բայց անոր յիշատակը իբրեւ մեծ բանաստեղծի, բարութեան փիլիսոփայի, գործօն մարդու, բոլորին օգնութեան հասնող տրոփող սրտի, յաւէտ կը մնայ իմ յիշողութեան մէջ։

Կ. Ս.

digitised by A.R.A.R.@

ԼՈՌՈՒ ԼԵՌՆԵՐՈՒՄ

1.

Երբ Թումանեանը աշխարհում չկար՝
Լոռու վեհապանծ լեռները կային:

Նա գազա՞թն եղաւ ամէնից հսկայ՝
Լոռու լեռներում այս հեքիաթային:

Թէ փլուե՞ն Լոռու լեռնե՛րը անգամ՝
Նա ժպտալո՞ւ է հայոց աշխարհին:

2.

Կանգնել էր մի օր նա այս նո՛յն տեղում
Եւ նայել հայոց փառքի լեռներին.

Կանգնել է մի օր նա այս նո՛յն տեղում՝
Զափել անդո՞ւնդը հայոց վշտերի:

Հայոց վշտի լեռն իր սրտում գեղուն,
Սրտում անդո՛ւնդը հայոց վշտերի,

Արձանացել է նա այս նոյն տեղում՝
Պատուանդանին իր յաւերժ երգերի:

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ

Կանգնեց նա հասակով մէկ
Իմաստութեան պատուանդանին,
Ու շաղ տուեց աշխարհով մէկ
Հոգու գանձերն Հայաստանի:

Սրտում վէրքեր, շուրթին՝ երգեր,
Անցաւ երկու օրուայ ճամբան,
Արդ կանգնած է խրոխտ ու սէգ՝
Յաւերժութեան պատուանդանին:

ԱՐՇԱԼՈՅՍ ՍԱՐՈՅԵԱՆ

●

Թումանեանի պալատում
Ով որ էֆֆի չի նստել,
Նա չի տեսել դեռ խնդում,
Աշխարհ չի տեսել:

Թումանեանի պալատում
Կը գտնես, ո՞վ մարդ,
Անոյշ, Արփի-արքեցում,
Եւ վարդ, եւ նուարդ...:

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

Ապրող հայ մեծագոյն եւ ամէնէն ազնուական գրողն է Լ. Շանթ բանաստեղծը: Հայ Գրականութիւնը վիպասան չէ ունեցած: Ասիկա գէշ նոթ մը չէ: Շանթ ուրեմն՝ իր թատրերգութիւններուն ու նոյնիսկ իր վէպերուն մէջ բանաստեղծ կը մնայ: Շանթ մշտանորոգ է: Այսինքն միշտ քայլ մը կը բարձրանայ վեր: Հեգինակներ կան որ որոշ բարձրութեան մը հասնելէ յետոյ՝ կը քալեն անընդհատ հարթ մակերեսի մը վրայէն: Շանթ միշտ կը բարձրանայ: Ի զուր կ'ըսեն, թէ լաւագոյն գործը «Հին Աստուածներն է: «Թիկած թեղդի իշխանուհին» կառուցուածքով ու խոյանով անհամեմատ աւելի բարձր է առաջինէն:

Ու տակաւին Շանթ յառաջամարտիկ մըն է: Հայ թատրոնը իրմով իր բարձրութեան կը հասնի: Եթէ մեր ռավորական ուսօրեան է, որ բեմի վրայ պիտի տեսնենք՝ ի՞նչ է դերը հապա թատրոնին: Թատրոնին մէջ իրապաշտութիւնը խանութպանութիւն է: Համբեմ ձեզի նոր ժամանակի յառագոյն թատրերգակները, պիտի տեսնէք որ յաջողած են անոնք, որ ճշմարտութիւն մը ունեցած են ամբոխին տալու. — Իպսէն, Մեթէրլինկ, Փիրանտէլլո՝ առաջին գծի վրայ, եւ Գաբրայլ, Հ. Պէրնշթայն, Կ. Հաուպտման՝ երկրորդ գծի վրայ՝ մերժած են իրապաշտութիւնը թատրոնին մէջ: Այսօր մենք կը մերժենք զայն՝ ամէն տեսակ արձակի մէջ: Կից տուէք փոքր արձանները: Շանթի թատրոնը ապագային է: Շերվանզադէինը անցեալին էր:

Ու վերջապէս չէ՞ք նկատած, որ Շանթ կը կենայ մեր ժողովուրդի երկու թեւերուն հանգոյցին վրայ: Մեր գրագէտներէն ոմանք արեւմտահայ են (Զադէ Եսայեան, Վահան Թէքէեան), ուրիշներ արեւելահայ (Թումանեան, Իսահակեան). Շանթ Հայ է պարզապէս: Ցկարծէք որ պզտիկ առաքինութիւն է ասիկա: Մեր յեղափոխական ու քաղաքական գործիչներէն շատերը ունին այդ առաքինութիւնը ու եթէ կը փնտռէք Հ. Ց. Դաշնակցութեան մեծիմաստ ու ազուոր հմայքին պատճառը, ես կ'ըսեմ որ Հ. Ց. Դաշնակցութիւնը Հայ էր պարզապէս:

ՎԱՀԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

digitised by A.R.A.R.@

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՇԱՆԹԻ ՆԵՐՔԻՆ ՏԻՍԻՓԼԻՆԸ

Մանաթացնել Շանթը «Պագին»-ի ընթերցողներուն, յօդուածով մը, այն ալ ծննդեան հարիւրամեակի մը պարտադիր առիթով, անկարելի աշխատանք մըն է։ Հարկադրաբար զանց պիտի առնուին բազմաթիւ իրողութիւններ, մանրամասնութիւններ, իր գրականութենէն դուրս բերուելիք վկայութիւններ, որոնք պիտի կարենային ամբողջացնել Շանթի կերպարը։ Պիտի մնայ ուրուագծային բան մը, հպանցիկ ակնարկ մը միայն։

Մինչեւ անգամ պարզ ոգեկոչումի մը համար դիւրամատչելի անձնաւորութիւն մը չէ Շանթ. ո՞ր մէկը ոգեկոչել, ուսուցի՞չը, տնօրէ՞նը, դաստիարա՞կը, հոգեբա՞նը, թատերագի՞րը, հանրային դէ՞մքը…։ Խօսիլ իր կամքի՞ մասին, աշխատանքի կարողութեա՞ն մասին, ակզբունքներո՞ւն մասին… իսկ Մարդը…։

Կամք, աշխատանք ու վճռականութիւն արդիւնքներ էին, եւ ոչ թէ Շանթի կերպարը գծող առանձնայատկութիւններ, ինչպէս յաճախ կը կարծուի ու կը յիշատակուի։ Սկզբնական պատճառը կը մնայ իր միտքը։

Ուժեղը, իր մէջ, մտածումի մարդն էր։ Մտածումը հասցուցած էր զինք կեանքի դատարկութեան եւ ունայնութեան ըմբռնումին. «Փորեր եմ անընդհատ, – կ'ըսէր իր ծգնաւորը – ծնած օրէս մինչեւ վերջին վայրկեանը, փորեր եմ ու պահպաներ, որ այդչափ աշխատանքս չկորչի. հիմա ալ կը պահպանեմ՝ որովհետեւ ի՛մ փորածս է, միակ բանը որ ի՛մս է, իմ ընտրեցածս։ Միակ բանը, ա՜յ, այդ դատարկ փոսը, որ ինչքան փորես, այնքան աւելի դատարկ կը դառնայ…»։

Ամէն մէկուն չնորհուած դատարկ փոս մըն է կեանքը, զոր իւրաքանչիւրը կը լեցնէ իր նախասիրած բաներով։ Կարելի է լեցնել երազներով, յոյսերով, կարօտներով, արցունքով, նորի սպասումներով … երազներ ամէնքն ալ. կամ յոյզերով, իզձերով, սէրերով, գրգիռներով … ինչ՛ք անուշ երազներ. հաւատքով դէպի ուժի ամենազօրութիւնը, կամքով, կամքի բերած պայքարներով, այդ պայքարներէն բխած հարստութեամբ, իմաստութեամբ… բի՛ւր պատրանք։ Ինչ՛ք, ինչ՛ք երազներ…։

Դատարկութիւնը լեցնելու փորձեր կարելի է ընել. լեցնել՝ կարելի չէ տակայն։ Ի՞նչ կը մնայ ուրեմն իմաստաւորելու համար սեփական կեանքը. կը մնայ մշտական ձգտումը դէպի բարձրը, դէպի գեղեցիկը։

Շանթի կեանքը այդ մշտական ձգտումին մարմնացումն է, օրինակն է՝ ժամանակակից սերունդներուն, իր աշակերտներուն եւ գալիք սերունդներուն համար։

Տարբեր են սակայն առօրեայ կեանքի պահանջներն ու պարտադրանքները։ Տեւական ճնշում մըն է առօրեան, դէպի վար քաշող ծանրութիւն մը, Արտաւազդներ չդիմայող ուժ մը, թռիչքներ սանձող բան մը. իսկ Շանթ հասած էր այն եզրակացութեան, թէ՝ «Սանձեր ծամողը՝ գետնէն գացողներն են. վերէն խոյացողը սանձի չի գար»։

digitised by A.R.A.R.@

Առօրեայ կեանքը ապրելով հանդերձ, բարձունքներէն կարենալ խոյանալու համար, մարդուն ունեցած կարողութիւնները ինքնին բաւական չեն. անոնց հզօրացումը, բազմապատկո՛ւմը պէտք է։ Շանթի միտքը այդ հզօրացումը ձեռք բերած էր եւ վերածած ներքին տիսիփլինի, վճռական կամքը այդ ներքին տիսիփլինին արտաքին արտայայտութիւնն էր միայն։

Այդ կարգապահութեան արդիւնքն էր իր կանոնաւոր աշխատանքի անսպառ կարողութիւնը։ Կանոնաւոր եւ որոշ ժամերու պիտի արթննար, պիտի հաղուէր իսկոյն եւ աշխատանքի նստէր։ Աշխատանքը կիրքի վերածուած էր իր մէջ. աշխատանքը՝ կեանք ըսել էր իրեն համար։ Սակայն ոչ թէ աշխատանքին արտաքին ձեւը, իրրեւ ձեւական պարտադրանք, այլ իրրեւ ներքին համոզմանց արդիւնք, ներքին պահանջներու սիրով ընդառաջումին համար։ Աշխատանքը արդէն արդիւնաւոր կը դառնայ միայն սիրով կատարուելու պարագային։ Աշխատանքը այլեւս հաճոյք էր իրեն համար, ինքնակիրթականացման ճամբան էր։

Կամքն ու աշխատանքը միացած էին անսակարկելի սկզբունքներու։ Սկզբունք բառը արդէն, իրականին մէջ, չի կրնար զուգահեռ ընթանալ սակարկութիւն բառին հետ. անիկա կը պարունակէ արդէն անշեղի, ամբողջականի, անդիմելիի գաղափարը։

Կարելի է, կեանքի այս կամ այն պարտադրանքին տակ, ժամանակաւորապէս, ուրիշներուն համար, առաջ շքշել սկզբունքը. սակայն անսկարկել անոնց շուրջ կարելի չէ. կարելի չէր մանաւանդ Շանթի համար, մանաւանդ իր անձին հետ կապուած հարցերու համար։ Սկզբունքները խաղալիքի նման ձեռքին մէջ դարձնելը, «կեանքին յարմարելու» կեղծ փիլիսոփայութիւն մը զէնք ըրած ձեռքին, զանոնք անդադար փոխելն ու փոփոխելը, կը նշանակէ մերժել հիմնականը սկզբունքներուն՝ մարդուն մարդ ըլլալուն, մարդ ըլլալու տեւական ձգտումի անհրաժեշտութեան։

Պարտականութիւնները անշեղ կերպով կատարելը սկզբունք մըն էր իրեն համար, կը պահանջէր ուրիշներէն, կը գործադրէր ինք՝ անշեղ կերպով։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներուն էր, ռատիոներէն տեղեկացած էինք, թէ Շանթի անդրանիկ որդին՝ Վիզէն, օդանաւային ռմբակոծման զոհ գացած էր Հռոմի մէջ։ Բարեկամներ այցելած էին իրեն, տունը. վիտէինք թէ տեղեկացած էր իր զաւկի մահուան։ Յաջորդ օր Կիրակի չէր, գպրոց կար, ճեմարանը բաց պիտի ըլլար։ Տխուր էին թէ՛ աշակերտները եւ թէ մանաւանդ իր պաշտօնակիցները։ Որդեկորոյս հօր մը ցաւը վիտէինք, թէ կ՚ապրէր եւ բանական պիտի համարէինք, եթէ այդ առաւօտ բացակայէր տնօրէնի իր պարտականութենէն։ Յաջորդ առաւօտ, սակայն, Պէյրութի Ուատի Ապու Ճէմիլ թաղին մէջ գտնուող այն օրերուն ճեմարանի սանդուխներէն, ժամը ճիշդ ութին քառորդ մնացած, ինչպէս ամէն առաւօտ, Շանթ կը բարձրանար հանդարտ քայլերով, եւ առանց աջ ու ձախ նայելու, ինչպէս ամէն առաւօտ, կը մտնէր տեսչարան եւ զանգը կը տրուէր ճիշդ ժամուն, ու դասաւանդութիւնները կը սկսէին, ինչպէս ամէն առաւօտ։ Կեանքն իր ճամբով մտնն իր ճամբով տեսութիւնը չէր որ կը գործադրէր Շանթ, այլ պարտականութիւնը լրիւ կատարելու սկզբունքը։ Թերեւս, ոմանց, անմարդկայնն թուի այսքան կամքն ու կարգապահութիւնը. այդպէս մտածողներ կային նաեւ այդ օրերուն, կարգապահութիւնը, սակայն, ամբողջական է, կամ չէ. եւ երբ կարգապահութիւն կամ պարտականութեան լրիւ կատարումը պիտի պահանջես ուրիշներէն,

digitised by A.R.A.R.@

օրինակը պիտի տաս ինքդ. ա՛յս էր Շանթի անսակարկելի սկզբունքներէն մին։

Վճռականութիւն, կամք, աշխատանք, սկզբունքներ, Շանթ տրամագրած էր երկու հիմնական գաղափարներու՝ մարդ անհատի բարձրացման, ազնուացման, մարդացման գաղափարը եւ իր ժողովուրդի հոգեկան, ժչկութային բարձրացման, ազնուացման գաղափարը։ Եւ որովհետեւ համոզուած էր, թէ ազգ մը, նման հոլովոյթ չի կրնար ապահովել ինքն իրեն համար, եթէ տէրը չէ իր ազգային անկախութեան, տեւարար գաղափարախօսը եղաւ անկախութեան եւ ազատութեան։ Ոչ մէկ բան կրցաւ տկարացնել իր համոզումը, նուազեցնել իր ձգտումը. անհեղիսալի պահանջ մը կը համարէր անկախութեան ձգտումը հայ ժողովուրդին համար, ինչպէս բոլոր անազատ ժողովուրդներուն համար։

Անհատի ազնուացման մասնաւորումով՝ Շանթ եղաւ նաեւ մեծ դասախօսակ հրապարակագիր, դասախօսակ դրագէտ էր նոյն տաեն։ Իր թատրերգութիւններէն ամէն մէկը ազնուացնող, մտածել տուող, բարձրացնող բան մը ունի իր մէջ։

Կը հաւատար մարդոց մեծ մասին բարեխղճութեան, գիտակցութեան, ներքին լաւութեան։ Կը վստահէր այդ հիմնական լաւին։ Այդ վստահութեան վրայ կ'ուզէր կերտել փոխադարձ յարաբերութիւնները, գիտնալով որ մարդիկ, երեխաներու նման (կը մեծնա՞ն բնաւ մարդիկ...) միշտ կը ձգտին արժանի ըլլալ իրենց հանդէպ ցոյց տրուած վստահութեան, որով՝ անպայման կը բարձրանան, արժանի ըլլալու համար անոր։ Անոնք, որ կարդացած են Շահէ Սրապեանի անձնական յուշը, գրի առնուած 1954–ին եւ լոյս տեսած Ակօսի 1959–ի 10–րդ թիւին մէջ, այդ վարուելակերպին լաւագոյն օրինակը ունին այնտեղ։

Շանթի այդ մօտեցումն էր, որ յարգանքի մթնոլորտ մը կ'առաջացնէր իր չորս կողմը, յարգանք, որ վախով չէ որ կը պայմանաւորուէր, այլ սիրով։ Աշակերտ կամ ուսուցիչ, հայ թէ օտար կը սիրէին ձեմարանը, մթնոլորտը անոր. ամէն մէկը իր ոեփական տունը կը համարէր զայն կամ տաճարը. անոր յաջողութիւններով կը հրճուէր, դժուարութիւններով կը տառապէր։

Քիչ չեղան Հայ ձեմարանի դժուարութիւնները՝ տնտեսական, ՀԸԲ–ի ապատի վերաբերումի...։ Շանթի անյողդողդ կամքն ու հաւատքը, իր առաջացուցած սէրը բոլորել տուաւ իր շուրջ ուսուցչական կազմը եւ դիմագրաւել տուաւ նիւթական եւ բարոյական դժուարութիւնները, բոլորի անգնահատելի զոհաբերութեամբ ան փրկեց ձեմարանը փակուելու վտանգէն։

Ուղղամիտ, պարկեշտ, չիտակ կեցուածք՝ բոլոր հարցերու կապակցութեամբ. ահա՛ Շանթը։

Ոչ մէկ տուրք վճարեց, ոչ ոքի, ոչ մէկ օր,

Զօրաւոր անհատականութիւն մըն էր եւ կը ձգտէր զօրաւոր անհատականութեան տէր մարդիկ պատրաստել. պայքարի, հաւատքի, գործի ընդունակ, գաղափարի եւ սկզբունքի մարդիկ։ Գաղափարապաշտ մարդիկ կ'ուզէր, սակայն ոչ երազատեսներ. իրատես մարդիկ՝ սակայն ոչ նիւթապաշտներ։

Մտքի եւ հոգիի համադրութիւնը կը փնտռէր։ Թռիչք ունէին ե՛ւ իր մտքը, ե՛ւ իր հոգին։ Բարձր էր ու միշտ բարձր մնաց պղտիկ բաներէն,

digitised by A.R.A.R.@

պղտիկ ապրումներէն, պղտիկ մտածումներէն։ Շանթի հոգեկան աշխարհը մնաց անկաշկանդ, կորովի, նոյնիսկ երբ մարմինը հիւծեցաւ, քայքայուեցաւ։ Եղաւ ազատ, հպարտ ու անվախ նաեւ այն օրերուն եւ տուրք չվճարեց ոչ երկրայինին, ոչ երկնայինին։

Այդ բարձրութեանց վրայ, սովորական մահկանացուներուս համար, օդը չատ նօսր է եւ սարսափելի ցուրտ կ'ընէ. որով՝ Շանթի հետ յարաբերողներուն մեծ մասը կը ստանար անմատչելիութեան կամ վանողականութեան ապրումը։ Առոր համար ալ, Շանթ չոր, պաշտօնական կոչուեցաւ սմանց կողմէ։

Շանթ եղաւ չոր ու պաշտօնական, ու դիտակցաբար, միայն անոնց հետ, որոնք քծնանք ու շողոքորթութիւն փնտռեցին, կամ ապասեցին, որ Շանթ, իրենց այս կամ այն արժանիքին համար տուրքեր վճարէ։

Շանթ կ'ատէր սնոպիզմը. իր պահած հեռաւորութիւնը չէր կար մեծամտութենէ, ցուցական չէր. արդիւնք էր կամքի, դատաբարկութեան եւ կը ծառայէր միմիայն մարդկային խոցելիութիւնը նուազագոյնին իջեցնելու, դաղափարական, սկզբունքային բարձունքները անառիկ պահելու։

Հպարտ՝ այո. հպարտ էր, արժանաւոր ժողովուրդի մը արժանաւոր դաւակին հպարտութեամբ։ Կ'ուզէր որ ամէնքը գիտակցին իրենց ժողովուրդի արժանիքներուն եւ ծառայեն անոր. ծառային սակայն ճակատաբաց, գլուխը բարձր. հպարտ՝ անցեալի հարստութիւններով, հպարտ՝ ներկայի թափուած ճիգերով եւ վաղուայ կարելիութիւններով։

Ստորակայութեան զգացումներէ տառապողները միայն չեն կրնար ըմբռնել այս զգայնութիւնը եւ յանախ կը վերագրեն զայն գերակայութեան ապրումի մը։ Հպարտութիւն եւ գոռոզութիւն նոյն բաները չեն. գոռոզը հմայել չի կրնար. Շանթ կը հմայէր։

Անգամ մը որ համոզում գոյացնէր գիմացինի մտային ու հոգեկան պարկեշտութեան մասին, Շանթ կը դառնար վերին աստիճանի ընկերական, մանկական կոչուելու չափ միամիտ ու խանդավառուող տրամադրութիւններու տէր, բարի ժպիտով հարուստ, մտերիմ նոյնիսկ։ Վայ որ նշմարէր նուազագոյն անփափկանկատ արտայայտութիւնը... իսկոյն կը փակուէին իր հոգիին դռունները ու Շանթ կը սրանար հեռու շրջապատէն, կը դառնար անմատչելի...։

Հակապիր ուժերու մշտական պայքար մըն է կեանքը, մշտական պայքար մըն էր նաեւ Շանթի ներաշխարհին մէջ։ Հոն միշտ ներկայ եղան Աբեղան ու Վանահայրը. միշտ ալ, սակայն, վերջին հաշուով գերակշռողը հանդիսացած է Վանահայրը, ու Շանթ, իր բարձունքէն խօսած է իրեն ժամանակակից ու գալիք բոլոր արեղաներուն, բոլոր վանականներուն հետ, Վանահօր բերնով. «Իմ փնտռածս աշխատանքն է, ներքին անդուլ, անկաշկանդ դրսնումը, ներքին անվերջ նուաճումները բարձունքէ բարձունք, պարիսպէ պարիսպ, տարակոյսներու անդունդներուն վրայէն, եղէգով ու անկումներով. անդադար խոյանք մը դէպի ճշմարտութիւնը։ Գացէ՛ք, գացէ՛ք ներս, դուք ձեր եկեղեցին, ես ալ երբեմ իմ եկեղեցիս. բայց այս անգամ ե՛ս, միա՛յն ես, եւ կերտուածք մը, որ վայել բլլայ ի՛մ Աստծուս բնակութեանը, որուն կամարներուն տակ իմ խնկելիք աղօթքիս ո՛չ մէկ բառը կեղծ չհնչէ, ո՛չ մէկ բառի արձագանգը դատարկ չհնչէ...»։

Բ. Փ.

digitised by A.R.A.R.@

ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻ

ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

—...«Ա՛խ, տրուէք ինձ ո՛ւժ երկնայինն,
Ո՛ւժ՝ անսահման եւ անզուսպ,
Միտքս հոլու նորա թափին՝
Երկի՞ն թրռչի քաղ ընդհուպ։

Հո՛ն, հոծ ամպի կաթուանի մէջ՝
Նլեմոդրիկ ո՛ւժ դարձած,
Այնպէ՛ս ադմուկ ծրգէ ու վէճ
Որ դողրդի՛ վիրն ու ցած։

Մտքիս ու այդ սեւ ամպերուն՝
Մաքառումէն սոսկալի
Քաղ լո՛յս ծրնի մութ շերտերուն
Ու վայրկեան մը թաղ փայլի։

Երբ նա մարի, ես դառնամ ՇԱՆԹ
Ու ամպերէն դուրս սողամ.
Մութ երկնի տակ անհոգամայք՝
Վաղեմ փառքո՛վ անսահման...»։

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

digitised by A.R.A.R.@

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

ԻԲՐԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Լեւոն Շանթի ծննդեան հարիւրամեակը կ'ընդլրկէ քսանհրորդ դարու 69 տարիները, երբ մեծ թատերագիրը արդէն հռչակուած անուն մըն էր։ Այդ տարիներուն ամբողջ հայութիւնը վարժուած էր ամէն տեղ զգալ Լ. Շանթի գոյութիւնը։ Ընտելացած էր հայ միտքը այդ հեղինակի հաստատուն գոյութեան, աւելի շատ անունը լսելով, քան երկերը կարդալով։ Մանկավարժ ուսուցիչ եւ դասագրքերու հեղինակ, նորահաս սերունդներուն հետ կը հաղորդակցէր, եւ սերունդ սերունդի ետեւէ՝ անոր անունն ու հմայքը կը տարածէին հայութեան երկու հատուածներուն մէջ։ Իսկ իբրեւ թատերագիր աւելի հռչակուած անուն մը եղաւ բեմերէն եւ օրաթերթերէն։ Սակայն Լ. Շանթը երիտասարդ բանաստեղծի տասնամեակ մը կը դրաւէ 19-րդ դարու վերջաւորութեան (1890-1900 թ.)։ Այս տասնամեակին բանաստեղծ Շանթի գործերը անմատչելի մնացին լայն խաւի ընթերցողներուն։ Թատերագրի հռչակը շուքի մէջ կը պահէր բանաստեղծը։

Լ. Շանթը մտաւորականութեան, ուսումնական կեանքով ապրողներուն հեղինակը եղաւ։ Ու այսօր, երբ իր ծննդեան հարիւրամեակը կ'ոգեկոչենք, կ'անդրադառնանք վաթսուն տարիներու անընդհատ ստեղծագործող գրագէտին եւ տեւապէս աշխատող մանկավարժին, կը զգանք այն մեծ դատարկութիւնը, որ անոր մահով ստեղծուած է հայութեան մտքին եւ սրտին մէջ։

Լեւոն Շանթի գործերը, այսուհետեւ, կը հաւատամ թէ աւելի պիտի փնտռուին եւ իր երկերը տեղ պիտի գրաւեն հայ ժողովուրդի լայն խաւերու հոգիին մէջ, մանաւանդ մտածող եւ որոնող սերունդներու հոգիին մէջ։

Գնահատութեան եւ յարգանքի այս մթնոլորտին մէջ կ'ուզենք քանի մը բնորոշիչ կողմերը վեր հանել Լ. Շանթին՝ իբրեւ բանաստեղծ։

digitised by A.R.A.R.@

⁂

Լ. Շանթի երեւումը Պոլսոյ թերթերուն մէջ՝ նոր եւ թարմ շունչ մը կը բերէր մեր գրական շարժումին։ Առաջին չորս տարիներուն, 1891–1894, Լ. Շանթ կը յայտնուէր իբրեւ բանաստեղծ եւ կը գնահատուէր իբրեւ բանաստեղծ։

Լերան Աղջիկը եւ Երազ Օրերը գրուած եւ լոյս ընծայուած են 1892–ին, իսկ իր բանաստեղծութիւնները 1891–1894–ի շրջանին գրուած եւ հրատարակուած են գրական թերթերուն մէջ։

Լերան Աղջիկը վիպերգը բաւական եղու վաւերական բանաստեղծ մը տեսնելու Լ. Շանթին մէջ։ Այս գրուածքով երիտասարդ բանաստեղծը հայոց լեռնաշխարհի եւ բնութեան դեղեցիկ նկարագրութեան հետ՝ թարմ կեանքի մը իրական սիրոյ երգը կը հնչեցնէր, եւ այդ երգի եղանակը, որ կու գար հայ լեռներէն ու ձորերէն՝ աղուոր կը հնչէր Պոլսոյ մէջ։

Լեռնե՛ր, սէ՛գ լեռներ, ես կը սիրեմ ձեզ,
Կը սիրեմ բուրը ու անզուսպ սիրով,
Հպարտ գագաթնիդ՝ հսկաներ կարծես՝
Ո՛ւժ կը ներշնչեն, թարմութի՛ւն, կորո՛վ։

Սէգ լեռները ո՛չ միայն բանաստեղծին ուժ, թարմութիւն եւ կորով կը ներշնչէին, այլեւ կը վարակէին Պոլսոյ մթնոլորտը հայկական լեռներու սիրով, եւ հեշտանքով մտիկ կ'ընէին այդ լեռներուն մէջ հնչած պատանեկան սիրոյ առաջին երգը։ Լերան Աղջիկը վիպերգի նախերգանքը դասագրքերու մէջ կը տպուէր եւ Լեւոն Շանթ արդէն սիրուած բանաստեղծ մը էր։

Երազ Օրերը արձակ բանաստեղծութիւն մըն է, յուշերգութիւն մը պատանեկան սիրոյ եւ մտածումներու, նոյնպէս առնուած հայկական լեռնաշխարհի շրջանակին մէջ։ Հարազատ բնութիւնը իր գեղեցկութեամբ, եւ հարազատ տիպարները իրենց բաղձանքներով եւ մտածումներով՝ թարմութիւն եւ նորութիւն էին Պոլսոյ մէջ զարգացած գրականութեան բեմին վրայ, ուր երբեմն գաւառի գրականութիւնը կու գար նոր գոյն եւ աւիւն տալու մեր իրապաշտ գրական շարժումին։

Իրապաշտ գրական շարժման մէջ, Լ. Շանթ իրապաշտ բանաստեղծութեան յառաջապահը հանդիսացաւ։ Վիպապաշտ բանաստեղծութիւնը որ 1840–էն կ'երկարածգուէր մինչեւ 1890 թուականը՝ հռետորական եւ քարոզչական բնոյթ ունէր, եւ հեռաւոր ու անշօշափելի հայրենասիրութեան մը, հին փառքերու եւ վիշտերու հառաչները կը բերէր հայութեան, առանց դեղարուեստական խոր ապրումի եւ ստեղծագործութեան։ Այս յինամիսկին միայն Մ. Պէշիկթաշլեանն ու Պետրոս Դուրեանը կը հառաջայթեն իսկական բանաստեղծի տաղանդով։ Երբ 1890–ական թուականներուն մեր գրականութիւնը ինքզինքը կը գտնէ իրապաշտ շարժումով մը, Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւններու հաւաքածոն կը հրատարակուի երիտասարդ Ա. Ջալանեանի կողմէ, նպաստելու համար նոր եւ իրաւ բանաստեղծութեան մը զարգացման։

Ահա, այդ օրերուն կը զուգադիպի երիտասարդ Շանթի յայտնութիւնը։ Լ. Շանթի բանաստեղծութիւնները մեր մեծ իրապաշտ արձակագիրներու կողքին, իրապաշտ բանաստեղծութեան յաղթանակը նկատուեցաւ։

digitised by A.R.A.R.@

Իրօք, Լ. Շանթ հրապարակ կու գար իր հիմնական նկարագրով, որ իրապաշտութիւնն էր։ Կը գրէր հարազատ չունչով եւ ներքին պահանջով, ու բանաստեղծութեան ընձեռած առաւելութիւններէն օգտուելով, իրապաշտութեան կը միացնէր պատրանքն ու երազը, մէջտ իրական կեանքի մը զուգահեռ։

Հարազատութիւնն ու անմիջականութիւնը ուղղակի ճանապարհով իր երգերը կը տանէին գրաքէրներու սրտին եւ մտքին։ Սիրտն ու միտքը միաձուլուած կը տեսնենք իր բանաստեղծութիւններուն մէջ եւ այս այլազանութիւնը կը գոհացնէր նոյնիսկ խստապահանջ եւ բծախնդիր ընթերցողները։

Հարազատ եւ իրաւ գրականութեան մը բանաձեւումը մենք կը տեսնենք իր հետեւեալ բանաստեղծութեան մէջ.

«Ինչո՞ւ կը գրես» հարց կու տան ինծի.
Ու ես զարմացած կը նայիմ իրենց։
Ինչո՞ւ կը գոռայ թափովն ադիւծի
Ալեկոծ ծովը խոժոռ ժայռին մերձ.
Կամ հեզամրմունջ վտակը ինչո՞ւ
Իր քարմ կարկաչը կ'ոլլերէ անուշ...
Իսկ դո՞ւն. ֆու վրայ հարցեր թափեցին,
Երբ խուռն հիւսկը խինդ ու կսկիծի
Երգի մը փարած սրտէդ դուրս յորդեց։

Լ. Շանթի առաջին տարիներու բանաստեղծութիւնները հոգեկան պահանջի մը արդիւնքն էին եւ հեզամրմունջ վտակի մը թարմ կարկաչը։ Այս հարազատութիւնը մաշած եւ քորքոսած անցեալի բանաստեղծութեան տեղը կը գրաւէր՝ գնահատական ոգեղէններով։

Ինքնարուխ այս քնարերգութիւնը, իրապաշտ արձակի կողքին, հիշէ նոյն օրերուն՝ արձագանգ կ'ըլլար հայ պանդուխտներու յուզիչ կեանքին, եւ հայաստանցի մարդու խոր վիշտով կը համակէր ընթերցողը։

Դասագրքերու էջերէն շատերը ծանօթ են Գիշերապահ եւ Մրտոյի Թռռը գողտրիկ բանաստեղծութիւններուն։

Գիշեր է. տա՜նկ. հսկա՛յ ժամացոյց.
Հանգիստ է չորս դին, կը ննջեն բոլոր.
Միայն ինքն է որ՝ հանգոյցէ հանգոյց՝
Փոզոցներ կ'անցնի լուռ, ֆայլամոլոր։

Պանդուխտ հայն է այս գիշերապահը, որ Պոլսոյ փողոցները կը շափէ գիշերուան լռութեան մէջ եւ միտքը կ'երթայ ղէպի հայրենի տունը, ուր հանին հեքիաթ կը պատմէ տղոց, որոնք վերացումով մտիկ կ'ընեն անոր վէպերը.

Եւ հանին ինքն ալ ներշնչուած արդէն՝
Մեռի ուժը կը պատմէ տղոց,
Երբ յանկարծ բուքը տնակի երդէն
Այլանդակ ձայնով կը հանէ հոգոց։

digitised by A.R.A.R.@

Բայց պանդուխտը Պոլսոյ ցուրտ իրականութեան մէջն է.

Եւ ահա՛... տա՛նկ, տա՛նկ· խորհող ժամացոյց,

խորհող ժամացոյցի այս տա՛նկ, տա՛նկը կ'երթար բազմութիւններու սրտերն ներս արձագանգելու խոր վիշտով եւ հեռաւոր մտածումներով։

Պանդուխտներու կեանքը մէկ սրտառուչ երեան էր ամբողջ հայութեան։ Այդ տարիներուն Մասիսի մէջ հրատարակուիլ սկսած էին Հրանդի Պանդուխտի նամակները։ Հայ գրականութիւնն հակում ցոյց կու տար աւելի ջերմօրէն արտայայտուիլ երկրի հայութեան եւ երկրէն հեռացած պանդուխտներու մասին։ Լ. Շանթն ալ այդ պահը կը պատկերացնէ իր Մրտոյի Թոռը բանաստեղծութեան մէջ։

Հին խաչ մը մէջէն, զոյգ մը կեղտոտ մում,
երկու խեղճ տէրտէր, ամբողջ օրը ծոմ,
Ասոնց հետքով ալ չորս պանդուխտ խեղճուկ՝
Առեր կը տանին դագաղ մը անշուք...

Բանաստեղծը կը հարցնէ թէ՝ «Ո՞վ է այդ դժբախտ հանգուցեալն անտէր, *մէկը կ'ըսէ·* «Պեհեար մ'է», *միւսը՝* «Դրսեցի մըն է»·

«Մրտոյի թո՛ռն է», հեծեց խոկալէն
Հուժկու համալ մը իր բեռան տակէն։

Այս տողերէն յետոյ սրտայոյզ եւ իրաւ զեղումն է «բանաստեղծի հոգիէն փրթած», որ Հայաստանի արցունքը կը քամէ Մրտոյի Թոռան համար, որ պանդխտութեան մէջ լացող մ'իսկ չունէր իր վրան։

Մրտոյի թո՛ռը, ո՞վ թշուառ Մրտոս,
Գիտե՞ս ի՛նչ սեւ գոյժ պիտ' լսես մօտոյ...

Ու ամէնէն վերջը·

Արդ խոր կը ննջէ անյոյզ եւ անցաւ·
Իսկ կարիճին հետ օձախ մ'ալ անցաւ...

Այս խոր եւ իրաւ վիշտի արտայայտիչը կ'ըլլար Լ. Շանթ նոր բանաստեղծութեան մէջ եւ նոյն օրերուն կը դառնար դասական հեղինակ մը։

Բանաստեղծութեան այն փունջը, որ Լ. Շանթ կը բերէր 1891–1895-ի գրականութեան, ուշագրաւ էր իր այլազանութեամբ· ինչ որ ցոյց կու տար, թէ բազմալաբ թրթռացումներ ունէր բանաստեղծին սիրտը։ Պոլսոյ մթնաւայրը իր դեղեցիկ բնութեամբ եւ կենսուրախ ժողովուրդով մթնոլորտ ներշնչած է բանաստեղծ հոգիները։

Կենսուրախ քերթուած մըն է Անուշ հովիկը, *որ սիրուած երգն եղաւ Պոլսոյ մէջ եւ յետոյ երգուեցաւ ամէն տեղ։*

Ահա՛ եկաւ լուսինն արծաթ
Մութ ամպերու ստուերէն
Ահա՛ նուագն ալ գեղազարդ
Մեր դրացի ժայռերէն։

digitised by A.R.A.R.@

Անո՛ւշ հովիկ,
Փչէ՛ յուշիկ.
Ու քեր ինծի
Թիւր ժիր ալիք:

Լ. Շանթի աշխոյժ կեանքի մէկ թրթռացումն է այս երգը, որմէ յետոյ ամբողջ յիսնամեակ մը պիտի ապրէր, գործէր եւ երգէր այս վաստակաւոր վարպետը:

Միեւնոյն ատեն մտածող Լ. Շանթը, որ իր լիալիր կեանքի մէջ տեսանք, կը տեսնենք իր բանաստեղծութիւններուն մէջ, որոնք գրուած են իր մահէն 55–60 տարի առաջ: Մահուան մասին հեղինակին խորհրդածութիւնը յատկանշական նախագիծ մըն է իր հետագայ ստեղծագործութիւններու տեսակէտէն:

Հա՛, կը մեռնիմ դեռ չապրած,
Մինչ գարծ տեսնել կ'երազեմ,
Մինչ մտքերս հրահրած,
Կեանքին գիրկը կը վազեմ:

Չէ՛, չկարծեմ կը վախնամ
Կեանքի վերջին այս խաղէն:
Ադ մեր երկն է, ի՞նչ վախնամ
Զգայութեան դռներէն:

Բայց դեռ շուտ է, շուտ, հոգի՛ս,
Թարմ արիւնս քոց է դեռ,
Ու անծանօթ է սրտիս
Անկարելին, վախն ու հեռ:

Մահուան յանախանքն միշտ ալ կայ երիտասարդ հոգիներուն մօտ: Լ. Շանթ մահէն չի վախնար: Լաւատես մըն է եւ կեանքի ու գրականութեան մէջ կը նետուի իր «թարմ արիւնով» որ «քոց է դեռ». անոր սրտին անծանօթ էին, ու անծանօթ մնացին՝ անկարելին, վախն ու հեռը: Ինչ որ գրած էր 1894–ին Մահը բանաստեղծութեան մէջ, այդպէս ալ եղաւ իր վաթսունամեայ ստեղծագործութիւններու ընթացքին: Միշտ անկարելին արհամարհեց եւ վերելք մը եղաւ իր կեանքը:

Գիտեմ, վարէն այն վարանոտ
Խելօք մարդոց երամը ստուար
«Ի՞նչ գարծ ունի այդ խելը հոդ»:
Պիտի ըսեն, նային իրար:

Եւ թո՛ղ նային, հեգնեն ալ թո՛ղ
Խելօք ծաղրովն իրենց անհամ,
Էհէ՛յ, միշտ վեր ես սրտադող,
Միշտ վե՛ր կ'ուզեմ որ խոյանամ:

Երիտասարդ բանաստեղծը իր մէջ կը զգար վեր խոյանալու հանդը եւ այդ խոյանքին արդիւնքն է այն գրական մեծ վաստակը, որ Լ. Շանթ կը թողու հայ գրականութեան:

digitised by A.R.A.R.@

Իրրեւ գաստիարակ մեծ տեղ մը կը գրաւէ Լ. Շանթ մեր իրականութեան մէջ։ Վաթսուն տարի անընդհատ գործող մանկավարժի հոգին մենք կը գտնենք իր երգ բանաստեղծութեան մէջ։

Երգ ճիշդ է, որ մեռնիմ ալ
Պիտի ձգենիմ ու երթանիմ,
Լիեմ հոգին, խիղճն ու լալ,
Ե՛ւ մարմինը, ե՛ւ այս կեանքիս,
Կ'ուզենայի, որ կռուէս
Զկշտացած, ազնիւ դեռ,
Դեռ հոգիս միշտ թարմ ու վէս,
Մեծ ոչինչին մէջ կաթէր։

Կաթիլ մը ոչինչին եւ ունայնութեան մէջ կաթեցնելու, սիրելու եւ ապրելու հրճուանքին հետ։ Այդ ստեղծագործող կաթիլով կ'ուզէր մարդը կերտել, ազատ մարդը գալիք մեծութիւններուն համար։

Ե՛ւ ցիգերս, թէ ինչպէս
Մարդը նորել կ'երազեմ
Ու բարձրացման ծարաւէս
Անյայտին դէմ կը վազեմ.
Եւ հաւատքս թեւաւոր
Մարդու գալիք մեծութեան
Եւ վե՛ր ամէն բռնաւոր
Ստրկութեան, հեծութեան։

Թէ՛ իրրեւ մանկավարժ եւ թէ՛ իրրեւ հասարակական եւ գրական գործիչ՝ Լ. Շանթ իր ստեղծագործութիւններով եւ գործով միշտ ձգտեցաւ նոր մարդը կերտելու, միշտ հաւատաց մարդու մեծութեան, մարդը, որ պիտի ըլլար ազատ ամէն տեսակ բռնութիւններէն։

❧

Լ. Շանթի բանաստեղծութիւններուն մէջ միտքը եւ սիրտը հաւասար բաժին ունին։ Մտքի վայելքը կայ իր քերթուածներուն մէջ, որոնք սրտի նուրբ զգացումներու երաժշտութեամբ կը թրթռան։ Երաժշտական եւ ըզգայուն այս լարին շնորհիւ՝ իր բանաստեղծութիւններէն շատերը երգի մը քաղցրութեամբ կ'ունկնդրուին։ Երաժշտական այս անուշութիւնը 15 տարի յետոյ Մ. Մեծարենցի քերթուածներուն մէջ պիտի գտնենք։

Հոս կը զետեղեմ Լուսնին տակ ոտանաւորը, որ այնքան նման է Մեծարենցի քերթուածներուն.

Լուսինն անհոգ ու ծպտուն
Գորշ երկնքէն սատափէ
Ծովուն վրայ կը թափէ
Լոյսի խուրձ մը կայծկլտուն։

digitised by A.R.A.R.@

Ու լուռ ափին ուազուտ
Ծովը հանդարտ ու բարի
Կը մեկնուի, կը փարի
Գնմոյշ դողով մը ծփուտ:

Ու ցիրուն կու տայ շայանմով
Իր խոնջ ու հուն ցամաքին,
Այնպէս զգո՞յշ, մեղմագին,
Ինչպէս մայր մը զաւկին հով:

Բնութագրական Շանթի միղմօրոր մրմունջներն են որ կը լսենք վերի բանաստեղծութեան մէջ։

❧

Իբրեւ փոքրագոյն կրնանք ըսել, թէ իրապաշտ երիտասարդ Լ. Շանթը ներաշխարհով երգուն անհատականութիւն մը ի յայտ կը բերէ իր բանաստեղծութիւններու փունջին մէջ, եւ իր խոչալներու ճամբուն վրայ՝ պատրանքը սիրող մը կը հանդիսանայ։ Ան պատրանքը սիրնցի ուշագրաւ քերթուածին մէջ իր ամբողջ մտայնութիւնը կը գտնենք։ Սակայն, այս պատրանքը իրական կեանքի եւ ձգտումներու շաւիղով կ'ընթանայ, ու մենք բանաստեղծական վայելքը կ'ունենանք, առանց իրական ներաշխարհէ մը կտրուած ըլլալու։ Երգն ու պատրանքը միացած քնարական որոշ չափի զեղուժին, Լ. Շանթի մտածման բանաստեղծութիւնները գոգտրիկ քերթուածներու կը վերածեն։

Լ. Շանթ իր առաջին երեւումով ողջունուեցաւ իբրեւ բանաստեղծ, եւ վաւերական անուն մը դարձաւ 1891–1895-ի շրջանին։ Իր բանաստեղծութիւնները յստակ եւ թարմ լեզուով գրուած՝ մաքուր աշխարհաբարի նմոյշներ էին այդ թուականներուն։ Իսկ իր մտքերն ու պատկերացումները ինքնաբուխ էին եւ նոր մտածումներ եւ նոր զգայնութիւններ կը բերէին մեր բանաստեղծութեան մէջ, որ հինը այլեւս չէր հանդուրժեր, բայց նորն ալ չէր կրցած ստեղծել։

Լ. Շանթը այնուհետեւ հրապարակ եկաւ իբրեւ վիպագիր եւ թատերագիր։ Ամբողջ յիսուն տարի անուանի դարձաւ իբրեւ մանկավարժ եւ վարպետ գրադէտ, ու իր բանաստեղծութիւններու փունջը մոռացութեան մատնուեցաւ։ Սակայն երիտասարդ Շանթի քնարական այս փոքրիկ վաստակը թուական մը կը բանայ մեր բանաստեղծութեան պատմութեան եւ զարգացման մէջ։

Կ. Ս.

digitised by A.R.A.R.@

3. ԳԵՂԱՐԴ

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

Ոչ միայն «*Կայծ*»-ի կայսերական շէնքերուն, «*Հին աստուածներ*»-ու կենսատրոփ բանաստեղծութիւնը, «*Դերասանուհի*»-ին ու «*Կնոջ*» կնոջական բարդ ու նուրբ հոգիի վերլուծումները, այլ նաեւ միւս բոլոր թատերգութիւններն ու վէպերը նախանձելի բարեհիշեր կ'ապահովեն արուեստագէտ Լ. Շանթին: Բայց մեր մեծագոյն թատերագիրին արուեստի խոր ըմբռնումը, արուեստագէտի սուր զգայարանքը կը գտնենք մասնաւորաբար··· «Հայրենի աշխարհ» դասագրքերու շարքին մէջ:

Մասնագէտներ կրնան վիճիլ «Հայրենի աշխարհ»-ներու դասագրքային առաւելութիւններուն ու թերութիւններուն մասին: Գրագէտը սակայն, միա՛յն կրնայ հաստատել անոնց մէջ գրական անվիճելի ճաշակը Լ. Շանթի եւ գտաբիւն արուեստագէտի դիմագիծը տնոր:

Լ. Շանթ նախանձախնդիր՝ հաղած է ընտրութիւն կատարած ժամանակ, որ գրական կտորները ո՛չ միայն հետաքրքրեն ուսանողը եւ համապատասխան ըլլան անոր տարիքին ու հասկացողութեան, այլեւ կրեն գրականութեան վաւերական դրոշմը: Ներկայացուցած է հայ արդի գրականութեան լաւագոյն դէմքերը իրենց գրական նկարագրին ու տպանդին հարազատ էջերով: Բայց այդ էջերը հիւրընկալած չէ իրենց բնագրին լրիւ պատճէնով: Եւ հոս է տեսա, որ ի յայտ կու գայ հազուագիւտ արժէքը գրագէտ-արուեստագէտ Լ. Շանթին:

Բանաստեղծութիւն, պատմուածք կամ որեւէ այլ կտոր դասագրքերուն մէջ գետեղելէ առաջ՝ Լ. Շանթ կը կտրէ, կը նետէ անոր վրայէն «աւելորդ բեռը», գրութեան արուեստին վնասող մասերը: Գուրգուրանքով կը յղկէ շեղած գիծերը, կը պայծառացնէ ստուերոտ երեսները: Վարպետ ոսկերիչի, ադամանդագործի այս աշխատանքէն շահաւոր դուրս կու գան միշտ հեղինակները, եթէ ժոյնիսկ կոչուին անոնք՝ Գ. Զօհրապ կամ Ռ. Զարդարեան, Յ. Թումանեան կամ Մ. Մեծարենց:

Դասագրքերուն մէկ ծայրէն միւսը ոսկեթելի պէս կը շղթայ այս

digitised by A.R.A.R.@

ճշմարտութիւնը: Բաւականանանք սակայն երկու օրինակով:

1.— Ցովհ. Թումանեանի «Հայ ուխտաւորին» բանաստեղծութեան բնագիրը կը հաշուէ 32 տող (տե՛ս, Ց. Թումանեան, էջ՝ 69, հատոր 1, Երեւան, 1958): Լ. Շանթ զետեղած է զայն «Հայրենի աշխարհ», Բ. հատորի 68–69-րդ էջերուն վրայ, զանց առնելով լման տասը տող, այսինքն՝ ամբողջ վերջին մասը, ուռանաւորի քաժինը: Ապա, բերքուածին առաջին երկու տողերը, խարերդաւոր ալամազանգի պէս, կրկնած է բերքուածի վերջաւորութեան: Տակաւի՛ն, երբեմ տեղ, կատարած է բառերու փոփոխութիւն. այսպէս՝

ա.— «... *եւ մերթ վչտով*
ու տխրութեամբ
Սեւանում է ինչպէս
մութ ամպ»

Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆ

«... *եւ մերթ վչտով*
ու տխրութեամբ
Սեւանում է ինչպէս
սեւ ամպ»

Լ. ՇԱՆԹ

Մութ ամպը *սեւ* ամպի վերածուելով՝ խտացած ու որոշակի դարձած է ամպին գոյնը, մանաւանդ նախորդ հատուածի *լոյսերի ծով*-ին շեշտօրէն հակադրուելով (contraste)՝ տեսարանը ստացած է խորութիւն, իսկ տողը, *սեւանում*-ին յաջորդող *ինչպէս* եւ *սեւ* բառերու մերձաւորութեամբ՝ տառահնչական ելեւէջաւոր տեսնուութիւն եւ երաժշտականութիւն:

բ.— «... *Հապա էն սա՞ր,*
էն սար հսկան,
էն սարերի սարն ու արքան»

Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆ

«Իսկ Մասիսը, *էն սար*
հսկան,
էն սարերի սարն ու արքան»

Լ. ՇԱՆԹ

Երկու տողի մէջ չորս անգամ *սար* բառին կրկնութիւնը կ'ապացուցնէ պատկերը եւ յառաջ կը բերէ ձայնական միօրինակութիւն: Մինչդեռ առաջին *սար*-ին տեղ երբ Մասիսը կը գրաւէ իր վեհապանծ դիրքը՝ լեռը կը ստանայ իր ինքնուրոյն դիմագիծը, անունը, կը կարկառի պատկերը եւ ձայնամանութիւնը կ'առնէ ներքնագաւառում եւ կ'ըլլայ աւելի հեշտալուր (մանաւանդ որ *հապա*-ն ալ կը փոխանակուի *իսկ*-ով):

գ.— «*Ահա կանգնեց* ծանր *ու*
տրտում»

Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆ

«*Ահա կանգնեց* վեհ՝ *ու*
տրտում»

Լ. ՇԱՆԹ

Խօսքը միշտ Մասիսին մասին է, բայց *ծանր* ածականը ոչ մէկ ձեւով կշիռ կու տայ այնպիսի հրակայնի, մինչդեռ *վեհ*-ը նախադրելով *տրտում*-ին՝ կը վերածուի պատկերի եւ կը յատկանշէ հարազատ գիծերէն մէկը անոր կերպարանքին:

Այս փոփոխութիւններէն ետք բերքուածը, մէկ ծայրէն միւսը,

digitised by A.R.A.R.@

կը գտնէ իր անապայթաբ կշռոյթը (ռիթմ), կը դառնայ թիւրեղեայ, միաձոյլ ամբողջութիւն մը, պրգտիկ գլուխ-գործոց մը, որ կրկին ու կրկին կը կարդացուի հայրենի կաթոտի ապրումով եւ չի մոռցուիր երբեք: Մինչդեռ բնագիրը կը վրիպի մասնաւոր ուշադրութենէ եւ կը մնայ Ց. Թումանեանի տարվորակաց ֆիրքուածներուն շարքին:

2.— Գ. Զօհրապի «Ցուրքունա» նորավէպը հիւրընկալած է Լ. Շանթ, նախ խորագրի գիւտաւոր վերամկրտութեամբ մը, «Իր երիտասարդութեան նաւակը»: Քերթուած մը կ'արժէ այս նոր խորագիրը եւ անմիջապէս կը կապէ ընթերցողը հեղինակին: Ապա՝ սքանչելի մուտքը, անթերի արուեստով մը տրուած, շնորհիւ յապաւումներու եւ աւելորդ բնորոշումներու զանցառման: Տանք հատուածի մը բարեշրջումը միայն.—

«Հագուստ չունէր. իր գրգռեակը մարած, նուազած, մեռած երանգներու խառնուրդ մըն էր, ազատութեան ծիրանի գոտին, գոր Նեստոն չէր գտած դեռ: Անհամար կարկտաններուն հակառակ՝ արմուկները դուրսն էին միշտ, եւ չգցուող կուրծքէն, լանջը՝ ուռած, կախուած գորշ մանկոյտ մը՝ աչքի կը զարնէր, արգեռատանք կը հրաւիրէր այս մարդուն վրայ»:

Գ. ԶՕՀՐԱՊ

«Հագուստ չունէր. իր գրգռեակը մարած ու մեռած երանգներու խառնուրդ մըն էր, ազատութեան ծիրանի գոտին: Անհամար կարկտաններուն հակառակ՝ արմուկները դուրս էին միշտ եւ չգցուող կուրծքէն աչքի զարնող գորշ լանջը արգահատանք կը շարժէր»:

Լ. ՇԱՆԹ

Նման յապաւումներ, հատուածներու յաջող ու նոր բաղադրումներ եւ նախադասութիւններու բախտաւոր համադրումներ՝ միակտուր ու ալացիկ ամբողջութեան մը վերածած են այս նորավէպը, աւելի՝ պատմուածք մը, զոր դրպրոցէն իր հետ կը տանի ուսանողը եւ չի կրնար չյիշել զայն, ամէն անգամ որ նաւակի մը եւ նաւավարի մը հանդիպի:

Առանձ, եւ ընդհանրապէս «Հայրենի աշխարհ»-ներուն մէջ տեղ գտած միւս գրուածքները, բաղդատելով իրենց բնագրին հետ, խղճամիտ ուսումնասիրողը կը հաստատէ արուեստի առողջ ըմբռնումը, հարուստ եւ անխախտակամ ճաշակը Լ. Շանթ արուեստագէտին:

Երանի՜ թէ ժամանակ տրամադրած եւ հայ գրականութեան *Ծաղկաքաղ* մը կազմած ըլլար Լ. Շանթ: Մեր հեղինակներն ու գրագէտները նոր փայլով մը պիտի ներկայանային մեզի: Արուեստի անմաշ կոթող մը, բարձրորակ գրականութեան «բարձի գիրք» մը եւս կտակած պիտի ըլլար շնորհապարտ ընթերցողին:

Ց. Գ.

20/11/69, Պէյրութ

digitised by A.R.A.R.@

ԲԻՒԶԱՆԴ ԿՈՒԱՆԵԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՍ

Մեր գիւղերէն ուսուցիչներ էր Լ. Շանթ։

Ան որ փոքր տարիքիս ծանօթս էր, հայերէնը սորված եմ իրմէ։ Սորված եմ նոյնպէս իրմէ ձգտում մը դէպի պարզութիւն, որուն հանդէպ կիրք մը ունէր։ Այդպէս էր ինքը, այդպէս է նաեւ իր գրականութիւնը, ամուր, հաստատուն նկարագիր մը, իր համոզումներուն մէջ յամառ ըլլալու պատիճան։ Փոքր էր մարմնով, բայց ուժեղ՝ իբրեւ անհատականութիւն։

Զունէր Աղթալեանի հաղորդականութիւնը։ Ագրալեան անմիջապէս կ'ուրինքնէր ձեզ, կ'առնէր իր հմտակոզ ոգիի օղակներուն մէջ։ Շանթը չիշ մը հեռաւոր էր, միկոց մը մէջտ ձեզ կը բաժնէր իրմէ։

Գէորգեան ճեմարանէն բերած էր խստակրօնութիւն մը, որուն վրայ աւելցած էին գիրքման դատարակութեան խստապահանջութիւնն ու ակուռմատականութիւնը։ Ակադեմական մը էր մինչեւ ծուծը։ Միշտ կոկուած, յստակ ու ճշգրիտ։

Անգամ մը դասարանին մէջ կարդաց Դանիել Վարուժանէն գերքուած մը եւ, վերջաւորութեան, այսպէս եզրակացուց.

«Մեծ բանաստեղծ մըն է Վարուժանը, ինչպէս Սիմանոթոն։ Բայց երկուքն ալ միշտ տարբերութիւնը մէջ պիտի մնան, որովհետեւ պարզ չեն գրեր ու սանտակնալի են ժողովուրդին»։

Այս էր իր գրական ազնարհնայեացքը։ Իր ամենասիրելի բանաստեղծներէն էր Յովհաննէս Թումանեանը։ Համակուած էր Թոլստոյականութիւնը։ Այդ իսկ պատճառով իր դատարկութիւնի մէջ ուժեղ էր հասարակական գիծը։ Մտաւորական մըն էր առաջնակարգ եւ իսկապէս։ Կ'ըսեմ իսկապէս, որովհետեւ գմտաւորականնը յաճախ կը շփոթուի ուսման պաշար ունեցողներու հետ, որոնք երբեք չեն հասնիր համապատասխան ոգեկան բարձրութեան։

Կը սիրէինք գինքը եւ կը յարգէինք։ Իր ուսուցման մէջ որոշ դեր ունէին իր հնչեղ ձայնը եւ յստակ առոգանութիւնը, որոնք մեր լեզուն կը դարձնէին սիրելի։ Մենք այն ատեն պատանիներ էինք, եւ մեծ հմայք մը ունէր մեր գիւղերէնի ուսուցիչը, — անեկա բանաստեղծ մըն էր։ Կէս աստուած մը։ Կ'ուզէինք իրեն նմանիլ, ընդօրինակել ձայնի իր չեչտերը, կերպերը, ոճը, մտածման եղանակը։

Ցաւաթ կը մտածեմ, թէ ի՞նչքան կ'տպրէին մեր ուսուցիչները մեր մէջ։ Մայրերէն եաց, մեծազոյն ազդեցութիւնը ունին անոնք մեր վրայ։ Կերպով մը մենք մեր ծնողներուն եւ ուսուցիչներուն պատկերն ենք, որովհետեւ անոնք են, որ ուղղութիւն կու տան մեր մտքումներուն։ Երբեմն տեսակ մը նախանձ է անոնց մեջտեղի մէջ եւ կը կրէ անոնց անհասանելիութեան դրոշմը։ Այս տնկիներէն դիտուած՝ մարդկային էակը կը դարձի բացարձակ միտուր մը ըլլալ, որովհետեւ թաքուն ու անիրելի թելերով շաղկապուած է ուրիշ կեանքերու հետ։

Ուսուցիչս՝ Շանթը, մեւոյ մը ներկայ է իմ մէջ մինչեւ։ Ներկայ է իբրեւ հուքեանս մէկ մասը եւ իբրեւ այդ անցած է ինքնագիտակցութեանս մէջ։ Քանի անոր մասին՝ գժուարին խնդիր է, որովհետեւ խորունկ թելերով կապուած է ինձի եւ անհնար է մեկուսացնել զայն ժամանակին մէջ եւ դիտել առարկայորէն։ Քանի անոր մասին կը նշանակէ դարձ մը դէպի այն երանելի օրերը, որոնցմէ հեռացած եմ վաղուց, ըլլայ իբրեւ տեւողութիւն, ըլլայ իբրեւ զգացում։

Ուսուցիչներս էին Աղթալեանը եւ Շանթը, վարժարանի մէջ։ Ուսուցիչներս եղան Հմմօն ու Ռուբէնը, վարժարանէն դուրս, հանրային կեանքի մէջ։

Զորսն ալ մեկնած են հիմա։

Եւ կարծես իրենց հետ տարին մաս մը էութենէս։ այն էութենէն, որ դարձեր է առարկայէն եւ կապուած կեանքի խորունկ արտայայտութիւններուն եւ մարդկային գեղի վայելչութեան։

Բ. Կ.

digitised by A.R.A.R.@

ԵՍ ՊԱՏՐԱՆՔԸ ՍԻՐԵՑԻ

Շուրջիս տապակ ու չոր կեանքէն զայրացկոտ
Կանչեցի ես իտէալս կենսածին.
Բայց հեռուէն կծու ծաղրով անամօթ
«Էֆ՝, ան միայն գրքի մէջն է» պոռացին.
Ես ալ գիրքը ինձի ընկեր ընտրեցի,
Ես պատրանքը սիրեցի:

Մենութեան մէջ լուռ, մթնշող սենեակիս՝
Ձիրագործուող երազներու մէջ թաղուած՝
Հեռո՛ւ ու վե՛ր սաւառնեցաւ միշտ հոգիս,
Հո՛ն, ուր կեանքիս գահար յոյսերն են մագուած.
Ես, մօր մը պէս, անուրջներս գգուեցի,
Ես պատրանքը սիրեցի:

Երբ գեղեցիկ թարմ աղջիկը ժպտեցաւ,
Սիրտս դողաց յուզումով մը ներդաշնակ.
Սիրեցի ալ, միայն ո՛չ ան, որ անցաւ.
Այլ անոր նուրբ յափշտակիչ դէմքին տակ
Նո՛ր էակ մը, որ մտէն հոն անցուցի,
Ես պատրանքը սիրեցի:

Հայրենիքի հուր կարօտը քնածին
Երբ բռնկցուց յուզուած լանջս տենդօրէն,
«Դուն հայրենիք, դուն հող չունիս», հծծեցին.
Ես դառնացայ, բայց ալ ուժգին այդ օրէն
Խորս չեզող հայրենիքս պաշտեցի,
Ես պատրանքը սիրեցի:

Ինձի համար այն ժամերը թանկ եղան,
Երբ ներշնչուած ստեղծեցի միշտ անգոյ,
Բայց անմնուրաց ազնիւ դէմքեր սիրեկան,
Երբ իրական աշխարհին մէջ միշտ դժգոհ,
Իտէալի կեանքէն երգել ուզեցի.
Ես պատրանքը սիրեցի:

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

digitised by A.R.A.R.@

ԱՐԱՔԱՐԾՐՈՒՆԻ

ՄԱՐԴՈՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԳԱՑՈՒՄԻ ՊԱՅՔԱՐԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Շանթի գործերուն առանցքը եղող Մարդը, հեղինակին կողմէ բաժնուած է երկու մասերու. Միտք-Մարդը եւ Սիրտ-Մարդը, որոնք կը ներկայացնեն եւ իրարու դէմ կը հանեն գիտակցութիւնն ու զգացումը, կը ստեղծեն բախում իրականութեան եւ երազին միջեւ, ու իրենց պատճառած ցանկութիւններով, տառապանքներով ու պայքարներով կը ցոլացնեն մարդկային հոգիին անլուծելի բարդոյթը։

Նախ քան «Հին աստուածներ»-ը թատերգութեան ծնունդը, Շանթի վէպերու տիպարներուն մօտ կը նշմարենք վարանում մը զէպի իրապաշտութիւնը։ Կը հանդիպինք լաւատեսութեան մը, ուր Սիրտ-Մարդն է իշխողը. իտէալիստ այն Մարդը, որուն անծանօթ են կեանքի ստեղծած սադրանքները։ Իր վէպերու գլխաւոր հերոսները պոռթկումներ չունին, անկեղծ են ու հպարտ. գոհ են իրենց վիճակներէն. չունին փառամոլութիւն ու չեն ճնշեր տկարներուն վրայ։

Բայց, զգացումներու համբէն քալող երիտասարդ վիպագիր Շանթի երազները ցրուեցան կեանքի իրականութեան բախումէն, ու իր վէպերու հերոսներուն՝ Բաղրատի («Դուրսեցիներ») եւ Երուանդի («Երազ օրեր») տեղ եկաւ գրաւելու կեանքի իրականութիւններու հպումէն արթնցած «Հին աստուածներ»-ու Արեղան։ Արեղան՝ ըլլալով հանդերձ զգացում-երազ թեմայի մարդը՝ իր նախորդներուն նման լաւատես, ինքնագոհ ու հանդարտ մարդը չէր այլեւս, իր մէջ արթնցած էր զգացում-գիտակցութիւն բախումը, երազ-իրականութիւն հակադրումը, ուժի եւ «ունենալու» զգացումը, եւ անոնցմէ բարձրացող՝ հաճոյքն ու տառապանքը։

Սակայն, Արեղան մասնակի մէկ արտայայտութիւնն էր իսկական ու ամբողջական Մարդուն՝ Վանահօրը, որուն մէջ Միտք-Մարդը առաւելագոյն չափով կրցած էր ստնձել իր զգացական ոչխարհը։ Վանահօր տիպարով Շանթ իր գործերուն մէջ ակսաւ Միտք-Մարդոց այն շարքը, որոնց մօտ թէեւ յաճախ կ'արձագանգէին զգացումներէ բխող կանչերը, սակայն կը զսպուին անոնք գիտակցութեան եւ իրատեսութեան պահանջքին գերակա-

digitised by A.R.A.R.@

յութենէն։ Շանթ համոզուելով ու գիտակցելով Միսք-Մարդու գերբնչխանութեանը, հետագային ծանրացաւ այդ տիպարին վրայ, ու Վանահօր յաջորդեցին Օհան Գուրգէնի, Նիկիֆոր Ֆոկասի, Քեսունի Իշխանի եւ Օշին Գայլի նման տիպարներ։ Մինչդեռ Արեղան «Դուրսեցիներ»-ու Բագրատին ու «Երազ օրեր»-ու Երուանդին շարունակութիւնը եղող Սիրտ-Մարդը՝ եղաւ իր շարքին վերջինը Շանթի գործերուն մէջ։

Մեկնելով Վանահօր տիպարներու ճիւղին գլխաւոր թեմա ըլլալու յազթանակէն եւ Բագրատ – Երուանդ – Արեղայ տիպարներու ճիւղի լքումէն, կ'եզրակացնենք, թէ «Հին աստուածներ»-էն ետք, Շանթ համոզուած էր, թէ Միսքը իշխող է Սրտին վրայ, հակառակ այն ճշմարտութեան, թէ սիրտ-զգացումն է ազդիւրն ու գրգռապատճառը Մտքի պայքարին ու յաղթանակին։

Բայց, եթէ Արեղան իբրեւ տիպար չաճեցաւ ու չշարունակուեցաւ Շանթի թատերգութիւններուն մէջ, սակայն իբրեւ դէպք, իբրեւ անքակտելի միաւորը Միսք-Մարդուն, խտացաւ մէկ տիպարի մէջ, ու այս ձեւով՝ դուրս ելլելով իր հին անձէ-անձ բախումի վիճակէն՝ դարձաւ անհատին մէջ արձագանգող գիտակցութիւն-զգացում պայքար։ Ուրիշ բացատրութեամբ, Արեղան, որ Վանահօր ներաշխարհին մէջ անջատուած արտայայտութիւնն էր՝ ձուլուեցաւ Վանահօր տիպարին մէջ։

Վանահայր եւ Արեղայ երկու տիպարները, որոնք ներկայացուած են թատերգութեան մէջ՝ կը ներկայացնեն մէկ անձ։ Սակայն, Շանթ աւելի բացայայտելու համար Վանահօր հոգեվիճակի պայքարին երկու հակոտնեայ թեւերը, Վանահայր-Միսք-Մարդէն անջատած է Սիրտ-Մարդը, ստեղծած է Արեղան, ու այսպէսով զգացական թեման դարձուցած շարժուն ու հասկընալի տիպար։

Շանթ հեղինակը՝ Մարդը (ու նաեւ կեանքը) կը դիտէ երկու տեսանկիւններէ։ Առաջին. իր ցանկութեան տեսանկիւնէն կը դիտէ ու կը գծէ Սիրտ-Մարդը ա՛յնպէս, ինչպէս որ ան պէտք էր որ ըլլար։ Հետաքրքրական է այն պարագան, թէ այս թեմային համար Շանթ ստեղծած չէ ամբողջական տիպար մը, այլ դիմած է երազին, տեսիլքին, ներաշխարհներու զարթնումին։ Շանթ չէ ներկայացուցած այդպիսի տիպար մը «Հին աստուածներ»-էն ետք, որովհետեւ հաստատած է, թէ «ես»-ի ճնշումին տակ չի կրնար գոյութիւն ունենալ իտէալիստ այն մարդը, որ իր կատարելութեամբ կը ցանկանք ու կը գծենք մեր երեւակայութեանը մէջ։ Շանթի տեսանկիւնէն դիտելով հարցը, կրնանք եզրակացնել, թէ «իտէալիստ» կոչուող անձերուն մօտ իսկ կենսական է «ես»-ի պահանջը, որպէսզի ենթական՝ իր որդեգրած իտէալը հաշուեցնելէ ետք իր ըմբռնողութեանը հետ՝ իր անձին յաջողութիւնը դնէ նպատակին յաջողութեանը կողքին, ու աշխատի միասնաբար բարձրացնել երկուքը։ Այս թեման ամենախօսուն ձեւով յայտնաբերուած է «Կայսր»-ը թատերախաղին մէջ։

Արդ, «ցանկութիւն»ն իսկ գործնական կեանքի մէջ ազդուած է իրականութեան անխուսափելի միջամտութիւնէն, ու այդ պատճառով, Շանթ աստիճանաբար հեռացած է Մարդն ու կեանքը ցանկութեան տեսանկիւնէն դիտելու գաղափարէն, ու սկսած դիտել երկրորդ տեսանկիւնէն. «Մարդն ու կեանքը ա՛յնպէս, ինչպէս որ են»։ Սակայն, բոլորովին չէ լքած առաջին տեսակէտը, այլ «իտէալացած ցանկութեան» տեղ «անձնականացած ցանկութիւն» մը իբրեւ օժանդակ կցած է երկրորդ տեսակէտին։

digitised by A.R.A.R.@

Որդեգրելէ եռք «Մարդն ու կեանքը ինչպէս որ են» թեման ներկայացնելու գաղափարը, Շանթ «Հին աստուածներ»-էն եռք իր գործերը դրած է չափազանց իրապաշտ դեռնի վրայ՝ Միաք-Մարդու գերիշխանութիւնը հաստատելով Մարդ-գազանի սահմաններուն։ Երազն ու տեսիլքը միշտ պահելով դրդապատճառ, Շանթ աւելի լայն տեղ է տուած անձնականացած ա՛յն ցանկութեանը, որ անգործնական ու երազային ապատում չէ այլեւս, այլ ժղում դէպի իրականութիւնը եւ դէպի Մարդուն փառամոլութիւնն ու անհատնում ախորժակները։

Միաք-Մարդը աստիճանաբար հիմնաւորուեցաւ ու կատարելագործուեցաւ Շանթի գործերուն մէջ, իսկ Սիրտ-Մարդը յաջորդական հանգրուաններով փոխեց իր վիճակը, ու լաւատեսութիւն-տեսիլք-երազ-խոհաբացած ցանկութիւն ճամբաներէն անցնելէ եռք՝ յանգեցաւ «անձնականացած ցանկութեան» վիճակին, ու Միաք-Մարդու կողքին պահեց իր նոր գոյութիւնը։

Սիրտ-Մարդուն «անձնականացած ցանկութիւն» վերածուելու տխուր իրականութեան առջեւ, իսէալիստ Շանթի մէջ արթնցած է յուսախաբութիւն մը, որուն անմիջապէս յաջորդած է ունայնութեան գաղափարը։ Փոտակցութիւն-զգացում, երազ-իրականութիւն, միաք-սիրտ անվերջանալի պայքարներէն ստեղծուած է մեծ հարցական մը, որուն դիմաց Շանթի փիլիսոփայութիւնը պատասխանած է նոր ճշմարտութեամբ մը, ու գոչած «Ունայնութի՞ւն...»։

Ունայնութեան գաղափարին առջեւ հաւասարապէս կը պարտուին Միաք-Մարդն ու Սիրտ-Մարդը։ Իրենց պայքարները կը դառնան անիմաստ ու ծիծաղելի։ Ունայնութեան ճշմարտութեան հղումը յուսահատական է Մարդուն համար, կեանքի համար, ու Շանթի ամբողջական Մարդը՝ իր ներաշխարհի պայքարներուն մէջ՝ կարծէք կը բզկտէ ինքզինք, ու կը կորսնցնի Ունայնութեան գրկին մէջ։

Ներաշխարհի փուճ պայքարներէ եռք, իսէալիստ Շանթը ժեզ կը դնէ Ունայնութեան փոսի եզրին, ու լռութեամբ կը փակէ իր «Մարդու պարտութեան» փիլիսոփայութեան գիրքը։

Ց'եզրակացներ. չի պատգամեր։ Սակայն, գիրքը բաց կը թողու մեր առջեւ՝ պատգամի եզրակացութիւնը ձգելով ընթերցողին կամ հանդիսատեսին։

Լեւոն Շանթ որոշ կրաւորականութիւն մը ունէր դէպի ընկերութիւնը։ Բնական էր այս երեւոյթը, որովհետեւ Վանահօր, Արեղայի, Օհան Գուրգէնի, Նիկեֆոր Ֆոկասի, Նաղաշի, Գեսունի Իշխանի, Օշին Գայլի եւ Վասիլ Լեկապէնի հայր՝ Լեւոն Շանթի վերլուծումներու ընթացքին, գիտակցութեան եւ զգացումի յաւիտենական պայքարի ընթացքին պարտուած էր Մարդը, ու կեանքի ունայնութեան մշուշին տակ կորսուած յոյսն ու երազը։ «Ունայնութիւն» կոչուող ճշմարտութեան լաւագոյն ծանօթ Շանթի համար՝ գժուար էր ընկերութեան ստեղծած անխուսափելի ա՛յն մթնոլորտը, ուր Մարդու «ես»-ի կանչը անընդհատ կ'արձագանգէր։ Մարդոց խօսքերը շատ հասարակ էին իրեն համար, որովհետեւ իւրաքանչիւր արտայայտութեան ետին՝ Շանթ կը տեսնէր զգացում-գիտակցութիւն պայքարը, անխուսափելի ունայնութիւնը, ու Մարդու պարտութիւնը։

Ա. Ա.

digitised by A.R.A.R.@

«ԸՆԿԵՐ ՓԱՆՋՈՒՆԻ»

Այս երկի ճակատագիրը հզու վերին աստիճանի հետաքրքրական: Գրուած 1913 թուին, նա մէկէն գրաւեց հայ ընթերցողների ուշադրութիւնը: Թէ՛ Պոլսում եւ թէ Կովկասում, որպէս տաղանդով գրուած օրուան երգիծանք: Բայց օրուան երգիծանքները սովորաբար կարճ կեանք են ունենում, եւ «Ծապլվարն» էլ արժանանում էր արդէն այդ բախտին, երբ յանկարծ կատարուեց մի հրաշք, որը ո՛չ միայն վերակենդանացրեց Եր. Օտեանի այս երկը, այլ նոր հանեց նրան այնպիսի մի բարձրութեան վրայ, որպիսին նա չէր ունեցել նոյնիսկ իր լոյս տեսնելու առաջին օրերին:

Այս հրաշքը կոմունիզմն էր, որ իր բէժիմը հաստատելով նոր Հայաստանում, մեր երկիրը դարձրեց մի տիպար Ծապլվար, իսկ այնտեղի գործիչներին՝ կատարելատիպ Փանջունիներ:

Երբ այսօրուան հարիւրդային իրականութեան լոյսի տակ մարդ կարդում է «Ծապլվար»-ը, մնում է զարմացած այն մարգարէական նախատեսութեան վրայ, որ ցուցանել է երուանդ Օտեանի տաղանդը:

Ես թարգմանաբար կարդացի մի երկու կտորներ այս գործից իմ ծանօթ ռուս գրագէտներից մէկին, որ հիացմունքից զարմացած յայտարարեց, որ «Անհնարին է, որ այդ երկը գրուած լինի բոլշեւիկեան յեղաշրջումից առաջ»: Եւ նա իրաւունք ունէր:

Դիւրին եւ այդ պատճառով էլ աւելորդ աշխատանք կը լինէր կոդք կոդքի դնել «Ծապլվար»-ի եւ հարիւրդային թերթերի էջերն ու ցայց տալ նրանց մէջ եղած ո՛չ թէ նմանութիւնը, այլ կատարեալ նոյնութիւնը: Շատ օրինակներից միայն մէկը: Երուանդ Օտեանը, Փանջունին ծաղրելու համար, նրա բերանով յայտարարում է, որ Բէս Սէրգօն «աղտոտ բուրժոյ» է, որովհետեւ «ունի երեք արտ, երկու կով, մէկ էշ եւ երկու այծ», մոռանալով անգամ չանցկացնելով, որ մի քանի տարի յետոյ, աշխարհի մէկ հինգերորդ մասի վրայ հաստատուելու է մի իշխանութիւն, որ յատուկ օրէնք է հրատարակելու, որով «աղտոտ բուրժոյ» կամ «կուլակ» է հռչակելու ու փանջունիական մեթոտներով եւ հեռ. Ուսների միջոցով դատապարտելու պայքար է մղելու այն բոլոր գիւղացիների դէմ, որոնք ունեն ճիշդ եւ ճիշդ այնքան կարողութիւն, որքան ունէր Բէս Սէրգօն:

1935 Ա. Խ.

digitised by A.R.A.R.@

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՆԱԶԱՐԷԹ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՓԱՆՋՈՒՆԻՆԵՐՈՒ ԲԱՒԻՂԷՆ

Ոչ մէկ ընկերային տիպար, ժողովուրդներու կեանքին մէջ, կրցած է իր շուրջ կեդրոնացնել կարեկցութիւն, ծիծաղ ու արհամարհանք այնքան, որքան իր ժամանակի պահանջներէն եւ իր միջավայրի պայմաններէն անմասն մնացած՝ իր անհատական կարելիութիւնները ըստ էութեան արժեւորել չգիտցող մարդը:

Ժողովուրդներ մեծ հոգածութեամբ կը պահպանեն յիշատակը այսպիսի ժխտական արժէքներու, որոնք մէկէ աւելի տարբերակներով նուիրագործուած են արուեստներու եւ մանաւանդ գրական ժառանգութեանց մէջ, որպէսզի գանոնք կրկնել փորձողներ չըլլան գալիք սերունդներու մէջ:

Բայց պատմական իւրաքանչիւր ժամանակաշրջան, այս կամ այն գունաւորումին տակ, միշտ ալ մարմին կու տայ նմանօրինակ հակատիպարներու: Այս մէկը անխուսափելի դարձած է այլեւս:

Յեղափոխութիւններու՝ ներկայ ժամանակաշրջանը (18-րդ դարու ճարտարարուեստական յեղափոխութենէն առդին) չէր կրնար բացառութիւն կազմել այս պարագային, ու այդպէս ալ եղաւ: Յեղափոխութեան խորհուրդը, իր թելադրանքներուն ժխտական ներշրումով մարմնաւորեցին այլալեզու «տիտանները»· «տիտանները»՝ որոնք կային, յեղափոխական էին այնքան ժամանակ, որքան բացակայ էր նոյն ինքն յեղափոխութեան պահանջը· «տիտանները»՝ որոնք չկային, յեղափոխական չէին, երբ կար ինքը յեղափոխութիւնը, երբ կարմիրով կը սաղմնաւորէր պատմութեան արգանդը, երբ գանգուածներու մէջ հանդէս էր հաւատքի ու հրաւէր՝ հաւատարմութեան, անձնուիրումի ու խիզախութեան:

Անցեալ դարաշրջանի երկրորդ կէսէն կազմակերպուած հայ ժողովուրդի յեղափոխական զարթօնքը եւս, իր կարգին, ծնունդ տուաւ իւրայատուկ «տիտանի» մը, զոր անմահութեան պատուանդանին վրայ բարձրացուց հայ երգիծական գրականութեան անմահներէն՝ Երուանդ Օտեան, «Հինկեր Փանջունի» մակագրելով զայն:

digitised by A.R.A.R.@

Եւ իր տեսակին մէջ այնքան ինքնատիպ ու այնքան անկրկնելի յեղափոխական մըն էր Ընկեր Փանջունի, որ կարելի է առանց տատամնելու խոստովանիլ, թէ ան իրմով կը ցոլացնէ իր դարաշրջանի հայ ժողովուրդի յինելութեան ամբողջական ոգերգութիւնը, ոգերգութիւն մը՝ որ արդիւնք էր անոր ստեղծագործ ու անմահ ազգ մը ըլլալու հեռանկարին, բայց միեւնոյն ատեն հայրենիք չունենալու հակասական իրականութեան:

♣

Ընկեր Փանջունիով ձեւ ու շունչ կ'առնէր հայ յեղափոխականի ժքխտական տիպարը, որուն միջոցաւ երգիծանքի ու փետրափետումի թիրախ կը դառնար տակմաթիք ընկերվարականը՝ ա՛ն, որ գրքերէն ու մտածումներէն կը մտնէ կեանքի ասպարէզ եւ նկատի չունի այն միջավայրն ու ժամանակը, ուր կոչուած է գործելու: Անհարակութիւններու լայն շրջագծի մը մէջ, Օտեան միս ու ոսկոր կու տայ անոր, եւ Փանջունի, Տոն-Քիշոթեան երեւակայութեամբ մը գինուած, փիզիքապէս ու տնտեսապէս անապահով հայ գիւղին մէջ կը կարծէ իրագործել այն՝ որու մասին ճարտարարուեստականացած երկիրներու մէջ կարելի է մտածել միայն: Այսպիսով, իր գաղափարական ու գործնական անհաւատալի տարօրինակութիւններով, Փանջունի կը դառնայ անհանգուրժելի բեռ մը հայ գիւղացիի ուսերուն:

Հեռացնելով Փանջունին Օտեանի վիպական ու երգիծական խոշորացոյցէն, ինչպէս նաեւ հեղինակին խայտառակէտ տարազներէն, ընթերցողը իր առջեւ կը գտնէ 1875 թուականէն 1910, հայ իրականութեան մէջ ինքնարժեւորումով բուսած այն բոլոր յեղափոխականները, որոնք առանց ճանչնալու հայու պատմական անցեալը՝ անոր գծած հոգեբանական սահմանափակումներով (քայքայուած հուսաբական մտածելակերպ, ծայրայեղ եսակենդրոնացում, անել պատիրանոգականութիւն) կը փորձէին զայն առաջնորդել դէպի ընկերվարական հասարակարգ, ուր հասնելու համար ոչ միայն պատմական որոշ զարգացողական հանգրուաններ անհրաժեշտ էին, այլեւ անհրաժեշտ էր նախ ժողովուրդի իմացական ու ջիղերու ամբողջական մաքրաջրումն ու կերպարանափոխումը:

Այստեղէն կը մեկնէր Օտեան, ու ներկայացնելով Փանջունիի «ծիծաղելի» գործունէութիւնը, կը մատնանշէր այն անհուն կատակերգութիւնը, զոր կրնար ստեղծել ընկերվարութեան բառացի թարգմանութիւնը հայ ժողովուրդի յեղափոխական շարժումի ընթացքին, եւ որ բնականաբար կրնար յանգիլ հայու ոգերգական կացութեան վատթարացումին:

Իր Փանջունիով, Օտեան մերկացնելով հանդերձ մարդու ժխտական տիպարին բովանդակ փանջունիականութիւնը, հայ գրականութեան կը յանձնէր հայ ժողովուրդի գերագոյն յեղափոխութիւնը խանգարող բոլոր «քան չունեցողներու» պատմական խտացումը, *քան-չունիներու*՝ որոնց ստեղծած բաւիղներու ամուլ թանաքսեր անտեսելով՝ քալեցին հայ յեղափոխութեան իրաւ ու բազմարդիւն բոլոր ծնունդները...

Ն. Գ.

digitised by A.R.A.R.@

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԳԻԾԵՐ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆԻ ԿԵԱՆՔԷՆ

ԳՐՈՂԸ ԻՆՉՊԷՍ ԿԱԶՄՈՒԵՑԱԻ

Արուեստագէտի մը մէջ առաջին կայծը խուզարկելու, տաղանդի մը առաջին ճառագայթը երեւան հանելու մտահոգութիւնը մարդս սխալ երազկացութիւններու կը տանի յաճախ։ Շատ պատահած է, որ գրագէտի մը կազմութիւնը սխալ չարժանիքներու կապին։ Զգիտնան, թէ ուրկէ՞ կը բխի ակը։ Շատ անգամ արուեստագէտները իրենք իսկ կ'անդիտանան իրենց հոգւոյն ձեւ տուող ազդակներն ու դէմքերը։

– Ինչպէ՞ս գրական կեանք մտար, – հարցուցի Օտեանին։

– Ես ալ լաւ մը չգիտեմ։ Բայց գոնէ սխալ է հարեղբօրս՝ Գրիգոր Օտեանին վերագրել զիս գրականութեան կապող առաջին թելը։ Գրիգոր Օտեան որեւէ ազդեցութիւն չէ ըրած վրաս՝ ոչքան ալ տաղանդաւոր գրագէտ մը եղած ըլլար ինք։ Սխալ է այդ մասին տարածուած կարծիքը։ Սխալ է նոյնպէս հօրաքոյրս՝ Օր. Եւփիմէ Օտեանը կարծել գրական կեանքիս գայիակը։ Ան ալ հեռու է վրաս ազդած ըլլալէ։ Զմոռնանք, որ ես նախապէս ղոփ-ղոր բանաստեղծ մըն էի, ուսումնասիրութիւններով զբաղած։ Թերեւս Արփիար Արփիարեանը ազդած ըլլայ իմ երգիծական կազմութեանս վրայ։ Արդարեւ, անոր մօտ էր, որ բացուեցայ առաջին անգամ։ Ամէնէն աւելի վրաս ազդող հեղինակները եղած են Իբսենի Բրնան, որուն հանդէպ պաշտում մը կը պահեմ մինչեւ այսօր ալ, Ալֆոնս Ալէ, Զարլզ Տիքընս եւ մանաւանդ Ս. Գիրքը, գլխաւորաբար իր մարգարէութիւններով եւ Սկաստյով։

Այսքան էր միայն Օտեանի ըսածը զինքը ստեղծող հեղինակներուն վրայ։ Բայց տարակոյս չկայ, որ իր ընտանեկան դաստիարակութեան ալ բան մը կը պարտի, – իր գրչի մարդու ազնուականութիւնը։ Օտեան գերդաստանին չունչը չէր կրնար ազդած չըլլալ, եթէ ոչ իր երգիծական տաղանդին՝ գոնէ գրական խառնուածքին վրայ։

ԻՐ ՍԻՐԱԾ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Սխալ բան է գրողի մը սիրած հեղինակներէն փորձել գրողը դատել։ Անիմաստ է արդէն մէկը իր բարեկամներէն ու ծանօթներէն դատելու փորձը։ Շատ անգամ մարդ իր նմանը չէ որ կը սիրէ, ոչ ալ անպատճառ կ'ախորժի բարքով, զարգացումով, հոգիով իրեն հետ առընչութիւն ունեցող մարդոցմէն։ Կը պատահի, որ ամէնէն խոժոռ գրագէտները ամէնէն թեթեւ բաները կարդան իրենց ժամանցներուն մէջ, կամ ամէնէն զուարթ հեղինակները փնտռեն լուրջ հատորներ, դժուար մարսուող գիրքեր։

digitised by A.R.A.R.@

Օտեան երգիծաբան էր, բայց երբեք չէր սիրեր երգիծական գրքերը։ Թեթեւ գրականութիւն գրեթէ երբեք չէր կարդար։ Կ'խորժէր լուրջ, ծանրախոհ ղբրքերէն, ուսումնասիրութիւններէն։ Այնպէս որ, իր պատասխանը երբեք զարմանքս չշարժեց, երբ իր սիրած հեղինակները հարցուցի։

Օտար հեղինակներէն երեքը ամէնէն աւելի իր սիրածներն էին,— Էռնեսթ Ռընանը, Վիքթոր Հիւկօն եւ Անաթոլ Ֆրանսը։ Ո՛ւր որ ալ ըլլար, անպատճառ մատենադարան մը կը կազմէր այս հեղինակներէն։ Զէր փնտռեր ուրիշ հեղինակներ, ուրիշ նորութիւններ։ Իր սիրած միւնոյն հեղինակին միւնոյն գործը բազմիցս կը կարդար, նոյնիսկ աւարտելուն պէս վերսկսելով։ Անաթոլ Ֆրանսը կը սիրէր իր անուշ հեղնութիւններուն, ու աչխարհի իրերուն վրայ վերէ՞ն նետած իր նայուածքներուն համար։ Կը սիրէր անոր պարզութիւնը, սկեպտիկ ժպիտը, խորհրդաւոր քմծիծաղը։ Վիքթոր Հիւկօն զինքը կը հրապուրէր իր համամարդկային սրտին, բարութեանը, գութին համար։ Միշտ իր սեղանին վրայ ունէր անոր քերթուածներու հատորներ, որմէ յաճախ կը կարդար, մէկ կարդացածը բազմիցս անգամ։ Բայց Ռընանն էր իր նախընտրածը. մոլին էր անոր ամէնէն չոր ուսումնասիրութիւններուն անգամ, զորս կը կարդար դիտակնի մը պէս, մխրճուելով անոնց խորը, ու բաղդատելով յաճախ զանոնք իրենց աղբիւրներուն հետ։ Երբ Գուքրէչը պիտի թողուր, ինծի ժառանգ ձգեց իր գիրքերուն մեծ մասը, — Հիւկոներն ու Անաթոլ Ֆրանսները։ Բայց Ռընանի երկերը միասին տարաւ, իբրեւ ճամբու ու մտքի անբաժան ընկեր։ Եւ Սուրիայէն գրած առաջին նամակին մէջ կ'ողբար անոնց կորուստը ճամբան, արկածի մը առեն։

— Հայ հեղինակներէն, — ըսաւ, — ամէնէն աւելի կը սիրեմ երեք բանաստեղծներ, Հայր Ղեւոնդ Այիշանը, Գեւորգ Դուրեանը եւ Միսքիչը։ Զգացումն ու առնչ արտայայտութեան ձեւն է, որ աւելի կը հրապուրէ զիս, քան խորքը։ Ես չեմ փնտռեր արդէն խորքը բանաստեղծութեան մէջ։ Ամէնէն աւելի սիրած արձակագիրս է Լեւոն Բաշալեանը։ Կը սիրեմ նաեւ Եղիա Տէմիրճիպաշեանը, իր լեզուին ու ոճին համար, խորշելով հանդերձ իր անհաւասարակշիռ մարդու ներշնչումներէն։ Ես չեմ ընդունիր արդէն խենթութիւնը իբրեւ արուեստի մասնիկ։

ԻՐ ԾՈՏՈՒՄՆԵՐԸ։

— Շատ չեմ սիրած, — ըսաւ Օտեանը, — կեղծանունները գործածել։ Գրածներուս ստորագրութիւնը բուն անունս է։ Երբեք չեմ վախցած գրածներուս պատասխանատուութիւնը ստանձնելէ։ Ստորագրած եմ թէ՛ յաջողած է՝ չեր, եւ թէ՛ ամէնէն ակարները, միւնոյն պատասխանատուութեամբ։ Ծածկանուններ ես ալ գործածած եմ սակայն, ամէնէն առաջի գրական անունս եղած է Կ. Ս. Ժիրայր, որոյ ստորագրած եմ Գոլոյ «Հայրենիք»-ին մէջ։ «Հայրենիք»-ի չրջանէն է գարձեալ Երօտ ստորագրութիւնս, այսինքն՝ անունս եւ մականունս խառնած։ «Նոր Կեանք»-ի մէջ ալ ստորագրած եմ Վահրամ Վահրամեան։ (Վահրամը՝ հօրեղբայրս Գրիգոր Օտեանն էր)։ Սահմանադրութենէն յետոյ, մասնաւորապէս «Ժամանակ»-ի եւ «Վերջին լուր»-ի մէջ, ստորագրած եմ Իդիպոս, առ հասարակ քաղաքական եւ ազգային ու կուսակցական յօդուածներու տակ։ Ուրիշ ծածկանուն գրեթէ չեմ գործածած։

Օտեան, արդարեւ, չէր վախնար նոյնիսկ ամէնէն պատասխանատու նիւթերը իր ստորագրութեամբը տալ։ Քիչ պատահած չէ, որ իր այս կամ այն գրածը վէճի դուռ բանայ, յաճախ մինչեւ դատարան տանի զինքը։ Նման միջադէպեր ունեցաւ Օննիկ Իհսանի, Վահան Զէյթունցեանի, Տոքթ. Լեմրզէի, Հմայեակ Արամեանի եւ ուրիշներու հետ։

digitised by A.R.A.R.@

ԱԿՆԱՐԿ ՄԸ ԻՐ ԵՐԿԵՐՈՒՆ ՎՐԱՑ

Բաւական օրեր պէտք եղան, որպէսզի միասին կազմենք իր երկերուն ցանկը: Մարդուս գլխու պտոյտ կու տայ նոյնիսկ ակնարկ մը նետելը այդ ցանկին վրայ: Քառասուն տարի գրած է Օտեան անընդհատ, եւ ամէն տեսակ նիւթի վրայ, – քրոնիկ, քաղաքական յօդուած, վէպ, վիպակ, թատերախաղ, յիշատակներ, ուսումնասիրութիւններ, թարգմանութիւններ: Ու այս բոլորը դէղե՞ր, դէղե՞ր կը կազմեն, հսկայ, լեռնակուտակ:

Անգամ մը Օշական «Հարթեր» էր Սմբատ Բիւրատը «Մեհեան»-ի մէջ չատ, չա՛տ անխնայ: Բիւրատ օր մը զիս տեսնելուն իր կսկիծը պոռթկաց Օշականին ակնարկելով. «Խըմպը՛լ, գրածներուս դէղին տակը կը ճզմուիս»:

Մէկ չէ, քանի մը հոգի կը ճզմուին Օտեանին գրածներուն դէղին տակ:

Անդադար գրեց անիկա գէշն ու աղէկը, լուրջն ու զուարթը, խնամուածն ալ, անխնամն ալ, որովհետեւ դրելով ստիպուած էր ապրիլ:

ԻՆՔՆԱԴԱՏԱՍՏԱՆ

Որո՞նք էին Երուանդ Օտեանի նախընտրածները իր այնքան երկերուն մէջէն, եւ ի՞նչ էր առհասարակ իր կարծիքը իր երկերուն արժէքին մասին:

Դժուար էր հարցումը, որովհետեւ դժուար էր տրուելիք պատասխանը:

Բայց Օտեան սրտաբաց եղաւ ու անկեղծ իր դատումներուն, իր տեսակ մը ինքնադատաստանին մէջ:

«Վէպերս, – ըսաւ, – բամփիսած են յանախ: Անոնք գրուած են օրը օրին, չատ անգամ տեղ չեցնելու համար: Անոնք գրուած են, որպէսզի կարդացուին ու թերթի քշել տան: Անոնք, ներողութիւն, իմ փիներս են»:

Արդարեւ այդպէս են անոնց մեծ մասը: Օտեանի վէպերուն քիչերը միայն պիտի ապրին դրականութեան մէջ, անոնք, որոնք գրուած են սիրով, գրական մարդու նախանձախնդրութեամբ: Բայց որո՞նք էին այդ քիչերը:

«Այո՛, յաջողածներ ալ կան անշուշտ վէպերուս մէջ: Նախ՝ յիշեմ «Ցեղասպանութեան մակարոյծները», որ թէեւ 1920-ին հատորով տպուած, բայց գրուած է Սահմանադրութենէն առաջ արտասահմանի մէջ, ուր այնքան կենդանի կուսակցական կեանքը: Յաջողած է այս վիպակը, որովհետեւ իրական կեանքն է ան իրական տիպերով: Հոն, զանազան անուններու տակ ներկայացուած են շարք մը հանրային գործիչներ, ինչպէս Զերապը, Ճանկիւլեանը, Ֆաժակը, եւայլն: Չեմ ուզեր սակայն երեւան հանել, թէ ինչ անուններու տակ գծած եմ զանոնք, թէեւ անցած ըլլայ երկու տասնեակ մը տարի: Այնքանն ալ ըսի առ ի հետաքրքրութիւն:

«Անշուշտ պէտք է յիշել նաեւ Փանջունիին նուիրուած զոյգ հատորները, «Առաքելութիւն մը ի Տպլվար» եւ «Ընկեր Փանջունի Վասպուրականի մէջ», որոնք նախ «Բիւզանդիոն»-ի մէջ լոյս տեսան: Անոնք ալ կեանքէն քաղուած են, մանաւանդ առաջին հատորը: Ու տակէ թերեւս անոնց գտած յաջողութիւնը: Երբ առաջին անգամ լոյս ընծայեցի «Բիւզանդիոն»-ի մէջ՝ շատեր կարծեցին, թէ Փանջունիի տիպարն ալ իրական դէմք մըն է: Նոյնիսկ երկու վանեցիներ գրաւէին բռներ Փանջունիին իրական թէ երեւակայական տիպար մը ըլլալու մասին, եւ նոյնիսկ դրամ դրեր են ազգային հաստատութեան մը տրուելու համար: Անշուշտ որ երկրորդը շահեցաւ դրաւը, որովհետեւ իրական դէմք մը չէ Փանջունին, այլ տեսակ մը ընդհանուր տիպար է, խտացումը յեղափոխական թիւրերուն: Նոր էր հատորով լոյս տեսեր առաջին գիրքը, երբ օր մը Զաւարեան կամուրջին վրայ բռնեց զիս. «Եթէ հարուստ ըլլայի,– ըսաւ,– այս գիրքին հազարաւոր օրինակ կը գնէի ու կը բաժնէի մեր բոլոր ընկերներուն»: Արդարեւ, շատ ժողովրդականութիւն գտաւ այս գործս. ամէն մարդ ինքզինքը կը տեսնէր հոն, կամ իր քարե-

digitised by A.R.A.R.@

կամը, կամ իր պրպտին։ (Արամին համար ալ կը պատմեն, որ մինչեւ մեռած օրը դրպանին մէջ ունէր Փանիունիի այս նամակները, ու յանախակի կը կարդար)։

«Բայց պէտք է ըսեմ, որ առաջին գիրքը աւելի յաջողած է քան երկրորդը։ Ու բնական է այդպէս ալ պիտի ըլլար։ «Առաքելութիւն մը ի Դապլվարդ»-ին տիպարները քաղած եմ անձամբ ճանչցած մարդոց դիմագծութենէն, այսինքն՝ զանոնք ուսումնասիրած եմ քանի տարի մը։ «Ընկեր Փանիունիի Վասպուրական»-ը, ընդհակառակն, ինծի պատմուած թիփերն են, իմ լսածներս։

«Յաջող են նաեւ Իգնատ ալայի մասին գրածներս։ կարդ մը կտորները։ Անոնցմով կարելի է լաւ հատոր մը կազմել, լաւագոյնները ընտրելով։ Լոյս տեսած են մեծ մասամբ «Փղնատ աղա»-ի եւ «Նաւէր»-ի մէջ։ Իգնատ Աղան ալ իրական թիփ մը չէ, հակառակ շատերու կարծիքին։ Ան խմողի մը տիպարն է։

«Թերթոն-վէպերս, ինչպէս ըսի, մեծ մասամբ բամփիսած են։ Լաւագոյնը անոնցմէ, ըստ իս, «Թաղականին կնիկն» է, բայց ոչ հատորով տպուածը։ Լմնցած չէր տակաւին թերթոնը, երբ աքսորուեցայ։ Վերադարձիս, երկու հրատարակիչներ՝ Ազնաւոր եւ Փոլատ՝ ուզեցին հատորով տպել։ Սկսաւ տպուիլ։ Կէսը տպուելէ յետոյ մխոյն եկան խնդրելու, որ մնացեալը կրճատեմ։ Արձան մըն է ան, որ խոշոր իրան մը ունի եւ պզտիկ ոտքեր։

«Նորավէպերուս մէջ ամէնէն աւելի յաջողած կը նկատեմ «Համբարձում Աղա»-ն եւ «Ազգային Բարեբարը», առաջինը լոյս տեսած «Բամբիւռ»-ի եւ երկրորդը՝ «Շիրակ»-ի մէջ։

ԻԲՐ ՀԱՆՐԱՑԻՆ ՄԱՐԴ

Օտեան հանրային գործիչ մը չէր՝ բացատրութեան մեր մէջ հասկցուած իմաստով։ Ան, իր դրսի եւ հրապարակագրի աշխատանքէն դատ, խորապէս չէր մասնակցեր հանրային գործերու։ Այսուհանդերձ, ան ստանձնած է հանրային զանազան պատուակալ պաշտօններ, ինչպէս Ազգային ժողովի անդամակցութիւն, նախագահութիւն Հայ Խմբագիրներու Միութեան, Հայ Թատերական Միութեան, Հայ Արուեստի Տան, եւ նաեւ երբեմն անդամակցած քաղաքական կուսակցութեանց։

Ինչպէս տեղ մը յիշեցի՝ Օտեան «Հայրենիք»-ի մէջ Աբիթարի գործակցած ատեն, պահ մը խառնուած է Հնչակեաններուն։ Կարճատեւ եղած է այդ կապը, եւ անկէ յետոյ Օտեան հեռու մնացած է քաղաքական, մանաւանդ յեղափոխական կուսակցութիւններէն։

Ազգ. ժողովի մէջ Օտեան առհասարակ չէզոք մնացած է, թէեւ, մանաւանդ պատերազմէն առաջ, իր մտերմական կապերը Կեդրոնի Կուսակցութեան առաջնորդներուն խառնած են իր քուէն։ Ու համոզումներով գրեթէ անիշխանական այս մարդը՝ կեանքի մէջ առհասարակ պահպանողականներուն կողմը քաշեց, թէեւ միշտ ըստ կարելւոյն պահեց իր անկախութիւնը։

Առեն մը Օտեան նոյնիսկ Ռամկավար կուսակցութեան մէջ մտաւ, բայց չկրցաւ լուծը տանիլ։ Ու այնպիսի՛ կատաղի պայքար մը մղեց, որ դիմացինները ալ իրենց թերթին մէջ դիմեցին ազատատ զէնքերու, հայհոյանքի։

Այդ առթիւ էր, որ խումբ մը գրողներ զանազան հոսանքէ, – Օշական, Զապէլ Եսայեան, Թէոդիկ, Զարուհի Գալէմքեարեան, Ասպետ, Յակոբ Տէր Յակոբեան, Միք. Շամտանճեան, Շաւարշ Միսաքեան, Լեւոն Խաճատեան, Վահրամ Թաթուլ, Լեւոն Շաթրեան եւ այս տողերը գրողը, – 1920 Յունիս 25-ին մամուլին յանձնեցին «վրդովում» մը, ուր մեր զգուանքը կը յայտնէինք երեսուն տարուան գրական վաստակաւորի մը հանդէպ եղած անարգանքին դէմ։

Ռամկավարներու թերթը «պոռնկագիր» կոչած էր Օտեանը, շահագործելով միեւնոյն ատեն կարգ մը հայ տէր պատներու վրդովուելը Օտեանի մէկ վէպին «Միջնորդ Տէր Պապա»-ին առթիւ։

digitised by A.R.A.R.@

Տեղն է յիշել, որ նման խաչակրութիւն մըն ալ ծայր տուաւ Օտեանի դէմ պատերազմէն առաջ, երբ Երուսաղէմի հայ վանքին գոյթակղութիւնը պարբաւելու առնն՝ առաջարկած էր այդ վանքը ծախել, առանց զողզալու անոր «սրբատաշ քարերուն» վրայ, որոնք վերջ ի վերջոյ, ըսած էր, տարբերութիւն չունին կարգ մը վայրերու մէջ գործածուած քարերէն...

Ազգային Ժողովին մէջ Օտեան գրեթէ չէր խօսեր։ Անդամ մը միայն վէճի մտաւ երեսփոխան Գառնիկ Շէհրիկեանի հետ, որ ժողովին բեմէն խնդրոյ նիւթ էր ըրեր թերթի մը մէջ իր գրած մէկ յօդուածը։ Երկուստեք անհամ բառեր փոխանակուեցան. բայց Շէհրիկեանի Դաշնակցական ընկերներն անդամ չիւրացուցին անոր յարձակումը մամուլի մը մէջ երեւցած երդիծական յօդուածի մը դէմ։

Կապանքի չէր դար իր խառնուածքը։

«Չեմ կարդուիր որ խառնուող չունենամ»,– կ'ըսէր յաճախ, երբ բարեկամական խորհուրդ մը տայիր նոյնիսկ իր առողջութեանը օգտին։

Խառնուող չէր ուզեր նաեւ հանրային կեանքի մէջ։ Չէր հանդուրժեր, որ սըրբագրութիւն դպի իր մէկ գրուածքին, ինչ ալ գրած ըլլար, եւ որ թերթին համար ալ գրած։ Նոյնիսկ իր աշխատակցած կուսակցութեան թերթերուն ուղղութիւնովը չէր մտահոգուեր։ Պատերազմէն յետոյ, երբ «ձակատամարտ»-ին խսկ կը գրէր՝ չէր կրնար մնալ կուսակցական տեսակէտներու սահմանին մէջ։ Օձիքէն կը բռնէր, ուր ալ գտնէր հեգնելիք բանը։

Դաշնակցական շրջանակներու մէջ իսկ հաշտ աչքով չէին դիտեր իր աշխատակցութիւնը, եւ մասնաւորաբար Պոլսոյ երկու Շրջանային Ժողովի մէջ փոքրիկ յարուցուած էր իր աշխատակցութեանը դէմ, բայց միշտ ալ տիրապետած է խմբագրութեան կարծիքը, որ կ'ուզէր թերթին չուրջ համախմբել ոչ-դաշնակցական մաքուր մտաւորականութիւնը։

Բայց, ինչպէս ըսի, Օտեան հակայեղափոխական կը մնար իր խորքին մէջ՝ հերոսական դրուագներով խանդավառելով հանդերձ։ Եւ որովհետեւ կ'արհամարհէր Հնչակեանները, աւելի Դաշնակցականներն էին, որ կ'ինային իր խայթոցներուն տակ։ (Ռամկավարները բանի տեղ չէին դրուեր գեռ այն ատեն ու բոլշեւիկներ չկային։) Ու ինքը կը պատմէր ինծի, թէ աքսորի մէջ ուզած է նոյնիսկ շահագործել իր հակա-դաշնակցական անցեալը, իր օձիքին կառչող ոստիկանապետի մը բացատրելով, թէ իր ամբողջ գրականութիւնը Դաշնակցութեան դէմ ուղղուած է։

Բայց խորամանկ ոստիկանապետը, որ կ'երեւի հայ կեանքը մեզմէ շատերէն աղէկ կը ճանչնար, պոռացեր է երեսին.

«Տիսմա՞ր կարծեցիր զիս. դուք հակադաշնակցականներդ Դաշնակցութեան դէմ էք ո՛չ թէ որովհետեւ ան թուրքերուն հակառակ քաղաքականութիւն կը վարէ, այլ անոր համար, որ Դաշնակցութիւնը ատեն մը միացած էր Իթթիհատին»...

Հայ Արուեստի Տան եւ Հայ Թատերական Միութեան իր նախագահութիւնը անուանական էր լոկ։ Այդպէս էր նաեւ Հայ Խմբագիրներու Միութեան իր նախագահութիւնը։ Բայց օր մը ամչնալով կ'ըսէր ինծի, թէ Պոլսէն դրամ եկած է իրեն իբրեւ իր բաժինը Հայ Խմբագիրներու Միութեան դանձէն։

Ամչնալիք կէտը հոն էր, որ այդ Միութիւնը, Իզմիրի դէպքէն առաջ, ներկայացում մը սարքեր էր ի նպաստ Միութեան, ու կլորիկ գումար մը ներս նետեր։ Այդ գումարը յետոյ բաշխուեցաւ Միութեան անդամ եղող խմբագիրներուն...

Երեսփ. Ժողովին մէջ Օտեան կը ներկայացնէր Ղալաթիան ու Պէյքօզը։ Ու օր մը կը պատմէր, թէ ժողովուրդը ինչպէս կը դնահատէր իր ներկայացուցիչները։ Ընկերներու հետ Վոսփորի վրայ նաւակով շրջագայութեան մը առնն՝ խօսքի կը բռնուին նաւավարին հետ, – Պէյքօզցի հայ մը, որուն կը հարցնէ մէկը.

digitised by A.R.A.R.@

«Կը ճանչնա՞ս ձեր թաղին երեսփոխանը»։

«Մ՞վ գիտէ ձո՛ր...ն է», – կը պատասխանէ նաւավարը՝ ոչ փաղաքշական ածական մը տալով։

Վերջին տարիներուն Օտեանի մէջ աւելի շեշտուած էր պահպանողական գիծը։ Հայկական շարժումը սխալ եւ անտրամաբանական կը գտնէր իր հիմէն իսկ։ Ու պատասխանատու կը նկատէր հայ ժողովուրդի բաղաքի, պայքարի մղողները, հարց ստեղծողները։ Ու պատասխանատուներուն մէջ կը դասէր իր հօրեղբայրն ալ, Գրիգոր Օտեանը, որ հայ ժողովուրդը արթնցնելու գործին մասնակցած էր ոգիւին։

ԻՐ ԳՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Դիւրին արտադրող մըն էր Օտեան։ Վարժութիւն մը եղած էր իրեն գրիչը, նոյնիսկ ամէնէն դժուար նիւթերու վրայ։ Դիւրին բան չէր քանի մը գրաշար կըշտացնելը, քանի մը թերթ գրաշար մէկէն։

Ու կը գրէր առանց նօթի, մոքին մէջ միայն չինած յատակագիծը։ Նոյնիսկ ալ, մանաւանդ անոնք, զորս օրը օրին յաճախ այդպէս կը գրէր երկար վէպերն կու տար իրր թերթօն, երբեմն մոռնալով նոյնիսկ նախապէս գրածը։ Կը պատահէր յաճախ, որ ամիսներ անցնելէն յետոյ կը չփոթէր իր հերոսները, անոնց ողջ կամ մեռած ըլլալը։ Ու չմոռնանք, որ իր վէպերէն ոմանք տարիէն աւելի կը տեւէին, օրուվհետեւ արտօնատէրը չէր ուզեր որ աւարտին անոնք։

Իր գրածը չէր ալ սրբագրեր, կը գրէր կամաց, հատիկ հատիկ, բայց անդամ մը գրելէն յետոյ սրբագրութիւն չէր ըներ վրան։

Օտեան իր սրամտութիւնները կը գրէր առանց ճիգի։ Բայց կը խորշէր բառախաղ ընելէ։ Բառախաղ ընողները խենթի տեղ կը դնէր նոյնիսկ։ Այդ առթիւ յաճախ կը հեղնէր Երուանդ Փօլանճեանը, որ կը սիրէր բառախաղ ընել ամէն քոյլափոխի։

Օտեան իր նիւթը կը գրէր միտքը եկածին պէս, առանց երկար բարակ մտածելու։ Իրեն պատմուած դէպք մը նիւթ կ'ընէր անմիջապէս, առանց դէպքը քննելու, առանց նոյնիսկ ստուգած ըլլալու ճշդութիւնը անոր։ Ամոր համար անպակաս կ'ըլլային հերքումներն ալ, զորս կը տպէր առանց անհաճութեան։

Իր ստորագրութեան նախանձախնդրութիւնը կը պակսէր իրեն վերջին տարիները։ Փանջունին ստեղծող Օտեանը կը ստորագրէր ամէնէն հասարակ նիւթերու տակ իսկ, նոյնիսկ ամենապարզ թղթակցութիւնները։ Ապրելու համար գրելու ստիպուած արուեստագէտ մը չի կրնար շատ բծախնդիր ըլլալ։ Մանաւանդ որ թերթերը յաճախ ստորագրութիւնն է որ ծախու կ'առնեն աւելի, քան նիւթը։

Պատահեր է որ, – Թող իր յիշատակը ներէ՛ այս անդգամանագահութեանս, – ես եմ գրեր իր թղթակցութիւններէն ոմանք, երբ հիւանդ պառկած էր հիւանդանոցը։

Ե. Ա. Ս.

digitised by A.R.A.R.@

ԵՐ. ՕՏԵԱՆ

«ՄԵՀԵԱՆԷՆ ՆԵՐՍ»

Առանց ականջ կախելու «Սրբապիղծնե՛ր, զգոյշ, ցահեր կամ հոս...» ազդարարութեան, կամաց մը ներս մտայ ՄԵՀԵԱՆԻ առաջին թիւէն։

Հինգ քուրմեր յառաջացան դէպի ինծի, սպառնական երեւոյթով մը.

– Պի՛ղծ ոգի, դուրս ելիր այս սրբավայրէն, – պոռացին։

– Ներեցէ՛ք, – ըսի, – ձեր ջահերուն իւղը գողնալու չեմ եկած, թոյլ տուէք որ անկ չրջան մը ընեմ ու ելլեմ երթամ։

– Լա՛ւ, բայց ձեռք չդպցնես սրբազան անօթներուն, – ըսաւ քուրմերէն մին՝ որուն Գեղամ Բարսեղեանը ըլլալը իսկոյն ճանչցայ։

– Ո՛չ, – պատասխանեցի, – ձեռք չեմ դպցներ, իմ նպատակս է միայն ձեր արուեստին վրայ գաղափար մը ունենալ։

– Մեր արուեստը, – ըսաւ ծպտուած քուրմը, – շատ պարզ է. ուրիշ բան չէ՝ այլ եթէ՝ յայտնատեսական ստեղծագործութեան եղանակով իրականացումն իսկ ներքին հսին։

– Ի՞նչ հրամմեցիք, – հարցուցի չուսած։

– Եղբայր, – գոչեց, – յայտնատեսական ստեղծագործութեան եղանակով իրականացումն իսկ ներքին հսին, որով եւ ո՛չ մէկ նախանշանակեալ ազդեցութիւն կրնայ թոյլատրելի ըլլալ... դեռ չհասկցա՞ր, Փղշտացի՛...

– Հասկցայ, հասկցայ, – սարսռուեցայ ըսել, գլխուս ջահ մը չուռեալու համար։

– Ուրեմն եկո՛ւր, որ Մեհեանին զանազան մասերը ցոյց տամ քեզի։

Սրահի մը քով հասանք, որուն դրան վերեւ գրուած էր. «Ստեղծագործութիւն, խնդութիւն, դիւցազնութիւն»։

– Անցնինք, – ըսի կամաց մը։

Քիչ մը անդին հանդիպեցանք հինգ քուրմերէն երկուքին, որոնք մէյ մէկ երդ երգեցին։

Աւելի հեռուն նոր սրահի մը դրան վրայ կարդացի սա բառերը՝ «ՀԱՐԹՆԱԳ»։

digitised by A.R.A.R.@

– Ի՞նչ է այս սրահը, – հարցուցի։

– Տանջարանն է այսուհետ, – պատասխանեց ինծի ընկերացող քուրմը։ Կ'ուզե՞ս ներս մտնել։

– Չէ՛, սանկ դռնէն նայիմ, եթէ կարելի է...

Դուռը բացաւ. եւ, ո՛վ սոսկում, ահռելի տեսարան մը պարզուեցաւ աչքերուս դիմաց։

Խաչելութեան վրայ արիւնլուայ զամուած էր մեր խեղճ Հրանա Նազարեանցը, մինչ քուրմերէն մէկը, փչոտ խարազանով անխնայ հարուածները կ'իջեցնէր անոր գլխին ու կուրծքին։

– Այս ողորմելիին յանցանքը ինչ է, – հարցուցի մորմոքած սրտով։

– Ձի՛չդ ատիկա, – պատասխանեց։

– Այսքա՞նքն...

– Իր ողորմելիութիւնը։

– Հեռանանք այս չարաշուք սրահէն, – ըսի քայլերս արագելով։

Ուրիշ սրահի մը քով հասնելով՝ քուրմը դուռը բացաւ։ Եւ ահա՛ ո՞վ տեսնեմ յանկարծ այնտեղ։

Մեր Մուշի երեսփոխան Գեղամը։

– Դուն ի՞նչ բան ունիս հոս, այս խենթերուն մէջ, – փախցուցի բերնէս։

– Մեր Մշոյ սրբիկ քամին, վար ու ցանքը, կորան ու խոզանը, ժուսիին ու գութանը կ'երգեմ, – պատասխանեց Գեղամ։

– Երգդ անուշ, – ըսի ու ճամբանիս շարունակեցինք։

Նոր սրահի մը առջեւ հասանք, որուն դրան ճակատին վրայ «Ցիմբաբաղտուում» վերտառութիւնը քանդակուած էր։

– Ասիկա Մեհեմանին յիմարանոցն է, – բացատրեց քուրմը։

– Շատ խենթ ունի՞ք մէջը։

– Ան այժմ երկու հատ։

– Ովքե՞ր են։

– Դուռը բանամ եւ տես։

Եւ ո՞վ տեսնեմ ազէկ այդ յիմարանոցին մէջ։ Մեր պատուական Մեբուժան Գարամեանը եւ Հրանա Նազարեանցը, որ խաչելութենէն վար առնելով՝ իբրեւ յիմար բանտարկած էին այդտեղ։

Գրեթէ ամբողջ Մեհեմանը պոռած էի։

– Մնաք բարով, – ըսի առաջնորդիս, – շնորհակալ եմ ձեր հիւրընկալութենէն։

– Եթէ գոհ մնացիք, գալ ամիս կրկին հրամմեցէք, – պատասխանեց, – ժուռքը սուղ չէ, վաթսուն փարա միայն։

– Իրա՛ւ որ ատան, – խոստովանեցայ, – այսքան խենթ ու այսքան խենթութիւն տեսնելու համար։

– Աբուլեստը բացարձակ խենթութիւն է, – ըսաւ եռեւէս քուրմ մը։– խենթութիւնը արարչական ըմբռստութիւն ըսել է։

– Օղ բայր, – գոչեցի եւ ինքզինքս նետեցի Մեհեմանէն դուրս։

Ե. Օ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

ԱՆՈՒՆՈՎ

Որքան աւելի փոխուի՝ այնքան աւելի նոյն բանն է. այսպէս կ'ըսէ կատակերգութեան մը անձերէն մէկը. չեմ յիշեր ինչ առթիւ։ Այդ խօսքը միտքս ինկաւ բոլշեւիկնեբու վրայ ուսումնասիրութիւն մը կարդացած առենս։

Ազատութեան անունովն էր որ ռուս յեղափոխականները տարիներով պայքար մղեցին ցարական բռնակալութեան դէմ եւ վերջապէս յաղթանակեցին։ Ի՞նչ եղաւ արդիւնքը, պարզապէս բռնակալութիւնը անուն փոխեց։ Առաջ ցարիզմ կը կոչուէր, հիմա բոլշեւիզմ կը կոչուի։

... Բայց թողունք մամուլի ազատութիւնը. խօսելու կամ երգելու ազատութիւնն ալ կապուած է այժմ յեղափոխական Ռուսիոյ մէջ։ Նոյնիսկ մտիկ ընելու ազատութիւն չկայ։ Շատեր, առանց դատավարութեան, մահուան պատիժը կրած են հակա-բոլշեւիկեան ժողովի մը ներկայ ըլլալնուն համար։ Դերասանուհի մը նոյնպէս գնդակահար եղած է, հակա-բոլշեւիկ երգ մը երգած ըլլալուն պատճառաւ։

Ծիւղ տեղն է յիշելու Տիկ. Ռոլանի ծանօթ բացականչութիւնը.— Ո՛վ ազատութիւն, ինչ ոճիրներ կը գործուին անունովդ։

Ե. ՕՏԵԱՆ

4 Փետր. 1921

digitised by A.R.A.R.@

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

ՎԻՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ Ե. ՕՏԵԱՆԻ ՄՕՏ

Հայ գրականութեան մէջ, Եր. Օտեան մէկը հանդիսացաւ այն բացառիկ գրագէտներէն, որոնք իրենց ստեղծագործութիւնները օրը օրին փոխանցեցին անհամբեր ու հետաքրքիր ընթերցողներու հոծ թիւի մը։

Հայ ընթերցողները, Եւրոպա, Պոլիս թէ Գահիրէ, շատ անդամ մամուլը փընտրեցին Օտեան կարդալու։ Անմիջապէս ժողովրդական կը դառնար այն թերթը, որուն իր աշխատակցութիւնը կը բերէր օրին։ Բոլորին հետ էր ու բոլորին ղէմ։ Այսպէս փայլուն յաջողութիւն ունեցաւ ամբողջ իր գրական կեանքի ընթացքին, տիրապետեց հայ մամուլին 1900-ական թուականներէն մինչեւ 1926, իր անժամանակ մահը։

Առատօրէն վարձատրուեցաւ, լաւ չահեցաւ, բայց չհարստացաւ, որովհետեւ միշտ արհամարհեց դրամը։

Գիտի չխօսինք անոր երգիծական վաստակին մասին, բայց Եր. Օտեանի վիպագրական ժառանգութեան վերլուծման համար, անհրաժեշտ է անդրադառնալ անոր երգիծական եւ նկարագրային առանձնայատկութիւններուն։

Ե. Պարոնեան այն ազնուականն էր, որ մնաց կքած իր ստեղծած տիպարներու եւ աշխարհներու ողբերգական ծանրութեան տակ, ան իր գրիչին հետ իր սիրտը դրաւ բոլոր գործերուն մէջ, մաշեցաւ ազգային լուռ ցաւերու ձաղկումով, տառապեցաւ եւ այդ տառապանքով փակեց իր աչքերը թշուառութեան մէջ։ Այդպէս

digitised by A.R.A.R.@

չէր Օտեան։ Ան ոտոոսաեց ճիւղէ ճիւղ, գաղութէ գաղութ, անցաւ նոր նիւթի, նոր տիպարի, նոր մարդի։ Երդիծանքէն անցաւ ուսումնասիրութեան. գրեց քրոնիկ, խնդացուց, հարուածեց, բայց մինչեւ իր կեանքին վերջը իր անուան ու գրիչին հմայքին տակ պահեց ազգային վաւ հետաքրքրութիւն մը։ Միւռ հեգնեց ու ծիծաղ յառաջացուց, այս ճակատի թերթէն անցաւ միւսին, սկզբունք փոխեց, հոսանք փոխեց, բայց միշտ կանգուն մնաց։

Տարագրութիւն տեսաւ, աքսորը ապրեցաւ, տխուր եւ եղերական յիշատակներով վերադարձաւ Պոլիս, բայց այդ բոլորը զինք աւելի կարծրացուցին, նոր ճիգով փորձեց կառուցանել վաւ պոյներով ունայնութեան պալատներ եւ անոնց կերտման առաջին հեգնողը ինք հանդիսացաւ, հրաւիրելով այդ ծիծաղին ընթերցողներու ուուաբ թիւ մը։

Իտկար Ալէն Փօ, միջազգային գրականութեան հացուց գազտնի, խորհրդաւոր, ստիկանական գրականութիւնը, մարդկութեան տալով իր «Ակրտառոց Պատմութիւններ»-ը, որոնք Շարլ Պոդլէրով աշխարհի սեփականութիւնը դարձան եւ ժողովրդականութիւն վայելեցին, կատարելագործուեցան Սքոտիէնսի թագաւոր Ալֆրէտ Հիչքոքով։

Ալէն Փոյի մօտ, որքան խոր, հետաքրքրական ու եղերական են պատմածքները, նոյնքան դասական են մոթիֆները։ Գրագէտը ծանր, խոհական արուեստի մը պարուրաքով ընթերցողի ենթագիտակցութեան կը թափանցէ, անոր ներաշխարհի փորձառութիւններուն եւ նուաճումներուն կը հասնի։ Մշակում, գեղարուեստական ոճ ու խնամք։ Այս փոքր ճիգով ահա թէ ուր կրնար հասնիլ Օտեան։

Կ'ափսոսանք Օտեանի համար, որովհետեւ իր մէջ աւելի զօրաւոր էին տաղանդի յատկանիշներն ու աւելի բարձր էին ստեղծագործական կարելիութիւնները։ Այս ափսոսանքը կ'ապրինք, երբ կը հաստատենք տաղանդի նշոյլներով համեմուած իր գործերուն մէջ ոճական ընդհանուր անխնամութիւն եւ գեղարուեստական մշակման անտարբերութիւն։

Բացառիկ խմացականութեան տէր գրող՝ ան լայն գործունէութեան հորիզոններ ստեղծեց եւ բոլորին վրայ դրաւ իր դրոշմը. յաջողեցաւ էնթրիկներ, ծուղակներ, լուծումներ գտնել այնպիսի՛ հնարամտութեամբ, որ վստահաբար, այսօր նոյնիսկ անոնցմով պիտի խանդավառուին սքոտիէնսի գրականութեան սիրահարներ։ Այնքան հարուստ են իր նիւթերը, այնքան առատ են գրական գիւտերը, բարձր են մեխանիզմները, կացութիւնները, պարագաները։

Կան գրողներ, որոնց մօտ, գրելու բացառիկ գիւրութիւնը կը վնասէ գործի գեղարուեստին, այդպիսին էր պարագան հայ երգիծաբանութեան իշխանին, որուն գրիչը, ժիրբաստաբար, արագ կ'ենթարկուէր իր յորդահոս մտածումներու թաւալքին։ Քիչ մը դանդաղում, զտում, քիչ մը վերանայում իր ստեղծագործութիւններուն՝ հայ գրականութեան պիտի տային անգերազանցելի էջեր։

Գրագէտ էր խառնուածքով, արուեստագէտի տաղանդը տակաւ ներկայ ըլլալով հանդերձ իր բոլոր գործերուն մէջ, ստեղծագործութեան առատութեան մէջ կը վերածուի փչուրներու։

Իր 21 վէպերէն, 15 վիպակներէն, 4 թատերախաղերէն, յիշատակարաններէն եւ ուսումնասիրութիւններէն եթէ մէկ հինգերորդը մնայ արուէր մեզի նոյնքան ժամանակի ընթացքին, անպայմանօրէն՝ հայ գրականութիւնը պիտի օժտուէր միջազգային արժէք ներկայացնող էջերով։

Երգիծական գիծը գրագէտի բազմակողմանի շնորհներէն եւ ստեղծագործական լայն կարելիութիւններէն մէկն էր միայն։ Եթէ գլուխ-գործոց մըն է «Առաքելութիւն մը ի Ծապլվար»-ը, նուազ չէ գրական արժէքը «Թաղականին Կնիկ»-ը վէպին, կեանքէն առնուած միւս գործերուն, որոնց մէջ ոեւէ ընթերցող պիտի

digitised by A.R.A.R.@

հաստատէ գոյութիւնը անվիճելի վիպագրին։

❧

Ճշմարիտ ու ապրող էակներ էին իր հերոսները, ինքնատիպ՝ միջավայրային թէ նկարագրային առանձնայատկութիւններով։ Ցաւերժական էին անոնք, այսուէս՝ Ընկեր Փանջունին աւելի գասական է, քան Տոն Քիշոթը, աւելի ընկերային եւ մարդկայնական մտահոգութիւններ կու գան բեմ անոր երգիծանքով։ Աւելի վաւերական ու այժմէական է, քան Տոն Ժուանը։

Զարմանալի ճարտարութեամբ, նոյնիսկ ամէնէն թերթոնային վէպին կամ վիպակին մէջ, Օտեանի հերոսները դըխաւորէն մինչեւ երկրորդականը՝ իրական են, առօրեայ կեանքի մտահոգութիւններու արտայայտիչներն են, աւելի ճշմարիտ են երբեմն, քան իրականութիւնը։

❧

Եթէ ճիշդ է, որ երգիծաբանութիւնը համապարփակ ողբերգութիւն է, ուրեմն ճիշդ է նաեւ, որ երբեմն լուրջ արտայայտութիւնները, ամէնէն ծանր մտահոգութիւնները պարուրուած կը մնան ժըպիտներու տակ։

Օտեանի պարագային, բացատրութիւնը բաւարար կը դառնայ իր կենսադրականի անընական զարգացումով։

Ազնուական ընտանիքի զաւակ, ապահով կեանքէն արկածախնդրութեան նետեց ինքզինք։ Դարձաւ ազարակի հաշուապահ, բառարան կազմող, առեւտրական միջնորդ, ճիլվաճառ, ազամանդի վաճառական, ձուլարանի պաշտօնեայ, խմբագիր, քրոնիկագիր։ Մասնակցեցաւ ապպային, ընկերային, մշակութային, պազարարական շարժումներուն եւ պայքարներուն, որոնցմէ եւ ծնան իր բոլոր վէպերը։ Այս կարգի ապրումներու պտղիկում է «Անիծեալ տարիներ» գործը, զոր ան գրած է Տէր-Զօրէն վերադարձին, ուր աքսորուած էր թուրք իշխանութեանց կողմէ։ Այդ գրքին մէջ տագնադաւոր դրագէտը առաջին անգամ ըլլալով կը զայրանայ, կը տագնապի եւ բուռն տողերով կը ներկայացնէ իր դառն վիճակները։

Գրական լուրջ յաջողութիւն մըն է նաեւ «Ցասներկու տարի Պոլսէն դուրս» ուղեւորագրութիւնը, ուր կը յայտնուի հեղինակի նուրբ ճաշակը եւ տարիներու փորձառութեան պարտադրած լլկութիւնն ու եւրոպական ոստաններէն ժառանգած բծախնդրութիւնը։

Օտեան, արեւմտահայ գրականութեան բազմավաստակ գրագէտը, եղաւ նաեւ աշխարհաբար լեզուի զարգացման ախոյեան մը։ Գրեց շատ սահուն. արտայայտչական կարելիութիւնները իր մատանքան ճոխ էին եւ բազմերանգ, որ կարելի է դինք աշխարհաբարի լաւագոյն մշակողներէն մէկը համարել։

Գարզ էր, ճշդիր, առողջ եւ սինամիք, բայց գեղարուեստական տքնանքի պակասէն խոցելի։

Այսօր դժուար է որոշել իր տեղը հայ գրականութեան մէջ, բայց անվարան կարելի է կոչել դինք տագնադաւոր երգիծաբան եւ վիպագիր մը, որ այժմէական է ու իր տիպարներով՝ տիեզերական։

Ա. Տ.

digitised by A.R.A.R.@

ՏԻՊԱՐ ՄԱՐԴԸ

Աշխատանքի ճամբուն վրայ, դասախօսութենէ մը դարձին ու հեւ ի հեւ ժողովի մը գացած ատեն, Թաքսիմ, Աշխատանքի Տան դրան առջեւ, ինկաւ Սիմոն Զաւարեանը:

Մահը յանկարծ, հո՛ն, փողոցին մէջ, գինքը կեցուց եւ թերեւս փսփսաց անոր ականջն ի վար.

– Ո՞ւր կ'երթաս, ի՞նչ կ'ըսես, որո՞ւ համար կը յոգնիս, կը տուայտիս, ի՞նչ նպատակի հետեւէ վազն ի վազ կ'երթաս այսպէս շնչասպառ: Ահա՛ քսանրիսնգ տարի է որ անդադրում կը թափառիս թաղէ թաղ, քաղաքէ քաղաք, երկրէ երկիր, կը գրես, կը գործես, կը խօսիս ու տակաւին չհասկցա՞ր ճիգին ընդունայնութիւնը, իտէալին կեղծիքը, ամենայնի դատարկութիւնը... Մեղք ես, ա՛լ եկուր որ քեզ հանգչեցնեմ անշարժութեան, անզգայութեան խաղաղ իշխանութեան մէջ:

Եւ Զաւարեան, որ համակ կեանք, շարժում եւ զգացում էր, խարուեցաւ այդ փորձիչ, ոգոքիչ ձայնէն ու ինկաւ գետին, ա՛լ գլուխը վեր չառնելու համար:

Առաջին անգամ գինք ճանչցած էի 12–13 տարի առաջ, Եւրոպա, յետոյ տեսայ գինքը Եգիպտոս, յետոյ Պոլիս: Եւ ամէն անգամ որ առիթ կ'ունենայի հետը խօսելու կամ իր քանախօսութիւններուն ունկնդրելու, վեհագոյն մարդու մը տպաւորութիւնը կը գործէր վրաս, – լաւագոյն է ըսել վերագոյն հոգիի մը, որովհետեւ ֆիզիքական, մարմնեղէն մարդը շա՛տ պզտիկ էր Զաւարեանի մէջ, եւ երբ խօսէր իր սիրական իտէալներուն վրայ, ներշնչուածի, տեսանողի իր պարզ ու գերագրեցիկ պերճախօսութեամբը, այն ատեն մարմնեղէն Զաւարեանը գրեթէ անշմարելի կը դառնար ու կը տեսնէիր միայն հոգին ու կը լսէիր միայն ձայնը:

Այդ ձայնը, քսանրիսնգ տարի շարունակ բաշխուեցաւ ցիր ու ցան Հայութեան, միշտ անկեղծ, միշտ անվեհերաբար ու միշտ հաւատքով, բարձր ու գեղեցիկ գաղափարներ տարածելու համար՝ առանց փառքի, առանց շահու ակնկալութեան:

Ու հիմա այդ ձայնը կը լռէ ի սպառ, ամբողջ Հայութիւնն է, որ կ'արտասուէ, որովհետեւ Զաւարեան Դաշնակցականէ մը աւելի՝ Հայ էր եւ Հայէ մը աւելի՝ Մարդ մը, մին այն Տիպար–Մարդերէն, որ բնութիւնը երբեմն կը ստեղծէ, իրրեւ օրինակ ծառայելու համար եւ որոնցմէ, ափսո՛ս, չենք կրնար օգտուիլ յաճախ:

Ցարգանք իր պանծալի յիշատակին, յարգանք իր մաքուր ու անապակ Հոգիին:

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

«ԲԱԳԻՆ»Ի 1969-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Ա. ԵՐԿԱԹ	1.— Առաւօտ, 2.— Ձիւն	1
» »	1.— Փակեցի դուռս, 2.— Կը տեսնեմ, 3.— Լռութիւն, 4.— Քանի աչքեր խուարեցան	2
» »	1.— Հակատագիր, 2.— Անձրեւ	5
» »	1.— Ցիսնամէակ, 2.— Անուն	6
» »	1.— 75-րդ տարեդարձ, 2.— Գիրքեր, գիրքեր, 3.— Ողջոյն գիշերին, 4.— Ամառ կեանքի, 5.— Աշուն, 6.— Կեանքի հեքիաթը	7
» »	1.— Մահամանդակ, 2.— Ափսոսանք	8
ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ	Ցոյսս արցունքի վտակի նման	1
» »	Բանաստեղծի բողոքը	3
» »	1.— Իմ հոգեհանգիստը, 2.— Քառեակներ	6
» »	Իմ երգը	7
Վ. ԹԵՔԵԱՆ	Տանջանք, ա՞յս է հնարած բալասանդ խարկանքի	1
ԱՐՄԱՆՏ	Ափսոսում եմ	2
Ռ. ԳԱՌՕՆԷ	Ծառը	2
» »	1.— Կենաց բաժակը, 2.— Աշխարհն ու մենք	4
» »	1.— Հայոց երգեր, 2.— Անվերնագիր	5
» »	Բարձունքն ի վար	7
» »	1.— Երկինքը, 2.— Խոհ	8
» »	Մի հեռաւոր ձայն	9
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ	1.— Ծաղիկներուն վիշտը, 2.— Պատրանք	2
Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Երկունք	2
Հ. ՅՈՎՍԷՓԵԱՆ	Լեգենդ՝ — Աղջկայ քարը	3
Խ. ԱՍՈՑԵԱՆ	1.— Նանիս կ'ըսէ, 2.— Տուայտանք, 3.— Ծագկամանս, 4.— Վերջին նուագը, 5.— Կարաւանները	3
» »	Ոչը	9
Ց. ԳԵՂԱՐԴ	1.— Բանաստեղծը, 2.— Բանաստեղծութիւն, 3.— Բանաստեղծութիւն	4
Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Տիեզերքի խորհուրդին	4
» »	Կռունկներու երազով	6
» »	«Խորհող»ին	10
» »	Տաղ առ Կոմիտաս	11-12
ՇԱՀՊԱՆ	1.— Ամէն անգամ երբ քեզ սիրեմ, 2.— Հարկաւ օր մը կ'ըսես ինծի	4
Հ. ԱՒԵՏԻՔ ԹԱԼԱԹԻՆԵԱՆ	Անիէն, նու զամ	5
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	1.— Տեղ մը հեռուն, 2.— Աշնանային, 3.— Կ'ըսէ՛ք քէ···	5

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Գ. ՎԱՀԱՆ	1.— Խարտոցներուն կռիւը, 2.— Գաղտնիքը, 3.— Ծրտոզին փառքը	7
Ա. ՍԵՒԱՆ	1.— Վիշտ, 2.— Կեանքիս	9
Խ. ԵԳԱՆԵԱՆ	1.— Մի քշիր, կարաւան, 2.— Քեզ	9
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Հաւատարմութիւն	10
Վ. ԹԷՔԷԵԱՆ	Կոմիտաս Վարդապետ	11–12
Պ. ՍԵՒԱԿ	Ղօղանջ միջակութեան	11–12
» »	Ղօղանջ յարութեան	11–12
Հ. ՍԱՀԵԱՆ	Կոմիտաս	11–12
Գ. ԷՄԻՆ	Կոմիտասն անապատում	11–12
» »	Լռռու լեռներում	11–12
Ե. ՉԱՐԵՆՑ	Կոմիտասի յիշատակին	11–12
ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ	1.— Հոգուս հատոր, 2.— Պատրանք, 3.— Լուսաւորչի կանթեղը, 4.— Փարվանա, 5.— Հայրենիքիս հետ	11–12
Ա. ՍԱՐՈՑԵԱՆ	Թումանեանին	11–12
Վ. ՏԷՐԵԱՆ	Թումանեանի պալատում	11–12
Լ. ՇԱՆԹ	Ախ, տուէք ինձ	11–12
» »	Ես պատրանքը սիրեցի	11–12
» »	Գիշերապահը	11–12

ԱՐՁԱԿ

Բ. ԿՈՒԱՆԵԱՆ	Դարձ դէպի արեւը	1
» »	Խաստովանանք	6
» »	Տիեզերքը ինքն էր	7
» »	Ուսուցիչս	11–12
Ն. ՉԱՐԵՈՒՏԵԱՆ	Խնձոյքէն վտարուածը	1
» »	Մահուան կամուրջը	3
» »	» »	4
» »	» »	5
» »	» »	6
» »	» »	7
» »	» »	8
» »	» »	9
» »	» »	10
ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ	Հին ու նոր տարի	1
» »	Դեղին լոյսը	4
» »	Ցոլացումներ	7
Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ	Պատէն անդին	1
» »	Ո՞վ էր մեղաւոր	9
Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Սիրոյ եւ արկածի տղաքը (*Հաւուածներ*)	1
Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ	Տարբերութիւնք կենդանեաց եւ մարդոց միջեւ	2
» »	Հիւանդանոցի մէջ	8

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
ՍՕՍԵԱՑ ՏՂԱՆ	Ալիքներ կան	2
» »	«Տունի հաց»	6
» »	» »	7
» »	» »	8
» »	» »	9
Ա. ԵԱՂՈՒՊԵԱՆ	Տէր–Տէր Ամուն անիծեց	2
» »	» » »	3
» »	» » »	4
Ա. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ	Գերեզմանոցը	2
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ	Պաշտօնական հրաւէր	2
Ղ. ԹԻՐԱՑՐ	Շէնքը	2
Ա. ՏՈՆՈՑԵԱՆ	«Կռունկ»	2
Ց. ՓԱՓԱԶԵԱՆ	Երկար սպասեցի	2
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Հանրակառքի կանգառում	3
Պ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ	Քիչ մը ամէն բան էր	3
Ա. ՀԱՑԿԱԶ	Թոռնուհիս	4
» »	Արդարութեան պալատին մէջ	7
» »	Սիրելի Ատուած	8
Ս. ՍԱՀԱԿԵԱՆ	Նամակ երկինքէն	5
» »	Նամակ երկինքէն	10
Բ. ԵՂԻԱՑԵԱՆ	Արար Ցակոբը	5
Ն. ՆԱԶԻԿԵԱՆ	Ճամբու վրայ	5
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	«Գրութենէն ետք»	6
Ս. ՎՐԱՑԵԱՆ	Թոռզայը	7
Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ	Այս թանկագին··· թշնամին	9
Ա. ԵՐԿԱԹ	Առաձնութիւն	9
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Տունը	10
Կ. ՓՕԼԱՏԵԱՆ	Զրոյց Ս. Մեսրոպ Մաշտոցի հետ	10
Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ	Արքնցէք, արքնցէք	10
ԱՐԱ ԱՐԵՐՈՒՆԻ	Մարդու պարտութիւնը գիտակցութեան եւ զգացումի պայքարի ընթացքին	11–12
Ա. Խ.	«Ընկեր Փանչուճի»	11–12
Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ	Դիծեր Երուանդ Օտեանի կեանքէն	11–12
ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ	«Մեհեանէն ձերս»	11–12
» »	Ազատութեան առումով	11–12
» »	Տիպար մարդը	11–12
Ա. ՏՕՆՈՑԵԱՆ	Վիպագրութիւնը Ե. Օտեանի մօտ	11–12
Մ. ԹՈՒՄԱՃԵԱՆ	Սոնա հաք	11–12

ԻՄԱՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Պ. ՍՆԱՊԵԱՆ	Սրբապիզծներու գրոհը	1
Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ	Հոգեբաններու եւ ճարտարագէտներու գործունէութիւնը	1
» »	Հէրպերթ Մարքիւզ	4

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Գ. ԹԱԳԻՒՈՐԵԱՆ	Ո՞վ էր Քաֆքա	1
» »	Լեզուն վերացական արուեստին	7
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ	Մի գիրք «Նոր վէպ»-ի դէմ	1
» »	Եւս մի պատմական հերոսամարտի հետքերով	3
» »	Պետական իրաւագիտակցութեան ձեւաւորումը Հայաստանում	4
» »	» » »	5
» »	Զարս մեծերի յոբելեանական համաստեղութիւնը	11–12
Փ. ՊՈՒԱՏԵՖՐԸ	«Այրէ գիրքերդ, Ռոպ-Կրիէ»	1
Ա. ՍԱՀԻՆԵԱՆ	Բաւական է պոչից գնալ	1
Մ. ԻՇԽԱՆ	Ժամ ցակոբեանի հայրենասիրական երգերը	2
Ր. ԻՍՐԱՑԷԼԵԱՆ	Մտածումներ՝ ցանկութեան և գեղեցկութեան մասին	2
Ա. ՕՐԱԳԵԱՆ	Ակնարկ հայ նարտարապետական պատմութեան	2
» »	» » » »	3
» »	» » » »	4
» »	» » » »	5
Պ. ՓԻՎՕ	Բաց նամակ Պ. Լուի Արակոնին	2
Փ. Պ.	Արուեստը կեանքին մէջ. Թարգմ. Տ. Ոսկուեի	3
Ց. ՕՇԱԿԱՆ	Վ. Թէքէեանի «Հրաշալի յարութիւն»ը	5
» »	Ցովհ. Թումանեան եւ իր գործը	11–12
Ց. ՄԱՐԳԱՐԵԱՆ	Տրտմերգու բանաստեղծը	5
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ	Մանուէլ Մարութեան	6
» »	Շահան Շահնուրի հետ	7
» »	Լ. Շանթի ներքին տիսիփլինը	11–12
Հ. ԽԱՀԱԹԵԱՆ	Սէքիւլարիզմ	6
Պ. Գ.	«Հոգիս բռունցքիս մէջ»	6
Վ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ	«Առաջին անգամ լինելով»	6
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ	Սփիւռքահայ գրականութիւնը եւ մեր դասական գրական ժառանգութիւնը	7
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Ազգ. տագնապը սովետական իրաւակարգի տակ	10
» »	Հանդիպումներ Ց. Թումանեանի հետ	11–12
» »	Լ. Շանթ իբրեւ բանաստեղծ	11–12
Հ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ	Մեծ Հայաստանի նարտարապետութիւնը ԺԳ.–ԺԴ. դարերուն	8
» »	» » »	9
Հ. Ց. Դ. ԶԱՒԱՐԵԱՆ ԱՇԱԿԵՐՏ. ՄԻՈՒԹԻՒՆ	Հարցարան եւ պատասխաններ	8
Հ. Ց. Դ. ԶԱՒԱՐԵԱՆ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ	Հարցարան եւ պատասխաններ	10
ՄԵԼԻՆԷ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ	Փրաֆ. Տիգրան Ցովհաննիսեանի գրոյցը	10
Ա. ԿՈՒԶՆԵՑՈՎ	Օրագրութիւն ուրիշ աշխարհէ մը	10
» »	Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ խոյս տուի Սովետական Ռուսստանէն	10
ԱՌՆԱԿ	Կուտինա՝ Ծննդավայր Կոմիտաս Վարդապետի	11–12
Ց. Մ.	Կոմիտասի առաջին երգչախումբը	11–12
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ	Նամակ՝ Ս. Զաւարեանին	11–12

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ	Ռ. Զարդարեանի «Ցայգալոյսը»	11–12
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ	Կանչէ կռունկ, կանչէ	11–12
Ա. ՍԱՀԱԿԵԱՆ	Կոմիտասը հմայած է	11–12
ԼՈՒԻ ԼԱԼՈՒԱ	Կոմիտաս Վարդապետ	11–12
ՓՐՈՖ. ՀԱՐՏՄԱՆ	Կոմիտաս Վարդապետ	11–12
Բ. ԹԱՇԵԱՆ	Կոմիտասի «Լուսեվարդ»ը	11–12
Մ. ՎԱԼԻՏԷԵԱՆ	Ցուշեր Կոմիտասէն	11–12
Ա. ԲԱԲԱՑԵԱՆ	Անձնական տպաւորութիւններ	11–12
Գ. ԻՓԷԿԵԱՆ	Կոմիտաս Վարդապետ՝ հայրը հայ երաժշտութեան	11–12
Ս. Գ.	Կոմիտասի քնարերգութիւնը	11–12
ՀԱՄՏՈՒԼԼԱՀ ՍՈՒՊՀԻ ՊԷՅ	Կոմիտաս Վարդապետ	11–12
Շ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Կոմիտասը անձը	11–12
Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Կոմիտասի արձանի մօտ	11–12
Ց. ԳԵՂԱՐԴ	«Ամենայն Հայոց» ըլլալու գաղտնիքը	11–12
» »	Արուեստագէտ Լ. Շանթ	11–12
Բ. ԵՂԻԱՑԵԱՆ	Ցովհ. Թումանեան Լոնդոնի	11–12
Ն. ԱՂԲԱԼԵԱՆ	Ցովհ. Թումանեանի «Քաջ Նազար»ը	11–12
Վ. ԱՀԱՐՈՆԵԱՆ	Ցովհ. Թումանեան.— Մարդը եւ բանաստեղծը	11–12
Ռ. ԻՇԽԱՆԵԱՆ	Ցովհ. Թումանեանը մայրենի լեզուի մասին	11–12
Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Լեւոն Շանթ	11–12
Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Փանջուճիներու բաւիղէն	11–12

ԳՐԱԽՕՍՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ	Կ. Սասունիի «Սարերու Ասլան»–ը	1
» »	Հայկ Ղազարեանի «Արեւմտահայերի սոցիալ–տընտեսական և քաղաքական կացութիւնը 1800–1870»	2
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Ա. Ալիքեանի «Աչքեր»–ը	2
» »	Պ. Սիմոնեանի «Նախերգանք»–ը	6
» »	Վ. Թեքեանի «Կապոյտ ապրիլ»–ը	7
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Ա. Կիրակոսեանի «Արմատ եւ էութիւն»–ը	2
» »	Ա. Խաչիկեանի «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը»	7
Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ	Կ. Սասունիի «Սարերու Ասլան»–ը	4
» »	Ս. Սիմոնեանի «Լեռնականներու վերջալոյսը»	9
Ց. ԳԵՂԱՐԴ	Լ. Վարդանի «Ինքնիերգութիւն»–ը	5
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ	Ա. Գալանթարեանի «Մարաթոն»–ը	8
Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Հերմինէ Վարժապետեանի «The great 4»–ը	8

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՔՐՈՆԻԿՆԵՐ

Բ. Փ.	«Լեւոն Շանթ» թատերախաղի ներկայացումները	1
» »	«Հին աստուածներ»	3
» »	«Ժան Կապրիէլ Պորկման»	3

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Պ. Ս.	«Մեծ վարպետ Սոլնէս»	6
...	Լուիզա Պոզապալեանի երգահանդէսը	6
...	Արփինէ Փէհլիվանեանի երգահանդէսը	7

ՆՇՄԱՐՆԵՐ

«Գրական թերթ»-ի հարցարանը	3
Վահէ Կոտէլի «Հայաստան» բանաստեղծութիւնը	3
«Դեռեւս երազելի է»	4
Մեր վիճակագիները	5
«Այս գրքի երկրորդ հատորում»	5
Պատմութիւն «Երրորդ այգաբաց»-ի եւ «Թուղթ Իսսիփ Ստալինին»	6
... եւ ինքնուրոյն մի անհերքելիութիւն	7
Արտօնեալ եւ ահարկու խմբագիրներ	9
Միտք պահեցէք	9
Որո՞ւ համար	9
«Երբ ճայում եմ քս բթամիտ դէմքին»	9
«Ց»-ն՝ Հարութիւն, Հատմիկ ու Հաղթանակ ու Հոյս»	9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Սկսելէ առաջ	1
«Նոր վէպ»-ի մասին	1
Բանաստեղծ Ժաք Ցակոբեանի 50-ամեակը	2
Արուեստի նոր որոնումներ	3
Մշակութային նոր օնախ մը	4
Խոնի պարտք մը	5
Ցովհ. Շիրազի մասին	6
Մանուէլ Մարուքեանի յոբելեանը	6
Ս. Վրացեանի մահը	6
Ա. Երկաթի մահը	7
Պերճախօս պատկեր մը	8
«Ցասկապէս հայերս»	9
Եդ. Պօյաճեանի մահուան երրորդ տարելիցը	10
Անաթոլի Կուզնեցովի պարագան	10

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մշակութային լուրեր	1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10

digitised by A.R.A.R.@

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԳԱՐՈՒՆ Ա (պատմուածքներ), Ց. Վարժապետեան, 1969, Պէյրութ

ՑԱՅՏՔ ՄԸ՝ ՈՍԿԵՃԱՄՈՒԿ ՊԱՐՏԻԶԱԿԷՆ, Գեղամ Դուշագեան, Պէյրութ, 1969

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ՆԵՐՍԷՍ ՄԵԼԻՔԹԱՆԿԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ, կազմեց Ա. Մամեան, Թեհրան, 1969

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ՃԻՊԷՅԼԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ – 1920–1925, Պէյրութ, 1969

ՏՊԱՐԱՆ ԱՏԼԱՍ – ՀԵՌ. 245402 – ՊԷՅՐՈՒԹ

digitised by A.R.A.R.@

ՏԵՂԱՅԻՆ ՇՈՒԿԵՐԻՆ

ԱԲԵՌՆԱՄ	22	Լ. ՈՍԿԻ
ՀՐՏԱՌՈՒՄԱՆ	8	ՏՈԼԱՐ
ՀՈՍԻՆԵՐԵՆ	5	Լ. ՈՍԿԻ

Վարչութիւն հասցէ՝—
G. SASSOUNI
Rue Sélim Boustani, Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@